

ԿԵՐԱԴԱՐՁ ԱՎԵՏԱՐԱՆԻՆ

«Եկողողեմուն» հրեաների իշխան: Սա զիշերով Հիսուսի մոտ եկավ և ասաց. «Մաքրի», գիտենք որ Աստծոց վարդապետ եւ եկել, որովհետու ոչ ոք չի կարող այդ նշաններն անել, որ Դու եւ անում, եթե Աստված նրա հետ չինի»: Հիսուսը պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ թեզ, եթե մենք վերստին ծծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել»: Եկողողեմունը Նրան ասաց. «Մարդ ինչպես կարող է ծնվել, որ ծեր է: Միթե կարող է երկրորդ անգամ իր մոր արգանդը մտնել և ծնվել»: Հիսուսը պատասխան եց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ թեզ, եթե մենք ջրից և Հոգոց ծծնվի, նա չի կարող Աստծո արքայությունը մտնել: Մարդսից ծնվածը մարմին է, և Հոգոց ծնվածը հոգի է: Մի՛ զարմացիր, որ ասացի թեզ, թե պետք է ծեզ վերստին ծծնվել: Քամին որուելու ուզում է՝ փշում է, և նրա ձայնը լուս ես, բայց չզիտես, թե որտեղից է զայխ և ուր է գնում: Այսպես է ամեն Հոգոց ծնվածը»: Եկողողեմունը պատասխանեց և ասաց նրան. «Այդ ինչպես կարող է լինել»: Հիսուսը պատասխանեց և ասաց նրան. «Դու ես Խորայելի վարդապետը և այս չզիտես: Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ թեզ, թե ինչ որ գիտենք, խոսում ենք, և ինչ որ տեսանք, վկայում ենք, և մեր վկայությունը չեք ընդունու: Եթե երկրավոր բաներն ասացի ծեզ, և չեք հավատում, ապա ինչպես կիսվատաք, եթե երկնավոր բաներն ասեն: Եթ ոչ որ վեր չելավ Երկրաք, եթե ոչ Երկնօրինակությունը մարդու Որդին, Նա, որ Երկրում է: Եթ անզես Մոլաւեն օքը օսրձրացրեց անսպասություն, այն այ ես աետք ու մասդու Որդին Երկրավոր այսպիսի, ու ամեն Նուն անհամացողը շնորհ, այլ համեմտնական կատար մնանա: Որովհետև Աստված այնաեւ սիրեց աշխարհը, որիր միաժին նոյզն ավեց, որ առա Օրան հավատացողը կոյոյի, այլ համեմտնական լայսը ուտենա: Որովհետև Աստված իր նոյզու չուռարկց աշխարհ, որ աշխարհահարի, այլ ոյու աշխարհը Նրան նոյզ փրկվեց Օրան ուղարկությունը և ուստարարութիւն, իսկ շահմատությունը այլ անդառասարության է, որովհետև շնապառց Աստծո միաբնակությունը նոյզ անդառասարության է, որ յոյսն կամ աշխարհ, և մարդուն հավարն անելու սիրեցին, բանթ լույսը, որ վիետուն նրանց գործերը չար էին: Որովհետև ամեն

աս զիշերով Հիսուսի մոտ եկավ և ասաց. «Մաքրի», գիտենք որ Աստծոց վարդապետ եւ եկել, որովհետու չի կարող այդ նշաններն անել, որ ծեր է անում, եթե Աստված նրա հետ չինի»: Հիսուսը պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ թեզ, եթե մենք վերստին ծծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել»: Եկողողեմունը Հրեան ասաց. «Մարդ ինչպես կարող է ծնվել, որ ծեր է ծնվել»: Եկողողեմունը Հրեան ասաց. «Մաքրի», Նա, որ Հորդանանի այնտեղ նրանց հետ մնում և մկրտում էր: Եվ Հովհաննեան էլ Այենոնում էր մկրտում՝ Սաղեմի մոտ, որովհետու այնտեղ շատ ջուր կար: Եվ զայխ էին ու մկրտվում էին, որովհետու Հովհաննեաը դեռ բանտի մեջ չէր զցված: Արդ, Հովհաննեաի աշակերտները Հրեաների հետ վեճ ունեցան մաքրության համար: Եվ Հովհաննեաի մոտ եկան և ասացին Նրան. «Մաքրի», Նա, որ Հորդանանի այն կողմում էր թեզ հետ, որի համար դու վկայեցիր, ահա Նա մկրտում է, և ամենը Նրա մոտ են զայխ»: Հովհաննեաը պատասխանեց և ասաց. «Մարդ չի կարող ոչինչ վեր առնել, եթե երկնօրին տրված չինի նրան: Դուք ինքների վկայում եք ինձ համար, որ ասացի ծեզ, թե ես Քրիստոս չեմ, այլ՝ թե Նրա առջևից ուղարկված եմ: Հարսն ունեցողն է փեսա, բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է և լուս է նրան, ուրախությունը ուրախանում է փեսայի ծայնի համար: Արդ, Խմ այս ուրախությունը լցված է: Նրան պետք է ամել, և Ես՝ փորբանալ: Վերևից եկողն ամենից վեր է երկրից ինտոք երկրից է և երկրից է խոսում. Երկրից եկողն ամենից վեր է: Բնչ որ տեսան և բնեց, այն է վկայում, և նրա վկայությունը ոչ որ չի ընդունում: Նրա վկայությունը ընդունողը կնքեց, թե Աստված ճշմարիտ է: Որովհետև Նա, Ում Աստված ուղարկեց, Աստծո բանն է խոսում, որովհետև Աստված Հոգին չափով չի ուսիսի: Հայրը սիրում է Որդուն, և ամեն բան Նրա ձեռքն է տվել: Որդուն հավատացողը օսկինեսական կյանք ուսի, իսկ Որդուն չենազանդվողը կյանքը չի տեսնի, այլ Աստված բարկությունը մնում է նրա վրա: Եվ երե որ Տեր բանցած, որ Փարուեցրները լուցին, յատ Հիսուսն ամենի աշակերտները է անում և միրուն, քան թե Հովհաննեաը թեագետն է Հիսուսն Բարձր Հոր մաստում անդառասարությունը, Հրեանասն երկիր բողոք և դարձաւ կակաս Գայինան:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀՐԵԱՆԵՐԸ

ՓՈԼԿՈՇԵՐ

**ԱՎԵՏԱՐԱՆԻ
ԿԱՆՉԸ ԵՎ
ՃԾՄԱՐԻՏ ԴԱՐՁԸ**

ՎԵՐԱԴԱՐձ ԱՎԵՏԱՐԱՆԻՆ



Ավետարանի զորությունը և ուղերձը

Ավետարանի կանչը և ճշմարիտ դարձը

Ավետարանի հակաստիացումը և զգուշացումները

**ԱՎԵՏԱՐԱՆԻ
ԿԱՆՉԸ ԵՎ
ՃՇՄԱՐԻՏ ԴԱՐՁԸ**

ՓՈԼ ՎՈՅԵՐ

Ավետարանի կանչը և ճշմարիտ դարձը

© 2013 Փոլ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող որևէ կերպով օգտագործվել կամ կրկնօրինակվել՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ կարճ մեջքերումների քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Ուղղեք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

«Reformation Heritage Books»

2965 Լենարդ փող., Ներքասկա

Գրենդ Ռեփիհու, Միչիգան 49525

հեռ. 616-977-0889 / ֆաք. 616-285-3246

Էլ. փոստ. orders@heritagebooks.org

Վեբ կայք. www.heritagebooks.org

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

14 15 16 17 18 19/10 9 8 7 6 5 4 3 2

Աստվածաշնչյան մեջքերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են (1869թ.), կամ, հատուկ նշումների դեպքում, բառացիորեն թարգմանված են «Ձեյմս թագավորի նոր Աստվածաշնչից» (NKJV, հեղինակային իրավունքները՝ 1982թ., «Thomas Nelson, Inc»):

Թարգմանված է անգլերենից 2019թ.

Բովանդակություն

«Վերադարձ Ավետարանին» գրքաշարի ներածություն VII

ՄԱՍ ՄԵԿ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ԿԱՆՉԸ

1. Ապաշխարության կանչ	3
2. Հավատքի կանչ.....	23
3. Հավատալ և դավանել	37
4. Ըստունել Քրիստոսին.....	49
5. Քրիստոսը՝ սրտի դուան առջև	61

ՄԱՍ ԵՐԿՈՒ. ՆՈՐ ՄՐՏԵՐ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԴԱՐՁԻ ԲՆՈՒՅՑԹԸ

6. Փրկության գերազանց դրդապատճառը և նպատակը.....	77
7. Փրկության Հեղինակը.....	87
8. Առանձնացում և մաքրում	91
9. Նոր սիրտ	105
10. Արդյունավետ Հոգին.....	113

ՄԱՍ ԵՐԵՔ. ՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ

ՃՇՄԱՐԻՏ ԴԱՐՁԻ ԲՆՈՒՅՑԹԸ

11. Նոր ուխտի փառքը.....	125
12. Նոր ժողովրդի պատրաստումը	135
13. Քրիստոնյայի հաստատ գիտելիքն Աստծո մասին	149
14. Աստծո ժողովրդի սիրտը և ճանապարհը	159
15. Հավիտենական ուխտը	181
16. Աստծո բարությունն իր ժողովրդի հանդեպ.....	195

«Վերադարձ Ավետարանին»

գրքաշարի ներածություն

Հիսուս Քրիստոսի Ավետարանը մեծագույնն է բոլոր գանձերից, որոնք տրվել են Եկեղեցուն և ամեն մի քրիստոնյայի: Այն պարզապես ինչ-որ ուղերձ չէ այլոց թվով, այլ միակ ուղերձը, որը վեր է մնացած բոլորից: Այն Աստծո գորությունն է՝ փրկելու համար, և Աստծո իմաստության մեծագույն հայտնությունը՝ տրված մարդկանց և հրեշտակներին¹: Այս պատճառով էր, որ Պողոս առաքյալն առաջնահերթություն էր համարում Ավետարանը քարոզելը, շանք էր գործադրում, որ պարզորեն ազդարարեր այն, և նույնիսկ անեծք էր հոչակում նրանց վրա, ովքեր փորձում էին աղավաղել Ավետարանի ճշմարտությունը²:

Քրիստոնյաների ամեն մի սերունդ Ավետարանի ուղերձի տնտեսն է, և Սուրբ Հոգու գորությամբ Աստված կոչ է անում մեզ պահպանել այն գանձը, որը վստահել է մեզ³: Որպես հավատարիմ տնտեսներ՝ մենք պետք է կլանված լինենք Ավետարանի ուսուցմամբ, մեծ շանք գործադրենք, որ հասկանանք դրա ճշմարտությունները, և պարտավորվենք հսկել դրա բովանդակությունը⁴: Այսպես վարվերով՝ մենք կապահովենք թե՛ մեր, թե՛ մեզ լսողների փրկությունը⁵:

Այս տնտեսությունն է դրդում ինձ գրել այս գրքերը: Ես այնքան ել չեմ ցանկանում թվել գիրք գրելու դժվարին գործին և, անկասկած, քրիստոնեական գրքերի պակաս նույնպես չկա: Այսուամենայնիվ, ես գրի առա իմ քարոզաշարերը նոյն պատճառով, որով և քարոզում էի դրանք՝ դրանց բերից ազատվելու համար: Ինչպես Երեմիայի դեպքում, եթե ես չխոսեմ այս ուղերձը, «այն ժամանակ սրտիս մեջ վառված կրակի պես դարձավ՝ ուկորներում պահկած, և ես հոգսեցի կրելուց և չկարողացա»⁶: Ինչպես որ բացականչեց Պողոս առար-

1. Հռոմեացիների 1.16, Եփեսացիների 3.10

2. Ա Կորնթացիների 15.3, Կողոսացիների 4.4, Գաղատացիների 1.8, 9

3. Բ Տիմոթեոս 1.14

4. Ա Տիմոթեոս 4.15

5. Ա Տիմոթեոս 4.16

6. Երեմիա 20.9

յալը. «Վայ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ»⁷: Ինչպես հայտնի է, «Ավետարան» բառն առաջացել է հունարեն «τελιανορθίην» բառից, որն ավելի ճիշտ կլինի թարգմանել «բարի լուր»: Ինչ-որ իմաստով, Աստվածաշնչի ամեն մի էջն Ավետարան է պարունակում, սակայն, այլ իմաստով: Ավետարանը շատ հստակ ուղերձ է փրկության մասին, որը կատարվել է անկում ապրած մարդկանց համար Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու կյանքի, մահվան, հարության և համբարձման միջոցով:

Նոր բարեհաճությանը համաձայն՝ հավիտենական Որդին, Ով հավասար է Հորը և Նրա բնության ճշգրիտ պատկերն է, հոժարաբար թողեց երկնային փառքը, հղացվեց Սուրբ Հոգուց կոյսի որովայնում և ծնվեց որպես Աստված-մարդ՝ որպես Նազովրեցի Հիսուս⁸: Նա ապրեց այս աշխարհում որպես մարդ՝ կատարելապես հնագանդվելով Աստծո օրենքին⁹: Երբ եկավ ժամանակի լրումը, մարդիկ մերժեցին և խաչեցին Նրան: Խաչի վրա Նա վերցրեց Իր վրա մարդկության մեղքը, կրեց Աստծո զայրույթը և մահացավ մարդկության փոխարեն¹⁰: Երրորդ Օրը Աստված հարություն տվեց Նրան մեռելներից: Նրա հարությունը՝ աստվածային ազդարարում էր այն մասին, որ Հայրն ընդունեց Իր Որդու մահը՝ որպես զրի մեղքերի համար: Հիսուսը կրեց մարդկության անհնագանդության պատիժը, բավարարեց Աստծո արդարադատության պահանջները և խաղաղեցրեց Աստծո զայրույթը¹¹: Հարությունից քառասուն օր անց Աստծո Որդին համբարձվեց Երկինք և նստեց Աստծո աջ կողմը՝ ստանալով փառք, պատիվ և իշխանություն ամեն ինչի վրա¹²: Այդտեղ՝ Աստծո ներկայության մեջ, Նա ներկայացնում է Իր ժողովրդին և խնդրանքներ է մատուցում Աստծուն նրանց կողմից¹³: Աստված լիարժեք կերպով կների, կարդարացնի և Իր հետ կհաշտեցնի նրանց, ովքեր ընդունում են իրենց մեղավոր և անօգնական վիճակը, և գցում են իրենց Քրիստոսի վրա¹⁴: Սա է Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանը:

Մերօրյա քրիստոնեական սերնդի ամենամեծ հանցանքներից մեկը Ավետարանը անտեսելն է. մեր բոլոր ախտերը բխում են դրանից: Կորսված աշխարհը ոչ թե խստացված է Ավետարանի հանդեպ, այլ, ավելի շուտ, անտեղյակ է Ավետարանից, քանի որ այն մարդիկ, ով-

7. Ա Կորնթացիների 9.16

8. Գործ 2.23, Երրայեցիների 1.3, Փիլիպեցիների 2.6,7, Ղուկաս 1.35

9. Երրայեցիների 4.15

10. Ա Պետրոս 2.24, 3.18, Եսայի 53.10

11. Ղուկաս 24.6, Հռոմեացիների 1.4, Հռոմեացիների 4.25

12. Երրայեցիների 1.3, Սատրեն 28.18, Դամիել 7.13,14

13. Ղուկաս 24.51, Փիլիպեցիների 2.9-11, Երրայեցիների 1.3, Երրայեցիների 7.25

14. Մարկոս 1.15, Հռոմեացիների 10.9, Փիլիպեցիների 3.3

քեր հոչակում են Ավետարանը, նույնպես չփխեն դրա հիմնարար ճշմարտությունները: Այն տարրական թեմաները, որոնք կազմում են Ավետարանի միջուկը՝ Աստծո արդարադատությունը, մարդու ծայրաստիճան ապականված լինելը, արյան քափությունը, ճշմարիխ դարձի բնույթը և փրկության մեջ հավաստիացում ունենալու աստվածաշնչան հիմքը, չեն հիշատակվում շատ ու շատ ամբիոններից: Եկեղեցիները կրնատում են Ավետարանի ուղերձը՝ հասցնելով այն քրիստոնեական հավատամքներից վերցրած մի քանի արտահայտությունների: Նրանք սովորեցնում են, որ դարձը սոսկ մարդու որոշումն է, և հայտարարում են, որ ցանկացած մարդ, ով ապաշխարության աղոթք է անում, փրկված է:

Ավետարանի նմանօրինակ կրնատումը շատ լուրջ հետևանքներ ունի: Առաջնոր՝ այն էլ ավելի է խատացնում դարձի չեկած մարդկանց սրտերը: Այսօր «դարձի եկածներից» քչերն են միանում եկեղեցիներին, իսկ միացողները հաճախ ետ են կանգնում կամ մարմնավոր կյանք են վարում: Միլիոնավոր մարդիկ, ովքեր քայլում են մեր բնակավայրերի փողոցներով և նստում են մեր եկեղեցիներում, չեն վերապրում այն փոփոխությունը, որը բերում է Հիսուս Քրիստոսի ճշմարիխ Ավետարանը, սակայն նրանք համոզված են, որ փրկված են, քանի որ մեկ անգամ իրենց կյանքում նրանք ձեռք են բարձրացրել ինչ-որ ավետարանչական հավաքույթի ժամանակ կամ ինչ-որ աղոթք են կրկնել: Ապահովության այս կեղծ զգացումը մեծ խոչընդոտ է ստեղծում, որը հաճախ փակ է դարձնում նման մարդկանց՝ ճշմարիխ Ավետարանը լսելու համար:

Երկրորդո՞՝ նման ավետարանը խեղաթյուրում է եկեղեցին (որը վերածնված հավատացյալների հոգևոր մարմին է)` վերածելով այն մարմնավոր մարդկանց հավաքույթի, ովքեր դավանում են, որ ճանաչում են Աստծոն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան¹⁵: Երբ քարոզվում է ճշմարիխ Ավետարանը, մարդիկ եկեղեցի են գալիս՝ առանց քրիստոնեական ժամանցային ծրագրերի, հատուկ միջոցառումների կամ այնպիսի խոստումների, որոնք ավելին են, քան այն, ինչ տալիս է Ավետարանը: Մարդիկ եկեղեցի են գալիս, քանի որ ցանկանում են Քրիստոսին, փափագում են լսել Աստվածաշնչի ճշմարտությունը, սրտանց երկրպագել Աստծոն, ինչպես նաև հնարավորություններ են փնտրում՝ մարդկանց ծառայելու համար: Երբ եկեղեցին հոչակում է ցածրորակ Ավետարան, այն լցվում է մարմնավոր մարդկանցով, որոնց գրեթե չեն հետաքրքրում Աստծո իրողությունները, իսկ նման մարդկանց պահելը ծանր բեռ է դառնում եկե-

դեցու համար¹⁶: Նման պայմաններում Եկեղեցին նվազեցնում է Աստվածաշնչի ծայրահեղ պահանջները՝ փոխարինելով դրանք հարմարավետ բարոյականությամբ, իսկ ճշմարիտ նվիրումը Քրիստոսին տեղի է տալիս այնպիսի գործունեության, որի նպատակն է՝ գոհացնել իր անդամներին: Եկեղեցին դառնում է միջոցառումների վայր և դադարում է կենտրոնանալ Քրիստոսի վրա. այն մանրակրկիտորեն գտում կամ վերածնակերպում է ճշմարտությունը՝ իր մարմնավոր մեծամասնությանը չվիրավորելով նպատակով: Եկեղեցին անտեսում է Աստվածաշնչի և ուղղադավան քրիստոնեության ճշմարտությունները և սկսում է առաջնորդվել պրագմատիզմով (կամ օգտապահտությամբ՝ այն ամենով, ինչը պահպանում է Եկեղեցու բնականոն կյանքը և ապահովում է Եկեղեցու աճը):

Երրորդը՝ նման ավետարանը փոքրացնում է ավետարանչության կամ միսիոներական աշխատանքի նշանակությունը՝ վերածելով այն մարկետինգային ռազմավարությամբ առաջնորդվող մարդասիրական ջանքերի, որոնք հիմնված են մշակույթի վերջին միտումների մանրակրկիտ ուսումնասիրությունների վրա: Տարիներ շարունակ տեսնելով ոչ սուրբգրային ավետարանի անկարողությունը՝ շատ ավետարանականներ, թվում է, համոզված են, որ Ավետարանը չի գործում, քանի որ ինչ-որ կերպով մարդն այնքան բարդ արարած է դարձել, որ չի կարող փրկվել նման պարզ և վրդովեցուիչ ուղերձով: Ներկայումս Եկեղեցիներն ավելի շատ ծգոտում են հասկանալ մեր անկում ապրած մշակույթը և դրա տարօրինակությունները, քան հասկանալ և հոչակել միակ ուղերձը, որն իր գորու է փրկելու այդ մշակույթը: Արդյունքում Ավետարանը շարունակ վերածնակերպվում է՝ ժամանակակից մշակույթին համապատասխանելու համար: Մենք մոռացել ենք, որ ճշմարիտ Ավետարանը մշտապես համապատասխան է ամեն մի մշակույթի, քանի որ այն Աստծո հավիտենական խոսքն է՝ ուղղված յուրաքանչյուրին:

Չորրորդը՝ նման ավետարանը նախատինք է բերում Աստծո անվանը: Արժեգրկված ավետարան հոչակելու արդյունքում մարմնավոր և դարձի չեկած մարդիկ մուտք են գործում Եկեղեցի, ու թեև նրանք գրեթե լիովին արհամարհում են աստվածաշնչյան և Եկեղեցական կարգապահությունը, նրանց թույլ են տալիս մնալ՝ առանց շտկելու կամ հանդիմանելու: Այս փաստն արատավորում է Եկեղեցու մաքրությունը և համբավը և նախատում է Աստծո անունն անհավատների մեջ¹⁷: Արդյունքում Աստված չի փառավորվում, Եկեղեցին չի կառուցվում, Եկեղեցու դարձի չեկած անդամները չեն փրկվում, և Եկե-

16. Ա Կորնթացիների 2.14

17. Հռոմեացիների 2.24

դեցին գրեթե կորցնում է իր զորությունը կամ լիովին անզոր է դառնում՝ աշխարհին վկայելու համար:

Մեզ՝ ծառայողներիս և աշխարհական հավատացյալներիս, սազական չէ անզործությամբ հետևել, թե ինչպես է մեր «Երանելի Աստծո փառափոր Ավետարանը» փոխարինավում անփառունակ ավետարանով¹⁸: Որպես այս ավանդի տնտեսներ՝ մենք պարտավոր ենք վերադառնալ միակ ճշմարիտ Ավետարանին և խիզախորեն ու պարզորեն ազդարարել այն բոլորին: Մենք լավ կանենք, եթե ականջ դնենք Զարլգ Հեղդոն Սփերջենի խոսքերին.

«Այս օրերին ես պարտավորված եմ զգում, որ շարունակաբար անդրադառնամ Ավետարանի տարրական ճշմարտություններին: Խաղաղ ժամանակներում մենք միզուցե ազատորեն արշավելու կազմակերպենք դեահ ճշմարտության հետաքրքիր դրամները, որոնք գտնվում են շատ հեռուներում, բայց այժմ մենք պետք է տանը մնանք և հսկենք եկեղեցում գտնվող սրտերը և ընտանիքները՝ պաշտպանելով մեր հավատքի առաջին սկզբունքները: Շատերն են ներություն պատճառում մեզ իրենց փիլիխստիայություններով և վիճական մեկնաբանություններով, որոնցով նրանք մերժում են այն վարդապետությունները, որոնք, իրենց իսկ ասելով, սովորեցնում և վարկաբեկում են այն հավատքը, որը պարտավորվել են պահպանել: Անհրաժեշտ է, որ մեզից մի քանից, ովքեր գիտեն, թե ինչին ենք մենք հավատում, և չեն աղսպահում մեր խոսքերը, հաստատեն մեր ոտքերը և ամրապնդեն մեր դիրքը՝ ուսուցանելով կյանքի խոսքը և պարզորեն ազդարարելով Հիսոս Քրիստոսի Ավետարանի հիմնարար ճշմարտությունները»¹⁹:

Թեև «Վերադարձ Ավետարանին» գրքաշարը չի պարունակում Ավետարանի ամբողջական համակարգված ներկայացում, այն, այդուհանդերձ, անդրադառնում է դրա ամենահական տարրերի մեծ մասին, հատկապես այն ճշմարտություններին, որոնք ամենից անտեսված են ժամանակակից քրիստոնեության մեջ: Հուսով եմ, որ այս խոսքերը կառաջնորդեն ձեզ՝ օգնելով վերագտնել Ավետարանն ամբողջ գեղեցկությամբ, վրդովեցուիչ ճշմարտություններով և փրկարար զորությամբ: Իմ աղոթքն է, որ այն վերագտնելը նաև վերափոխի ձեր կյանքը, զորացնի ձեզ Ավետարանը հոչակելու մեջ և փառափորի Աստծուն:

Ձեր եղբայր

Փոլ Դեյվիդ Վոշեր

18. Ա Տիմոթեոս 1.11

19. Զարլգ Հ. Սփերջեն, ««Մետրոպոլիտեն Թերելուներ»-ի ամրինը» (վերտառ. Փասադենա, Տեխնաս, «Pilgrim Publications»), հու. 32, էջ 385:

ՄԱՍ ՄԵԿ

Ավետարանի կանչը



«Հիսուսը եկամ Գալիլեա, քարոզում էր Աստծո թագավորության Ավետարանը և ասում, թե «Ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մտնեցել է: Ապաշխարե՛ք և հակառացե՛ք Ավետարանին»:

— Մարկոս 1.14,15

«Որ ինչպես եւս չպահեցի ոչ մի օգտակար բան, որ չպատմեմ և սովորեցնեմ ձեզ թե՛ հրապարակներում, և թե՛ տան մեջ, հրեաներին և հոգներին վկայություն տալով՝ ապաշխարել դեպի Աստված և հակատալ մեր Տեր Հիսոս Քրիստոսին»:

— Գործք 20.20,21

«Բայց Գիրքն ինչ է ասում. «Միտիկ է քեզ խոսքը, քո բերանում ու քո սրտում է», այսինքն՝ հակատքի խոսքը, որ մենք քարոզում ենք: Որովհետև եթե բերանովդ Հիսոսին Տեր դավանեն և սրտում հակատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մենեներից, կապեն: Քանի որ սրտով հակատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար»:

— Հռոմեացիների 10.8-10

ԳԼՈՒԽ ՄԵԿ



Ապաշխարության կանչ

«Հիսուսը եկավ Գալիլեա, քարոզում էր Աստծոն թագավորության Ավետարանը և ասում, թե «Ճամանակը կատարվել է, և Աստծոն թագավորությունը մտնեցել է: Ապաշխարեք և հավատացեք Ավետարանին»:

— Մարկոս 1.14,15

«Աստված, տգիտության ժամանակներն անտես անելով, իհնա մարդկանց պատվիրում է ամենին ամեն տեղ ապաշխարել»:

—Գործ 17.30

Համաձայն Աստծոն հավիտենական ծրագրի և հաճության՝ Աստծոն Որդին, Ով հավասար է Հորը և Նրա Էության ճշգրիտ նկարագիրնէ, հոժարակամ թողեց երկնային փառքը, Սուրբ Հոգով հղացվեց կոյսի որովայնում և ծնվեց որպես Աստված-մարդ: Նա քայլեց այս երկրով՝ կատարելապես հնազանդվելով Աստծոն օրենքին, իսկ հետո, երբ եկավ ժամանակի լրումը, մերժվեց մարդկանց կողմից և խաչվեց: Խաչի վրա Նա կրեց Իր ժողովրդի մեղքերը, լրվեց Աստծուց, կրեց աստվածային զայրույթը, դատապարտվեց և մահացավ: Երրորդ օրը Աստված հարություն տվեց Նրան մեռեներից՝ հրապարակավ ազդարարելով, որ Նրա մահն ընդունվեց, մեղքի պատիժը վճարվեց, արդարադատության պահանջները բավարարվեցին, և Աստծոն զայրույթը խաղաղեցվեց: Իր հարությունից քառասուն օր անց Հիսուս Քրիստոսը՝ Աստծոն Որդին և մարդու Որդին, համբարձվեց Երկինք, որտեղ Նա նստեց Հայր Աստծոն աջ կողմում և ստացավ փառք, պատիվ և իշխանություն ամեն ինչի վրա: Աստծոն ներկայության մեջ Նա ներկայացնում է Իր ժողովրդին և Աստծոն առջև բարեխսում է նրանց համար: Սա Աստծոն և Նրա Որդիի Հիսուս Քրիստոսի բարի լուրն է¹:

Գիտակցելով այն մեծ աշխատանքը, որ Աստված կատարել է, մենք պետք է ուղղենք մեր ուշադրությունը մարդկությանը: Ո՞րն է

1. Այս ամփոփումը մասամբ հիմնաված է Վեստմինստերի հավատքի դավանանքի 8-րդ գլուխ վրա:

մարդու աստվածաշնչյան արձագանքն Ավետարանին: Ինչպես ավետարանիչը պետք է ուղղորդի հուսահատ մարդկանց, եթե նրանք աղաղակում են. «Ինչ պետք է անեմ, որ փրկվեմ»: Աստվածաշունչը պարզորեն պատասխանում է. մարդիկ պետք է ապաշխարեն և հավատան Ավետարանին: Եթե Հիսուսը հայտնվեց Խորայելին, Նա չաղաչեց բացել իրենց սրտերը և հրավիրել իրենց իրենց սրտի մեջ, ոչ ել առաջնորդեց նրանց ինչ-որ աղոթք կրկնելու: Փոխարենը, Նա պատվիրեց նրանց թողնել իրենց մեղքերը և հավատալ Ավետարանին²:

ՄՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՓՈՓՈԽ ԿԱՆՉ

Մինչև շարունակելը, մենք պետք է հասկանանք, որ Քրիստոսի պատվերն ապաշխարության և հավատքի վերաբերյալ դեռևս կիրառելի է մեզ համար այսօր: Սարսափելիորեն վխալ կլինեք մտածելը, որ այն սահմանափակվում է որևէ դիսպանեսացիայով կամ վերաբերում էր միայն Նոր կտակարանի ժամանակաշրջանում ապրող իրեաներին: «Ապաշխարե՛ք և հավատացե՛ք» ավետարանական կանչը վավերական է երեկ, այսօր և հավիտյան: Առաջաները կրկին հաստատեցին այս ճշմարտությունը և համարձակ հոչակեցին այն Քրիստոսի հարությունից և համբարձումից հետո: Ուշադրություն դարձրեք Պողոս առաքյալի պնդումներին.

«Որ ինչպես եւս չպահեցի ոչ մի օգտակար բան, որ չպատմեմ և սովորեցնեմ ձեզ, թե՛ հրապարակներում, և թե՛ տան մեջ, իրեաներին և հոլյուերին վկայություն տալով՝ ապաշխարել դեպի Աստված և հավատալ մեր Տեր Հիսուս Քրիստոսին» (Գործ 20.20,21):

«Բայց Աստված, տղիտության ժամանակներն անտես անելով, իհմա մարդկանց պատվիրում է ամենին ամեն տեղ ապաշխարել» (Գործ 17.30):

Այս և մի քանի այլ հատվածներ ապացուցում են, որ գոյություն չունի որևէ փաստարկ, ըստ որի կարելի է վերագրել ապաշխարությունն ավելի վաղ դիսպենսացիաներից մեկին կամ անտեսել այն ժամանակակից ավետարանական քարոզման մեջ: Աստծո առջև ապաշխարելու կոչ էին անում Հին կտակարանի մարգարեները, Հովհաննես Մկրտիչը, Տեր Հիսուս Քրիստոսը, առաքյաները և Եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում ամենից աստվածապաշտ և արդյունավետ աստվածաբանների, քարոզիչների և միսիոներների կողմից կազմված հավատքի դավանանքները և քարոզները: Վեստմինստերի և Նյու Հեմփշիրի հավատքի դավանանքները համապատասխանաբար պնդում են հետևյալը.

2. Կարդացեք Մարկոս 1.14,15-ը՝ որպես մեկ օրինակ:

«Կյանքի համար ապաշխարությունն Ավետարանի շնորհներից մեկն է, և վարդապետությունն այս մասին պետք է քարոզվի Ավետարանի ամեն ծառայողի կողմից, ինչպես և ամեն Քրիստոսին հավատացողի» (15.1):

«Մենք հավատում ենք, որ ապաշխարությունը և հավատքը սրբազն պարտականություններ են, և նոյնպես՝ անքակտելի շնորհներ» (հղ. 8):

ՃԾՄՐԻՏ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԵՎԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Քանի որ ապաշխարության կանչը բացարձակ անհրաժեշտություն է Ավետարանի հոչակման մեջ, մենք պետք է պատշաճ կերպով հասկանաք ապաշխարության բնույթը և դրա դրսնորումը ճշմարիտ դարձի դեպքում: Ստորև ներկայացված է ուրիշ էական հատկանիշ, որոնք բնութագրում են ճշմարիտ աստվածաշնչան ապաշխարությունը.

- մտավոյնություն
- տրտմություն մեղքի պատճառով
- մեղքի անձնական գիտակցում և խոստովանում
- մեղքից հեռանալը
- հրաժարում ինքնարդարացումից և բարի գործերից
- դարձ դեպի Աստված
- գործնական հնագանդություն
- ապաշխարության շարունակական և ավելի խորը աշխատանք

Անչափ կարևոր է, որ հասկանանք, որ ճշմարիտ ապաշխարությունը բնութագրող այս էական հատկանիշները պարտադիր չեն, որ դրսնորվեն լիարժեք կամ հասուն կերպով դարձի պահին, այլ շարունակելու են զարգանալ և խորանալ հավատացյալի կյանքիամբողջ ընթացքում: Սարսափելիորեն մոլորեցնող և կործանարար կինի ենթադրելը, որ ճշմարիտ դարձի դեպքում մարդը պետք է ունենա ապաշխարության և հավատքի այնպիսի խորություն, որը հազվադեպ է հանդիպում նոյնիսկ ամենահասուն քրիստոնյաների կյանքում: Հիսուսն Ինքն ասաց, որ նոյնիսկ մասնանեխի հատի չափ հավատքը բավական է սարեր շարժելու համար, եթե այն ճշմարիտ է: Դարձի ժամանակ մարդու պատկերացումը մեղքի զարհուրելի բնույթի մասին կարող է աղոտ լինել, բայց այն իրական է: Նորադարձի կոտրվածության աստիճանը կարող է մակերեսային լինել՝ հասուն հավատացյալի համեմատ, բայց այն, անկասկած, ճշմարիտ է: Վերջնական ապացույցը, որ մարդը փրկարար ապաշխարություն և հավատք ունի, այն է, որ այս երկու շնորհներն են շարունակում են աճել

և խորանալ նրա լյանքում՝ Աստծո սրբացման հարատև աշխատանքի միջոցով: Մոռապահելով այս պարզաբանումները և զգուշացումները՝ ավելի ուշադրությամբ դիտարկենք այս հատկանիշներից ամեն մեկը:

Սուսափիություն

Այս բայը Նոր կտակարամում, որն ամենից հաճախ թարգմանվել է «ապաշխարել» բառով, կազմված է մեկ այլ բայից, որը նշանակում է «ընկալել կամ հասկանալ», և մի նախդիրից, որը փոփոխության իմաստ ունի⁴: Այսպիսով, ապաշխարությունը ենթադրում է արմատական փոփոխություն պատկերացման կամ իրականության ընկալման մեջ: Աստվածաշնչում մտափոխությունը ոչ մի դեպքում չի սահմանափակվում մորով, այլ հավասարապես արմատական աղդեցություն ունի զգացմունքների և կամքի վրա: Որպես ամփոփում՝ ճշմարիտ ապաշխարությունը սկզբում է Սուրբ Հոգու աշխատանքով մեղավորի կյանքում, երբ Նա վերածնում է նրա սիրտը, լուսավորում է միտքը և բացահայտում է սխալմոնքները աստվածային ճշմարտության հայտնությամբ: Այս աստվածային աշխատանքի շնորհիվ, մեղավորի միտքը փոխվում է, և նրա ընկալումն իրականության մասին ենթարկվում է արմատական շրջադարձի, հատկապես՝ Աստծո, սեփական անձի, մեղքի և փրկության ճանապարհի վերաբերյալ:

Աստվածաշնչը սովորեցնում է, որ մինչև դարձը մարդը խավարած է իր մտքով և վարվում է մտքի ունայնությամբ⁵: Ավելին՝ նրա միտքը թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ, ճնշում է ճշմարտությունն Աստծոն մասին և չի կարող հնազանդվել Աստծո օրենքին⁶: Հետևաբար, դարձի չեկած մարդը լիովին աղավաղված պատկերացում ունի իրականության մասին, և չափազանցություն չէ ասելը, որ նա սիսալ է բոլոր հարցերում, որոնք իրապես կարևոր են: Նա ունի ինչ-որ գիտելիք ճշմարիտ Աստծոն և Նրա մեծության մասին, սակայն չի համարում, որ անհրաժեշտ է պատվել Նրան որպես Աստծո, կամ գոհանապ Նրանից⁷: Նա լցված է եսակենտրոն ձգուուներով և իր անձի առաջադացումը համարում է ամեն ինչի վերջնական նպատակը: Աստծո օրենքները գրված են նրա սրտին, բայց նա չի կարծում, որ անհրաժեշտ է կամ օգտակար է հետևել դրանց ցուցումներին: Փոխարենը, պայքարում է իր խղճի դեմ և ձգուում է

4. «Մեռանուն»: «Մեռա» նախդիրը, որն օգտագործվում է շարժում և մտավոր գործունեություն նշանակող բայերի հետ, ցոյց է տալիս պարզ բայի իմաստի փոփոխություն»: «Նոր կոսկարանի աստվածաբանության նոր միջազգային բանասն» Կոլին Բրաոնի հրատ. (Գրենլ Ռեփիդս, «Zondervan», 1975թ.) հս. 1, էջ 357:

5. Եփեսացիների 4.17,18

6. Հռոմեացիների 1.18, 8.7

7. Հռոմեացիների 1.21

ճնշել այն, ինչը, ինչպես ինքը գիտի, ճշմարիտ է⁸: Նա գիտի, որ ովքեր չարիք են գործում, արժանի են մահվան, բայց չի կարծում, որ անհրաժեշտ է վախենալ դրանից: Նա ոչ միայն անում է նույն բաները, այլև սրտանց հավանություն է տալիս այլ չարիք գործողներին⁹: Նրա մահկանացու լինելը հակառակվում է նրան, մինչ մահը կլանում է այն, ինչ նրա շուրջն է, բայց նա չի կարծում, որ այդ աղետը երբևէ կիասնի իր դռանը: Պարզ ասած՝ դարձի չեկած մարդը սխալ է, սակայն ամբարտավան կերպով շարունակում է անել այն, ինչը ճիշտ է համարում¹⁰: Նա գնում է այն ճանապարհով, որը ճիշտ է թվում իրեն, բայց դրա վերջը մահվան ճանապարհներ են¹¹:

Այնուամենայնիվ, դարձի պահին Աստծո Հոգին վերածնում է մարդու սիրտը, և ճշմարտությունը լուսավորում է նրա խավարած միտքը: Այդ ժամանակ, նման կոյրի, որը տեսողություն է ստացել, կամ քնածի, որն անթնացել է երազից, նա գիտակցում է, որ իր ամբողջ կյանքը դեկավարվել է իր մոլորություններով, և որ ինքը սխալ է եղել ամեն հարցում: Առաջին անգամ իր կյանքում նա տեսնում և հասկանում է ճշմարտությունը: Նրա սխալ և նույնիսկ հայինիչ մտքերն Աստծո մասին փոխարինվում են միակ ճշմարիտ Աստծո աղոտ, սակայն ճշգրիտ ընկալմամբ: Նրա ունայն կարծիքներն իր առաքինության և արժանիքների մասին փոխարինվում են իր արատավոր քնության և խղճուկ գործերի գիտակցմամբ: Նրա ամբարտավանությունը, ինքնավստահությունը և անկախությունը փոխարինվում են ճշմարիտ խոնարհությամբ, սեփական անձի հանդեպ անվստահությամբ, մեղքի պատճառով կոտրվածությամբ և Աստծոց կախվածությամբ, Ումից նա այժմ ներում է հայցում: Նա հենվում է Աստծոն ողորմության վրա, որն արտահայտվում է Հիսուս Քրիստոսի Անձի և աշխատանքի միջոցով, և որոշում է կայացնում կատարել Աստծոն կամքը: Այսպիսով, նրա միտքը փոխվում է, և նրա կյանքն այլ է դառնում: Այդպիսի մարդն ապաշխարել է:

Տարսունցի Սողոսն աստվածաշնչան ապաշխարության փայլուն օրինակ է: Իր անտեղյակության և անհավատության պատճառով նա համարում էր, որ Նազովլեցի Հիսուսն ընդամենը ինքնակը և հայ-ինիչ էր, և կարծում էր, որ ովքեր հետևում էին Նրան, արժանի էին բանտարկության և մահվան¹²: Այնպես որ, նա գնաց քահանայապետի մոտ՝ «սպառնալիք և մահ շնչելով Տիրոջ աշակերտների վրա», և խնդրեց նամակներ, որպեսզի «եթե մեկին գտնի այն ճանապար-

8. Հռոմեացիների 2.14.15

9. Հռոմեացիների 1.32

10. Դատավորաց 17.6, 21.25

11. Առակաց 14.12

12. Գործը 9.1.2, Ա Տիմոթեոս 1.13

հին հետևող՝ մարդկանց կամ կանանց, նրանց կապած թերի Երուսաղեմ» (Գործք 9.1,2): Այնուամենայնիվ, Դամասկոսի ճանապարհին փառավորված Քրիստոսն ընդդիմացավ Սոլոսին¹³: Այդ պահին Սոլոսի պատկերացումն իրականության մասին լիովին խարխալվեց: Նա բացահայտեց, որ ինքը սխալ էր ամեն ինչում: Նա կարծում էր, որ Նազովութեցի Հիսուսը հայինից էր, սակայն բացահայտեց, որ Նա Աստծո Որդին էր, խոստացված Մեսիան և աշխարհի Փրկիչը: Նա կարծում էր, որ արդարությունը վաստակում էին օրենքին հնագանդվելով, սակայն բացահայտեց, որ իրենում ոչ մի բարի բան չկար, և փրկությունը չնորիքով էր՝ հավատքի միջոցով, և այն ոչ թե իրենից էր, այլ՝ պարզեց էր Աստծոց¹⁴: Նա կարծում էր, որ աշակերտներն Խրայելի թշնամիներն էին և չպետք է ապրեին, սակայն նա բացահայտեց, որ հավածում էր ճշմարիտ Խրայելը և մահվան էր մատնում կենդանի Աստծո որդիներին և դուստրերին¹⁵: Այսպիսով, երեք օր մենակ մնաց, «չէր տեսնում, և ոչ ուտում էր, և ոչ խմում» (Գործք 9.9): Ճշմարտության, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի հետ մեկ հանդիպման արդյունքում հպարտ և սեփական անձն արդարացնող մարդը, ով «երրայեցի էր երրայեցիներից», կոտրվեց՝ բաժանվելով միլիոնավոր մասերի:

Սուրբ Հոգու լուսավորող և վերածնող աշխատանքի միջոցով նրա սիրտը և միտքը փոխվեցին, և նրա կյանքը հավիտյան արմատական շրջադարձ ապրեց: Նա ապաշխարեց, վեր կացավ և մկրտվեց. Նա կերավ և զորացավ: Նա անմիջապես սկսեց քարոզել Հիսուսին ժողովարաններում՝ ասելով. «Սա է Աստծո Որդին» (Գործք 9.18-22): Լուրջ տարածվեց Հրեաստանի բոլոր եկեղեցիներում, թե «Նա, որ մի ժամանակ մեզ հալածում էր, հիմա այն հավատքն է ավետարանում, որ առաջ կործանում էր» (Գաղատացիների 1.22,23):

Պողոսը նկարագրում է իր կյանքի այս արմատական փոփոխությունը, որը սկսվեց Դամասկոսի ճանապարհին, հետևյալ բառերով: Դրանցում մենք բացահայտում ենք Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով փոխված մտքի և նորոգված սրտի զորությունը.

«Բայց այն, ինչ ինձ շահ էր, այն վսաս համարեցի Քրիստոսի համար: Եվ հենց ամեն բան էլ վսաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն բանից զրկվեցի և աղք եմ համարում, որ Քրիստոսին շահեմ և Նրանում գտնվեմ, և ոչ թե իմ արդարությունն ունենամ, որ օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատքից է, այն արդարությունը, որ Աստծոց է՝ հավատքով» (Փիլիպ. 3.7-9):

13. Գործք 9.3-8

14. Հռոմեացիների 7.18, Եփեսացիների 2.8,9

15. Գործք 8.1, Հռոմեացիների 8.14,15, Գաղատացիների 6.16

Տրտմություն մեղքի պատճառով

Եբրայերեն «նախամ» բառն օգնում է մեզ ավելի լավ հասկանալ ապաշխարության իմաստը: Այն կազմված է մի արմատից, որը նշանակում է «խորը շնչել» և ենթադրում է տրտմության, ափսոսանքի և զղջման արտահայտում¹⁶: Այսպիսով, աստվածաշնչյան ապաշխարությունն ընդգրկում է ոչ միայն մտափոխություն, այլև ճշմարիտ տրտմություն մեղքի պատճառով:

Մեր մեղքի և հանցանքի նոյնիսկ ամենաանսշան ընկալումը կղրդի ճշմարիտ զղջման, ամոթի և նոյնիսկ ողջամիտ ատելության ու զգվանքի՝ մեր մեղքի և մեր հանդեպ: Դայիր Եզրասը հայտարարեց, որ նա «ամաչում էր և չէր համարձակվում» բարձրացնել իր երեսը դեպի Աստված՝ Խրայելի մեղքերի պատճառով (9.5,6): Երեմիա մարգարեն աղաղակեց. «Մենք պառկում ենք մեր ամոթով, և մեր անարգանքը ծածկում է մեզ, որովհետև մեր Տեր Աստծո դեմ մեղանչեցինք՝ մենք և մեր հայրերը, մեր մանկությունից մինչև այսօր, և չլսեցինք մեր Տեր Աստծո ձայնին» (Երեմիա 3.5): Եզեկիել մարգարեն նոյնիսկ այնքան համարձակ էր, որ հայտարարեց, որ երբ անհնազանդ Խրայելն ի վերջո գիտակցեր Տիրոջ դեմ գործած իր մեղքի զարհութելի բնույթը, ժողովուրդը կզգվեր ինքն իրենից՝ բոլոր չար գործերի համար, որ արել էր¹⁷: Եվ վերջապես, գրելով Հռոմի հավատացյալներին՝ Պողոս առաքյալը նշեց, որ նրանք դեռ ամաչում էին այն արարքներից, որոնք գործել էին նախքան դարձի գալը¹⁸:

Նման խոսակցությունն անտեղի է թվում այս աշխարհում և այնպիսի ավետարանական համայնքներում, որոնցում գերակշռում է սեփական անձն արժնորելու հոգեբանությունը: Այսուամենայնիվ, տրտմությունը, ամոթը և ատելությունը սեփական անձի հանդեպ՝ աստվածաշնչյան ճշմարտություններ են և ճշմարիտ ապաշխարության էական մասն են թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում: Տեր Հիսուս Քրիստոսի և Պողոս առաքյալի հետևյալ ուսուցումները պարզունակ վկայում են այս ճշմարտության մասին.

«Եվ մաքսավորը հեռու կանգնած իր աչքերն է չէր կամենում դեպի երկինքը բարձրացնել, այլ իր կործքը ծեծում էր և ասում. «Ո՛վ Աստված, որդումի՞ր իսձ՝ մեղավորիս»: Ասում եմ ձեզ, թե՛ սա արդարացած իջավ իր տոննը, քան թե՛ նա, որովհետև ամեն ինքն իրեն բարձրացնողը կյունարիկի, և ինքն իրեն խնարիեցնողը կբարձրանա» (Ղուկ. 18.13,14):

«Հիմա ուրախ եմ, ոչ թե նրա համար, որ տրտմեցիք, այլ որ տրտմեցիք ապաշխարության համար, որ դուք Աստծո ուզած կերպով

16. Ո. Լեյրդ Հարիս, Գիտոն Լ. Արչեր Կրտ. և Բրյուն Կ. Ուուլկե. «Հին կտակարանի աստվածաբանական աշխատագիր» (Չիկագո, «Moody Press», 1980թ.), հատ. 2, էջ 570:

17. Եզեկիել 20.43

18. Հռոմեացիների 6.21

տրտմեցիք, որ մեզնից ոչ մի բանով չվսավեք: Որովհետև Աստծո ուղած կերպով տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար՝ առանց զղալու, բայց աշխարհի տրտմությունը մահ է գործում» (Բ Կորնթ. 7.9,10):

Բախվելով այս իրողությանը, թե ով էր ինքը և ինչ էր արել՝ մաքսավորը գուգորդեց իր խոստովանությունը կոտրվածությամբ, խորը զղմամբ և խոնարհությամբ: Կորնթոսի Եկեղեցու մարմնավոր վարքի և հայարտության դեպքում տրտմությունը ոչ միայն պատշաճ արձագանք էր, այլև համապատասխանում էր Աստծո կամքին: Երկու դեպքերում էլ կարևոր է նշել, որ տրտմությունը և ամոթը ոչ թե նպատակ են, այլ՝ միջոց դեպի վերջնական արդյունքը: Հարկահավաքի կողմից սեփական անձը խոնարհեցնեն արդարացրեց նրան, իսկ Կորնթոսի հավատացյաների տրտմությունն առաջացրեց ապաշխարություն՝ առանց զղման, որի արդյունքը փրկությունն էր:

Թեև գոյություն ունի «աշխարհի տրտմությունը», որն առանց հավատքի է և մահվան է տանում, ինչպես Հուլիա Իսկարիովուացու դեպքում, մենք երբեք չպետք է բացասաբար դիտարկենք աստվածային տրտմությունը, որն ուղեկցում է դեպի ճշմարիտ ապաշխարություն և առաջնորդում է դեպի կյանք (Բ Կորնթ. 7.10): Սուրբ գիրքը վկայում է, որ Աստված բարձր է գնահատում նման տրտմությունը: Նա չի անարգում «կոտրված ու փշրված սիրտը» (Սաղմ. 51.17), և նայում է «խոնարիին ու կոտրած հոգի ունեցողին և իրխոսքից դողացողին» (Եսայի 66.2): Թեև Նա բնակվում է բարձր ու սուրբ վայրում, Նա նոյնական կոտրած և խոնարի հոգի ունեցողների հետ է՝ նրանց կենդանացնելու համար¹⁹: Ինչպես որ Հիսուսը սովորեցրեց մեզ Երանեկիների մեջ. «Երանի սգավորներին, որ նրանք կմշտիթարվեն» (Մատթ. 5.4):

Մեղքի անձնական գիտակցում և խոստովանում

Ապաշխարությունն ընդգրկում է ոչ միայն սրտի տրտմություն, այլև անձնական գիտակցում և բացահայտ խոստովանություն, որ Աստծո կարծիքը մեր մասին ճիշտ է, և Նրա դատավճիռն արդար է. մենք մեղավոր ենք, մենք մեղանչել ենք, և մենք արժանի ենք աստվածային դատապարտության: Աստվածաշնչյան ապաշխարությունը մշտապես ենթադրում է մեր ինքնությունը և արարքներն ընդունելը: Այս ճշմարտությունը հակառակ է մեր ժամանակակից մշակույթի համոզունքներին: Մենք արդարացնում ենք ինքներս մեզ և, համաձայն տարածված կարծիքի, իրականում, երբեք վսալ չենք լինում, այլ մշտապես դառնում ենքինչ-որ չար և հաճախ անանոն ուժերի գոհը, որոնք անկարող ենք վերահսկել: Մենք հմտորեն վե-

բագրում ենք մեր մեղքերը ցանկացած երևոյթի կամ անձնավորության՝ մեզնից բացի: Արդարացնելով ինքներս մեզ՝ մենք մատնացույց ենք անում հասարակությունը, կրթությունը, դաստիարակությունը և հանգամանքները. մենք սարսափում ենք և նոյնիսկ բարկանում ենք թեկուց աննշան ակնարկից այն մասին, որ մենք պատասխանատու ենք մեր հանցանքի համար: Այսուամենայնիվ, երբ մենք դարձի ենք գալիս, մեր պատկերացումը սկսում է արմատապես տարբերվել այս աշխարհի կարծիքից: Կյանքում առաջին անգամ մենք ուղղում ենք մեր ցուցամատը մեզ վրա և անկեղծորեն ընդունում ենք մեր մեղքը: Մեր բերանը փակվում է, և մենք հասկանում ենք, որ հաշվետու ենք Աստծոն²⁰: Մենք չենք ներկայացնում ոչ մի արդարացում և չենք փնտրում փախուստի ոչ մի ճանապարհ:

Մենք ընդունում ենք մեր հանցանքը, այսինքն՝ լիարժեք կերպով պատասխանատվություն ենք ստանձնում մեր արարքների համար՝ Աստծո առջև թափանցիկ և անկեղծ լինելով, նաև սրտանց խոստովանելով մեր մեղքը: «Խոսողվանել» բառը թարգմանված է մի հունարեն բառից, որը բառացիորեն «նշանակում է «խոսել նոյն բանը»²¹: Կատարելով դարձի աստվածային աշխատանքը՝ Աստված բացում է մեղավորի սիրտը և խոտում է նրա հետ նրա մեղքի մասին: Աստծո խոսքը, որը կենդանի է, զորավոր է և երկսայրի սրից ավելի սուր է, խոցում է նրա սրտի խորքերը և բացահայտում է դրա նոյնիսկ ամենախորը մտքերը և խորհուրդները²²: Այդ ժամանակ առաջին անգամ կյանքում մեղավորը երես առ երես բախվում է իր մեղքին և պատկերացում է կազմում դրա զարհուրելի բնույթի մասին: Այս պատկերացումը մշտապես նրա առջև է, և որքան էլ նա փորձում է, չի կարողանում հեռացնել այն զարհուրելի պատկերն իր անձի մասին, որը տեսնում է²³: Նա այլևս չի կարողանում թաքնվել, այլ ստիպված է ընդունել իր մեղքն Աստծո առջև և խոստովանել Տիրոջը իր անօրինությունները²⁴: Դավթինման նա ստիպված է աղաղակել՝ լիովին գիտակցելով և հոժարաբար խոստովանելով իր հանցանքը.

«Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի,
Եվ չարը Քո աչքի առջև գործեցի,
Որ Դու արդար լինես Քո խոսքերում
Եվ մաքուր լինես Քո դատաստանում» (Սաղմ. 51.4):

Ովսե մարգարեն նկարագրում է հավատացյալի թափանցիկությունն Աստծո առջև, որով նա համաձայնության է գալիս Նրա հետ և

20. Հռոմեացիների 3.19

21. Հոնարեն «հոմլղուն»

22. Երրայեցիների 4.12

23. Սաղմոս 51.3

24. Սաղմոս 32.5

բացահայտ խոստովանում է, որ այն ամենը, ինչ Աստված ասում է իր մասին, ճիշտ է.

«Ձեզ հետ խոսքեր վեր առեք
Եվ ետ դարձեք Տիրոջ մոտ:
Ասեք՝ Նրան. «Ամեն անօրինություն վեր առ
Եվ ընդունիր բարությամբ,
և մենք այսի մատուցենք մեր շրթունքների գվարակները
(կամ՝ զոհերը») (14.2):

Կարևոր է նշել, որ նման զգայունությունը մեղքի հանդեալ և մեղքը խոստովանելը ճշմարիտ հավատացյալ լինելու նշան է, իսկ դրա բացակայությունն ապացուցում է, որ մարդը միգուցե դեռ դարձի չի եկել: Հովհաննես առաջալը գրում է. «Եթե ասենք, թե մեղք չունենք, մեր անձերը խարում ենք, և ճշմարտությունը չկա մեզանում: Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի ամեն անիրավությունից: Եթե ասենք, թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում Նրան, և Նրա խոսքը մեզանում չէ (այսինքն՝ մենք քրիստոնյա չենք)» (Հովհ. 1.8-10):

Ճշմարիտ դարձի մեծագույն ապացույցներից մեկը ոչ թե անմեղ կատարելությունն է, ինչպես ոմանք սիսալմամբ ենթադրում են, այլ՝ զգայունությունը մեղքի հանդեալ, թափանցիկությունն Աստծո առջև՝ մեղքի վերաբերյալ, և մեղքը բացահայտ խոստովանելը:

Մեղքից հեռանալը

Հին կտակարանում «ապաշխարել» բառը հիմնականում թարգմանված է մի երրայերեն բառից, որը՝ նշանակում է «վերադառնալ կամ ետ դառնալ»²⁵: Այն ենթադրում է ոչ միայն չարից հեռանալը, այլև դեպի արդարությունը գնալը²⁶: Այդ իսկ պատճառով, ճշմարիտ ապաշխարության ակնհայտ նշաններից մեկը ազնվորեն և անկեղծորեն մեղքը թողնելու է կամ մեղքից հեռանալը: Արցունքների առատությունը, որը մարդը կարող է թափել, կամ միայն նրա խոստովանության ակնհայտ անկեղծությունը ոչ մի դեպքում չի կարելի համարել աստվածաշնչյան ապաշխարության հստակ ապացույց: Այդ ամենի հետ մարդը պետք է հեռանա այն ամենից, ինչն Աստված ասում է կամ ինչին Նա հակառակ է: Այս ճշմարտությունն այնքան հստակ է ներկայացված Սուլբ գրքում, որ գրեթե մեկնաբանության կարիք չունի, ինչպես Եզեկիել մարգարեի կողմից գրված հետևյալ երեք խոսքերում.

25. Երրայերեն «Չուք»

26. Հարիս, Արչեր և Ուլլուկե. «Հին կտակարանի աստվածաբանական աշխատագիրը» Խո. 2, էջ 909

«Այսպես է ասում Տերը. «Դարձի՛ եկեք և նու դարձեք ձեր կուտքերից և ձեր բոլոր պղծություններից են դարձրեք ձեր երեսները»» (14.6):

«Դարձի՛ եկեք և ձեր բոլոր հանցանքներից են դարձեք, որ ձեզ համար անօրինության գայթակղություն չբանա: Դեն զցեք ձեր վրայից ձեր բոլոր հանցանքները, որով դուք հանցավոր եղաք» (18.30,31):

«Կենդանի եմ Ես, - ասում է Տերը, - որ Ես ամբարշտի մեռնելը չեմ ուզում, այլ որ ամբարիշտը դարձի գա իր ճանապարհից և ապրի: Դարձեք, դարձեք ձեր չար ճանապարհներից, և ինչո՞ւ համար դուք մեռնեք, ովք Խրայելի տուն» (33.11):

Ասմխտելի աստվածաշնչյան ճշմարտություն է, որ ապաշխարությունը դրսուրվում է մեղքի հեռանալով: Այնուամենայնիվ, այս ճշմարտությունն ապաշխարության մասին հաճախ շփոթմունք և վախ է առաջերել նոյնիսկ ամենասաստվածապաշտ հավատացյաների մոտ: Այս շփոթմունքը սովորաբար արտահայտվում է հետևյալ հարցով. «Արդյո՞ք ես ճշմարտապես ապաշխարել եմ, եթե կրկին գործում եմ այն մեղքը, որից հրաժարվել եմ և խորշում եմ: Արդյո՞ք իմ հաճախակի ճախողությունը գոյց են տալիս, որ ես ապաշխարած չեմ»: Այս անչափ զգայուն հարցը մեծ հավասարակշռություն է պահանջում: Մի կողմից, հաճախակի վերադարձը մեղքին և դրա հանդեպ կայուն հաղթանակի իսպատ բացակայությունը կարող է մակերեսային կամ ոչ աստվածաշնչյան ապաշխարության ապացույց լինել: Սա է պատճառը, որ Հռվիաննես Մկրտիչը հորդորեց փարիսեցիներին «ապաշխարության արժանի պատու բերել», իսկ Հիսուսը հայտարարեց. «Այս ժողովուրդն իր բերանով է մոտենում Ինձ և շրթունքներով է Ինձ պատվում, բայց իրենց սիրուն Ինձնից հեռացած, ջոկված է» (Մատթ. 3.8, 15.7,8):

Մյուս կողմից, անկախ այն առաջադիմությունից, որը հավատացյալն ունի իր սրբացման մեջ, նոյնիսկ ամենահասուն հավատացյալը գիտակցում է, որ քրիստոնեական կյանքը մեծ պայքար է մեղքի դեմ՝ հաճախակի մարտերով, մեծ հաղթանակներով և հուսահատեցնող պարտություններով: Մինչև Երկինք գնալը ոչ մի հավատացյալ չի կարողի արթեք խօսել իր կապը մեղքի հետ՝ դառնարով անընկալունակ դրա խարեւության հանդեպ, և ազատվել ամեն տեսակի բարոյական ճախողություներից: Թեև ճշմարիտ հավատացյաներն աճ կունենան՝ սովորելով էլ ավելի թողնել մեղքը, այն, միևնույն է, կրկնվող ախտ կլինի նրանց կյանքում: Թեև մեղքը կարող է ավելի հազվադեպ և պակաս արտահայտիչ դառնալ, այն երբեք արմատախիլ չի լինի մինչև հավատացյալի վերջնական փառավորումը Երկնքում: Թեև Աստված խոստացել է մաքրել մեզ մեր բոլոր պղծություններից և կուտքերից, նոյնիսկ մեր միջն գտնվող ամենահասուն հավատացյալը երբեմն կարող է բռնվել նոյն մեղքի մեջ, որից ինքը հրաժարվել է (Եգեկ. 36.25): Թեև

մենք պայքարում ենք մեղքի դեմ և ձգոում ենք սրբության՝ ինչպես մրցանակի համար վագոռ մարզիկը, թեև մենք ճաշում ենք մեր մարմինը՝ դարձնելով այն մեր ստրուկը, ու թեև մենք մեծ զգուշությամբ և խմասությամբ ենք վարփում այս աշխարհում, մենք կհայտնաբերենք, որ դեռ կատարյալ չենք, և դեռ ապաշխարության և շնորհքի կարիք ունենք²⁷: Այս պատճառով, հավատացյալները չպետք է հուսահատվեն այն պատերազմի պատճառով, որը վարում են, կամ հաճախակի ապաշխարելու անհրաժեշտության պատճառով, որն առաջանում է մեղքի դեմ պայքարելիս: Նման պայքարի առկայությունը ճշմարիտ դարձի նշան է: Ճշմարիտ դարձ չվերապրած կամ կեղծավոր մարդը տեղյակ չէ նման պայքարի մասին: Կարևոր է հիշել, որ Աստված չի խստանում իր սերկայությունը կատարյալ մարդկանց, այլ՝ նրանց, որոնք կոտրված ու փշրված հոգի ունեն և դրորում են Նրա Խոսքից²⁸:

Այսպես որ, այս հարցում անհրաժեշտ է հավասարակշռություն ունենալ: Այս մատաղադրամն ունի երկու կողմ, և կորցնելով մեկը՝ մենք կկորցնենք նաև մյուսը: Մի կողմից, ճշմարիտ քրիստոնյաներն աստիճանական առաջընթաց կոնւնան սրբացման մեջ և հաճախակի հաղթանակներ կտանեն մեղքի դեմ: Նա, Ով սկսել է ապաշխարության բարի գործը նրանցում, կշարունակի էլ, որպեսզի այն աճի, խորանա և ավելի ու ավելի մեծ իրողություն դառնա նրանց կյանքում²⁹: Այսուամենայնիվ, քրիստոնյան երբեք լիարժեք կերպով ազատ չի լինի մեղքից և չի կարողանա ապրել առանց ապաշխարության, որն աստվածային պարզ է: Մյուս կողմից, դավանող քրիստոնյաները, որոնք չեն ցուցաբերում ոչ մի առաջընթաց սրբացման մեջ և հազվադեպ են ապաշխարության արժանի պտող բերում, պետք է մեծապես մտահոգված լինեն իրենց անձերի համար: Նրանք պետք է փորձեն և քննեն իրենց՝ տեսնելու համար՝ արդյոք իրենք հավատքի մեջ են³⁰:

Հրաժարում գործերից

Սոածին հայացքից այս հատկանիշը կարող է անհամապատասխան թվակ՝ ճշմարիտ ապաշխարությունը որոշելու համար: Ի վերջո, մենք հավատում ենք, որ «Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսվ հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք» (Եփես. 2.10): Ավելին՝ Հովհաննես Մկրտիչը պատվիրում է մեզ բերել այնպիսի պտուղ կամ անել այնպիսի գործեր, որոնք արժանի են ապաշխարության, իսկ Հակոբոսն ասում է մեզ, որ հավատքն առանց գործերի մահա-

27. Ա Կորնթացիների 9.24-27, Եփեսացիների 5.15

28. Եսայի 66.2

29. Փիլիպեցիների 1.6

30. Բ Կորնթացիների 13.5

ցած է³¹: Այդ դեպքում, ինչպես է, որ ճշմարիտ ապաշխարությունն արտահայտվում է գործերից հրաժարվելով: «Պատասխանը գրված է Երրայեցիների 6.1-ում. «Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով՝ դեպի կատարյալը զանը՝ առանց կրկին հիմը դնելու մեռած գործերից ապաշխարության և Աստծոն հավատալու համար»: «Մեռած գործերից ապաշխարություն» արտահայտությունը նշանակում է, որ մենք հրաժարվում կամ հեռանում ենք ցանկացած հոյսից, որ կարող ենք արդարանալ կամ ճիշտ դիրք ունենալ Աստծո առջև մեր աստվածապաշտ արարքներից որևէ մեկով: Ցանկացած գործ, որին մարդը կարող է ապավինել՝ Քրիստոսի Ասձի և Նրա կատարած աշխատանքի փոխարեն, մեռած գործ է, որը չի կարող փրկել:

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ փրկությունը միայն շնորհքով է և միայն հավատքի միջոցով. այն գործերից չէ, որ ոչ մի մարդ չպարծենա³²: Սա է պատճառը, որ համաձայն Սուրբ գրքի՝ շնորհքը և գործերը տրամադօրեն հակառակ են և փոխադարձաբար բացառում են մեկը մյուսին: Պողոս առաքյալը փայլուն կերպով շարադրում է այս ճշմարտությունը Հռոմի եկեղեցուն ուղղված իր նամակում. «Բայց եթե (փրկությունը) շնորհքով է, ել գործերից չէ. ապա թե ոչ, շնորհքն էլ շնորհք չի լինի» (Հռոմ. 11:6):

Դասական տրամաբանության մեջ կա մի սկզբունք, որը կոչվում է անհակասելիության օրենք, ըստ որի հակասական պնդումները չեն կարող ճիշտ լինել միաժամանակ և միևնույն իրավիճակում: Սա ճշմարիտ է գործերի և շնորհքի վերաբերյալ, եթե խոսքը փրկության մասին է: Եթե փրկությունը շնորհքով է, այն չի կարող լինել գործերով. եթե այն գործերով է, չի կարող լինել շնորհքով: Այսպիսով, մինչև որ մարդը կարողանա ճշմարիտ փրկարար հավատը ունենալ Քրիստոսի հանդեպ, նա պետք է թողնի որևէ այլ կերպով փրկություն ստանալու ամեն մի հոյս:

Մեփական ինքնարդարացումը հանուն Քրիստոսի թողնելը՝ արդեն իսկ Աստծո Հոգու գորավոր գործերից մեկն է, որոնք Նա կատարում է վերածնման ժամանակ: Հոգու միջոցով ճշմարտապես ապաշխարած մարդը պատկերացում է կազմում Աստծո անհասանելի արդարության և իր անօրինության անթափանցելի խորությունների մասին: Նա բախվում է իր մեղքին և հարկադրված աղաղակում է Հոր նահապետի և Պողոս առաքյալի հետ.

«Ես պիտի ամբարիշտ լինեմ,
Ուրեմն ինչո՞ւ համար զոր տեղը տանջվեմ:
Եթե ծյան ջրի մեջ լվացվեմ
Եվ մոխրաջրով մաքրեմ ձեռքերս,

31. Մատթեոս 3:8, Ղուկաս 3:8, Հակոբոս 2:17,26

32. Եփեսացիների 2:8,9

Այն ժամանակ էլ ինձ փոսի մեջ կկոխեիր,
Եվ իմ հանդերձը կզգվեր ինձնից» (Հոք 29.31):

«Ես ինչ խեղճ մարդ եմ. ով կապրեցնի ինձ այս մահի մարմնից» (Հոռոմ. 7.24):

Այս նոր հայտնությունը սեփական անձի և մեղքի մասին՝ դրդում է նոյնիսկ ամենից ինքնարդարացի մարդկանց՝ հրաժարվել իրենց առարջնությանը և արժանիքներին վստահելուց՝ նոյն եռանդով, որով նրանք մերժում էին իրենց խիստ նորկալի և օարհուրելի մեղքը: Նրանք այլև չեն ծգոտում հաստատել իրենց արդարությունն Աստծո առջև գործերի միջոցով, այլ պարծենում են Քրիստոս Հիսուսով՝ մարմ-նի հանդեպ վստահություն չունենալով (Փիլիպ. 3.3): Այս սկզբունքն ազդեցիկ կերպով պատկերվում է Պողոս առաքյալի դարձի միջոցով.

«Թեև ես վստահություն ունեմ մարմնի կողմից է, եթե մի ուրիշը կար-ծի, որ մարմնով վստահ լինի, ավելի ևս՝ ես: Ութ օրվա թվատված, Բա-րայելի ազգից, Բենիամինի ցեղից, երրայեցի՝ երրայեցիներից, օրեն-քի կողմից՝ Փարիսեցի, ցերտուանդության կողմից հալածող էի եկե-ղեցուն, օրենքի արդարության մտիկ տալով՝ անարատ էի: Բայց այն, ինչ որ ինձ շահ էր, վսաս համարեցի Քրիստոսի համար: Եվ հենց ամեն բան էլ վսաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գի-տության համար, որի պատճառով ամեն բանից գրկվեցի, և աղք եմ համարում, որ Քրիստոսին շահեմ և Նրանում գտնվեմ և ոչ իմ ար-դարությունն ունենամ, որ օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատ-քից է, այն արդարությունը, որ Աստծոց է՝ հավատքով» (Փիլիպ. 3.4-9):

Ինչպես շնորհի և գործերի դեպքում, ճշմարիտ ապաշխարությունը և սեփական անձն արդարացնելը տրամագծորեն հակառակ են և չեն կարող միաժամանակ գոյակցել միևնույն մարդու մեջ: Այն մարդը, որը չունի ապաշխարություն, համարում է, որ ինքը «ոչ մի բանի կարոտ» չէ, սակայն երբ Աստծո Հոգին վերածնում է նրա սիր-տը և լուսավորում է միտքը, նա տեսնում է իրեն որպես «թշվառ և ողորմելի և աղքատ և կոյր և մերկ» (Հայտն. 3.17): Նա գրավում է նոյն դիրքը, որում մաքսավորն էր, ով «իր աչքերն էլ չէր կամենում դեպի երկինքը բարձրացնել, այլ իր կուրծքը ծեծում էր և ասում. «Ո՛վ Աստված, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս» (Ղուկ. 18.13): Նա գալիս է Աստ-ծոն մոտ մի իին հիմսի հեղինակի դիրքորոշմամբ, որը գրել է.

Չես կարողանա իմ ձեռքի գործերը
Կատարել Քո օրենքների պատվերները:
Թեւս եռանդ հասգիստ չունենար,
Թեւս արցունքներս հավիտյան հոսեին,
Դրանք չին կարող մեղքերս քավել.
Դու, և միայն Դու պետք է ինձ փրկես:

Ոչինչ չեմ բերում Քեզ մոտ իմ ձեռքում,
Միայն խաչին է իմ անձը հարուս³³:

Ապաշխարող մեղավորը կտրականապես մերժում է գործերի վրա հիմնված կրոնի բոլոր խարուսիկ գովեստները: Նրա սրտից հորդում են սաղմուերգուի հետևյալ խոսքերը. «Ոչ թե մեզ,Տե՛ր, ոչ թե մեզ, այլ՝ Քո անվանը փառք տուր» (Սահմ. 115.1): Ցանկացած առաջարկ այն մասին, որ նա արդար է Աստծոն առջև իր բնավորության կամ գործերի հիմնան վրա, կսարսափեցնի նրան: Լսելով դա՝ նա կանչի հետևյալ հավատքի հոչակումը. «Ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ. 6.14):

Այդ դեպքում, ո՞րն է գործերի դերը մեր փրկության մեջ: Արդյո՞ք քրիստոնյան պետք է շարունակի մեղանչել, որ շնորհը շատանա³⁴: Միթե նա պետք է գորորկ լինի պտղից և անձնական արդարությունից: Իհարկե՛ ո՞չ: Այն մարդիկ, որոնք ճշմարտապես ապաշխարել են և հավատացել են փրկությանը, վերածնվել են Սուրբ Հոգու կողմից և վերստեղծվել են Քրիստոսի պատկերով: Եթե մեկը Քրիստոսում է, նոր արարած է և նոր բնություն ունի³⁵: Նա մահացել է մեղքի համար և հարություն է առել նորոգված կյանքի համար³⁶: Վերստին ծնունդի գորությամբ, Սուրբ Հոգու ներքնակությամբ և Աստծո մշտական մատակարարմամբ հավատացյալը պտույ կբերի և բարի գործեր կգործի Աստծո փառքի համար: Այնուամենայնիվ, այս բարի գործերը փրկություն չեն տալիս, այլ բխում են փրկությունից: Քրիստոնյայի կողմից կատարվող գործերը, որոնք Աստված նախօրոք պատրաստել է, որպեսզի մենք փարվենք դրանցում, ոչ թե նրա արդարացման պատճառն են, այլ՝ դրա ապացոյցը:

Դարձ դեպի Աստված՝ հնազանդությամբ և հպատակությամբ

Մեղքը թողնելն ինքնանպատակ չէ. այն միշտ է ավելի մեծ նպատակի՝ Աստծուն դառնալու համար: Բարոյականությունը նույնը չէ, ինչ քրիստոնեությունը: Քրիստոնյան չի ցուցաբերում բարոյական վարք հանուն բարոյականության, այլ՝ հանուն Աստծո, Նրա փառքի և հաճության³⁷: Թեև գոյություն ունի հատակ քրիստոնեական կամ աստվածաշնչյան բարոյականություն, քրիստոնեության գլխավոր նպատակն Աստված է և Նրա հետ մտերիմ, սրտանց շփումը: Հիսուսն այսպես նկարագրեց սա. «Եվ սա է հավիտնական կյանքը,

33. Ավգուստոս Մ. Թոփելտի, «Դարերի Ժայռը», տներ 2-3:

34. Հռոմեացիների 6.1

35. Բ Կորնթացիների 5.17

36. Հռոմեացիների 6.2-4

37. Երբ մարդը կատարում է Աստվածաշնչի բարոյական օրենքները այլ նպատակով՝ Աստծոն սիրելուց և Նրա փառքը տարածելուց բացի, դա բացահայտ կռապաշտություն է:

որ ճանաչեն Քեզ միայն ճշմարիտ Աստված, և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ. 17.3):

Օգտագործելով «ճանաչել» բառը՝ Հիսուսը չի սահմանափակում քրիստոնեական կյանքը մտավոր ընկալմամբ. այն ճանաչողությունը, որը Նա նկատի ունի, ենթադրում է մտերիմ հարաբերություն: Քրիստոնեական կյանքի նպատակն է մտերմորեն ճանաչել Աստծոն, ինչը դրդում է մեզ ավելի բարձր գնահատել Նրան, ավելի շատ գոհանապ Նրանից և ուրախանալ Նրանով, նաև ավելի մեծ չափով նվիրվել Նրա փառքին: Ինչպես պնդում է հին հարցուապատասխանքը, «Մարդու մեծագոյն նպատակն է փառավորել Աստծոն և հավիայն Վայելել Նրան»³⁸: Այնպես որ, ճշմարիտ ապաշխարությունը չի ավարտվում մեղքից հեռանալով. այն անավարտ է, քանի դեռ մենք չենք դարձել Աստծոն, և քանի դեռ մենք չենք դարձել Նրան մեր բոլոր ցանկությունների «մեծագոյն նպատակը»: Այս ճշմարտությունը հատկապես ակնհայտ է երկու աստվածաշնչյան հատվածում՝ քաղված Հին և Նոր կտակարաններից: Առաջինը Եսայի մարգարեի գրքից է, որի միջոցով Աստված հայտարարեց.

«Խնդրեք Տիրոջը, քանի որ Նա գտնվում է:
Նրան կանչեք, քանի որ Նա մոտ է:
Ամբարիշտը թողնի իր ճանապարհը,
Եվ անօրեն մարդը՝ իր խորհուրդները,
Եվ դառնա Տիրոջը, և Նա կողորմի նրան,
Եվ մեր Աստծոն,
Որովհետև Նա շատ ներող է» (Եսայի 55.6,7):

Կարևոր է նշել, որ այս հատվածը պարզորեն շեշտադրում է դարձը դեպի Տերը: Մեղքից հրաժարվեն ինքնանպատակ չէ. այն առաջին քայլն է դեպի մեծագոյն նպատակը, որը Տիրոջը դառնալու է: Մենք հեռանում ենք մեղքից, որպեսզի կարողանանք մոտենալ Նրան: Երկուսնէլ անհրաժեշտ են, քանի որ Աստված և մեղքը փոխադարձաբար բացառող են: Մենք չենք կարող միաժամանակ ունենալ և փայփայել երկուսն էլ:

Երկրորդ հատվածը Թեսադրնիկեի եկեղեցուն ուղղված Պողոսի առաջին նամակում է: Պողոսը նկարագրում է նրանց դարձը հետևյալ կերպով. «Որովհետև հենց իրենք պատմում են մեր մասին, թե ինչպիսի մուտք ունեցանք ձեզ մոտ, և ինչպես դուք դարձաք կուրքերից դեպի Աստված, որ ծառայեք կենդանի և ճշմարիտ Աստծոն և սպասեք Նրա Որդուն Երկնքից, որին հարություն տվեց մեռելների միջից՝ Հիսուսին, որ փրկում է մեզ զալու բարկությունից» (Ա Թեսադ. 1.9,10): Կրկին, ակնհայտ է, որ մեղքից հեռանալը երկրորդական է՝ Աստծոն դառնալու գլխավոր նպատակի համեմատ: Թեսադրնի-

38. Վեստմինստերի Կարճ հարցուապատասխանք, հարց 1:

կեռում բնակվող հավատացյալների ճշմարիտ դարձի ապացույցն այն էր, որ նրանք ոչ միայն հեռացել էին իրենց նախկին կոռապաշտությունից, այլև դարձել էին կենդանի և ճշմարիտ Աստծոն՝ հնագանդ ծառայությամբ։ Ավելին՝ նրանք այնպես էին փափագում Նրան, որ, թեև շատ նեղություններ կրելով, համբերատար սպասում էին Նրա վերջնական և ամբողջական հայտնությանը Նրա սիրելի Որդու երկրորդ գալուստի ժամանակ։ Ինչպես որ ամեն ճշմարիտ ապաշխարության դեպքում, նրանց կյանքում կար «դարձ՝ ինչ-որ բանից» և «դարձ՝ դեպի ինչ-որ բան»։ Կար հրաժարում և ուրացում մեղքից, ինչպես նաև՝ ջերմեռանդ ցանկություն և ձգուում Աստծո հանդեպ³⁹։

Դորձնական հնագանդություն

Հավանաբար, պարզ և պրտանց հնագանդությունն Աստծո պատվիրաններին՝ ճշմարիտ ապաշխարության ամենից ակնհայտ և հստակ ապացույցն է։ Մարդը կարող է պարծենալ, որ ոնի ներքին ձգուում Աստծո հանդեպ և անկեղծ աստվածապաշտ զգացումներ, բայց նման ախտումները վավերական են միայն այն չափով, որքանով նրա կյանքը համապատասխանում է Սուրբ գրքի պատվիրաններին։ Հովհաննես Մկրտչի խիստ բառերն անկարելի է սխալմամբ մեկնել։ Մարդը կարող է պնդել, որ ապաշխարել է միայն այն չափով, որով նա «ապաշխարության արժանի» պտուղ է բերում (Մատթ. 3.8)։ Ասպատուղ կյանքն ապացուցում է, որ մարդու ապաշխարության հուզական դրսերումները կեղծ են։ Սա զգուշացում է բոլորին, քանի որ Աստծո դատաստանի կացինն արդեն դրված է ծառերի արմատներին։ Ամեն մի ծառ, որը բարի պտուղ չի բերում, կտրվում է և զցվում կրակի մեջ։ Ինչպես որ հավատքն առանց գործերի և մահացած է, և անօգուտ, այնպես էլ ապաշխարությունն առանց պտղի անզոր կեղծիք է, որը չի կարող փրկել⁴⁰։ Այնուամենայնիվ, եթե մարդու սիրությունը ճշմարտապես դարձել է Աստծոն, նա ցոյց կտա դա իր նորացյուտ գործնական հնագանդությամբ Աստծո կամքին։ Թեև ապաշխարությունն ընդգրկում է մեր միտքը և զգացմունքները, այն, ի վերջո, ապացուցվում կամ հերքվում է այն բանով, թե արդյո՞ք մարդը հոժարական հնագանդություն է Աստծո պատվերներին։

Որպեսզի ոչ ոք չփորձի ներկայացնել Հովհաննես Մկրտչի զգուշացումը որպես հնացած մարզարեական ուղերձ՝ նախատեսված մեկ այլ դարաշրջանի համար, մենք ճիշտ կանենք, եթե հիշենք, որ նրա վարդապետությունը կարելի է գտնել նաև Հիսուսի և Պողոս առարյալի ուսմունքների մեջ։

39. Եվս մի քանի հատված, որոնք ցոյց են տալիս աստվածաշնչան ապաշխարության երկակի բնույթը. Եսայի 45.22, Որդեք 3.39-41, Հովել 2.12-14, Զաքարիա 1.3:

40. Մատթեոս 3.10

«Ամեն ծառ, որ բարի պտուղ չի թերում, կտրվում է և կրակի մեջ զցվում: Ուրեմն, իրենց պտուղներից ճանաչեք նրանց: Ոչ թե ամեն ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթ. 7.19-21):

«Ուստի, ովք Ագրիպաս արքա, ես անհնազանդ չեղա այն Երկնային տեսիլիքն: Այլ առաջ նրանց, որ Դամասկոսում և Երուսաղեմում էին, և ամբողջ Հրեաստանի երկրում, և հեթանոսներին պատմեցի ապաշխարել և դառնալ դեպի Աստծոն՝ ապաշխարության արժանի գործեր գործելով» (Գործը 26.19,20, շեղագիրն ավելացրած է):

Սուրբ գիրքը խստորեն դատապարտում է Աստծո առջև ճիշտ դիրք վաստակելու ցանկացած փորձ՝ մարդկային արժանապատվության կամ գործերի միջոցով. այսուամենայնիվ, ապաշխարությունը և հավատքը Աստծո Հոգու գերբնական վերատեղող աշխատանքի արդյունքն են⁴¹: Այս շնորհիք աշխատանքը մշտապես կարտահայտվի հավատացյալի կյանքի վերափոխմամբ և պտղաբերությամբ: Ինչպես Տեր Հիսուս Քրիստոն է ասում Լեռան քարոզում, ճշմարիտ ապաշխարություն և հավատք ունեցող մարդիկ հայտնի կլինեն «իրենց պտուղներից» (Մատթ. 7.16-20): Սա չի նշանակում, որ նման մարդիկ մշտապես և կատարելապես համապատասխանում են Աստծո կամքին և գորկ են անհնազանդության արատից: Ո՛չ ել դա ակնարկում է, որ նրանք մշտապես առատ պտուղ կրերեն՝ նման Սահմու 1.3-ում նկարագրված երանելի մարդուն:

«Եվ նա ջրերի գնացքում տնկված ծառերի պես է,
որ իր պտուղը տալիս է իր ժամանակին,
և նրա տերևը չի թափվում,
և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան»:

Այնուամենայնիվ, սա, անկասկած, նշանակում, որ նա հակված կլինի դեպի Աստծո պատվիրանները, և նրա կյանքը կրնութագրվի պարզ, գործնական հնազանդությամբ: Այն մարդիկ, որոնք պնդում են, որ ապաշխարել են՝ առանց պտուղների (որոնք, անշուշտ, պետք է հետևեն ապաշխարությանը), գրեթե չունեն հավաստիացում, որ իրենց պնդումը ճիշտ է, և որ իրենք ճիշտ դիրք ունեն Աստծո առջև, ինչպես իրենք են ենթադրում:

Ապաշխարության շարունակական և ավելի խորացող աշխատանք

Ճշմարիտ ապաշխարության վերջնական հատկանիշը և առավելագույն չափանիշը դրա շարունակական և հարաճուն բնույթն է հավատացյալի կյանքի ընթացքում: Սուրբ Հոգու սրբացնող աշխատանքի միջոցով այն Աստված, Ով սկսում է ապաշխարության աշխատան-

քը, ավարտին կհասցնի այն. Նա կիետևի, որ այն հասունանա և խորանա մեր կյանքի ամբողջ ընթացքում⁴²: Այս ճշմարտությունը երևում է Մարկոսի Ավետարանում՝ Քրիստոսի ուսուցման հենց սկզբում. «Եվ Հովհաննեսի մատնվելուց հետո Հիսուսը եկավ Գալիլեա, քարոզու էր Աստծո թագավորության Ավետարանը և ասում, թե Ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մտտեցել է: Ապաշխարեք և հավատացե՛ք Ավետարանին» (1.14,15): Բնագիր հունարեն տեքստում ապաշխարելու և հավատալու պատվերը գրված է ներկա ժամանակով, ինչը խոսում է դրա շարունակական բնույթի մասին: Այս հատկածի իմաստը պատշաճ կերպով փոխանցելու համար, Քրիստոսի հորդորը կարելի է թարգմանել հետևյալ կերպ. «Ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մտտեցել է. ուրեմն, ապաշխարության և Ավետարանի հանդեպ հավատքի կյանք ունեցեք»:

Ապացույցն այն մասին, որ մարդը ճշմարտապես ապաշխարել է՝ փրկություն ստանալով, այն է, որ նա շարունակում է ապաշխարել իր կյանքի ամբողջ ընթացքում: Թեև նա ստիպված է պայքարել մարմնական բնության, մեղքի խաբեության և սրտի խստացման դեմ, ապաշխարությունը ներկա կլինի նրա կյանքում: Սա է պատճառը, որ աշխարհի որոշ հատվածներում ճշմարիտ քրիստոնյաներին ծաղրական կերպով անվանում են «ապաշխարողներ», քանի որ նրանց կյանքը բնութագրվում է հարածուն, շարունակ խորացող և մշտապես հասունացող ապաշխարությամբ⁴³:

Մենք տեսնում ենք նոյն ճշմարտությունը Երանելիների մեջ, որում Քրիստոսը հայտարարում է. «Երանք սգավորներին, որ նրանք կմիտրաբվեն» (Մատթ. 5.4): Այս հատվածում «սգավորներ» բառը թարգմանված է ներկա ժամանակ ունեցող դերբայից, որը շարունակական գործողություն է ենթադրում: Քրիստոսն օրինակում չի հոչակում այն մարդկանց վրա, որոնց սուզը մեկ ակնթարթ է կամ ժամանակ առ ժամանակ է, այլ նրանց վրա, որոնց կյանքը բնութագրվում է սգավոր լինելու վիճակով: Թեև Քրիստոսի խոսքերը հետագա վավերացման կարիք չունեն, դրանք լայն սատարում ունեն ամբողջ Աստվածաշնչում: Տերը հաստատեց նոյն ճշմարտությունը Եսայի մարգարեի միջոցով. «Եվ Ես սրան եմ մտիկ տալիս. խոնարհին և կոտրած հոգի ունեցողին և իմ խոսքից դողացողին» (66.2):

Ժամանակակից քրիստոնեության մեջ ապաշխարությունը հաճախ ներկայացվում է որպես գրիպի կամ պոլիխոմելիտի պատվաստում՝ այնպիսի բան, ինչը տրվում է դարձի պահին և մեկընդմիշտ բավական է: Այնուամենայնիվ, դա հակառակ է ապաշխարության

42. Փիլիպեցիների 1.6

43. Ըստինիայում ավետարանական հավատացյաներին հակառակ կամ թշնամարար վերաբերվող մարդիկ հաճախ նրանց անվանում են «ապաշխարողներ»:

աստվածաշնչան տեսանկյանը: Իրականում, ապացույցն այն մասին, որ մարդը ճշմարտապես ապաշխարել է և փրկված է, այն է, որ նա շարունակում է ապաշխարել այսօր, և որ նրա ապաշխարությունը և՛ ավելացել է, և՛ խորացել է իր դարձի օրվանից:

Հազիվ թե ինչ-որ մենքը վիճարկի ճշմարտությունն այն մասին, որ մենք ապրում ենք մակերեսային ժամանակաշրջանում, որում աշխարհիկ և կրոնական մարդիկ, թվում է, ձեռք ձեռքի տված գնում են միևնույն նպատակը՝ ձգողություն դեպի երջանկությունն այս կյանքուն: Հետևաբար, ժամանակակից մշակոյթի և քրիստոնեության մեջ խստորեն արգելված է իշխատակել ցանկացած բան, ինչը կարող է արժեզրկել մարդկանց ծրագրերը և ձգողությունը, ցավեցնել նրանց զգացմունքները կամ թուլացնել նրանց ինքնազնահատականը: Մարդիկ ոչ միայն չպետք է ձգտեն ապաշխարելուն, կոտրված լինելուն և սպալուն, որոնք քրիստոնեական շնորհներ են, այլև պետք է ամեն գնով խուսափեն դրանցից: Այս պատճառով, Աստծո զավակներից շատերի առաջընթացը լրջորեն խոչընդոտվում է: Նրանք չեն հասկանում, որ ապաշխարությունը ոչ միայն առաջին անփոխարինելի քայլն է դեպի փրկությունը, այլև ճշմարիտ ուրախություն ունենալու միջոցը:

Դարձի ժամանակ մարդը սկսում է տեսնել Աստծոն և ինքն իրեն այնպես, ինչպես երբեք չէր տեսել անցյալում: Ավելի մեծ հայտնությունն Աստծո սրբության և արդարության մասին քերում է ավելի մեծ հայտնություն սեփական անձի մասին, ինչը, իր հերթին, հանգեցնում է ապաշխարության կամ կոտրվածության մեղքի պատճառով: Այնուամենայնիվ, հավատացյալը չի մտում հուսահատության մեջ, քանի որ նա նոյնպես ստանում է ավելի մեծ հայտնություն Քրիստում տրվող Աստծո շնորհքի մասին, ինչն անսաելի ուրախություն է պատճառում նրան: Քրիստոնեական կյանքում այս շրջանը շարունակ կրկնվում է: Տարիների ընթացքում քրիստոնյան ավելի խորն է ընկալում Աստծոն և ինքն իրեն, ինչի արդյունքում նրանում ավելի մեծ և խորը կոտրվածություն է առաջանում: Այնուամենայնիվ, այդ ընթացքում քրիստոնյայի ուրախությունը հավասարապես ավելանում է, քանի որ նա ավելի ու ավելի մեծ հայտնություն է ստանում Աստծո սիրո, շնորհքի և ողորմության մասին՝ Քրիստոսի անձի և Նրա կատարած աշխատանքի միջոցով: Բացի այդ՝ տեղի է ունենում ավելի մեծ փոխանակում, որում քրիստոնյան սովորում է ավելի ու ավելի քիչ ապավինել իր գործերին և ավելի ու ավելի շատ՝ Քրիստոսի կատարած աշխատանքին: Որպես արդյունք, նրա ուրախությունը ոչ միայն ավելանում է, այլև ավելի հաստատուն և կայուն է դառնում: Նա դադարում է կտտահել իր մարմսին, ինչը կռապաշտություն է, և հանգիստ է գտնում Քրիստոսի առաջինության և արժանիքների մեջ, ինչը ճշմարիտ քրիստոնեական աստվածապահություն է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ



Հավատքի կանչ

«Հիսուսը եկավ Գալիլեա, քարոզում էր Աստծո թագավորության Ավետարանը և ասում, թե ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մտնեցել է: Ասպաշխառե՛ք և հավատացե՛ք Ավետարանին»:

— Մարկոս 1.14,15

«Բայց իհմա առանց օրենքի Աստծո արդարությունը հայտնված է՝ օրենքից և մարգարեներից վկայված լինելով, այսինքն՝ Աստծո արդարությունը, որ Հիսուս Քրիստոսի հավատքից է, այն ամենի համար և ամենի վրա, որ հավատում են, որովհետև խորություն չկա»:

— Հոռմեացիների 3.21,22

«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է»:

— Եբրայեցիների 11.1

Հավատքի կամ հավատալու կանչը գտնվում է ապաշխարության կանչի կողքին՝ որպես ճշմարիտ ավետարանական հրավերի անփոխարինելի տարր: Այսպես որ, անհրաժեշտ է, որ մենք պատշաճ կերպով հասկանանք հավատքի բնույթը և դրսևորումը ճշմարիտ դարձի մեջ:

ԱՍՏՎԱԾԱՇՅԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հին կտակարանում «հավատալ» բառը թարգմանված է մի Եբրայերեն բառից, որը նշանակում է «հաստատ կանգնել, վստահել, համոզված լինել ինչ-որ բանում»¹: Ծննդոց 15.6-ում գրված է, որ Աբրահամը «հավատաց Տիրոջը, և Նա նրա համար արդարություն համարեց այս»: Այսինքն, Աբրահամը հաստատ կանգնեց և վստահեց այն բանին, ինչ Աստված խոստացել էր իրեն: Նոյն գաղափարն արտացոլվում է Ամբակումի հանրահայտ «արդարն իր հավատքով պիտի ապրի» հոչակ-

1. Եբրայերեն «ամսն»:

ման մեջ, որում «հալվատը» բառը թարգմանված է մի Եբրայերեն բառից, որը նշանակում է հաստատակամություն կամ հավասարակշռվածություն (2.4)²: Հին կտակարանում Աստծոն հավատալը նշանակում էր համոզված լինել Նրա խոստումների մեջ, վստահել՝ առանց տատանվելու, և հաստատ կանգնել՝ ապավինելով Նրա խոսքին:

Նոր կտակարանում «հալվատը» բառը թարգմանված է մի հունարեն բառից, որը նշանակում է «ընկալել ինչ-որ բան՝ որպես ճշմարիտ, համոզված լինել դրանում՝ վստահելու աստիճան»³: Նոր կտակարանի հեղինակները համարեցին, որ այս բառն ամենապատշաճն է՝ փոխանցելու համար Եբրայերենում առկա հավատքի գաղափարը՝ որպես վստահություն Աստծո բնավորությանը և խոստումներին:

ԱՍՏՎԱԾԱՇՅՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մեծ օրինություն է և աստվածային իմաստության մեծ դրսնորում է, որ Սուրբ գիրքը չի ներկայացնում հավատքը որպես առեղծված, և ոչ էլ թռողում է դրա իմաստի բացահայտումը մեր Երևակայությանը: Ըստհակառակը՝ Սուրբ գրքում Աստված տվել է մեզ հստակ սահմանումներ հավատքի մասին՝ բազմաթիվ օրինակներով և նկարագրություններով, որպեսզի իլ ավելի պարզեցնի դրա իմաստը: Եբրայեցիների թղթի հեղինակը գրեց այս սահմանումներից ամենասեղմը. «Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է» (11.1):

«Հալվատիացում» բառը թարգմանված է մի հունարեն բառից, որը նշանակում է այնպիսի բան, որի վրա մեկ այլ բան է դրված, օրինակ՝ ենթակառույց կամ իմբ⁴: Այս բառը ստացել է մտքի կայունության, հաստատակամ վճռականության, վստահության և հավաստիացման իմաստ: «Համոզվածություն» բառը թարգմանվել է մի հունարեն բառից, որը նշանակում է վստահություն ինչ-որ բանի գոյության և ճշմարտացիության հանդեպ⁵: Այս բառիմաստների լոյսի ներքո մենք կարող ենք սահմանել աստվածաշնչյան հավատքը որպես քրիստոնյայի հավաստիացում կամ վստահություն, որ ան, ինչի հանդեպ ինքը հոյս ունի, իրական է կամ կիրականանա, ինչպես նաև՝ համոզվածություն, որ այն, ինչ ինքը չի տեսել, իրականում գոյություն ունի:

Հավատքի այս սահմանումը, որը գրված է Սուրբ Հոգու առաջնորդությամբ⁶, Երկու անչափ կարևոր հարց է առաջացնում մեզ

2. Եբրայերեն «էմոնս»:

3. Հունարեն «այսաւելո»:

4. Հունարեն «հուպնոտասիս»:

5. Հունարեն «էլեգչոս»:

6. Բ Տիմոթեոս 3.16, Բ Պետրոս 1.21

մոտ: Ինչպես կարող ենք հավաստիացում ունենալ այն բանում, ինչի հանդեպ հոյս ունենք, և ինչպես կարող ենք համոզվածություն ունենալ այն բանում, ինչը չենք տեսել: Անպատճախան մնալու դեպքում, այս երկու հարցերը կարող են դրդել անկեղծ հավատացյալներին ենթադրություններ անելու կամ գենք դառնալ անհավատների ձեռքում, որոնք պահպան են, որ հավատքն ընդամենը անիրատեսական մտածելակերպ է, որը ցանկալին իրականություն է համարում: Ի վերջո, լուսնորդը կարող է լիովին համոզված լինել, որ ինքը Լոուրենս Արաբացին է, կամ որ Աստանտիդայի կորսված աշխարհամասը գտնվում է անմիջապես իր տան հիմքի տակ: Այսուամենայնիվ, դա իրականություն չի դառնում նրա անձնական հավատացման և անսասան համոզվածության պատճառով: Այդ դեպքում, ինչպես քրիստոնյան կարող է հավաստիացում ունենալ այն փրկության մեջ, որի հանդեպ նա հոյս ունի, և ինչպես նա կարող է վստահ լինել այն հոգևոր իրողությունների մեջ, որոնք նա երբեք չի տեսել: Այս երկու անշափ կարևոր հարցերի պատճախանը Հռոմի եկեղեցուն ուղղված Պողոս առաքյալի նամակում է: Գրելով այն մասին, թե ինչպես տարեց Աքրահամն արձագանքեց որդի ունենալու խոստմանը, նա նշում է, որ նահապետն «իր մտքում համոզված էր, թե Նա (Աստված), որ խոստացավ, կարող է և անել» (Հռոմ. 4.21):

Այս հատվածում մենք գտնում ենք երկու անփոխարինելի տարր, որոնք ցոյց են տալիս աստվածաշնչյան հավատքի տարրերությունը ենթադրությունից կամ ցանկալին իրականություն համարելուց: Աքրահամը լիովին համոզված էր, որ ինքը որդի էր ունենալու, քանի որ նա գիտեր, որ Աստված էր խոստացել դա, և նա հավատաց, որ Աստված ն' հավատարիմ է, ն' կարող է անել դա: Մտածելով իր մարմնի մասին, նա գիտեր, որ այն գրեթե մահացած էր, քանի որ ինքը մոտավորապես հարյուր տարեկան էր: Մտածելով իր կին Սառայի մարմնի մասին, նա գիտեր, որ բնական հղացումը և ծննդաբերությունն անհնար էին⁷: Այսուամենայնիվ, Աստված որդի խոստացավ Աքրահամին, և Աքրահամն «Աստծո խոստման համար չերկմտեց անհավատությամբ, այլ զորացավ հավատքով և Աստծուն փառք տվեց» (Հռոմեացիների 4.20): Աքրահամի օրինակից մենք ստվրում ենք հինգ կարևոր ճշմարտություն աստվածաշնչյան հավատքի բնույթի մասին.

1. Մենք կարող ենք հավաստիացում ունենալ այն բանում, ինչի հանդեպ հոյս ունենք, եթե Աստված խոստացել է դա իր խոսքում:
2. Մենք կարող ենք համոզվածություն ունենալ, որ այն բաները, որոնք մենք չենք տեսել, իրական են, քանի որ Աստված հայտնել է դրանք կամ ցոյց է տվել իր խոսքում:

7. Հռոմեացիների 4.19

3. Հավաստիացման բացակայությունն այն բանում, ինչ Աստված խոստացել է կամ հայտնել է Իր Խոսքում, անհավատություն է:
4. Հավաստիացումն այն բանում, ինչ Աստված չի խոստացել, ենթադրություն է:
5. Ճշմարիտ աստվածաշնչան հավատքը հիմնված չէ զգացմունքների, հոյզերի կամ մարդկային իմաստության վրա, այլ՝ այն բանի, ինչ Աստված հայտնել է մեզ Իր Խոսքում:

Մինչև շարունակելը, մենք պետք է կարճ դիմենք այն անհավատին, որը կայնդի, որ մեր դատողությունն ունի մեկ ճակատագրական սխալ. մենք ենթադրում ենք, որ մեր Աստվածաշնչուն Աստծո Խոսքն է: Ինչպես կարող ենք իմանալ, որ այս գիրքը, որը մենք անվանում ենք Սուրբ գիրք, Աստծո անսխալական հայտնությունն է մարդկությանը, և ինչպես կարող ենք վստահ լինել, որ դրա դրույթները հատկապես վերաբերում են մեզ: Այս հարցերի պատասխանը բաղկացած է երկու մասից: Առաջինը՝ մենք մատնանշում ենք Աստվածաշնչի փառավոր վկայությունն իր մասին: Դրա լայն շրջանակը և կատարյալ միասնությունն անզուգական են: Դրա բազմաթիվ մարգարեւությունները և ճշգրիտ իրականացումն անկարելի է բացատրել՝ առանց աստվածային միջամտության: Ավելին՝ այն առաջարկում է միակ ողջամիտ բացատրությունը մարդկային լյանքի դժվարությունների և չարի գոյության մասին: Պատմությունն ապացուցում է, որ այն, ինչ Աստվածաշնչուն ասում է մարդու մասին, ճիշտ է:

Երկրորդը՝ մենք պետք է մատնացույց անենք Սուրբ Հոգու աշխատանքը, քանի որ առանց դրա անկարելի է հավատալ: Քրիստոնյաների մեծմասը հավատում է Քրիստոսին՝ առանց ջատագովության օգնության: Ավելին՝ ովքեր մահացել են որպես նահատակներ իրենց հավատքի համար, չէին կարողանա բացատրել իրենց մեջ եղող հոյսի պատճառը՝ օգտագործելով ջատագովության դասական փաստարկները: Այդ դեպքում, ո՞րն է Աստվածաշնչի և Ավետարանի հանդեպ նրանց հավատքի հիմքը: Պատասխանը Սուրբ Հոգու վերածնող և լուսավորող աշխատանքն է: Քրիստոնյան հավատում է, որ Աստվածաշնչուն Աստծո Խոսքն է, քանի որ Սուրբ Հոգին է հայտնել դա նրան: Նման Թիվատիր քաղաքում ապրող Լիդիային՝ Տերը բացել է քրիստոնյայի սիրտը՝ Խոսքին հավատքով արձագանքելու համար⁸:

Սա է պատճառը, որ աշխարհի հեռավոր անկյուններում գտնվող ցեղային մշակույթներում ապրող մարդը պատրաստ է մահանալ որպես նահատակ, միայն թե չուրանա Սուրբ գիրքը: Նա գիտի, որ

8. «Եվ մի կին, անոնք Լիդիա, ծիրանավաճառ, Թիվատիր քաղաքից, աստվածավախ, լեց, որի սիրտը Տերը բացեց, որ Պողոսի խոսածներին մտիկ անի» (Գործ 16.14):

Աստծո Խոսքը ճշմարիտ է, և որ արժե մահանալ դրա համար, քանի որ Աստված է տվել նրան այդ գիտելիքը: Վայրի ցեղին պատկանող այդ անկիրթ և անպաշտպան անդամը հավաստիացում ունի այն փրկության մեջ, որի հանդեպ ինքը հոյս ունի, և հաստատ համոզված է այն հոգևոր իրողությունների մեջ, որոնք նա երբեք չի տեսել, քանի որ Աստված է սովորեցրել նրան՝ շնորհիվ Սուրբ Հոգու վերածող և լուսավորող աշխատանքի⁹:

Այս ճշմարտության մեջ է աստվածաշնչյան քրիստոնեության և գեղեցկությունը, և վրդովեցուցիչ իրողությունը: Թեև ջատագովությունն անշափ օգտակար է ավետարանչության մեջ և հավատայցալների հավատքը զորացնելու համար, մեր հավատքը կախված չէ բոլոր հարցերին պատասխանելու կամ թերահավատների պնդումները հերքելու կարողությունից: Մենք հավատում ենք Աստվածաշնչին և Ավետարանին, քանի որ այն Աստված, Ով ասաց. «Թող խավարից լոյս ծագի», նոյն Աստվածն է, Ով ծագեց մեր սրտերի մեջ, որպեսզի տա մեզ Աստծո փառքի գիտության լոյսը Քրիստոսի դեմքում¹⁰: Այս ճշմարտությունն անշեղորեն ուղղորդում է այն քարոզչին, որը կարող է օգտագործել մեծագոյն փատարկները՝ Ավետարանը պաշտպանելու համար, սակայն հասկանում է, որ հենց ինքը Ավետարանն է Աստծո փրկարար զորությունը¹¹:

ՀԱՎԱՏՔ ԶՐԻՍԴՈՒՄ ՀԱՆԵՊ

Որպեսզի ընդունենք Աստծո փրկության մեծ աշխատանքը, մենք պետք է ոչ միայն ապաշխարենք մեր մեղքերից, այլև հավատանք կամ վստահենք այն բանին, ինչ Աստված արել է մեզ համար Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով: Մենք պետք է դադարենք ապավինել ցանկացած այլ բանի և վստահենք միմիայն Հիսուս Քրիստոսի Անձին և Նրա կատարած աշխատանքին, Նրա մահվանը խաչի վրա՝ մեր մեղքերի համար, և Նրա՝ մեռելսերիցհարությանը: Մենք պետք է հավատանք, որ Նա արեց այդ ամենը մեզ համար, ինչպես նաև՝ որ մենք հաշտվել ենք Աստծո հետ և հավիտենական կյանք ենք ստացել Նրանում:

Կարևոր է հասկանալ հետևյալը. ինչպես որ Աստված պատվիրում է բոլորին ամենուրեք ապաշխարել իրենց մեղքերից, այնպես էլ Նա պատվիրում է բոլորին ամենուրեք հավատալ Իր Որդուն¹²: Հովհաննես առաջալը գրում է իր առաջին նամակում. «Եվ սա է Նրա պատվի-

9. Եսայի 54.13, Երեմիա 31.34, Հովհաննես 6.45

10. Բ Կորնթացիների 4.6

11. Հռոմեացիների 1.16

12. Գործը 17.30

բանը, որ հավատանք Նրա Որդիի Հիսուս Քրիստոսի անվանը» (3.23): Եթե բազմությունը հարցրեց Հիսուսին, թե ինչ իրենք պետք է անեին՝ «Աստծո գործերը գործելու» համար, Նա պատասխանեց. «Սա է Աստծո գործը, որ հավատաք Նրան, որին Նա ուղարկեց» (Հովհաննես 6.28-29): Նոյնպես կարևոր է հասկանալ, որ մարդիկ կարող են հնագանդվել Հիսուս Քրիստոսին հավատալու պատվիրանին՝ միայն բացառելով հավատքի մնացած բոլոր առարկաները: Հավատալը, որ Հիսուսն այս աշխարհի Փրկիչն է, նշանակում է դադարել հավատալ նրանց, ովքեր նման պնդում են անում: Սա, հավանաբար, քրիստոնեական հավատքի ամենավլողովեցուցիչ պահանջն է: Մարդը չի կարող պնդել, որ փրկարար հավատք ունի Քրիստոսի հանդեպ՝ որպես իր Փրկչի, եթե բացաձակապես չժիստի փրկության մնացած բոլոր միջոցները: Ճշմարիտ հավատքը վստահում է Հիսուս Քրիստոսին ոչ թե որպես փրկիչներից մեկի, այլ՝ որպես միակ Փրկչի:

Այս պնդումն արմատական ֆունդամենտալիզմի կարճամիտ գյուտ չէ. այն բխում է Քրիստոսի և Նրա առաջաների ուսմունքներից: Հիսուսը մատնացույց արեց Ինքն Իրեն՝ հայտարարելով. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհաննես 14.6): Պետքու առաջյալը նոյնքան համարձակ էր, եթե Մինեդրինի առջև կանգնած հայտարարեց. «Եվ ի մի ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև ուրիշ անոն էլ չկա երկարի ներքը մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել» (Գործք 4.12): Պողոս առաջյալը հորդորեց երիտասարդ Տիմոթեոսին կատարել ավետարանչի գործը և նեղություններ կրել որպես Հիսուս Քրիստոսի բարի զինվոր¹³ իմանալով, որ «մեկ Աստված կա և մեկ միջնորդ Աստծոն և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս մարդը» (Ա Տիմոթ. 2.5): Հիմնվելով այս խոսքերի վրա՝ անազնիվ կամ խիստ քննադատական չէ ասելը, որ Ավետարանի ամեն մի ծառայող, որը չի մերժում փրկության հնարավորությունը ցանկացած միջոցով՝ Հիսուսից բացի, ուրացել է հավատքը: Նա բերել է Քրիստոսի կողմից արված դատաստանի սարսափելի զգուշացումն իր իսկ զիշին. «Եվ ով որ Ինձ ուրանա մարդկանց առջև, Ես էլ կուրանամ նրան Իմ Հոր առջև, որ Երկնքում է» (Մատթ. 10.33):

Աստված տվել է միայն մեկ կարմիր թել, որից կառչելով՝ մենք կարող ենք ապահով անցում կատարել դեպի հավիտենություն. Քրիստոսը և Նրա արյունակի մահը Գողգոթայի խաչի վրա: Ինչպես գրում է Պետրոս առաջյալը. «Եվ ի ուրիշ ոչ մեկով փրկություն չկա» (Գործք 4.12): Միայն այս Ավետարանն է ստանում Աստծո հավանությունը:

13. Բ Տիմոթեոս 2.3, 4.5

ՀԱՎԱՏՔ՝ ԱՍԾՈ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ

Հոոմեացիների թղթում Պողոս առաջալը խորաթափանց դիտարկում է անում ճշմարիտ հավատքի արդյունքի կամ հետևանքի մասին: Նա գրում է. «(Աբրահամն) Աստծո խոստման համար չերկմտեց անհավատությամբ, այլ զորացավ հավատքով, և Աստծոն փառք տվեց» (4.20, շեղագիրն ավելացրած է): Ակնհայտ է, որ Աբրահամի հավատքը չփառավորեց Աստծոն միայն նրա երկրպագության միջոցով. նրա հավատքն ինքնին փառք բերեց Աստծոն: Այս ճշմարտությունը հասկանալու բանալին Եբրայեցիների թղթում է: Հեղինակը գրում է. «Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծոն մոտեցողը պետք է հավատա, թե Նա կա, և թե Իրեն խնդրողներին վարձահատուց կլինի» (11.6):

Մեր հավատքը հաճեցնում է Աստծոն և փառք է բերում Նրան, քանի որ այն մեր անձնական հայտարարությունն է Նրա ազնվության մասին: Երբ հավատքով ենք արձագանքում Աստծո Խոսքին, մենք ցոյց ենք տալիս, որ անսահման վստահություն ունենք այն ամենի հանդեպ, ինչ Աստված ասում է Իր մասին: Նրան հավատքը նշանակում է տալ անձնական վկայություն մարդկանց և հրեշտակներին, որ Նա հավատարիմ Աստված է, որում չկա անարդարություն, որ Նրա գործը կատարյալ է, և Նրա բոլոր ճանապարհներն արդար են, որ Նա պահում է Իր ուխտը և Իր ողորմությունը հազար սերունդների համար, և անկարելի է, որ Նա ստի¹⁴: Մյուս կողմից, անհավատությունը բացահայտ թշնամանը է Աստծո բնավորության դեմ: Այն կասկած է նետում Նրա գործերի վրա անցյալում և վիճարկում է Նրա անվեղծությունը ներկայում: Նա իրոք գոյություն ունի: Նա իրոք վարձատրում է Իրեն փնտրողներին: Նա իրոք նման խոստում է տվել: Անհավատությունը դատաստանի առջև է կանգնեցնում Աստծոն՝ նաթարկելով Նրա պնդումները մարդկային քննության: Նման հարցերը սերում են սատանայի սրտից, և հենց դրանք դարձան այն միջոցը, որն օգտագործվեց մեր նախածնողներին սպանելու համար¹⁵: Աստծոն չհավատալը նշանակում է լիովին վիճարկել Նրա ինքնությունը, իսկ Նրան հավատալը նշանակում է հաստատել Նրա վկայությունն Իր մասին և փառք տալ Նրան:

Ինչ վերաբերում է Ավետարանին, այս ճշմարտությունը լուրջ հետևանքներ ունի: Աստված դրել է Իր կմիքն Իր բոլոր գործերի վրա պատմության ընթացքում և հաստատել է դրանք բազմաթիվ ուշագրավ և անվիճարկելի ապացույցներով: Այնուամենայնիվ, Աստծո մեծագոյն վկայությունը վերաբերում է Իր Որդուն: Սա նշանակում է, որ

14. Թվոց 23.19, Երկրորդ Օրինաց 7.9, 32.4, Տիտոս 1.2, Եբրայեցիների 6.18

15. Ծննդոց 3.1-6, Հովհաննես 8.44

Որդոն հավատացողը հավատում է Աստծոն և կատարում է Նրա կամքը, իսկ Որդոն չհավատացողը ստախոս է անվանում Աստծոն և թշնամաբար է վերաբերվում Նրան: Հովհաննես առաջալը գրում է.

«Եթե մարդկանց վկայությունն ընդունում ենք, Աստծո վկայությունն ավելի մեծ է, որովհետև սա է Աստծո վկայությունը, որ վկայեց Իր Որդու մասին: Ով որ հավատում է Աստծո Որդոն, վկայությունն ունի իր անձում: Ով որ չի հավատում Աստծոն, ստախոս է արել Նրան, որովհետև չհավատաց այն վկայությանը, որ Աստված վկայեց Իր Որդու մասին: Եվ սա է վկայությունը, որ Աստված հավիտենական կյանք տվեց մեզ, և այս կյանքը Նրա Որդու մեջ է: Ով որ Որդոն ունի, նա կյանքն ունի, և ով որ Աստծո Որդոն չունի, կյանքը չունի» (Ա Հովհ. 5.9-12):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով՝ Հովհաննեսն անսխալական տրամաբանություն է առաջարկում: Առաջինը՝ նա պնդում է, որ Աստծո վկայությունն ավելի արժանահավատ է, քան ցանկացած մարդու վկայությունը: Աստվածաշունչը հայտնում է, որ բոլոր մարդիկ ստախոս են¹⁶, իսկ Աստված «մարդ չէ, որ սուտ խոսի, ոչ էլ մարդու որդի, որ զօջա» (Թվոց 23.19): Այդ իսկ պատճառով, եթե մենք ամեն օր հավատում ենք մարդկանց վկայությանը, որքան ավելի պետք է հավատանք Աստծո վկայությանը: Երկրորդը՝ Հովհաննեսը հաստատում է, որ Աստված խսկապես վկայություն է տվել Իր Որդու մասին, և Նրա վկայությունը հետևյալն է. այն ամենը, ինչ վերաբերում է փրկությանը, Աստծո հետ շիմանը և հավիտենական կյանքին, միայն Հիսուս Քրիստոսի մեջ է: Ի վերջո, Հովհաննեսը հանգում է իր արմատական և անսասան հետևողական որ ցանկացած մարդ, որը լիարժեք կերպով չի ընդունում Որդոն, չոնի հավիտենական կյանքի հոյս, և ցանկացած մարդ, որը չի հավատում Որդոն, ստախոս է անվանում Աստծոն: Առանց Հիսուս Քրիստոսի՝ մարդիկ բաժին չունեն Աստծո հետ: Սա է առաբեկական քրիստոնեության վկայությունը. «Նա, ով Որդոն ուրանում է, Հորն էլ չունի. նա, որ Որդոն դավանում է, Հորն էլ ունի» (Ա Հովհ. 2.23):

Նշանակում է՝ մենք ամենից առավել հաճեցնում և փառավորում ենք Աստծոն, եթե հավատում, վստահում և ապավինում ենք այն փաստին, որի մասին Նա տվել է Իր մեծագոյն վկայությունը. Նազովրեցի Հիսուսն Իր սիրելի Որդին է, Ով հաճելի է Իրեն, Նա է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը, և ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Նրանով¹⁷: Նա, ով հավատում և դավանում է այս ամենը Որդու մասին, և՛ հաճելի է Աստծոն, և՛ փառը է բերում Նրա անվանը: Նա, ով հրաժարվում է հավատալ, արդեն իսկ ստախոս է անվանել Աստծոն և զրկվել է հավիտենական կյանք ստանալու ցանկացած հնարավորությունից:

16. Հռոմեացիների 3.4

17. Մատթեոս 3.17, 17.5, Մարկոս 9.7, Հովհաննես 14.6, Բ Պետրոս 1.17

ՊԱՐԾԱՆՔԻ ՎԵՐՋԸ

Այն պահին, երբ փրկության վարդապետությանը ավելացվում կամ միացվում է նոյնիսկ խստ անշան գործ, քրիստոնեությունը վերածվում է գործերի կրոնի, արդարացումը հնարավոր է լինում վաստակել, Աստված պարտական է դառնում մարդկանց, իսկ մարդիկ կարողանում են պարծենալ Նրա առջև: Սա է պատճառը, որ Պողոս առաքյալը պայքարում է իր ամբողջ կարողությամբ, որպեսզի իր գրվածքներում շեշտադրի մարդկության անհոյս վիճակը և ապացուցի, որ մարդը լիովին անկարող է հաճեցնել Աստծոն մարմնավոր կերպով: Նա ցանկանում է, որ «ամեն բերան խփվի, և ամբողջ աշխարհն Աստծոն առջև դատապարտ լինի» (Հռոմ. 3.19): Միայն այդ դեպքում մարդիկ կիեռացնեն իրենց հայացքն իրենցից և հավատքով կնայեն Աստծոն: Միայն այդ դեպքում նրանք կթողնեն իրենց գործերը և կընկնեն շնորհի գիրկը: Միայն այդ դեպքում նրանց պարծանքն իրենցով կվերածվի Տիրոջով պարծենալուն: «Խչպես գրված է. «Նա, որ պարծենում է, թող Տիրոջով պարծենա» (Ա Կորնթ. 1.31):

Հռոմեացիների 3-րդ գլխում Պողոսը շարադրում է այս ճշմարտություններն Աստծուց ոգեշնչված պարզությամբ: Այս գլխի 1-20-րդ խոսքերում նա ջանում է ապացուցել, որ բոլոր մարդիկ մեղավոր են և դատապարտված են արդար Աստծոն և Նրա օրենքի առջև¹⁸: Դրանից հետո նա ուղղում է իր ուշադրությունը Գողգոթայում Քրիստոսի կատարած աշխատանքին և հայտնում է մեզ Սուրբ գրքում գրված ամենավեհ ճշմարտություններից մեկը: Նա պատկերում է Քրիստոսին՝ որպես այն մեծ քավությունը, որը կրեց Իր ժողովրդի մեղքերը, նրանց փոխարեն Իր վրա վերցրեց Աստծո զայրույթը և հնարավորություն տվեց արդար Աստծուն արդարացնել մեղավոր մարդկանց՝ առանց դավաճանելու Իր արդարությանը¹⁹: Ի վերջո, Պողոսն ամփոփում է իր ասելիքը հետևյալ բացականչությամբ. «Հիմա ո՞ւր է պարծանքը: Խափանվեց: Ո՞ր օրենքով, գործերի օրենքով: Ո՞չ, այլ՝ հավատքի օրենքով: Ուրեմն, համարում ենք, որ մարդը հավատքով է արդարանում՝ առանց օրենքի գործերի» (Հռոմ. 3.27,28):

Պողոսն ավարտում է իր փաստարկը հուեսորական հարցով. «Հիմա ո՞ւր է պարծանքը»: Մինչև որ ինչ-որ մեկը կհասցնի ձեռք բարձրացնել՝ արձագանքելու համար, նա պատասխանում է իր տված հարցին այնպիսի բացականչությամբ, որը ցուցադրում է անսասան համոզվածություն և հաստատում վճռականություն. «Խափանվեց»: Այս բառը կարելի է թարգմանել նաև հետևյալ կերպով. «Ան դուրս է արվել կամ վիսդվել է»²⁰: Այստեղ Պողոսն օգտագործում է հունարեն

18. Հռոմեացիների 3.1-20

19. Հռոմեացիների 3.21-26

20. Զողեք Հենրի Թայեր. «Ժայերի հունարեն-անգլերեն բառարան» (Գրենադ Ռեփիլը, «Baker», 1977թ.), էջ 195:

«առրիստ» ժամանակաձև՝ ցոյց տալու համար, որ գործերով պարծենալը՝ որպես փրկության միջոց, բացարձակապես անընդունելի է, որպեսզի կանխի ցանկացած հետագա բանավեճ այս թեմայով²¹: Պողոսը կարծես ասում է. «Պարծանք՝ գործերով: Նոյնիսկ մի՛ մտածեք այդ մասին, առավել ևս՝ մի՛ փորձեք բանավիճել: Որպես Աստծո առջև արդար դիրք ունենալու միջոց՝ այս մեկընդմիշտ բացառված է»:

Կարևոր է նշել, որ բացառված է ոչ թե ցանկացած տեսակի պարծանք, այլ միայն պարծանքը մարդկային արժանիքներով: Թեև մենք այլս չենք կարող պարծենալ մեր գործերով և նոյնիսկ մեր հավատքով, մենք ունենք հիմքեր և հնարավորություն պարծենալու Աստծով և Նրա շնորհքով: Երբ մեզ հարցնում են «(մեր) մեջ եղած հոյսի համար» (Ա Պետր. 3.15), մենք պետք է հստակ հայտարարենք. «Ամեն ինչ միայն շնորհքով է»²²:

«Մեզ առաջուց սահմանելով, որ Իրեն որդեգիր լինենք Հիսոս Քրիստոսի ձեռքով՝ իր կամքի հաճության պես, իր փառավոր շնորհքի գովասանքի համար, որ նրանով շնորհք ցոյց տվեց մեզ այն Սիրելիով» (Եփես. 1.5,6):

«Որովհետև շնորհքով եք փրկված՝ հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարզմն է, ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա» (Եփես. 2.8,9):

«Ոչ թե մեզ, Տե՛ր, ոչ թե մեզ,
Այլ՝ Քո անվանը փառք տուր
Քո ողորմության համար
Եվ Քո ճշմարտության համար» (Սաղմ. 115.1):

Իրենց բնությամբ մարդիկ լցված են ունայնությամբ, ամբարտավասնությամբ և պարծենելուսությամբ: Ղամեքի և Համանի բնավորությունը հատուկ է բոլորին²³: Մենք պարծենում ենք մեր իմաստությամբ, ուժով և կարգավիճակով, սակայն չենք նկատում, որ մենք ընդամենը ոունգերի մեջ գտնվող օդ ենք, մեր գոյությունը նման է գոլորշու, մեր իմաստությունը հիմարություն է, և մեր արդարությունը նման է կեղտու լաթերի²⁴: Ահա թե ինչո՞ւ է Երեմիա մարգարեն զգուշացնում մեզ.

21. Պողոսն օգտագործում է «Էկլիեզին» բայի «առրիստ» ժամանակաձև՝ ցոյց տալով, որ «(պարծենալը) կորականապես կամ մեկընդմիշտ արգելված է»: Վ. Ռոբերտսոն Նիկոլ. «Մեկնչի հոնարեն Նոր կոսկարան» (Lionsgate, «Hodder and Stoughton», 1987-1910թթ.) հոդ. 2, էջ 613:

22. Այս մորիք ակզրնադրյուր՝ «Ամեն ինչ՝ միայն շնորհքով. Լուրջ խորը՝ ուղղված նրանց, ովքեր ձգում են փրկության Տեր Հիսոս Քրիստոսով», Չարլզ Սիերշեն (Պատմանա, Տեխաս, «Pilgrim Publications», 1978թ.):

23. Ծննդոց 4.23,24, Եսթեր 5.11

24. Եսայի 2.22, 64.6, Հակոբոս 4.14

«Այսպես է ասում Տերը.

«Իմաստոնը իր իմաստությամբ չպարծենա,

Եվ զորավորն իր զորությամբ չպարծենա,

Հարուստն իր հարատությամբ չպարծենա,

Այլ սրանով պարծենա, ով որ պարծենում է,

Թե հասկանում և ճանաչում է ինձ,

Որ ես եմ Տերը, որ երկրի վրա ողորմություն,

իրավունք և արդարություն եմ անում,

Որ ես սրանց եմ հավանում,- ասում է Տերը» (Երեմիա 9.23,24):

Համաձայն Աստծո Խոսքի՝ մարդիկ չունեն ոչ մի հիմք պարծենալու համար: Ցանկացած վեհ բան, որին իրենք հասնում են, կարելի է վերագրել միայն Աստծո շնորհին: Ցանկացած սխալ կամ տկարություն, որը կա իրենցում, բխում է իրենցից: Այն, ինչը պարծանքի արժանի է, իրենցը չէ, իսկ այն, ինչն իրենցն է, պարծանքի արժանի չէ: Սա հատկապես ճշմարիտ է փրկության և Աստծո առջև արդար դիրք ունենալու վերաբերյալ: Յուրաքանչյուրը, ով թեկուց ինչ-որ բան է հասկացել Աստծո արդարության և իր մերքի մասին, պետք է համարի, «որ մարդը հավատքով է արդարանում՝ առանց օրենքի գործերի» (Հոռմ. 3.28): Այս խոսքում օգտագործված «համարել» բառը թարգմանվել է մի հունարեն բառից, որը նշանակում է «դիտարկել, համարել, հաշվարկել, կշռադատել կամ եզրակացնել»²⁵: Մեր սրտի եղածի անկողմանակալ դիտարկումը և մեր արժանիքների ու արատների պատշաճ հաշվարկումը պետք է դրդի յուրաքանչյուրիս եզրակացնել, որ եթե փրկությունն օրենքի գործերից է, ուրեմն մենք բոլորովին հույս չունենք: Նոյնիսկ ամենափոքր հայտնությունը մեր մերավորության մասին՝ Աստծո արդարության լույսի ներքո, պետք է դրդի յուրաքանչյուրիս համաձայնել այն հուսահատ մարդկանց հետ, որոնք նոյն հույսներու ցավալիորեն բացահայտել են իրենց իրական վիճակը՝ տեսնելով այն Աստծո փառքի լույսի ներքո.

Հոր. «Ականջի լսելով ես լսել էի Քո մասին,

Բայց հիմա աչքս տեսնում է Քեզ:

Այդ պատճառով նվաստանում եմ

Եվ զղոսում հողի և մոխրի վրա» (42.5,6):

Եսայի. «Վայ ինձ, որովհետև կորած եմ,

Որովհետև ես պիոծ շրթոնքով մարդ եմ,

Եվ ես պիոծ շրթոնքով ժողովրդի մեջ եմ բնակվում,

Եվ իմ աչքերը տեսան Զորաց Տեր Թագավորին» (6.5):

Պողոս. «Ես ինչ խեղճ մարդ եմ. ով կապրեցնի

ինձ այս մահի մարմսից» (Հոռմ. 7.24):

25. Հունարեն. «լողիզումա»:

Մեղավորը պետք է հասնի այնպիսի կարևոր գիտակցության, որում ինքը տեսնում է, որ բացարձակապես զուրկ է փրկություն ստանալու արժանիքից, և որքան էլ փնտրի, չի գտնի փրկության հոլոյ իրենում: Միայն այդ դեպքում նա կդառնա շնորհքին և կկանչի Աստծոն՝ ողորմություն ստանալու համար: Այլ կերպ ասած՝ բոլորս պետք է միանանք մաքսավորներին և մեղավորներին, եթե ցանկանում ենք փրկված լինել²⁶: «Որովհետև, որոնք որ օրենքի գործերից են, անեծքի տակ են» (Գաղատ. 3.10), բայց երանք նրան, ում Աստված արդարություն է վերագրում հավատքով՝ առանց գործերի.

«Երանք նրանց, որոնց անօրինությունները թողվեցին,
Եվ որոնց մեղքերը ծածկվեցին:
Երանի է այն մարդուն, որին Տերը մեղք չի
համարի» (Հոռմ. 4.7,8):

Ճշմարիտ գիտելիքն Աստծո և սեփական անձի մասին անշափ կարևոր է մեղավորների դարձի համար, բայց այն հավասարապես կարևոր է նաև սուրբերի շարունակական սրբացման համար: Հավատացյալը պետք է շարունակի աճել Աստծուն և ինքն իրեն ճանաչելու մեջ, մինչև այնքան համոզված լինի, որ փրկությունը միայն շնորհքով է, որ զգվանքով վերաբերվի նույնիսկ ակնարկին այն մասին, որ ինքը կարող է փրկվել իր առաքինության, արժանիքների կամ աստվածապաշտության միջոցով: Իրականում, սա մեծագույն նպատակներից և արդյունքներից մեկն է, որոնց ձգտում է Աստված՝ կատարելով իր սրբացման աշխատանքը հավատացյալի կյանքում: Մեր կյանքի ամբողջ ընթացքում Նա այնպես է կազմակերպում ամեն ինչ, որ կործանի մեր ինքնարդարացումը և վստահությունը սեփական անձի հանդեպ, որպեսզի մենք ապավինենք Քրիստոսի Անձի առաքինությանը և Գողգոթայում Նրա կատարած աշխատանքի արժանիքն: Նա անում է սա իր փառքի և մեր բարօրության համար: Մեր հոգևոր բարեկեցությունը և պտղաբերությունը կախված են այն բանից, թե որքանով մենք կփոխարինենք վստահությունը սեփական անձի հանդեպ՝ միայն Աստծոն վստահելով: Երեսիա մարգարեն այսպես է ձևակերպում սա.

«Ասիծյալ լինի այն մարդը, որ մարդուն է ապավինում,
Եվ մարմինը իրեն բազով շինում
Եվ իր սրտով խստորում Տիրոջից:
Նա մոշենու պես պիտի լինի անապատում,
Եվ պիտի բարիքը եկած ժամանակը չտեսնի,
Եվ պիտի բնակվի անապատի այրված տեղերում,
Աղի և անբնակ երկրում:

Օրինյալ լինի այն մարդը, որ Տիրոջն է ապավինում,
Եվ Տերն է նրա հոյսը:
Նա նման կլինի մի ծառի, որ տնկված է ջրերի մոտ,
Նա իր արմատները կճգի գետի մոտով
Եվ չի տեսնի տաքությունը եկած ժամանակը,
Այլ նրա տերևները կանաչ կլինեն,
Եվ երաշտ տարում նա չի վախենա
Եվ չի դադարի պտուղ տալուց» (Երեմիա 17.5-8):

Ասմիովելով՝ ես ցնցված եմ՝ տեսնելով, թե ինչպես են միևնույն եկեղեցական համայնքում գտնվող մարդիկ արձագանքում այն ուղերձին, որը շեշտադրում է մարդկային արատավորությունը, ցոյց է տալիս, որ իրենց գործերը չունեն փրկարար արժեք, և որ իրենք հուսահատորեն աստվածային շնորհքի կարիքն ունեն: Ոմանք վիհատվում, վիրավորվում կամ բացահայտ բարկանում են այն պատճառով, որ իրենց և իրենց աստվածապաշտ գործերի մասին նման խիստ խոսքեր են հնչում: Սակայն այլ մարդիկ, որոնք նոյն եկեղեցական համայնքում են և յուու են միևնույն ճշմարտությունները, լցվում են ուրախությամբ և ցնծում են Աստծո բարության շնորհիվ: Որքան խավար կերպով է քարոզիչը պատկերում նրանց, այնքան ավելի ցնծագին են նրանք դատում, և այնքան նրանց փառաբանությունն ավելանում է: Ո՞րն է տարբերությունն այս երկու խմբերի միջև: Առաջին խմբին պատկանող մարդիկ վստահում են իրենց մարմնին և պարծենում են իրենց առաքինությամբ և արժանիքներով: Երկրորդ խմբին պատկանող մարդիկ «թլվատությունն» են, որ հոգով պաշտում են Աստծոն, պարծենում են Քրիստոս Հիսուսով և մարմնի վրա վստահություն չունեն (Փիլիպ. 3.3): Նրանք գոհոնակությամբ են ընդունում, երբ իրենց խավարը բացահայտվում է, և նման վիշտ վերապրելու պատճառով Քրիստոսը և Աստծո շնորհքը մեծարվում են: Նրանք գիտեն, որ իրենց գիշերվա խավարն ավելի պարզ է ցոյց տալիս Աստծո շնորհքի աստղերը:

ԳԼՈՒԽ ԵՐԵԶ



Հավատալ և դավանել

«Բայց հավատքից լինող արդարությունն այսպէս է ասում. «Չասես քո սրտում՝ ով վեր կելիս երկինքը, այսինքն՝ Քրիստոնին վայր բերելու համար: Կամ՝ ով կիջնի անդունքը, այսինքն՝ Քրիստոնին մեռենարի միջից հանելու համար»: Բայց Գիրքն ինչ է ասում. «Սնուիկ է քեզ խոսքը, քո թերանում ու քո սրտում է», այսինքն՝ հավատքի խոսքը, որ մենք քարոզում ենք: Որովհետեւ, եթե թերանուվդ Հիսուսին Տեր դավանես և սրտում հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռենարից, կայրեն: Քանի որ սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և թերանով դավանում ենք՝ փրկվելու համար»:

— Հռոմեացիների 10.6-10

Այս հատվածը համարվում է Սուրբ գրքի ամենապերճախոս և ամենակարևոր հատվածներից մեկն այն մասին, թե ինչ պետք է անի մարդը՝ փրկվելու համար¹: Քրիստոնեության պատմության դարերի ընթացքում այն եղել է միսիթարության աղյուր նրանց համար, ովքեր հավատացել են, և պաշտպանական պարիսապ՝ տարատեսակ սուս ուսմունքների գրեթե մշտական հարձակումների դեմ, որոնք փորձում են խառնել գործերը հավատքի հետ՝ դրանք փրկության միջոց դարձնելով: Մարդը չի ստանում փրկությունը քաջարի գործերով և վեհանձն ոլխտագնացություններով, այլ՝ Տիրոջ անոնք հավատքով կանչելով:

«ՄՈՏԻԿ Է ԽՈՍՔ»

Հռոմեացիների 10-րդ գլուխ առաջին հինգ խոսքերում Պողոս առաջյալը ցույց է տալիս Խրայելի ժողովրդից շատերի լուրջ աստվածաբանական սխալմունքը: Թեև նրանք գովելի նախանձավորություն ունեին, նրանք չեին վնատրում ճիշտ դիրք Աստծո առջև՝ հավատալով Նրա Որդու քավշարար աշխատանքին: Փոխարենը, ճգոտում էին արդարություն ստանալ՝ խստապահանջ և տանջալի կերպով հնագանդվելով օրենքին²: Պողոսն ընդդիմանում է նրանց սխալ-

1. Գործը 16.30

2. Հռոմեացիների 10.1-3

մունքին՝ հայտարարելով, որ Քրիստոսի կատարյալ փրկարար աշխատանքը վերջ դրեց մարդկային արժանիքներով կամ ջանքերով Աստծոն առջև արդարանալու բոլոր փորձերին³:

Օրենքը ներկայացնում է անկում ապրած մարդկանց այնպիսի պահանջներ, որոնք նրանք չեն կարող կատարել նոյնքան, որքան որ չեն կարող «վեր ենել երկինքը» կամ «իջնել անդունդը»: Սակայն հավատքը լիովին այլ է. այն չի պահանջում ոչ մի հերոսական սխրանք կամ անհնարին թվացող կրոնական համապատասխանություն: Փոխարենը, այն կոչ է անում մարդուն գիտակցել իր «անօգնական վիճակը» և ապավինել Քրիստոսի Ասձին և ձեռքբերումներին⁴: Ահա թե ինչո՞ւ է Պողոս առաքյալը հավատիացնում Հռոմում գտնվող քրիստոնյաներին, որ այն ամենը, ինչ իրենց անհրաժեշտ էր Աստծոն առջև ճիշտ դիրք ունենալու համար, տրվեց իրենց, երբ հավատացին Ավետարանի խոսքին, որը մոտեցավ իրենց առաքելական քարոզման միջոցով⁵: Նրանք կարող էին վստահ լինել իրենց փրկության մեջ, քանի որ իրենց սրտերում հավատացին Ավետարանի ուղերձին, որը քարոզվեց իրենց, և բացահայտ կերպով դավանեցին Հիսուսին որպես Տեր:

ԱՅՍ ՀԱՏՎԱԾԻ ՄԽԱՎԼ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հատվածն արդարացիորեն դարձել է ամենահայտնին և ամենագործածվողը մերօրյա ավետարանիչների կողմից, ինչպես նաև՝ այն մարդկանց, որոնք ցանկանում են կիսվել իրենց հավատքով: Այնուամենայնիվ, ինչ է այն իրականում նշանակում, և ո՞րն է այս հատվածի պատշաճ կիրառությունն ավետարանչության մեջ: Կարող է արդյոք որևէ մեկը կատարել այս աստվածաշնչյան պահանջները՝ հավատալը և դավանելը, եթե նա պարզապես որոշում կայացնի ընդունել Քրիստոսին, աղոթի ապաշխարության աղոթքը և դավանի Քրիստոսին՝ այդ որոշմանը հավանություն տվող հավատացյաների համայնքի առջև: Այս հարցերին պատասխանելու համար մենք պետք է դիտարկենք Պողոսի խոսքերն իրենց պատշաճ համատեքստում և որոշենք Պողոսի լեզվի ճշգրիտ իմաստը: Մենք պետք է զգույց լինենք, երբ ենթադրում ենք, որ որևէ հատված որոշակի նշանակություն ունի և պետք է կիրառվի որոշակի կերպով, միայն որովհետև մեր ժամանակակիցները հակված են դրա լայնութեն ընդունված մեկնությանը և կիրառմանը: Մենք հաճախ ենթադ-

3. Հռոմեացիների 10:4

4. «Իմ անձն ապահով է» երգի երկրորդ տվյալ, հեղինակ՝ Հորացիոն Գեյթս Սփեֆ-Փորդ (1828–1888թ.):

5. Այսինքն՝ «հեշտորեն հասանելի դարձվեց նրանց համար»:

րում ենք, որ հասկանում ենք որևէ հատված, քանի որ առանց վիճարկելու ընդունել ենք դրա մեկնությունն այն մարդկանցից, որոնք առանց վիճարկելու ընդունել են այն ուրիշներից: Այնուամենայնիվ, եթիւ ինչ-որ մեկն իրականում ուստիմասիրում է այդ հատվածը՝ պարզելու համար, «թե այս այսպես է», այդ անվիճարկելի վստահության միամիտ շղթան հաճախ կտրվում է (Գործը 17.11): Նշանակում է՝ մենք լավ կանենք, եթե տանք մեզ հետևյալ հարցը. արդյո՞ք Պողոս առաքյալը գրեց այս հատվածը, որպեսզի ապաշխարության աղոթքի նմուշ տար մեզ, թե՞ն նա բոլորովին այն նպատակ ուներ:

Ժամանակակից ավետարանչական շարժման մեջ ապաշխարության աղոթքը դարձել է մարդկանց դեպի Քրիստոսն առաջնորդելու և նրանց փրկության հավաստիացում չնորիելու գիշավոր միջոցը: Այս աղոթքը կարելի է գտնել ավետարանչական գրքոյիների վերջին էջում և կարելի է լսել ավետարանչական քարոզների ավարտին: Որպես կանոն, այն բաղկացած է հետևյալ մասերից: Աստծոն փնտրող մարդը պետք է խոստովանի, որ մեղավոր է և անկարող է փորկել ինքն իրեն: Հաջորդը՝ նա պետք է դավանի, որ Հիսուսը մահացավ իր մեղքերի համար և հարություն առավ մեռելներից: Այսուհետև նա պետք է խնդրի Հիսուսին գալ իր սրտի մեջ և լինել իր Փրկիչը: Դրան հետևում է խոստումը, որ եթե նա անկեղծորեն աղոթեց այս աղոթքը, արդեն իսկ փրկված է: Ի վերջո, նա հավաստիացում է ստանում, որ եթեն նա երբևէ կասկածի իր փրկության մեջ, պետք է հենավի այն փաստի վրա, որ այդ պահին աղոթել է ապաշխարության աղոթքը և դավանել է Քրիստոսին:

Թեև այս կետերում ինչ-որ հշմարտություն կա, գոյություն ունեն մի քանի լուրջ առարկություններ մեղավորներին դեպի Քրիստոսն առաջնորդելու այս մեթոդի դեմ, որոնք մենք պետք է ներկայացնենք: Առաջինը՝ այն չունի աստվածաշնչյան նախադրյալ: Այն չէր օգտագործվում Քրիստոսի, առաջաների և առաջին քրիստոնյաների կողմից: Երկրորդը՝ այն հայտնի չի եղել եկեղեցու մեծ մասին ամբողջ պատմության ընթացքում, այլ՝ վերջերս հորինված գաղափար է: Երրորդը՝ այն վտանգ է ներկայացնում, քանի որ կարող է սահմանափակել Ավետարանը՝ վերածելով այն հավատքի դավանանքի: Բազմաթիվ մարդիկ, որոնց կյանքում չկա աստվածաշնչյան դարձի ոչ մի ապացույց, հավատում են, որ փրկված են պարզապես այն պատճառով, որ մեկ անգամ որոշում են կայացրել ընդունել Քրիստոսին և աղոթել են ապաշխարության աղոթքը: Թեև ավետարանչությունների ընթացքում ապաշխարության աղոթքն օգտագործող քրիստոնյաները միտումնավոր այդպես չեն վարդում, շատ հաճախ այս մեթոդաբանության արդյունքը հենց այսպիսին է: Չորրորդը՝ այն գրեթե լիովին փոխարինել է Սուրբ գրքի ապաշխարության և հա-

վատքի կոչին: Ապշեցուցիչ է, որ մարդկանց դեպի Քրիստոսն առաջնորդելու աստվածաշնչյան օրինակները, ըստ էության, անտեսվում են՝ ի նպաստ այս ժամանակակից մեթոդի: Հիսգերորդը՝ այն դարձել է հավաստիացման գլխավոր և հաճախ միակ հիմքը: Այսինքն, ում կյանքում Աստծո կատարած աշխատանքի ապացույցն աննշան է կամ գրեթե բացակայում է, համոզված կամ հավաստիացած են իրենց փրկության մեջ միայն նրա համար, որ նրանք մեկ անգամ անկեղծորեն աղոթել են ապաշխարության աղոթքը:

Հռոմեացիների 10.9-ի այս ընդունված կիրառումն Աստծոն փնտրող մարդկանց հանդեպ հակառակ է Պողոսի տրամաբանությանը և նպատակին: Այն աղավաղում է Սուրբ գրքի ամենից ազդեցիկ ուսումնական մեջ՝ «սոլա ֆիդե»-ն⁶, և դրա ամենից ազդեցիկ խոստումներից մեջ՝ ողդված է Աստծո ժողովրդին: Այն նոյնպես վերածել է այս հատվածը դատարկ դաշտանքի, որը մարդիկ օգտագործել են՝ տալով կեղծ հավաստիացում փրկության մեջ անթիվ մարդկանց, որոնք գրեթե դարձի պտուղ չունեն: Ահա թե ինչո՞ւ է անչափ կարևոր, որ մենք մանրակրկիտ ձևով դիտարկենք այս հատվածը՝ ըստ դրա թերականական և պատմական համատեքստի:

Պողոսի գրվածի իմաստը և նպատակն ընկալելու համար օգտակար է հասկանալ, որ նա նկատի ունի թե հավատացյալի կյանքում տեղի ունեցող մեկանգամյա իրադարձությունը, թե այդ իրադարձության պտուղը, որը մնում է նրա կյանքի ամբողջ ընթացքում: Այ կերպ ասած՝ նա խոսում է մարդու կողմից դարձի գալու և դրա շարունակական պտղի մասին, որը վակերացնում է նրա դարձը կամ ցուց է տալիս դրա իսկությունը: Մեղավորն արդարանում և հաշտվում է Աստծո հետ այն պահին, երբ նա ճշմարտապես հավատում է Քրիստոսի Ասձին և Նրա քավշարար աշխատանքին: Այնուամենայնիվ, ապացույցն այն մասին, որ այդ պահին նա ճշմարտապես հավատացել է և դարձի է եկել այն է, որ նա շարունակում է հավատալ և դավանել իր կյանքի ամբողջ ընթացքում: Սա չի նշանակում, որ ճշմարիտ հավատացյալն անընկալունակ կլինի կասկածների հանդեպ, ենթակա չի լինի ձախողումների և անխոչընդոտ աճ կունենա՝ հոգևորապես հասուն դասնալով: Այնուամենայնիվ, սա նշանակում է, որ այն Աստված, Ով սկսել է այդ բարի գործը նրանում, կշարունակի կատարել այն մինչև վերջին օրը⁷: Փրկությունը միայն շնորհքով է

6. Լատիներեն՝ «միայն հավատքով»: Այս պատմական արտահայտությունը նշանակում է, որ փրկությունը տրվում է միայն հավատքով Հիսոս Քրիստոսի միջոցով կատարված աստվածային փրկարար աշխատանքի հանդեպ՝ առանց որևէ մարդկային արժանիքի: Այս ինսգ «սոլա»-ներից մենքն է, որոնք ամփոփում են Բարեկարգման (Ուժորմանցիայի) աստվածաբանական համազննութերը: Մյուս չորս «սոլա»-ներն են. «սոլա Սլրիպտորուս» (միայն Սուրբ գիրքը), «սոլա գրաստիհա» (միայն շնորհքով), «սոլա Քրիստոս» (միայն Քրիստոսը) և «սոլի Դեռ գլորիս» (փառքը միայն Աստծոն):

7. Փիլիպեցիների 1.6

և միայն հավատքի միջոցով⁸: Այնուամենայնիվ, փրկարար հավատքի վկայությունը Հիսուս Քրիստոսի իշխանության անկեղծ և մշտական դավանությունն է հավատացյալի կյանքի ընթացքում:

Ահա և այս հատվածի մերօրյա կիրառման խնդիրը: Ոչ ոք չի կարող ժխտել, որ քազմաթիվ մարդիկ, որոնք քայլում են մեր քաղաքների փողոցներով և նատած են մեր եկեղեցիների նստարաններին, հավատում են, որ իրենք փրկված են, քանի որ մեկ անգամ նրանք ենթադրաբար հավատացել են իրենց սրտում և դավանել են իրենց բերանով, սակայն գրեթե մասյուն պտուի չունեն: Նրանց ամբողջ կյանքն անցնում է մարմնավիր և աշխարհիկ կերպով՝ առանց Աստծոն մասյուն գրության իրական ապացոյցի, որը, ինչպես Աստվածաշունչն է սովորեցնում, փրկության անբաժանելի մասն է: Այնուամենայնիվ, նրանք անկոտրում են իրենց համոզմութների մեջ, քանի որ մեկ անգամ «որոշում են կայացրել» և «աղոթել են ապաշխարության աղոթքը»: Այս ավետարանական ծառայողները, որոնք վավերացնում են այդաիսի մարդկանց փրկությունը, Է՛ ավելի են սրում այս խնդիրը: Նրանք հիմնավորում են այդ մարդկանց փրկությունը նրանց ենթադրյալ դարձով, սակայն չեն փնտրում սրբացման շարունակական աշխատանքի և հոգևոր պտղի որևէ ապացոյց: Թվում է՝ նրանք մոռացել են Ավետարանի հիմնարար ճշմարտություններից մեկը. ճշմարիտ փրկարար հավատքը վավերացվում է իր հարատևությամբ և պտղով, և մեր փրկությունը մեղքի դատապարտությունից վավերացվում է այն բանով, որ ներկայում մենք փրկվում ենք մեղքի իշխանությունից⁹:

ՄՐՑՈՎ ՀԱՎԱՏԱԼԸ

Հռոմեացիների 10.9,10-ում Պողոս առաքյան ասում է, որ դոք փրկված եք, եթե հավատում եք ձեր «սրտում» և «սրտով»: Եթե մեր փրկությունը կախված է այսաիսի հավատքից, նշանակում է՝ այս երկու քառերը դիտարկելը և ճգրտորեն մեկնեն անչափ կարևոր է: Այնուամենայնիվ, մինչև հավատքի մասին որևէ քննարկում սկսելը, լավ կլինի՝ հիշենք, որ դևերը նոյնպես հավատում են և դրդում են, քայց դա չի փրկում նրանց¹⁰: Եթք Հիսուսը սկսեց քարոզել Գալիլեյում, այն դևը, որով բռնված էր ժողովարանում գտնվող մի մարդ, աղաղակեց. «Գիտեմ Քեզ, թե ով ես՝ Աստծո Սուրբդ» (Մարկ. 1.24): Գաղարացի դիվահարը նոյնիսկ Է՛ ավելի մանրամասնեց՝ խոստովանելով, որ Հիսուսը «Բարձրյալ Աստծո Որդին» է (Մարկ. 5.7): Աստվածաշունչը ցոյց

8. Եփեսացիների 2.8

9. Մարկոս 13.13, Փիլիպեցիների 1.6, Հակոբոս 2.18

10. Հակոբոս 2.19

Է տալիս, որ սատանան և դևերը խորը գիտելիք ունեն Հիսուս Քրիստոսի Ասձի և աշխատանքի մասին և ընդունում են դրանք որպես բացարձակ իրողություններ: Նրանք գիտեն, որ Նա Աստծո Որդին է, որ Նա մահացավ Գողգոթայում՝ Եր ժողովրդի մեջերի համար, և որ Նա հարություն առավ երրորդ օրը: Այնուամենայնիվ, նրանց գիտելիքը և Քրիստոսի վերաբերյալ իրողություններն ընդունելը չի փրկում նրանց: Նրանք չեն փրկվում այն փաստերով, որոնց ճշմարտացիության մեջ համոզված են. փոխարենը, նրանք դատապարտվում են դրանցով: Նոյն ախտը գոյություն ունի նաև մարդկանց միջև:

Ժամանակակից Ավետարանական շարժման ցանկացած ազնիվ գնահատական ցոյց կտա, որ բազմաթիվ մարդիկ, որոնք քայլում են մեր քաղաքների փողոցներով և նստած են մեր եկեղեցիների նստարաններին, հասել են «նոյն պատվական հավատքին», ինչ դևերը (ԲՊետրոս 1.1)¹¹: Նրանք գիտեն որոշ բաներ Քրիստոսի Ասձի և աշխատանքի մասին և դպրանում են այդ բաները, երբ հարմար է իրենց: Այնուամենայնիվ, նրանց կյանքում գրեթե չկա ապացույց Քրիստոսի շարունակական փրկարար աշխատանքի մասին: Նրանց հավիտենական փրկության հույսը հիմնված է հետաքրքր անցյալում կայացրած որոշման վրա, որը, իրենց համոզմամբ, անկեղծ էր. Նրանք ընդունել են Քրիստոսին պարզ աղոթքի միջոցով: Ավետարանի ծառայողները, որոնք պետք է այդքան անմիտ չգտնվեին, հաստատել են նրանց հույսը: Նման դևերի, նրանք կորած են: Այնուամենայնիվ, ի տարբերություն դևերի, նրանք չգիտեն այդ մասին:

Այժմ, տեսնելով ոչ սրտանց հավատքի վտանգները, մենք պատրաստ ենք ուսումնասիրել ճշմարիտ սրտանց հավատքը՝ այն, որը ոչ միայն ընդունում է ճշմարտությունները Քրիստոսի Ասձի և Նրա կատարած աշխատանքի մասին, այլև հենավում է դրանց վրա և վերափոխվում է դրանցով: Աստվածաշնչում սիրտը մարդու միջուկը կամ էլությունն է: Այն մարդու մտքի, կամքի և զգացմունքների գտնվելու վայրն է: Ինչ-որ իմաստով, կարելի է ասել, որ սիրտը մեր ամբողջ ինքնության կառավարման կենտրոնն է: Այն, ինչ տեղի է ունենում դրանում, ազդում է մեր կյանքի բոլոր բնագավառների վրա: Այդ իսկ պատճառով, անհեթեթություն է մտածելը, որ մարդը կարող է հավատալ ինչ-որ բանի իր «սրտում» և «սրտով» և շրջադարձային կամ արմատական կերպով չկրել դրա ազդեցությունը:

Եթե մենք սրտանց հավատում ենք, որ Աստված հարություն տվեց Հիսուսին մեռեներից, նշանակում է՝ մեր էլության խորքում հավատում ենք, որ այն ամենը, ինչ Հիսուսն ասաց Իր մասին, ճիշտ է: Մի-

11. Ըստ այս հատվածի, ճշմարիտ քրիստոնյաները մարդիկ են, որ հասել են «նոյն պատվական հավատքին», ինչ առաջաները:

գուցե սա այդքան ծայրահեղ չթվա, մինչև չդիտարկենք Նրա պնդումներից մի քանիսը.

- Նա հավիտենական Աստված է և Տիեզերքի Արարիչն է¹²:
- Նա բոլոր մարդկանց կյանքը և լոյսն է¹³:
- Նա մարդկության միակ Փրկիչն է¹⁴:
- Նա տիեզերքի բացարձակ Տիրական է¹⁵:
- Նա կորոշի բոլոր մարդկանց հավիտենական ճակատագիրը¹⁶:
- Նա ավելի արժեքավոր է, քան ամբողջ աշխարհի հարստությունը՝ միասին¹⁷:
- Նրա կամքի և ծրագրի իրագործումը ամբողջ տիեզերքի և ամեն մարդու կյանքի նպատակն է¹⁸:
- Նրան պետք է սիրել ավելի, քան բոլոր մարդկանց, առարկաները և երևոյթները¹⁹:
- Նրան պետք է արմատական ծնով հետևել և հնագանդվել՝ անկախ դրա գնից²⁰:
- Նա կդատի իր ժողովրդի Իրեն մատուցած ծառայությունը և դրան համապատասխան կվարձատի նրանցից յուրաքանչյուրին²¹:

Քրիստոսի այս ծայրահեղ պնդումներն անփոյթ պատասխանի հնարավորություն չեն տալիս: Մենք չենք կարող հավատալ դրանց մեր մտքի, կամքի և զգացմունքների խորքում և չվերապողել դրանց արմատական և նոյնիսկ կործանարար ազդեցությունը: Եթե բանական արարածը հարի այս ճշմարտություններին, անկարելի է, որ տեսանելիորեն փոփոխություն չապրի դրանցով: Այս պնդումների բնոյթն իսկ պահանջում է աղետալի չափերի հասնող փոփոխություն մարդու անձի և նրա կյանքի ընթացքի մեջ:

Այդ իսկ պատճառով, ճշմարիտ փրկարար հավատքն անգործույն յա և մասնակի վստահություն չէ Քրիստոսի հանդեպ, այլ՝ գործուն և հարածուն վստահություն: Սրբացման շարունակական աշխատանքի միջոցով, այն, ի վերջո, համակում է հավատացյալի ամբողջ կյանքը: Փրկարար հավատքի ապացույցն այն չէ, որ մեկ անգամ մենք պարզապես «ընդունեցինք Քրիստոսին»՝ ինչ-որ աղոթք կրկնելով, այլ՝ որ այն պահից, երբ մենք հավատացինք Ավետարանին, Քրիստոսի անդումներին իր մասին և Նրա հավակնությունը մեր հանդեպ է ավելի մեծ տեղ են գրավում մեր կյանքում:

12. Հովհաննես 1.1.2, 8.58, 59

13. Հովհաննես 1.4, 6.35, 8.12, 11.25

14. Հովհաննես 8.24, 14.6, Գործը 4.12

15. Մատթեոս 28.18, Գործը 2.36

16. Մատթեոս 16.27, 25.31-46

17. Մատթեոս 16.26

18. Ղուկաս 6.46, 12.47

19. Ղուկաս 14.26

20. Մատթեոս 16.24, 25, Ղուկաս 14.27-33

21. Մատթեոս 16.27, Բ Կորնպացիների 5.10

ԲԵՐԱՆՈՎ ԴԱՎԱՆԵԼԸ

Սրտանց հավատքն ամփոփ կերպով դիտարկելուց հետո մենք պետք է անդրադառնանք այն բանին, թե ինչ է նշանակում քերանով դավանելը: Առաջինը, ինչին մենք պետք է ուշադրություն դարձնենք Հռոմեացիների 10.9,10-ում, այս դավանության առանձնահատկությունն է: Այս դավանությունը պարզապես Հիսուս Քրիստոսին հավատալու մասին չէ, այլ՝ Նրա բացարձակ և համընդհանուր իշխանության: Այսպիսով, ապացուցը, որ մարդը հավատացել է իր սրտով և վստահում է Քրիստոսի Ասձի և փրկարար աշխատանքի առաքինությանը այն է, որ նա նոյնպես դավանում է Նրան որպես Տեր:

Քրիստոնեության երկարատև պատմությունն ապացուցում է, որ ոչինչ չի կարող ավելի ծայրահեղ լինել կամ ավելի թանը նստել մարդու վրա, քան «Կյուրիփու Իեսուս» (հունարեն՝ «Հիսուսը Տերն է») դավանությունն անելը: Հռոմեական իրականության մեջ կար միայն մեկ տեր, և նրա անոնք Կեսար էր: Այլ տիրոջ մասին նոյնիսկ հիշատակելը համարվում էր քաղաքական դավաճանություն, որը հաճախ ավարտվում էր աքսորով կամ մահապատժով: Հրեական կրոնում կար միայն մեկ Տեր, և Նրա անոնք Յահվեի էր: «Տեր» տիրոջ մեկ այլ անձնավորությանը վերագրելով հայոցություն էր և արժանի էր մահվան: Հունարենի ակնառու մասնագետն Ա. Թ. Ռոբերտսոնը գրում է. «Ոչ մի հրեա չէր անի դա, եթե իրականում չվստահեր Քրիստոսին, քանի որ LXX²²-ում «Կյուրիփու» (տեր) բառն օգտագործվում է Աստծո վերաբերյալ: Ոչ մի հեթանոս, որը չէր դադարել երկրպագել կայսրին որպես «Կյուրիփոսի», նոյնպես չէր անի դա»²³: Ռոբերտսոնը շարունակում է. «Կարելի է հիշել Պոլիկարպոսի մասին, որից պահանջում էին ասել «Կյուրիփո Կեսար» (Կեսարն է տերը), իսկ նա ամեն անգամ պատասխանում էր «Կյուրիփո Իեսուս»-ով: Նա պատճեց՝ հասուցելով իր կյանքով իր հավատարմության համար: Այսօր անհոգ մարդիկ կարող են ասել. «Տեր Հիսուս» բառերը թերթամիտն և նոյնիսկ աներկյուղ կերպով, բայց այդ ժամանակ ոչ մի հրեա կամ հեթանոս այդպես չէր ասի, եթե իրականում նկատի չունենար դա»²⁴:

Մենք փրկվում ենք՝ միայն հավատալով Քրիստոսի Ասձին և Նրա կատարած աշխատանքին, բայց մեր հավատքի ճշմարիտ լինելու ապացույցն այն է, որ մենք դավանում ենք Հիսուսին որպես Տեր և հավատարիմ ենք Նրան, նոյնիսկ երբ թանը ենք վճարում այդ դավանության համար: Առաջին եկեղեցին չարչարանքներ էր կրում և մահանում էր, քանի որ այն հավատարմորեն հոչակում էր Հիսուսին որպես

22. Յոթամասամից թարգմանության (ին կտակարանի գրքերի հունարեն թարգմանության) հասպակում:

23. Ա. Թ. Ռոբերտսոն. «Խոսրի պատկերները Հին կտակարանում» (Նեշվիլ, «Broadman Press», 1930–1933թթ.), հու. 4, էջ 389:

24. Ռոբերտսոն. «Խոսրի պատկերները», հու. 4, էջ 168:

Տեր և հրաժարվում էր երկրպագել Կեսարին: Ներկայում քրիստոնյաները կրում են բանտարկություն, կտտանքներ և մահ նոյն դավանության պատճառով: Նոյնիսկ Արևմուտքում, որտեղ ֆիզիկական հալածանքը շատ քիչ է կամ ընդհանրապես չկա, ճշմարիտ հավատացյան այն մարդն է, որը հնազանդվում է Հիսուս Քրիստոսի իշխանությանը, ոչ թե ապրում է «այս չար աշխարհի» չափանիշներով (Գաղատ. 1.4): Ահա թե ինչ նկատի ուներ Պորռոս առաջյալը՝ գրելով: «Որովհետև, եթե բերանովի Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռեներից, կապրես» (Հռոմ. 10.9):

Ճշմարիտ հավատքը Հիսուսի հանդեպ արտահայտվում է Նրա իշխանությանը իրապես հնազանդվելով և այն բացահայտ կերպով դավանելով, ինչն ավելի է խորանում, որքան որ հավատացյալը հասունանում և զորանում է, նոյնիսկ ամենից անբարենպաստ հանգամանքներում: Փրկության մեծագոյն ապացույցն այն է, որ մարդը շարունակում է հասունանալ այս հավատքով և դավանությամբ: Մեկնելով Հռոմեացիների 10.9,10-ը՝ ակնառու շոտլանդացի մկրտական Ուորերտ Հոլդեյնը (1764-1842) գրում է.

«Մարդը դառնում է արդար, կատարյալ արդար՝ հավատալով իր Որդու մասինԱստծո լորին: Բայց ապացույցը, որ նրա հավատքը ճշմարիտ է, այն է, որ նա բացահայտ դավանում է Տիրոջն իր բերանով այն ամենում, ինչում Նրա կամքը հայտնի է: Քրիստոսին դավանելը նոյնքան անհրաժեշտ է, որքան Նրան հավատալը, սակայն անհրաժեշտ է այլ նպատակով: Հավատքն անհրաժեշտ է՝ արդարության պարզեց ստանալու համար: Դավանությունն անհրաժեշտ է՝ ապացուցելու համար, որ դուք ստացել եք այդ պարզեցը: Եթե մարդը չի դավանում Քրիստոսին՝ պատրաստ է վտանգի ենթարկել իր կյանքը, համբավը, ունեցվածքը, ազատությունը և այն ամենը, ինչը բանկ է իր համար, նա չունի Քրիստոսի հավատքը: Կյափիսով, ասելով, որ դավանում ենք փրկվելու համար՝ առաջյալը նկատի չունի, որ այն փրկության պատճառ է, կամ որ առանց դրա փրկության պարզեցն ամբողջական չէ: Եթե մարդը հավատում է իր սրտում, նա արդարանում է: Բայց Քրիստոսին դավանելը հավատքի արդյունքն է, և Վերջին օրը այն կլինի նաև հավատքի ապացույցը: Հավատքը, որը շնորհում է Քրիստոսի արդարությունը մեղավորին, արտահայտվում է Նրա անոնը դավանելով՝ թշնամիների միջև կամ վտանգի առջև»²⁵:

ԴԱՎԱՆԵԼԸ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՍՏԵՔՍՈՎ

Որպեսզի հասկանանք, թե ինչ նկատի ուներ Պողոսը՝ գրելով, որ անհրաժեշտ է դավանել Հիսուսին որպես Տեր, արժե հաշվի առնել, թե ինչ էր նշանակում քրիստոնյա լինելն Առաջին Եկեղեցում: Բեթա-

25. Ուորերտ Հոլդեյն. «Հռոմեացիների թղթի մելքոնություն» (Եղինքուրգ, «Banner of Truth», 1958թ.), էջ 508:

Նիայի կառավարիչ Պլիսիոս Կրտսերը, նամակ գրելով Տրայանոս կայսերը (թագ. 98–117թթ.), հակիրճ նկարագրում է, թե ինչպես էին քրիստոնեության մեջ մեղադրվող մարդիկ հարցաքննվում, և ինչպես էին նրանց դեմ ուղղված մեղադրանքներն ապացուցվում կամ հերքվում. «Ինձ ներկայացվեց անանուն տեղեկություն, որը մեղադրում էր մի քանի մարդու, որոնք հետաքննության ընթացքում հերքեցին, որ իրենք քրիստոնյա են կամ երրևէ եղել են: Նրանք կրկնեցին ինձ հետ աղոթք՝ ուղղված մեր աստվածներին, գինի և խոնակ մատուցեցին քո արձանի առջև և նույնիսկ հայոց եցին Քրիստոսի անունը... այդ իսկ պատճառով, ես պատշաճ համարեցի ազատ արձակել նրանց»²⁶:

Պլիսիոսը գրում է մի քանի մարդու մասին, որոնցակնայտորեն Քրիստոսի հետուորդ լինելու սույն մեղադրանք էին ներկայացրել: Իրենց անմերությունն ապացուցելու համար նրանք աղոթեցին հռոմեական աստվածներին, երկրպագություն մատուցեցին կայսրին և հայոց եցին Հիսուսի անունը: Հռոմեացիների 10.9, 10-ում նրանք արեցին քրիստոնյաներին ուղղված պատվերի ճիշտ հակառակը:

Թեև Պլիսիոսի նամակում գրված է այնպիսի մարդկանց մասին, որոնք հանցավոր չեն քրիստոնյա լինելու մեջ, այն լուրջ հիմք է տալիս մեզ ենթադրելու, թե ինչպես կիներ ամեն ինչ, եթե մեղադրյալներն իրականում քրիստոնյա լինեն: Պատկերացրեք, որ Հռոմի իշխանությունները հայտնաբերում են մի փոքրիկ տնային եկեղեցի և բերում են այդ մարդկանց նոյն հռոմեական պաշտոնյայի մոտ: Նրանց դեմ ուղղված մեղադրանքն ապացուցելու կամ հերքելու համար, նրանց տանում են մի փոքրիկ խնկարկման սեղանի մոտ, որտեղ նրանց պատվիրում են մի քանի կարճ ծես կատարել: Առաջինը՝ նրանք պետք է կանչեն հռոմեական աստվածներին: Երկրորդը՝ պետք է մասնակցեն կայսերական երկրպագության ծեսի, որպեսզի ապացուցեն իրենց հավատարմությունը Կեսարին: Եվ վերջինը, նրանց պատվիրում են հայոց Քրիստոսին՝ կամ ուրանալ Նրա իշխանությունը, կամ՝ նզովք հոչակել Նրա վրա²⁷: Ի զարդումանք այդ փոքրիկ համայնքի՝ նրանցից երկուսն արագորեն կանգնում են խնկամանի մոտ և վարվում են այնպես, ինչպես իրենց պատվիրվել է: Երբ նրանք ազատ են արձակվում, հաջորդին ուժով ոտքի են կանգնեցնում՝ պատվիրելով հնազանդվել: Թեև լցված վախով ու դողով, նա ոչ միայն իրաժարվում է երկրպագել հռոմեական աստվածներին և Կեսարին, այլև պատասխանում է. «Կուրիփու Իեսոս»՝ «Հիսուսն է Տերը»: Նրան ուժով հեռացնում են՝ աքսորի կամ մահապատժի դա-

26. Մերիլ Չ. Թեւնսի. «Նոր կտակարանի ժամանակաշրջանը» (Գրենդ Ռեվիվու, «Eerdmans», 1965թ.), էջեր 329–330:

27. Ա Կորնթացիների 12.3

տապարտելու համար: Մեկ առ մեկ այդ եկեղեցու անդամներն անում են նոյն հավատարիմ դավանությունը, որը կանխորոշում է նրանց ճակատագիրը: Թեևս սա հորինված սցենար է, քրիստոնեական պատմության արժիշտման ապացուցում են, որ անթիվ հավատացյալների հարկադրել են նման փորձության, և նրանք հաղթող են դուրս եկել՝ վճարելով իրենց լյանքով: Նրանց փորձությունն ապացուցում էր, որ նրանք սրտանց հավատում էին փրկությանը, քանի որ դավանում էին Հիսուսին որպես Տեր, նոյնիսկ՝ մինչև մահ:

ՊԱՏՃԱՃ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Հռոմեացիների 10.9,10-ի իրական նշանակությունը և այն փաստը, թե դարերի ընթացքում ինչպիսի գին են վճարել Քրիստոսի հետևորդները՝ Նրա անունը դավանելու համար, այս հատվածի տարածված կիրառությունը ժամանակակից ավետարանության մեջ չունի ոչ մի արդարացում: Պնդելը, որ այս հատվածն աստվածաշնչյան հիմք է այն ապաշխարության աղոթքի համար, որով ավարտվում են բազմաթիվ ավետարանչական գրքովկներ և քարոզներ, լուրջ մեկնողական սխալմունք է: Այսուամենայնիվ, այս տարածված համոզմունքի պատճառով բազմաթիվ դարձի չեկած տղամարդիկ, կանայք և երեխաներ գրեթե անսասան հավատիացում ունեն իրենց հավիտենական փրկության մեջ, միայն որովհետև մեկ անգամ նրանք համաձայնել են մի քանի աստվածաշնչյան ճշմարտությունների հետ և մի նմուշային աղոթք են կրկնել: Դրանից հետո նրանց լյանքում չի եղել ոչ մի վերափոխում, սրբացման ոչ մի շարունակական աշխատանք և ոչ մի ճգտում Քրիստոսի հանդեպ: Օգտվելով Պողոս առաքյալի խոսքերից՝ արժե հարցնել: «Ասմիտ ավետարանիներ, ովք ձեզ կախարդեց»²⁸:

Հռոմեացիների 10.6-10-ը սովորեցնում է, որ մենք փրկված ենք միայն հավատքով: Քրիստոնյաները չեն վաստակում փրկությունը ինչ-որ հերոսական սիրանքի կամ ուժասպառ անող շանքերի միջոցով. նրանք ընդունում են այս՝ հավատալով Քրիստոսի Ասձին և Նրա կատարած աշխատանքին: Այն մարդիկ, որոնք ճշմարտապես հավատացել են, վաղուց արդեն թողել են իրենց արդարությունը հաստատելու ցանկացած փորձ: Նրանք ընկել են Քրիստոսի վրա և կանգնած են Նրա առաքինության և արժանիքների վրա:

Այսուամենայնիվ, հավատքը Քրիստոսի հանդեպ՝ կարճատև, անգործունյա և աննկատ չէ. այն մնայուն, գործուն և ակնհայտ է: Սա երաշխավորված է, քանի որ փրկությունն Աստծո գործն է՝ Աստ-

28. Գաղատացիների 3.1

ծո փառքի համար: Նա, Ով սկսել է ձևավորել փրկարար հավատքը հավատացյալի պրոտում, անպայման կիետնի, որ այն հարատնի, խորանա և դրսնորվի: Այդ դրսնորումներից մեկը Հիսուս Քրիստոսի իշխանությունը և խորով, և՝ գործով դավանելն է՝ անկախ այն գնից, որը պետք է վճարել դրա համար:

Այսպիսով, ինչպես պետք է ընդունենք և կիրառենք այս խոսքերը: Հավատացյալի համար դրանք պետք է մշտական միջարություն և զգուշացում լինեն: Միջթարությունը հետևյան է. մենք փրկված ենք միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով: Մեր ճիշտ դիրքն Աստծոն առջև մեր ջանքերի կամ հերոսական գործերի արդյունքը չէ, այլ՝ Գողգոթայում Քրիստոսի մեծ աշխատանքի և ձեռքբերումների արդյունքը: Զգուշացումը հետևյան է. փրկարար հավատքի և ճշմարիտ դարձի գլխավոր ապացույցներից մեկը մեր կյանքում այն է, որ Քրիստոսի իշխանությունն էլ ավելի իրական է դառնում մեզ համար, և մենք պատրաստ ենք հետևել Նրան՝ նոյնիսկ ամենամեծ գինը վճարելու դեպքում: Ինչ վերաբերում է ավետարանչությանը և Աստծուն փնտրող մարդկանց հետ աշխատելուն, այս խոսքերը պետք է կիրառվեն եռակի կերպով: Առաջինը՝ մենք պետք է կիրառենք դրանք, որպեսզի ապացուցենք Աստծոն փնտրող մարդուն գործերի անօգուտ լինելը, և հորդորենք նրան թողնել սեփական արժանիքներով և առաքինությամբ փրկություն ստանալու ցանկացած հոյս: Երկրորդը՝ մենք պետք է կիրառենք դրանք, որպեսզի խրախուսենք նրան սպասել իր փրկությունը միայն Քրիստոսից և փրկության համար հավատալ միայն Նրան: Երրորդը՝ Աստծոն փնտրող մարդը պետք է կիրարի դրանք որպես անսխալական միջոց՝ իր դավանանքի իսկությունը մշտապես ստուգելու համար: Նա պետք է իմանա, որ եթե ինքը ճշմարտապես դարձի է եկել, Հիսուս Քրիստոսի իշխանությունն էլ ավելի իրական կդառնա իր կյանքում: Թեև կյանքի ընթացքում նա կլրի մեծ դժվարություններ և շատ ձախողումներ իր հավատքի, աստվածապաշտության և դավանության մեջ, նրա անձը և նպատակներն էլ ավելի կինազանդվեն Քրիստոսի իշխանությանը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՍ



Ըստունել Քրիստոսին

«Բայց որոնք որ Նրան ընդունեցին, իշխանություն տվեց նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անվանը հավատում են»:

— Հովհաննես 1.12

«Ահա Ես դուն առջև կանգնած եմ և թակում եմ: Եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմոնեմ նրա մոտ և ըսթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ»:

— Հայտնություն 3.20

Մերօրյա ավետարանչությունը շեշտադրում է հետևյալը. մարդը պետք է որոշում կայացնի, աղոթի ապաշխարության աղոթքը և ընդունի Հիսուս Քրիստոսին իր սրտում: Այս քայլերն այնքան արմատացած են դարձել ժամանակակից ավետարանական մտքի համար, որ գրեթե անհնար է թվում ավետարանչական հավաքույթ անցկացնել՝ առանց դրանց: Այնուամենայնիվ, չնայած այս քայլերի լայնորեն ընդունված լինելուն, մենք պետք է հարցնենք մեզ, թե արդյո՞ք այս մեթոդն իսկապես աստվածաշնչյան է: Քանի որ Հովհաննես 1.12-ը և Հայտնություն 3.20-ն ամենից հաճախ են մեջբերվում՝ որպես աստվածաշնչյան հիմք ժամանակակից ավետարանչության այս ձևի համար, օգտակար կիխնի մանրակրկիտ ձևով ուսումնասիրել այս երկու խոսքն այս և հաջորդ գլուխներում: Արդյո՞ք դրանք սատարում են այնպիսի ավետարանչության, որը հավաստիացնում է մարդկանց հավիտենական փրկության մեջ պարզապես այն պատճառով, որ նրանք մեկանգայմա որոշում են կայացրել հօգուտ Քրիստոսի, հոժարակամ բացել են իրենց սրտերը և ընդունել են Հիսուսին՝ աղոթքի միջոցով:

Մինչև այս խոսքերը դիտարկելը, մենք պետք է ևս մեկ անգամ լիովին գիտակցենք մեր նախաձեռնության լրջությունը: Շատերը կիամաձայնեն, որ ամենաստարածված խնդիրներն Արևմտաքի ավետարանական հավատացյալների միջև դատարկ դավանությունները և անգրւած մարմնավոր վարքն են: Միլիոնավոր մարդիկ համոզված են իրենց

փրկության մեջ, քանի որ իրենք հետևել են այդ «քայլերին», սակայն նրանք դեռ ապրում են աշխարհիկ կերպով՝ չունենալով նույնիսկ աննշան ծգողում Աստծո հանդեպ: Ո՞րն է պատճառը: Միշտե փրկությունն այնքան տկար է, որ չի կարող ազդել մարդու վրա, եթե նա ամբողջ կյանքում ջանապիրաբար չաշակերտի և հաշվետու չինչի ինչ-որ մեկին: Կամ, միգուցե, կա ավելի՞ ցավալի պատճառ՝ այն, որ մեր ենթադրյալ դարձի եկածներից շատերը բոլորովին դարձի եկած չեն: Հնարավիր է, որ Ավետարանի մասին գիտելիքի պակասը կործանման է տանում միշտունավոր մարդկանց: Հնարավիր է, որ մենք անգիտակցաբար դարձել ենք ինչն ժամանակների կեղծ մարզարեների պես, որոնք մակերեսուն էնք ինչն թժշկում մարդկանց՝ ասելով. «Խաղաղություն, խաղաղություն», այնինչ խաղաղություն չկա (Երեմիա 6.14): Լավ կլինի, եթե իշխնք, որ մենք չենք քարոզում սուրբգրային Ավետարանը, եթե մեր կոշը չի համապատասխանում սուրբգրային Ավետարանին:

ԶՐԻՍՏՈՒԹ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Հովհաննեսի Ավետարանի նախաբանում գրնավում է ամենահրաշալի սուրբգրային խոստումներից մեկը փրկության մասին. «Բայց որոնք որ Նրան ընդունեցին, իշխանություն տվեց նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անվանը հավատում են» (1.12): Հասկանալի է, թե ինչու այն դարձավ ամենագործածական հատվածներից մեկը մերօրյա ավետարանչության մեջ: Շատերն օգտագործել են այն պատշաճ կերպով՝ առաջնորդելով բազմություններին Քրիստոսի թագավորության մեջ: Այսուամենայնիվ, շատերն օգտագործել են այն սխալ կերպով՝ առաջնորդելով բազմություններին փրկության կեղծ հավաստիացման: Այս պատճառով, մենք պեսք է ճշտորեն հասկանանք այս հատվածը և դրա աստվածաշնչյան կիրառումը, մինչև որ օգտագործենք այն՝ մարդկանց դեսպի Քրիստոսն առաջնորդելու համար:

Հովհաննեսը նախորդում է այս հատվածը հայտարարությամբ այն մասին, որ իրեաները լիովին մերժեցին Մեսիային: Այն հակիրճ, բայց ազդեցիկ կերպով պնդում է, որ Քրիստոսը «Իրենների (սեփական ժողովողի) մեջ եկավ, և իրենները Նրան ընդունեցին» (1.11): «Ըստունել» բառը թարգմանված է ինը և գործածական հոնարեն «պարապամբան» բառից, որը նշանակում է «անցնել մեկի կողմը», «ընդունել»: Հիսուսը նոյնպես օգտագործում է այս բառը՝ նկարագրելով հավատացյալների ընդունելությունը Հոր երկնային բնակարաններում¹:

Ցոյց տալով, որ իրեա ժողովուրդը չընդունեց Քրիստոսին՝ Հովհաննեսն անցում է կատարում բոլորին ուղղված փառավոր և հա-

1. Հովհաննես 14.2

մընդհանուր խոստմանը. «Բայց որո՞ք որ Նրան ընդունեցին, իշխանություն տվեց նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անվանը հավատում են» (1.12): Որդեգրությունն Աստծո ընտանիքում՝ որդիության լիարժեք իրավունքներով և արտօնություններով, հասանելի է բոլորին՝ հրեային և հովյան, թագավորին և ծառային, հարուստին և չքափորին, փիլիստիային և տկարամիտին, առաքինի մարդուն և մարմնավաճառին՝ նրանց, ովքեր ընդունում են Քրիստոսին և հավատում են Նրա անվանը:

Մենք չպետք է վիճարկենք, որ սա հավիտենական փրկության և որդիության համընդհանուր իրավեր է: Այնուամենայնիվ, քննարկման ենթակա է այն, թե ինչպես ենք մենք յուրացնում այս խոստումը: Ինչ է նշանակում ընդունել Նրան: Արդյո՞ք այս հատվածն աստվածաշնչյան հիմնավորում է՝ խրախուսելու համար Աստծոն փնտրող մարդուն բացել իր սիրտը և ընդունել Հիսուսին: Կարելի՞ է ասել, որ ինչ-որ մեկն ընդունել է Հիսուսին, որովհետև նա համաձայն է Ավետարանի հիմնարար պնդումներին, գիտակցում է, որ ներման կարիք ունի և աղոթքով իրավիրում է Հիսուսին իր կյանքի մեջ: Այս մեկնողական հարցերը պետք է պատասխանավեն:

Հոնարեն «ընդունեցին» բառի մեջ չկա ոչ մի բացառիկ բան, ինչը կօգներ մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում Հիսուսին ընդունելը: Այնուամենայնիվ, այս բառի համատեքատը թույլ է տալիս մեզ որոշակի պատկերացում կազմել այդ մասին: Առաջին մեկնողական բանալին այս խոսքի վերջին արտահայտության մեջ է, որում Հովհաննեսը պնդում է, որ Հիսուսին ընդունող մարդիկ «Նրա անվանը հավատում են»:

Սուրբ գրքում հավատալ բայց չի սահմանափակվում որոշակի փաստերի մտավոր ընկալմամբ և նոյնիսկ դրանց համաձայնելով: Փոխարենը, այն նշանակում է վստահել մեր հավատքի առարկային և ապավինել դրան այն աստիճան, որ դառնա մեր բոլոր գործերի հիմքը: Մեր հավատքը կամ վստահությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ չի վավերացվում մեր տպավորիչ բանավոր դավանանքով և նոյնիսկ այն բանով, ինչ մենք ենթադրաբար զգում ենք մեր սրտում. փոխարենը, այն ճշմարիտ կամ կեղծ է այն չափով, որով Նրա Ասձը և կամքը որոշում են մեր գործողությունները և ուղղորդում են մեր կյանքի ամբողջ ընթացքը: Այսպիսով, ճշմարիտ հավատքն ընդգրկում է ոխակի որոշակի չափ հավատացյալի կողմից, քանի որ նա բառացիորեն բախտախաղի է դնում իր կյանքը՝ այն պնդման հիման վրա, որ Հիսուսն է «Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Մատթ. 16.16): Ինչպես որ Պողոս առաքյալը գրեց Կորնթոսի եկեղեցուն, եթե Քրիստոսի պնդումները ճիշտ չեն, նշանակում է՝ ճշմարիտ հավա-

տացյալն «ամեն մարդկանցից ավելի ողորմելի» է, քանի որ նրա կյանքի ամբողջ ընթացքը հիմնված է եղել ստի վրա (Ա Կորնթ. 15.19): Այդ իսկ պատճառով, «Քրիստոսին ընդունելը» նշանակում է վստահել Նրան կամ ապավինելայն աստիճան, որ մենք բախտահաղի ենք դուս մեր ժամանակավոր և հավիտենական բարեկեցությունը՝ հավատալով Նրա պնդումների ճշմարտացիությանը, և ուղղորդում ենք մեր կյանքի ամբողջ ընթացքը՝ համաձայն Նրա կամքի:

Երկրորդ մեկսողական բանալին գտնվում է «Նրա անվանը» բառակապակցության մեջ: Սուրբ գրքում Աստծո անվանը հավատալը նշանակում է լիարժեք կերպով հավատալ Նրա Ասձին և այն ամենին, ինչ Նա հայտնել է Իր մասին: Համաձայն Աստվածաշնչի՝ ասքնդրունելի է հավատալ աստվածային հայտնության մեկ մասին և մերժել մյուսը: Նոյնագես, մենք չենք կարող ընդունել Նրա Ասձի կողմերից մենքը՝ Նրան լիարժեք կերպով ընդունելու փոխարեն: Գաղափարն այն մասին, որ հնարավոր է ուխտ կարծել Աստծո հետ՝ Նրան մասնակիորեն ընդունելով, աստվածաշնչյան չէ: Հավասարապես անհիմն է մտածելը, որ մարդը կարող է «ընդունել» Հիսուսին որպես Փրկիչ իր կյանքի մեկ փուլում և ավելի ուշ ընդունել Նրան որպես Տեր և Թագավոր: Հիսուսին ընդունելը՝ փրկություն և որդեգրություն ստանալու համար, նշանակում է ընդունել Նրան ամբողջովին՝ որպես Մարգարե, Քահանա և Թագավոր: Թեև հավատացյալի հավատքը Քրիստոսի հանդեպ՝ որպես Փրկչի, և հնազանդությունը Քրիստոսին՝ որպես Տիրոց, կարող է թույլ լինել սկզբում, այն իրական է, և փրկության շարունակական աշխատանքի միջոցով աճելու է՝ հասնելով հաստնության:

Երրորդ մեկսողական բանալին նախորդ խոսքում է, որում ճշմարիտ հավատացյալի կողմից Քրիստոսին ընդունելն ուղղակիորեն հակադրվում է հրեաների կողմից Նրան մերժելուն: Քանի որ Հիսուսի օրերի հրեական մշակույթը և կրոնն անծանոթ է շատերին, մենք հաճախ մոռանում ենք, որ հրեաները սպասում էին ոչ միայն փրկչի, այլև թագավորի: Մեսիան պետք է լիներ Դավթի որդին և նստեր Դավթի գահին: Նա պետք է բացարձակ իշխանություն ունենար: Ահա թե ինչո՞ւ, երբ հրեաները մերժեցին Քրիստոսին, նրանք չասացին. «Մենք փրկիչ չունենք՝ բացի Կայսրից», այլ՝ «Մենք թագավոր չունենք՝ բացի Կայսրից» (Հովհ. 19.15, շեղագիրն ավելացրած է): Այսպիսով, Մեսիան, Ով պետք է գար, պարզելու էր Իր ժողովրդին ոչ միայն խաղաղության ձիթենու նյուղը՝ որպես փրկիչ, այլև Իր արքայական գավազանը՝ որպես թագավոր: Հրեաները չունեին հասկացություն Մեսիայի մասին, որը փրկելու էր իրենց, սակայն չէր իշխելու իրենց վրա: Եթե նրանք «ընդունեին Նրան» որպես փրկչի, նոյնպես կողջունեին Նրան՝ որպես թագավորի:

Այս, ինչ ճշմարիտ էր հրեա ազգի համար Քրիստոսի օրերում, ճշմարիտ է նաև այսօր թե՛ հրեայի, թե՛ հեթանոսի համար: Քրիստոսին ընդունելը նշանակում է ընդունել Նրան լիովին՝ որպես Փրկիչ և Տեր: Սա է պատճառը, որ Եսային մարգարեացավ Մեսիայի մասին՝ ասելով. «Հեսաեփ արմատը կիխի, և Նա, որ հեթանոսների համար իշխան կկանգնի, Նրան կհուսան հեթանոսները» (Հոռմ. 15.12): Այսպես որ, մենք կարող ենք իրավացիորեն պնդել, որ Քրիստոսը, Ուս սպասում էր Եսային, իշխելու է այն հեթանոսների վրա, որոնք հուսալու են Նրան՝ փրկության համար: Նա ոչ միայն հրեաների թագավորն է, այլև հավատացյալ հեթանոսների թագավորը:

Հետևյալ օրինակը ճշտորեն ցոյց է տալիս, թե ինչ է նշանակում ընդունել Քրիստոսին՝ որպես Փրկիչ և Տեր: Պատկերացրեք մի պարսպապատ քաղաք, որին կործանում է սպանում թշնամու մոտեցող բանակի կողմից: Քանի դեռ թշնամին հեռու է, մի ազդեցիկ թագավոր մոտենում է այդ քաղաքի դարպաներին և կանչում է ներսում գտնվող ժողովրդին: Նա պատվիրում է Նրանց քացել դարպանները և հնագանդվել իր բացարձակ իշխանությանը: Ի պատասխան, նա խոստանում է փրկել Նրանց մոտեցող բանակից: Առաջին տարբերակը. այդ ժողովրդը ծիծառում է նրա վրա և ծաղրում է: Նրանք կամ համոզված են, որ իրենց փրկիչ պետք չէ, կամ չեն հավատում, որ այդ թագավորը կարող է ազատել իրենց: Ամեն դեպքում, նա հեռանում է, և քաղաքը կործանվում է: Երկրորդ տարբերակը. մարդիկ հասկանում են, որ այդ թագավորը կարող է ազատել իրենց, և ցանկանում են ընդունել նրան որպես փրկիչ, սակայն նրանք հրաժարվում են հանձնվել նրա իշխանությանը: Կրկին, թագավորը հեռանում է, և քաղաքը կործանվում է: Երրորդ տարբերակը. մարդիկ հասկանում են, որ այդ թագավորը կարող է ազատել իրենց և ուրախությամբ բացում են քաղաքի դարպանները՝ ընդունելով նրան որպես ն' փրկիչ, ն' իշխան: Թագավորը մուտք է գործում այդ քաղաքը, նստում է գահի վրա և ազատում է այդ ժողովրդին:

Մենք ընդունում ենք Քրիստոսին նման կերպով: Դարձի պահին մենք գիտակցում ենք, որ գոյնվում ենք հուսահատ վիճակում, որից խնդրություն չենք կարող փրկվել: Մենք լսում ենք Քրիստոսի կանչը՝ Նրա թագավորության պահանջները և փրկության խոստումը: Ի պատասխան, մենք թույլ ենք տալիս Նրան մուտք գործել մեր կյանք՝ ընդունելով Նրան որպես Փրկիչ և Տեր: Մենք մերժում ենք մեր ինքնավարությունը և ընդունում ենք Նրա գերիշխանությունը մեր կյանքում: Մենք հրաժարվում ենք մեր ուժերից և արժանիքներից և ապավինում ենք միայն Նրա փրկարար գորությանը: Հետևաբար, ապացույցը, որ մենք ճշմարտապես ընդունել ենք Նրան, այն է, որ մեր հնագան-

դությունը Նրա իշխանությանը և մեր Վստահությունը Նրա փրկարար աշխատանքին՝ շարունակում են խորանալ և ավելանալ մեր ամբողջ կյանքի ընթացքում։ Սրբացման այս մշտական աշխատանքը երաշխավորված է ամեն մի հավատացյալի կյանքում։ «Որովհետև Նրա ստեղծածն ենք» և «Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Եփես. 2.10, Փիլիպ. 1.6):

Ժամանակակից ավետարանչությունը հաճախ չի շեշտադրում այս ճշմարտությունները։ Փոխարենը, Աստծուն փնտրող մարդկանց դրդում են հավատալ, որ իրենք կարող են ընդունել Քրիստոսի փրկության առավելությունները՝ առանց Նրա իշխանությանը հնազանդվելու։ Ավելին՝ այդ մարդիկ հաճախ համոզված են իրենց փրկության մեջ, քանի որ իրենք անսկեղծորեն աղոթել են ապաշխարության աղոթքը, նոյնիսկ եթե իրենց կյանքում չկա սրբացման շարունակական աշխատանքի ոչ մի ապացոյց։ Սա մեր օրերի ախտն է, որը մոլորության և կործանման է տանում շատերին։

ԸՆԴՈՒՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ՝ ՈՐՊԵՍ ՄԵՐ ԱՄԵՆԸ

Փրկություն ստանալու համար մենք ընդունում ենք ոչ միայն Քրիստոսի գերիշխանությունը, այլև Նրա գերազանցությունը։ Ավետարանը կոչ է անում մեզ ընդունել Քրիստոսին ոչ թե որպես մեր կյանքի հավելում, այլ՝ որպես մեր կյանքը։ Հիսուս Քրիստոսին չպետք է վերաբերվել որպես լրացուցիչ պարագայի մեր կյանքում, ինչպես գոտու կամ մեկ գոյգ կողիկի, որը կարող է ինչ-որ հագուստ լրացնել։ Վատագոյն բանը, որը կարելի է ասել մեղավորներին, այն է, որ նրանք ունեն հրաշալի կյանք, հրաշալի ընտանիք, գեղեցիկ տուն և լավ աշխատանք, սակայն նրանց կյանքը լիարժեք դարձնելու համար պակասում է մեկ բան՝ անձնական հարաբերությունը Հիսուս Քրիստոսի հետ։ Նման ձևակերպումը պատկերում է Հիսուսին որպես բալ՝ դրված արդեն իսկ հրաշալի կյանքի վրա։ Լավագոյն դեպքում, այն նկարագրում է Նրան որպես անհրաժեշտ կամ պարտադիր հավելում։ Նման ձևակերպումը հայիության աստիճան նվաստացում է Քրիստոսի հանդեպ։ Այն խորթ է Սուրբ գրքին և քրիստոնեության պատմության ընթացքում ապրող սուրբերին, որոնք լավագոյնս հասկանում էին, թե որքան գերազանց է Նրա Ասձը և ինչպիսի արտոնություն է տալիս մեզ Նրա Ավետարանը։ Ի հակադրություն այդ մոտեցմանը՝ մաքրակրոն քարոզիչ Զոն Ֆլավելը (1627-1691) խստում է Քրիստոսի մասին հետևյալ կերպով։

«Ո՛վ գեղեցիկ արև, և գեղեցիկ լուսին, և գեղեցիկ աստղեր, և գեղեցիկ ծաղիկներ, և գեղեցիկ վարդեր, և գեղեցիկ շուշաններ, և գեղեցիկ

արարածներ: Բայց բյուրավոր, հազարավոր անգամ գեղեցիկ Տեր Հիսուս: Ավաղ, ես անարդարացի վարվեցի Նրա նկատմամբ՝ նման կերպով այս համեմատությունն անելով: Ո՞վ սև արև և լուսին, բայց ով գեղեցիկ Տեր Հիսուս: Ո՞վ սև ծափիկներ, և սև շուշաններ ու վարդեր, բայց ով գեղեցիկ, գեղեցիկ, շատ ավելի գեղեցիկ Տեր Հիսուս: Ո՞վ բոլոր գեղեցիկ բաները՝ սև, տձև ու առանց գեղեցկության, երբ դուք դրվում եք գեղեցկագոյն Տեր Հիսուսի կողքին: Ո՞վ սև երկինք, բայց ով գեղեցիկ Քրիստոս: Ո՞վ սև իրեշտակներ, բայց ով գերազանց գեղեցկությամբ Տեր Հիսուս»²:

Եթե մենք ճշմարտապես ճանաչում ենք Քրիստոսին և ազնիվ դեսպաններ ենք, պետք է դադարենք օգտագործել այնպիսի ձևակերպություններ, որոնք ակնարկում են, որ երկնքում և երկրի վրա կարող է ինչ-որ բարի բան լինել՝ Քրիստոսից բացի: Միթե ճշմարիտ չէ, որ «ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհ. 1.3): Միթե ճշմարիտ չէ, որ կյանքն առանց Քրիստոսի ունայնություն է և ոչնչից էլ պակաս է³: Միթե ճշմարիտ չէ, որ մեզանում ոչ մի բարի բան չի բնակվում՝ առանց Քրիստոսի, և որ մեր արդարությունն ամբողջությամբ նման է կեղուս լաթերի⁴: Այդ դեպքում, ինչպես ենք մենք համարձակվում նոյնիսկ ենթադրել կամ ակնարկել, որ անկում ապրած մարդիկ ունեն Քրիստոսի կարիքը՝ ընդամենը որպես լրացում իրենց անհատականությանը կամ այն ձեռքբերություններին, որոնց նրանք հասել են իրենց ուժերով և առաքինությամբ: Մենք լավ կանենք, եթե ասենք մեղավորներին հետևյալը. «Քո կյանքն անպիտան և ունայն է⁵: Քո ոտնաթարերից մինչև քո գլխիդ ծայրը քեզ վրա ողջ տեղ չկա⁶: Դու ասում ես. «Ես հարուստ եմ և մեծացա և ոչ մի բանի կարուտ չեմ», բայց չգիտես, թե դու թշվառ և ողորմելի և աղքատ և կրոյր և մերկ ես⁷: Քո ընտանիքը մարմին է, որի կյանքն այս երկրի վրա գողորշու պես է⁸: Դու դրդել ես նրանց անտեսել իրենց Աստծոն և դարձել ես նրանց հարդի պես, որը քամին ցրիվ է տալիս⁹: Քո նյութական ձեռքբերությունները վկայելու են քո դեմ դատաստանի օրը, և քո գործերը վառվելու են կրակի մեջ¹⁰: Քո փողը չի օգնի քեզ, քանի որ անձի փրկանքը թանկ է¹¹: Եվ ինչ օգուտ

2. Զոն Ֆլավիլ. «Ընծայական նամակ»՝ «Զոն Ֆլավիլի աշխատություններում», (Լուդոն, «Banner of Truth», 1968թ.), հու. 1, էջեր xix–xx:

3. Ժողովող 1.2

4. Եսայի 64.6, Հռոմեացիների 7.18

5. Հռոմեացիների 3.12

6. Եսայի 1.6

7. Հայունություն 3.17

8. Հակոբոս 4.15

9. Սաղմոն 1.4

10. Ա Կորնքացիների 3.11–15

11. Սաղմոն 49.7–9

քեզ, եթե շահես ամբողջ աշխարհը, բայց կորցնես քո անձը¹²: Ապաշխարիր և հավատքով դարձիր Քրիստոսին: Ամեն ինչ կորուստ համարիր և քո ծեռքբերումներն աղք համարիր, որպեսզի կարողանաս շահել Քրիստոսին և գտնվել Նրանու¹³:

Մերօրյա ավետարանական հավատացյալը, ամենայն հավանականությամբ, կպատասխանի այս անմիջական խոսքերին հետևյալ կերպով. «Խիստ է այս խոսքը. ով կարող է լսել դա» (Հովի. 6.61): Եկեղեցական աճի մասնագետը և Ավետարանը միջմշակութային հաղորդակցմանը հարմարեցնող միսիոները, ամենայն հավանականությամբ, կմերժեն այս խիստ խոսքերը՝ պնդելով, որ ժամանակակից մարդիկ չափազանց փիլտրուն ու կոտրված սիրտ ունեն՝ նման մեղադրանքի դիմանալու համար: Թեև այդ ծևակերպումներն աստվածաշնչան են, որանք նախատեսված են եղել այլ ժամանակի համար, երբ մարդիկ ավելի կայուն հոգեբանություն և ինքնազնահատական ունեին: Այսուամենայնիվ, ավելի անհեթեթ բան չի կարող լինել: Ավետարանը քարոզողի առաջադրանքն է՝ համոզել մարդկանց, որ իրենք ոչինչ են և ոչինչ չունեն՝ առանց Քրիստոսի: Ավետարանի ճշմարիտ ուղերձը կողողապում է անձը՝ զրկելով ամեն ինչից: Այն ձեռնունայն է թռողում սիրտը, որպեսզի Քրիստոսը կարողանա մտնել այնտեղ՝ որպես ամեն ինչ: Եթե մարդը տեսներ ամեն ինչ Քրիստոսի համեմատ այնպես, ինչպես Ֆլավելը, մի՛թե նրա սիրտը մեծապես չէր բարելավվի: Մի՛թե սխալ է քարոզել այնպիսի Ավետարան, որը խլում է մարդուց ամեն ինչ՝ թռողնելով միայն Քրիստոսին: Մի՛թե Քրիստոսը բավական չէ: Մի՛թե Նա ավելին չէ, բան ամբողջ աշխարհը:

Որպես քրիստոնյաներ և Ավետարանի ծառայողներ՝ մենք պետք է քարոզենք, որ Քրիստոսը կատարելապես գեղեցիկ է և գերազանց է այս և մյուս աշխարհի բոլոր հարստություններից: Մենք պետք է լիովին առանձնացնենք Նրան այն շուքերից և խորհրդապատկերներից, որոնք կան այս ավելի ցածր աշխարհում: Այնուամենայնիվ, որպեսզի այս կերպով հոչակենք Քրիստոսին, մենք պետք է այս կերպով ճանաչենք Նրան: Սակայն այս ճանաչողությունը ստանում են միայն նրանք, ովքեր սպասում են և փնտրում են Նրան Աստծո խոսքի և աղոթքի մեջ: Եթե միայն մենք ավելի շատ ժամանակ անցկացնեինք Նրա հետ, ավելի լավ կճանաչեինք Նրան և ավելի մեծ զրությամբ կհոչակեինք Նրան: Այդ ժամանակ մենք կփայլեինք ուրախությամբ և նախանձավորությամբ՝ շատ ավելի պայծառ, բան ավելի ցածր աստվածներ ունեցողները, և կամաչեցնեինք նրանց:

12. Մարկոս 8.36,37

13. Փիլիպեցիների 3.8,9

ԸՆԴՈՒՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՈՐՊԵՍ ՄԵՐ ԳՈՅԱՄԻԶՈՅ

Կափառնայումի ժողովարանում Հիսուսը հայտարարեց հրեաներին. «Ես եմ կյանքի հացը», և «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, եթե մարդու Որդու մարմինը չուտեք և Նրա արյունը չխմեք, կյանք չունեք ձեր անձերում» (Հովհաննես 6.48,54):

Թեև այս պահումների մեջ կան անթիվ ճշմարտություններ, մենք հակիրճ կանդրադառնանք միայն մեկին. Հիսուսին ընդունելը նշանակում է ընդունել Նրան որպես մեր կյանքի գոյամիջոց կամ աղբյուր: Նա այնպիսի բան չէ, ինչը մենք պարզապես ավելացնում ենք մեր կյանքին՝ այն ամբողջական դարձնելու համար, կամ այնպիսի բան, ինչն օգնում է մեզ հասնել լիարժեք կյանքի. Նա մեր կյանքն է, մեր կերակուրը և խմելիքը, այն կենարար բուսահյութը, որը հոսում է որթից դեպի ճյուղերը¹⁴:

Թեև նորադարձը դեռ աղոտ է ընկալում այս ճշմարտությունը, և այն նոր է իրական դառնում նրա կյանքում, այն Աստված, Ով սկսեց այս բարի գործը նրանում, կիետուի, որ այն աճ ունենա¹⁵: Որքան հավատացյալը շարունակի իր քրիստոնեական ուխտագնացությունը, այնքան այս աշխարհի իրողություններն անսովոր կերպով մշուշոտ կդառնան նրա համար՝ Քրիստոսի փառքի և շնորհքի համեմատ¹⁶: Հավատացյալը կհայտնաբերի, որ իր ինքնաբավությունը և ինքնագոհությունը մթագնում են՝ Քրիստոսից մշտապես ավելացող կախվածության և Նրանում ունեցած բավականության պատճառով: Սրբացման աշխատանքի միջոցով մարմնի ձեռքն աստիճանաբար անզոր կդառնա՝ չգործածվելու պատճառով, և հավատացյալը կթողնի այն ծակ հորերը, որոնք փորել է իր ձեռքերով՝ ընտրելով Դավթի տան համար բացված կենդանի ջրերի աղբյուրը, որը լրացնում է ամեն կարիք¹⁷:

Այն, որ մենք պետք է ընդունենք Քրիստոսին որպես մեր կյանքի գոյամիջոց և աղբյուր, ունի երկու կարևոր կիրառում: Առաջինը՝ Քրիստոսը պարզապես ճաշի ուտեստներից մեկը չէ. Նա ամբողջ ուտեստն է: Նա մեր ինքնաբավ աղբյուրն է, որը տալիս է մեզ ամեն ինչ կյանքի և աստվածապաշտության համար¹⁸: Ինչպես որ Պողոս առաքյալը գրում էր Կորնթոսի եկեղեցուն, Քրիստոսը դառնում է մեզ համար «Աստծոց... իմաստություն, և արդարություն, և սրբություն, և փրկություն», որպեսզի մենք այլևս չպարծենանք մեր անձով և կրոնական գործերով, այլ՝ Տիրոջով և այն աշխատանքով, որը Նա

14. Հովհաննես 15.1-6, Կողևացիների 3.4

15. Փիլիպեցիների 1.6

16. Հելեն Հ. Լեմմել. «Ուղղի՛ք քո հայացքը Հիսուսին», կրկներգ:

17. Երեմիա 2.13, Զաքարիա 13.1

18. Բ Պետրոս 1.3

կատարել է մեր փոխարեն (Ա Կորնթ. 1.30,31): Քրիստոսին ընդունելը նշանակում է ուրանալ ինքնաբավությունը, մի կողմ դնել բոլոր նախկին հաղթանակները և հրաժարվել բոլոր ներկա և ապագա գովեստներից: Այն նշանակում է հավիտենության ընթացքում ուրախությամբ կրել միայն մեկ տիտղոս՝ «Ծորիքնկալ» տիտղոսը:

Ճշմարտապես քրիստոնյա լինելը նշանակում է գիտակցել, որ ամեն բարի և կատարյալ պարզեց գալիս է վերևսից՝ Հիսուս Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի միջոցով¹⁹: Այն նշանակում է մերժել ցանկացած ակնարկ սեփական արժեքի և արժանիքի մասին և ուրախությամբ ու հրապարակավ դավանել, որ ցանկացած բարիք, անձնական ձեռքբերում կամ արժեքավոր բան, որը կա մեզ գանում, բխում է միայն Քրիստոսից: Այն նույնպես նշանակում է ապրել՝ նոյնքան կախված լինելով Նրանից, որքան օդից, որը շնչում ենք, և ջրից ու կերակուրից, որոնք պահպանում են մեր մարմինը: Այն նշանակում է, որ մենք այնքան գոհունակ ենք Նրանում, որ այլս չենք ծախսում մեր փողին այն բանի համար, ինչը հաց չէ, և մեր վարձատրությունը այն բանի համար, ինչը չի կշտացնում²⁰: Այն նշանակում է զբաղեցնել մեր տեղը Քրիստոսի սեղանի շուրջ և այլս չորս ներ լրացնեցի ուտեատներ կամ աշխարհիկ փոխարինող միջոցներ: Մենք ճաշակել ենք և տեսել ենք, որ Տերը քաղցր է²¹: Ի՞նչ են Եգիպտոսի պրասները և սոխերը՝ Քրիստոսի մանանայի համեմատ²²:

Այն ճշմարտությունը, որ Քրիստոսը հավատացյալի գոյամիջոցն է, ունի ևս մեկ կիրառում: Խնջույքը Նրա հետ մեկանգամյա ճաշկերույթ չէ, որը սահմանափակվում է դարձի պահով և այլս չի կրկնվում. այն շարունակվում է հավատացյալի կյանքի ընթացքում: Դարձը պարզապես մինչև կյանքի վերջը տևող և հավիտենական ճաշկերույթի սկիզբն է, որը Սուրբ Հոգին մշտապես ավելացող չափով շնորհում է հասունացման ճանապարհով քայլող ամեն մի քրիստոնյայի: Ժամանակակից Ավետարանական շարժման մեծագույն մեղքերից մեկը փրկությունը որպես անցյալում տեղի ունեցած մեկանգամյա իրադարձություն համարեն է՝ գրեթե հաշվի չառնելով դրա ընթացիկ բնույթը ներկայում և ապագայում: Մենք պետք է հիշենք, որ շարունակական սրբացումը մեկընդմիշտ տեղի ունեցած դարձի ապացույցն է: Նմանապես, քրիստոնյայի կողմից Քրիստոսով շարունակաբար սնվելը վկայում է, որ նա արդեն իսկ նստած է Նրա սեղանին: Հիսուսը Երկինք տանող տում չէ, որը մարդը ձեռք է բերում աղոթքի միջոցով, գրանն է դնում և հանում է միայն մահ-

19. Հակոբոս 1.17

20. Եսայի 55.2

21. Սաղմոս 34.8

22. Թվոց 11.5

վան պահին՝ Երկինք մտնելու համար: Փրկությունն իրական չէ, եթե այն համարվում է մեկանգամյա փոխանակում, որը, ենթադրաբար, որոշում է ապաշխարության աղոթքը կրկնող մարդկանց ճակատագիրը:

Դարձի պահին մեղավորը ճաշակում և տեսնում է, որ Տերը քաղցր է²³: Այսուամենայնիվ, նրա քիմքը դեռ մաքրված չէ: Այս աշխարհի մասցորդը դեռ փոտում է նրա որովայնում, և ճշմարիտ կերակորը ճաշակելու նրա կարողությունը բթացած է: Քրիստոսի սննդարար միսր չափազանց պիստ է նրա համար, և նա պետք է սնվի միայն կաթով²⁴: Ինչպես որ Եբրայեցիների թղթի հեղինակը սովորեցնում է մեզ, նա «...անհմուտ է արդարության խոսքին, որով հետև տղա է» (Եբր. 5.13): Այսուամենայնիվ, Աստված խստացել է, որ նորադարձ քրիստոնյան չի ճնա այդ Վիճակում, այլ աճ կոնւնա՝ կատարյալ հասակի հասնելով: Այսպիսով, Աստված պատվիրում է նրան (տալով կարողություն դրա համար) թողնել այս աշխարհի մահացու սննդակարգը և նորածին մանկան պես փափագել Խոսքի անարատ կաթին, որպեսզի դրանով աճի դեպի փրկությունը²⁵:

Աստիճանաբար, աստվածային ուսուցման, մտքի նորոգման և հաղթական չնորիքի մատակարարման միջոցով Սուրբ Հոգին վարժեցնում է հավատացյալի զգայարանները, որպեսզի նա զանազանի բարին և չարը, խուսափի այս աշխարհի ճաշացանկից և փափագի միայն Քրիստոսին²⁶: Փտած մարմնական բնության մնացած համն աստիճանաբար մաքրվում է նրանից, և նրա հոգևոր զգայարանները գտվում են: Նա ոչ միայն մոռանում է Եգիպտոսի կերակորները, այլև սկսում է խորշել դրանցից: Նման Մեմփիսութեին, նա ընտեղանում է թագավորի սեղանին, և ոչ միայն դադարում է ցանկանալ այս աշխարհում տարածված կերակրատեսակները, այլև արհամարհում է դրանք²⁷:

Մինչև այս կարճ քննարկումն ավարտելը, կարևոր է հիշել, որ դարձի ժամանակ ոչ ոք լիովին չի գիտակցում, թե ինչ է նշանակում ընդունել Քրիստոսին, լիովին կախված լինել Նրանից կամ փափագել միայն Նրան: Թեև մենք ընդունում ենք Նրան՝ Հոգու մղումով և զորացմամբ, մեր մտքում կան սխալմունքներ, մեր դրդապատճառները խառնված են եսասիրական ցանկությունների հետ, և մեր նվիրումը բաժնաված է Մրցակցող սիրո առարկաների միջև: Նոյնիսկ Աստծո տասնամյակներ տևող սրբացման աշխատանքից հետո այս

23. Սաղմոս 34.8

24. Եբրայեցիների 5.12

25. Ա Պետրոս 2.1-3

26. Եբրայեցիների 5.14

27. Բ Թագավորաց 9.6,7

ախտերը լիովին չեն հեռացվում: Թեև մեր հոգևոր վիճակը մեծապես բարելավվում է, մեր կախվածությունը Քրիստոսից խորանում է, և մեր ցանկությունը Նրա հանդեպ ավելանում է, մենք դեռ լիովին Նրանը չենք: Մենք չենք կարող կատարյալ սիրտ ունենալ, մինչև որ չփառափորվենք Նրա ներկայության մեջ:

Ահա թե ինչո՞ւ է սարսափելիորեն սիսալ, որ նորադարձից պահանջենք հասուն ընկալում և նվիրում, եթե նոյնիսկ ամենահասուն սուրբը դեռ պայքարում է Քրիստոսին հասկանալու և զնահատելու համար: Թեև սրբացումն արդարացման իրական ապացույցն է, և Քրիստոսին շարունակ ճաշակելը վկայում է, որ մենք ընդունել ենք Նրան և փրկվել ենք Նրանով, մենք պետք է զգույշ լինենք, որ չխենք սուրբերի հավաստիացումը՝ դարձնելով կատարելությունը հավատքի վկայություն, և անսարատ նվիրումը՝ փրկության ապացույց: Մենք մշտապես պայքար ենք մղելու, որպեսզի շահենք այն, ինչի համար շահվել ենք՝ նմանությունը Հիսուս Քրիստոսին²⁸: Փրկության ապացույցն այն չէ, որ մենք հասել ենք այդ նպատակին, այլ՝ որ մենք անկեղծորեն ջանում ենք աճել սրբության մեջ և աստիճանաբար առաջադիմում ենք դեպի աստվածային իրողությունները: Նրանք, ովքեր իրականում ընդունել են Քրիստոսին, վկայում են, որ ժամանակի ընթացքում Նա ավելի իրական է դառնում իրենց համար, և իրենք ավելի լիարժեք կերպով են ընկալում Նրան: Նրանք, ովքեր ենթադրաբար ընդունել են Նրան, սակայն չունեն անփրկության իրողությունն ընկալելու մեջ, չունեն ճշմարիտ դարձի բավարար ապացույցներ:

28. Փիլիպեցիների 3.12-14

ԳԼՈՒԽ ՀԻՆԳ



Քրիստոսը՝ սրտի դռան առջև

«Ահա Ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ: Եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ»:

— Հայտնություն 3.20

Սալլման Ուորների «Քրիստոսը՝ սրտի դռան մոտ» կրոնական գեղանկարը լայնորեն ճանաչված է թե՛ ավետարանական, թե՛ Հռոմի Կաթոլիկ հավատացյաների կողմից¹: Այս հիմնված է Հայտնություն 3.20-ում Լավողիկեի եկեղեցուն ուղղված Քրիստոսի կանչի վրա. «Ահա Ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ: Եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ»:

Հստ հեղինակի մեկնության, այս հատվածում Քրիստոսը թակում է մարդու սրտի դուռը և խսդրում է ներս մտնել: Ամենից ակնառուն դռան բռնակի կամ տղնակի բացակայությունն է, ինչն անտեսում չէր հեղինակի կողմից: Փոխարենը, նա ցանկանում էր ցույց տալ, որ մարդու սիրտը կարող է բացվել միայն ներսից: Մշտապես ողորմած Քրիստոսը հրելով չի բացի դուռը և ուժով ներս չի մտնի: Աստված կամենում է փրկել, բայց մարդն է որոշում բացել իր սրտի դուռը և թույլ տալ, որ Նա ներս մտնի: Այս գեղանկարը կարելի է տեսնել ամբողջ Արևմտատքով գտնվող բազմաթիվ մեծ տաճարներում և փոքրիկ մատուռներում: Ասթիվ ավետարանչական քարոզներ, բրոյորներ և գրքեր հիշատակում են այն: Այս դարձել է ավետարանական հրավերի կարևոր խորհրդանշից:

ՍԽԱԼԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Դժվար է չափազանցնել լրատվամիջոցների և արվեստի ազդեցությունը: Շատերը պատկերացում են կազմում որևէ պատմական իրադարձության մասին ոչ թե սկզբնաղբյուրի հիման վրա, այլ հա-

1. Սալլման Ուորները (1892–1968թթ.) Զիկագոյում ապրող քրիստոնյա գեղանկարիչ էր: Նրա աշխատանքը հիմնված է բրիտանացի նկարիչ Վիլյամ Հումեն Հանքի նախկինում արված աշխատանքի վրա, որը կոչվում է «Աշխարհի լույսը» (ավարտված 1853 թվականին):

մաճայն լրատվամիջոցների և արվեստի ներկայացված տարրերակի՝ գեղանկարի, վեպի կամ կինոֆիլմի տեսքով։ Սեսիլ Բ. ԴեՄիլլի կողմից 1956 թվականին նկարահանված «Տարը պատվիրանները» կինոնկարն այս փաստի վառ օրինակ է։ Շատերի պատկերացումն այն մասին, թե ինչպես հսկայելը դուրս եկավ Եզիպտոսից, ավելի շատ հիմնված է այս ֆիլմի վրա, քան Աստվածաշնչի։

Նմանապես, թվում է՝ շատերը, ովքեր ավետարանչական ուղերձներ են քարոզում Հայտնություն 3.20-ի հիման վրա, ավելի շատ հիմնում են դրանք Ուրների գեղանկարի վրա, քան այս հատվածի լուրջ ուսումնասիրության։ Քարոզիչներն ասում են մարդկանց, որ Քրիստոսը թակում է իրենց սրտի դուռը, և միայն իրենք կարող են բացել այն՝ աղոթքի միջոցով ներս հրավիրելով Քրիստոսին։ Եթե մարդն աղոթում է և վստահ է, որ ինքն անկեղծ է, նրան հավատիացնում են, որ Քրիստոսը մուտք է գործել իր սրտի մեջ և փրկել է իրեն։ Նրան պատվիրում են հավատքով կանգնել այդ ճշմարտության վրա և չվստահել սեփական զգացմունքներին և հոյզերին։ Նորադարձների հետ խորհրդատվություն անցկացնող մարդիկ հաճախ փարատում են նրանց կասկածները հետևյալ դատողություններով։

1. Քրիստոսը խոստացել է մտնել ձեր սրտի մեջ, եթե դուք բացեք դուռը։
2. Դուք բացել եք դուռը՝ հավատալով և աղոթելով։
3. Քրիստոսը մշտապես պահում է Իր խոստումները, և ուրեմն, Նա եկել է ձեր սրտի մեջ։ Հակառակ դեպքում, Նա ստախու է։
4. Բայց մենք գիտենք, որ Քրիստոսը չի ստում։ Նշանակում է՝ դուք գիտեք, որ փրկված եք և ապահով եք։

Այս տրամաբանության պատճառով, անթիվ մարդիկ հավատում են, որ փրկված են, թեև նրանց կյանքում գրեթե չկա ապացույց փոխված կյանքի մասին։ Իրենց կյանքում նրանք չեն ցուցաբերում նույնիսկ աննշան նվիրում Քրիստոսին, և նրանց կյանքում չկան քրիստոնեության տեսանելի նշաններ։ Ինչպես կարելի է բացատրել սա։ Այս հատվածը սիսալական չէ. սիսալական է դրա ընդունված մեկնությունը և կիրառումը։

Կարդալով Հայտնություն 3.20-ն իր համատեքստում՝ մենք տեսնում ենք, որ այն շատ է տարրերվում ժամանակակից Ավետարանական շարժման կողմից առաջարկվող տարրերակից։ Առաջինը՝ Քրիստոսը չի թակում մեղավորի սրտի դուռը, այլ՝ Լավոդիկեի եկեղեցու դուռը։ Երկրորդը՝ Նա չի խնդրում մարդկանց հրավիրել Իրեն իրենց սրտի խորքը՝ աղոթք անելով։ Փոխարենը, Նա հանդիմանում է մի խումբ մարդկանց, որոնք հավաքվում են Իր անունով, և պատվիրում է նրանց ապաշխարել Իր հանդեա անտարբերությունից

(նրանք գաղց են), իրենց հոգևոր կուրությունից (նրանք չեն տեսնում, որ իրենք թշվառ, ողորմելի, աղքատ, կույր և մերկ են) նաև նյութապաշտությունից և հպարտությունից (նրանք ասում են, որ իրենք հարուստ են, մեծացել են և ոչչի կարիք չունեն)²: Երրորդը՝ Նա չի կանչում մարդկանց հավատալու Ավետարանին և չի խոստանում հավիտենական կյանք Աստծոն փնտրող անհավատներին: Փոխարենը, Նա խոստանում է վերականգնված շիում և հավիտենական վարձատրություն եկեղեցում գտնվող այն հավատացյալներին, որոնք կլսեն Իր ձայնը և ճշմարիտ ապաշխարության միջոցով կնորոգեն իրենց հարաբերություններն Իր հետ:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս, որ Հայտնություն 3.20-ի անմիջական համատեքստը գրեթե առնչություն չունի ավետարանչության հետ, պետք է որ խնդրահարուց թվա շատերի համար: Սա հատկապես ճիշտ է, եթե մենք հասկանում ենք, որ Աստվածաշունչը ոչ մի տեղ չի պատվիրում մարդկանց արձագանքել Ավետարանի ուղերձին՝ բացելով իրենց սրտերը և ներս հրավիրելով Հիսուսին: Փոխարենը, Աստվածաշունչը պատվիրում է մարդկանց ապաշխարել իրենց մեղքերից և վստահել Քրիստոսին³:

Նոյնպես հետաքրքիր է, որ այս հատվածը հիմք է դարձել ժամանակակից ավետարանչական մեթոդների մեծ մասի համար և ամենից հաճախ օգտագործվողն է ավետարանչությունների ժամանակ, թեև այն գրեթե առնչություն չունի ավետարանչության հետ: Միևնույն ժամանակ, Գործք 16.14-ը, որը ներկայացնում է առաքելական ավետարանչությունը և Աստծո աշխատանքը փրկության մեջ՝ ըստ Աստվածաշնչի, գրեթե լիովին անտեսվում է. «Եվ մի կին՝ անոնը Լիդիա, ծիրանավաճառ, թիվատիր քաղաքից, աստվածավախ, լսեց, որի սիրու Տերը բացեց, որ Պողոսի խոսածներին մտիկ անսի»:

Չատ քարոզիչներ օգտագործում են Հայտնություն 3.20-ը՝ որպես հիմք, որպեսզի հորդորեն մարդկանց բացել իրենց սրտի դուռը Քրիստոսի համար և ցոյց տան, որ մարդու սրտի դրան բռնակը ներսի կողմից է: Սրանով նրանք ասում են, որ Աստված չի կարող կամ չի պատրաստվում բացել այն դրսից, և միայն մարդն է ի գորու անել դա: Նման Ռուբենի նկարին, Քրիստոսն անօգնական սպասում է դրսում՝ խնդրելով ներս մտնել: Այսպիսով, այս հատվածն օգտագործվում է՝ պատկերելու համար մի վարդապետություն, որն այս

2. Հայտնություն 3.16,17

3. Մարկոս 1.15, Ղուկաս 24.46,47, Գործք 16.30,31, 17.30

չի սովորեցնում, և վավերացնելու համար մի ավետարանչական մեթոդաբանություն, որը լիովին բացակայում է Սուրբ գրքում:

Ավելին՝ Հայտնություն 3.20-ի ժամանակակից մեկնությունը և կիրառությունը ուղղակիորեն հակառակ է Գործք 16.14-ի պարզ ուսուցմանը, որում Սուրբ գիրքը պարզորեն հայտարարում է, որ Աստված բացեց Լիդիայի սիրտը՝ արձագանքելու այն բաներին, ինչ խոսում էր Պողոսը: Այս խոսքում «քաց» բառը թարգմանվել է հունարեն «ηγιαντήρων» բառից⁴, որը հունարենի ակնառու մասնագետ Ա. Թ. Ռոբերտսոնը սահմանում է որպես «բացել լայն կամ ամբողջովին՝ նման ծալվող դրուերի երկու փեղկերի»⁵: Հունարենի բառագետ Զոգեֆ Հենրի Թայերը նմանատիպ սահմանում է առաջարկում. «բացել՝ բաժանելով կամ քաշելով տարբեր կողմեր, ամբողջովին բացել»⁶: Ղուկասն օգտագործում է այս բառն իր գրքերի այլ հատվածներում՝ նկարագրելով առաջնեկի կողմից իր մոր որովայնը բացելը⁷, Հիսուսի կողմից աշակերտների միտքը բացելը՝ Սուրբ գրքերը հասկանալու համար⁸, և Աստծո կողմից Երկինքը բացելը՝ ցոյց տալով իր աջ կողմում կանգնած Հիսուսին⁹: Այս իրադարձությունները կրավիրական բնույթի մեջ. ընդհակառակը, դրանք ցոյց են տալիս գործողություն և ուժ, առաջինը՝ նորածնի կողմից, իսկ մյուս երկուսը՝ Աստծո:

Դատշաճ կիրառում

Ժամանակակից Ավետարանական շարժումը վտանգավոր կերպով աղավաղում է Հայտնություն 3.20-ը, սակայն այս խոսքը կարող է կիրառվել որպես ավետարանչական հրավեր՝ ողջամիտ աստվածաբանական հիմքի և ճշմարիտ դարձի պատշաճ ընկալման դեպքում: Թեև ամենալուրջ աստվածաբաններն անմիջապես մատնացոյց են անում, որ այս խոսքում Քրիստոսը դիմում է անտարբեր, ինքնազնի և ինքնախարեւության մեջ գտնվող եկեղեցական համայնքի, նրանք նոյնական ընդունում են, որ այն կարող է ցոյց տալ Քրիստոսի համբերությունը մեղափորի հանդեպ և իր հետ շփման հարատևող առաջարկը: Ճիշտ լոյսի ներք տեսնելու դեպքում, մենք կարող ենք կիրառել Հայտնություն 3.20-ը հետևյալ կերպով.

4. Կազմված հունարեն «ηγία» նախածանցից (երկու, տարբեր կողմեր, միջով) և «անողին» բայից (բացել):

5. Ռոբերտսոն. «Խորքի սպատկերները», հատ. 3, էջ 252:

6. Թայեր. «Հունարեն-անգլերեն բառարան», էջ 140:

7. Ղուկաս 2.23

8. Ղուկաս 24.45

9. Գործք 7.56

«Ահա Ես դռան առջև կանգնած եմ...»

Այս խոսքը պատկերում է ճշմարտությունն այն մասին, որ գոյություն ունի Ավետարանի համբնդիանուր կանչ, և ոչ մի քրիստոնյա երբևէ չպետք է կասկածի ենթարկի այն: Ամբողջ Սուրբ գրքում Աստված հստակ նշում է, որ հնքը չի ցանկանում անօրենի մահը, այլ՝ որ անօրենը հեռանա իր ճանապարհներից և ապրի¹⁰: Այսպես որ, մենք պարտավոր ենք ներկայացնել Հիսուս Քրիստոսի Ավետարանը երկնքի տակ ապրող ամեն արարածի և բոլորին ամենուրեք կանչել ապաշխարության և հավատքի¹¹: Մենք պետք է ջանափրաբար և շարունակաբար կատարենք այս աշխատանքը վիսչն Տիրոջ վերադարձը: Ավետարանը ներկայացնելը մեր սերնդի ամեն ներկայացուցչին՝ առանց բացառության, պետք է լինի մեր հոյակապ մոլոցը, և անելով սա՝ մենք պետք է խոնարհաբար բացատրենք մեր ունկնդիրներին, որ Քրիստոսը ն' այցելեց, ն' կանչեց իրենց՝ մեր քարոզա ուղերձի միջոցով:

Երկրորդո՞ւ այս խոսքից մենք իմանում ենք, որ Աստծոն կանչը մեղավորին և համբերատար է, և հարատևող: Նա սիրող և գթած Աստված է, երկայնամիտ, առաս ողորմությամբ և ճշմարտությամբ¹²: Այդ իսկ պատճառով, Նա կանչում է նոյնիսկ ամենախստացած մեղավորին, և սպասում է նրանց, ովքեր չեն ընդունել Իր ողորմությունն իրենց կյանքի ամբողջ ընթացքում: Իր գրքում Եսային գեղեցիկ և տպավորիչ պատկերում է Աստծոն երկայնամտությունը.

«Ես... ասացի. «Ահա Ես, ահա Ես»,
Այս ազգին, որ Իմ անոնքը չէր կանչել:
Ես տարածեցի Իմ ձեռքերը ամեն օր դեպի մի ապստամբ ժողովուրդ,
Որոնք գնում են մի այնպիսի ճանապարհով, որ լավ չէ,
Իրենց խորհուրդների ետևից.
Մի այնպիսի ժողովուրդ, որ Իմ քարկացնում են միշտ Իմ առջև» (65.1-3):

Քարոզիչը պետք է հաշվի առնի Աստծոն երկայնամտությունը մեղավորների հանդեպ, քանի որ Աստծոն բարությունը և համբերությունն են, որ ապաշխարության են առաջնորդում մարդկանց¹³: Բայց լայնպես, քարոզիչը պարտավոր է զգուշացնել մեղավորին այն օրվա մասին, որը հայտնի է միայն Աստծուն, երբ փրկության կանչը կդադարի, և կմնա միայն դատաստանը:

10. Եզեկիել 18:23

11. Սարկոս 16:15, Գործը 17:30

12. Ելիս 34:6

13. Հռոմեացիների 2:4

«Եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի...»

Այս արտահայտության մեջ հայտնված է մի գարմանալի ճշմարտություն. Աստված կոչ է անում մարդկանց արձագանքել Ավետարանի ուղերձին: Քարոզելու այն տեսակը, որը չի պահանջում արձագանք մարդկանցից, լավագույն դեպքում ոչ հավասարակշռված է, իսկ վատագույն դեպքում հերձված է: Ավետարանիշը չի կատարել իր աշխատանքը, եթե նա պարզապես հոչակել է Ավետարանի ուղերձը և թողել է իր ունկնդիրին առանց հրատապության զգացումի, առանց այնպիսի զգացումի, որ ինքը չի ավարտել, քանի դեռ նա պատշաճ կերպով չի արձագանքել Ավետարանի պահանջներին: Սա պարզորեն երևում է այն օրինակներից, որոնք Տերը և Նրա առաջյաները թողել են մեզ համար Սուրբ գրքում: Իր ծառայության սկզբից Հիսուսը պատվիրեց մարդկանց արձագանքել Ավետարանին ապաշխարությամբ և հավատքով¹⁴: Պենտեկոստեի օրը Պետրոսը հաստատակամորեն դրդեց իր ունկնդիրներին քայլ անել՝ ասելով. «Ազատվեք այս թյուր ազգից» (Գործ 2.40): Պողոս առաքյալը և համոզում էր, և աղաջում էր մեղավորներին հաշտվել Աստծո հետ՝ Քրիստոսի անունից¹⁵: Սուրբ գրքի ամենից ազրեցիկ հորդորը մեղավորներին պատկանում է հենց նրա գրչին. «Ահա հիմա՝ է ընդունելի ժամանակը. ահա հիմա՝ է փրկության օրը» (Բ Կորնթ. 6.2):

Ավետարանը պարզորեն և առանց ամաչելու պահանջում է արձագանք իր ունկնդիրից: Այսուամենայնիվ, այդ արձագանքը չի սահմանափակվում ավետարանչական գրքույկի ետևում գրված մի աղոթք կրկնելով տանը կամ որևէ ավետարանչական ուղերձի ավարտին: Սուրբ գրքի ամբողջական խորհուրդն այն է, որ մեղավորները պետք է արձագանքեն՝ ընդունելով Քրիստոսի փրկարար աշխատանքը և գերազույն իշխանությունը: Սուրբ գիրքը կոչ է անում նրանց ապաշխարել իրենց մեղքերից, հրաժարվել ամեն տեսակի ինքնավարությունից կամ իրենց կյանքն անձամբ դեկավարելուց և դավանել Հիսուսին որպես Տեր¹⁶: Սուրբ գիրքը պատվիրում է նրանց մերժել իրենց մարմսի զորությամբ փրկություն ստանալու ցանկացած հոյս և հավատքով ապավինել Աստծո ողորմությանը Քրիստոսում: Հասկանալուհամար Քրիստոսի ձայնը լսելու և մեր կյանքի դուռը Նրա առջև բացելու կարևորությունը, մենք պետք է դիտարկենք հետևյալ հատվածները Հովհաննեսի Ավետարանից:

«Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. թե ժամանակ կգա և հիմա է, որ մեռեներն Աստծո Որդու ձայնը կլսեն, և լսողները կապրեն

14. Մարկոս 1.15

15. Բ Կորնթացիների 5.11,20

16. Հոռմեացիների 10.9–10

«Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, և ես ճանաչում եմ նրանց, և իմ ետևից գալիս են» (10.27):

Առաջին խոսքում Քրիստոսը նկարագրում է փրկությունը՝ որպես հոգևորապես մահացած մարդկանց հարություն: Այն գերբնական և հրաշագործ աշխատանք է, որը կատարելով՝ Նա փոխում է մեղավորի սիրտը և օժտում է նրան հոգևոր կյանքով: Քրիստոսի մեծ և անսահման զրությամբ, նորադարձը հարություն է առնում մեռելներից որպես նոր արարած՝ ստեղծված Քրիստոս Հիսուսում, որպեսզի վարվի այն բարի գործերի մեջ, որոնք Աստված պատրաստել է իր համար աշխարհի ստեղծագործությունից առաջ¹⁷: Սա հոգևոր հարություն է, որը պակաս հրաշագործ և կյանք փոխող չէ, քան Ղազարոսի հարությունը՝ Քրիստոսի հրամանով: Այդ իսկ պատճառով, անհեթեթություն կլիներ մտածելը, որ մարդը կարող է ճշմարտապես լսել Քրիստոսի ձայնը և վերապել Աստծո այս զրավոր աշխատանքը, սակայն չկրել որևէ փոփոխություն: Ինչպես Հովհաննես 5.25-ը ստվորեցնում է մեզ, «լսողները կապրեն» (շեղագիրն ավելացրած է): Հետևաբար, նրանք նոյնպես կվարվեն «կյանքի նորոգության մեջ» (Հռոմ. 6.4):

Հովհաննեսի Ավետարանում գտնվող երկրորդ խոսքում տեսնում ենք այն մարդկանց առանձնահատկություններից մեկը, որոնք ճշմարտապես լսել են Քրիստոսի ձայնը և տվել են իրենց կյանքը Նրան. Նրանք շարունակում են հետևել Քրիստոսին: Անսմություն է մտածելը և հերձվածություն է ստվորեցնելը, որ մարդը կարող է լսել Քրիստոսի ձայնը և հարություն առնել հոգևոր մահից, սակայն չկրել որևէ տևական ազրեցություն: Նմանապես, Հովհաննես 10.27-ին հակասում է համոզմոննքն այն մասին, որ մարդը կարող է բացել իր սիրտը Քրիստոսի համար, որպեսզի փրկություն ստանա, իսկ հետո կրկին փակել այն, որպեսզի կարողանա ինքնավար կյանք վարել՝ առանց նոյնիսկ կյանքում անսշան կերպով հաշվի առնելու իր Փրկչին: Լավ կլինի, եթե հիշենք, որ լսելու գաղափարը երբայերենում ենթադրում է ոչ միայն լսելը, այլև՝ հնազանդվելը:

Մենք պետք է կրկին հաստատենք Ավետարանի մի պարզ ճշմարտություն. մարդիկ փրկվում են միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով: Փրկությունն Աստծո պարզեն է, որն առանձին է մարդկային արժանիքներից և բացառում է ցանկացած պարծանք մարմնով¹⁸: Նոյնպես, Հոգու գերբնական աշխատանքով է, որ մարդը դառնում է նոր արարած և Աստծո ստեղծածը: Այս ճշմարտությունը երաշխավորում է, որ այն մարդը, որը լսել է Ավետարանը և բացել է իր սիրտն

17. ԲԿ Կորնթացիների 5.17, Եփեսացիների 2.10

18. Եփեսացիների 2.8,9

Աստծո փրկության համար, կառաջադիմի անձնական պրեացման և Քրիստոսին նմանվելու մեջ: Պատճառը նորադարձի կամքի ուժը չէ, այլ՝ նրան փրկող Աստծո գորությունը և հավատարմությունը: Նա, Ով սկսեց այս բարի գործն այդ մարդու կյանքում, ավարտին կհասցնի այն¹⁹:

«...Կոնւնեմ նրա մոտ...»

Նոր ուխտի ամենամեծ և ամենաթանկ իրողություններից մեկն այն է, որ Քրիստոսը բնակվում է Իր ժողովրդի մեջ: Նա ճշմարտավես մեր Էմմանուելն է մինչև այս աշխարհի վերջը²⁰: Կարևոր է պնդել, որ երբ Սուրբ գիրքը նշում է, որ Քրիստոսը բնակվում է հավատացյալի մեջ, դա պոետիկ կամ այլարանական լեզու չէ, այլ՝ իրողություն, որը ճշմարիտ է Աստծո յուրաքանչյուր զավակի համար: Կողոսիայի եկեղեցուն ուղղված իր նամակում Պողոսը գրում է, որ մեզ զանում բնակվող Քրիստոսը հավատացյալի ապագա փառքի հոյսի հիմքն է²¹: Քրիստոսի ներքնակությունը Հոգու միջոցով, որի արդյունքում առաջանում է ներքին հոգնոր կյանք և արտաքին տեսանելի վերափոխում, հավաստիացնում է հավատացյալին, որ ինքը պատկանում է Քրիստոսին, և որ ինքն իրավամբ կարող է հուսալ այն վերջնական փառքին, որը դեռ գալու է: Այսպիսով, Քրիստոսի ներքնակությունը Հոգու միջոցով անզործունա չէ, այլ արդյունավետ է²²: Այն գաղտնիք չէ և չի սահմանափակվում առեղծվածային կամ անհատական տպավորությամբ. ընդհակառակը, այն զանազանելի և նկատելի իրողություն է:

Քրիստոսը խոստանում է բնակվել նրանց ներսում, ովքեր հավատքով ընդունում են իրեն, սակայն պետք է կրկնենք, որ ապացույցը, որ մենք հավատացել և ընդունել ենք Քրիստոսին, Նրա գործուն աշխատանքն է մեզանում՝ մեզ Իր պատկերին կերպարանակից դարձնելու համար: Այն մարդը, որը դավանում է Նրա անունը, վերապրում է թեև աստիճանական, բայց մնայուն փոփոխություն: Հովհաննեսի Ավետարանում կա մի խոսք, որը ցույց է տալիս, թե ինչ է նշանակում Քրիստոսի ներքնակությունը հավատացյալի մեջ. «Հի-

19. Փիլիպեցիների 1.6

20. Եսայի 7.14, Սատթենու 1.23, 28.20

21. Կողոսացիների 1.27, Ա. Թ. Ռոբերտսոնը գրում է. «Նա դիմում է հեթանոսներին, բայց «Ճեզանում» զայտափառն այսուել նշանակում է «Ճեր մեջ», ոչ թե «Ճեր միջն»: Պողոսը նկատի ունի Քրիստոսին վերապրելը և Նրա ներկայությունը բոլոր հավատացյաների անձնական կյանքում, Քրիստոսի ներքնակությունը սրտում, ինչպես Եփենացիների 3.17-ում: Նա բովանդակում է նաև փառքի հոյսը, քանի որ Նա Աստծո «Ժխինան» է: Քրիստոսը մեր հոյսն է հիմն (Ա Տիմոթեու 1.1), և մեր գալիք նպատակի հոյսն է (Հոմեացիների 8.18): «Խոսքի պատկերները», հա. 4, էջ 485:

22. Վիլյամ Լենդրիկսեն. «Նոր կոսկարանի մեջնորդյուն. Կողոսացիների և Փիլիմոնի մեջնորդյուն» (Գրենը Ռեփիդու, «Baker», 1964թ.), էջ 91:

սուսը պատավխանեց և նրան ասաց. «Եթե մեկն ինձ սիրում է, իմ Խոսքը կպահի, և իմ Հայրը կսիրի նրան, և նրա մոտ կգանք և բնակություն կանենք նրա մոտ» (14.23):

Հիսուսը չի սովորեցնում, որ իր ներքնակությունը հավատացյալի կանքում հիմնված է այն բանի վրա, որ հավատացյալը սրտանց սիրում է և լիակատար հնազանդվում է իրեն: Մերը Քրիստոսի հանդեաւ և Նրա Խոսքը պահելը ոչ թե երաշխավորում են Նրա ներքնակությունը, այլ վկայում են այդ մասին: Մենք գիտենք, որ Վերատին ծնվել ենք, և Քրիստոսը Սուրբ Հոգով բնակվել է մեզանում, քանի որ մեր մեջ կա սեր Նրա հանդեաւ, որը նախկինում գոյություն չուներ, և մեր կյանքում արտահայտվում է նոր հարաբերություն Նրա Խոսքի հետ, որը բնութագրվում է հարաճոն հնազանդությամբ:

Այս աստվածաշնչան ուսուցումն ուրբակիորեն հակադրվում է այն ընդունված գաղափարին, որ մարդիկ կարող են հաստատ կանգնել իրենց փրկության հոլյու վրա պարզապես այն պատճառով, որ իրենք մեկ անգամ աղոթել են՝ ինդրելով Հիսուսին գալ իրենց սրտի մեջ: Թեև չունեն Քրիստոսի ներքնակության որևէ ներքին վերապրում կամ արտաքին ապացոյց, նրանք պետք է հաստատ կանգնեն, միայն որովհետև Նա ճշմարտապես խոստացել է, իսկ իրենք անկեղծորեն խնդրել են: Այս մոտեցումը ներկայացնում է Քրիստոսի ներքնակությունը որպես անգործույթ, անզոր և անճանաչելի իրողություն: Փրկությունը պարզապես դառնում է տում դեպի Երկինք՝ առանց որևէ սպասման, որ այն նկատելի ազդեցություն կթողնի մարդու բնավորության և Աստծո հետ հարաբերությունների վրա:

Որքան էլ ընդունված լինի այս մեկնությունը, այն չունի աստվածաշնչան հիմք: Թեև մարդու հավաստիացումը կարող է ավելանալ, եթե նա մտորի իր դարձի փորձառության մասին, այնուամենայնիվ մտորումը միակ գործոնը չէ, որը որոշում է Քրիստոսի հանդեաւ նրա հավատքի դավանանքի խսկությունը: Կան այլ կարևոր և անփոխարինելի գործոններ, որոնք վկայում են հավատացյալի կյանքում Աստծո շարունակական աշխատանքի մասին. սրբացումը, ավելի խորը ապաշխարությունը, հավատքի աճը, ավելի բարձր գնահատանքը Քրիստոսի հանդեաւ և ավելի հիմնավոր հնազանդությունը Նրա կամքին:

«...Եվ ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ»:

Ավետարանի մեծագույն խոստումներից մեկը Քրիստոսի հետ շփումն է, սակայն թվում է, թե այն ետ է մղվել՝ տեղի տալով ավելի ցանկալի առավելությանը, որը մեղավորի ինքնապահպանումն է: Մարդկանց խրախուսում են հրավիրել Հիսուսին իրենց սրտի մեջ՝

խոստանալով ավելի բարեկեցիկ կյանք այս աշխարհում և փրկություն կործանումից՝ հաջորդում: Թեև այս խոստումները վավերական են, երբ մենք դարձնում ենք դրանք ավելի առաջնահերթ, քան շփումը Քրիստոսի հետ, դրանք խեղայուրում են Ավետարանը: Այս մոտեցումը հակասում է հավիտենական կյանքի իմաստին՝ համաձայն Հիսուսի խոսքերի. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն Քեզ, միայն ճշմարիտ Աստված, և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովի. 17.3):

Սատանան ճիշտ նկատեց՝ ասելով, որ մարդը կանի գրեթե ամեն ինչ՝ իր կաշին փրկելու համար²³: Նա կաղոթի, եկեղեցի կիաճախի, կրնդգրկվի կրոնական ծառայության մեջ և նոյսինկ կսահատակվի: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է Աստծո Հոգու գերբնական աշխատանքը՝ արատավորված մարդուն արևատապես փոխելու համար, որպեսզի նա սկսի արժեսորել Քրիստոսին և ցանկանա հաղորդակցվել Նրա հետ: Ավելի բարեկեցիկ կյանքի կամ հավիտենական երանության առաջարկը կգրավի բազմաթիվ մարմնավոր մարդկանց, սակայն շփումը Քրիստոսի հետ չի գրավի ոչ ոքի՝ բացի այն մարդկանցից, որոնց գրավում է Աստծո Հոգին. «Ոչ ոք չի կարող ինձ մոտ գալ, եթե Հայրը, որ ինձ ուղարկեց, չքաշի նրան, և ես հետին օրու հարություն կտամ նրան» (Հովի. 6.44):

Որպես քրիստոնյաներ և Ավետարանի ծառայողներ մենք պետք է հիշենք երկու կարևոր ճշմարտություն, երբ օգտագործում ենք Հայտնություն 3.20-ը Քրիստոսի մասին պատմելիս: Առաջինը՝ մենք պետք է ուղղենք մեր ունկնդիրների ուշադրությունը Քրիստոսի վրա և ցոյց տանք Քրիստոսի արժեքը, որպեսզի ամեն ինչից առավել նրանք ցանկանան հաղորդակցվել Նրա հետ: Թեև Ավետարանն ունի անթիվ առավելություններ, որոնք պետք է հայտնենք մարդկանց, մենք պետք է ազդարարենք Քրիստոսին՝ որպես գլխավորը բոլոր այդ առավելություններից և որպես ավելի արժեքավոր, քան այդ ամենը՝ միասին: Իրականում, մենք պետք է ջանք գործադրենք, որպեսզի ցոյց տանք մեղավորին, որ Քրիստոսի լոյսի ներքո մնացած բոլոր առավելությունները գրեթե չունեն արժեք և հեռանկար:

Ինչ կարող է առաջարկել քարոզիչը՝ Քրիստոսի համեմատ: Արդյոք մենք պետք է անտեսենք այս վեհ թեման և խոսենք պակաս կարևոր բաների մասին, որպեսզի գրավենք մարմնավոր մարդկանց, որոնք ավելի գերադասում են ուտել խոզերի տաշտից, քան ընթրել Տիրոջ սեղանի շուրջ: Եթե մեր հիմնական թեման լինի Քրիստոսի գեղեցկությունը և Նրա Ավետարանի փառքը, միգույն մենք

23. «Եվ սատանան պատասխանեց Տիրոջը և ասաց. «Մորթի տեղ մորթ, նաև մարդս իր ամբողջ ստացվածքն իր անձի տեղ կտա»» (Հոր 2.4):

գրավելու ավելի քիչ մարդկանց, բայց նրանք, ովքեր կգան, հենց այնպես չեն գա: Աստծոն Հոգով, նրանք կգան Քրիստոսի համար և կմսան Քրիստոսի համար: Նոյնիսկ եթե թվա, թե երկրային ուրախության և բարգավաճման բոլոր խոստումները չեն կատարվում, նրանք կմսան իրենց ընթացքի մեջ, քանի որ նրանք մի ակնթարք տեսել են փառավոր Քրիստոսին և աղք են համարել մսացած ամեն ինչը՝ դրա համեմատ^{24:}

Երկրորդը՝ մենք պեսոք է օգտագործենք այս հրաշալի խոսքը, որ պեսզի ցոյց տանք հետևյալը. ապացոյցն այն մասին, որ մարդը բացել է իր սրտի դուռը Քրիստոսի համար, այսինքն՝ ճշմարիտ դարձ է վերապրել, այն է, որ նա շարունակում է հաղորդակցվել Քրիստոսի հետ: Հիսուսը խոստացավ. «(Ես) կմտնեմ նրա մոտ և ընթրիի կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ»: Սրանով Հիսուսը սովորեցնում է մի անշափ կարևոր ճշմարտություն. Նորահավատի մեջ Իր ներքնակությունը կդառնա Իր և այդ մարդու իրական և տևական շիման սկիզբը: Սա ճշմարիտ դարձի նշաններից մեկն է: Մենք գիտենք կամ հավատիացում ունենք, որ Քրիստոսը և Վիրկել է մեզ, և բնակվել է մեզանում, քանի որ Վիտսադարձ շփում ունենք Նրա հետ. Նա ընթրում է մեզ հետ, և մենք՝ Նրա հետ:

Անշափ կարևոր է նշել, որ տևական շիման մասին այս խոստումը չի տրվել ընդամենը որպես հավանականություն, այլ՝ որպես հստակ իրողություն, այնպիսի բան, ինչը տեղի կունենա յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի կյանքում: Այն շատ նման է Նոր կտակարանի վերաբերյալ հինկտակարանյան ամենագեղեցիկ խոստումներից մեկին. «Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Խարայելի տան հետ այն օրերից հետո, - ասում է Տերը. Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն, և Ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի Ինձ համար ժողովուրդ լինեն»^{25:}

Այս ուխտի խոստումը վերաբերում է այնպիսի ժամանակվա, որը ներկայում կատարվել է, եթե Աստված ստեղծելու էր Իր համար մի ժողովուրդ՝ հաշտված Մեսիայի քավշարար մահով և վերածնված Սուրբ Հոգով: Շատրիկ նրանց համար կատարած գերրնական աշխատանքի՝ Նա լինելու էր նրանց Աստվածը, իսկ նրանք՝ Իր ժողովուրդը: Սա ոչ թե հուսացող Աստծո անիրականանալի ցանկությունն է, այլ՝ գերիշխան Աստծո անփոփոխ վճիռը: Նա ոչ միայն խոստանում է Իր հարատև հավատարմությունն Իր նորոգված ժողովուրդին, այլև խոստանում է այնպես գործել նրանցում, որ նրանք էլ պատշաճ կերպով արձագանքեն դրան: Նրանք կլինեն Իր ժողովուրդը:

24. Փիլիպեցիների 3.7,8

25. Երեսիա 24.7, 31.33, 32.38, Եբրայեցիների 8.10

Հայտնություն 3.20-ում տեսնում ենք նոյն համոզվածությամբ արված մի պնդում: Քրիստոսը ոչ միայն խոստանում է հարատև շփում ունենալ նորադարձի հետ, այլև որ Իր ներքնակությունը նրանում կերաշխավորի նրա պատշաճ արձագանքը: Սա չի նշանակում, որ հավատացյալը երբեք չի ճախողվի իր ընթացքի մեջ, և որ նրա նվիրումը Քրիստոսին երբեք գաղց չի դառնա: Այսուամենայնիվ, սա նշանակում է, որ հավատացյալի կյանքում կլինի իրական և նկատելի շփում Քրիստոսի հետ: Նա չի հիմնի իր փրկության հավաստիացումն ընդամենը անցյալում արված մի աղոթքի վրա, որն, իր համոզմամբ, անկեղծ էր, այլ կիմնի կենդանի Քրիստոսի հետ տևական և փոխադարձ շփման վրա:

ՏԵՍԵՔ, ԹԵ ՈՎ Է ԳԱԼԻՒ ԸՆԹՐԻՔԻ

Մինչև այս թեման եզրափակելը և առաջ շարժվելը, մենք պետք է անենք վերջին պնդումը: Բազմաթիվ խնդիրներ՝ կապված Հայտնություն 3.20-ի ավետարանչական գործածության հետ, լուծված կլինեին, եթե մենք պարզապես հասկանայինք և ճշտորեն ազդարարեինք, թե ով է թակում դուռը: Նա մերժված Քրիստոսը չէ, որն ընծայման մասցորդներ է խնդրում: Նա փառքի Տերն է: Ի՞ս մենք կարող ենք տալ Նրան: Նա նստած է գահի վրա Երկնքում, և երկիրը Նրա ոտքերի պատվանդանն է²⁶: Մարդկանց ձեռքերը չեն ծառայում Նրան այնպես, ասես Նա ինչ-որ քանի կարիք ունի, քանի որ Նա ինքն է տալիս բոլորին կյանք և շոնչ և ամեն ինչ²⁷: Եթե Նա քաղցած լիներ, չէր ասի այդ մասին մարդկանց, քանի որ Նրանն է աշխարհը և դրա լիությունը²⁸: Ավելին՝ եթե մարդը մեղանչում է և ավելացնում է իր անօրինությունը, ի՞ս է դա անում Աստծուն, և եթե մարդն արդար է, ի՞ս օգուտ Աստծուն դրանից²⁹: Է. Ու. Թողերը ճիշտ էր գրում. «Նոյնիսկ եթե բոլոր մարդիկ հանկարծակի կուրանային, միևնույն է՝ արևը լոյս կտար ցերեկը, իսկ աստղերը՝ գիշերը, քանի որ նրանք ոչչով կախված չեն այն միլիոնավորներից, որոնք օգտվում են իրենց լոյսից: Նոյն կերպով, եթե բոլոր մարդիկ այս երկրի վրա աթեխատներ դառնային, դա որևէ կերպով չէր ազդի Աստծօն վրա: Նրա ինքնությունն անփոփոխ է և կախված չէ որևէ մարդուց: Նրան հավատալը ոչինչ չի ավելացնում Նրա կատարելությանը, և Նրան կասկածելը ոչինչ չի պակասեցնում Նրանից»³⁰:

26. Եսայի 66.1

27. Գործը 17.25

28. Սաղմոս 50.12

29. Հոր 35.6,7

30. Է. Ու. Թողեր. «Սուրբի գիտությունը» (Նյու Յորք, «Harper & Row», 1961թ.), էջ 40:

Այսպիսով, Քրիստոնը թակում է մարդու սրտի դուռը՝ որպես ողորմած Տեր, որին մենք պետք է վերաբերվենք երկյուղածույթամբ և պատվով, ոչ թե որպես մոլորդիկ վտարանդի, որին պետք է խոհճանք: Եթե Նա մտնում է մարդու սրտի մեջ, Նա է որոշում բոլոր պայմանները և ներկայացնում բոլոր պահանջները: Նա չի ենթարկում իր կամքը մարդկանց քմահաճույքին, այլ պահանջում է լիակատար նվիրում: Սա է պատճառը, որ Երանելիների մեջ Քրիստոնը սովորեցնում է. «Երանի նրանց, որ սրտով մաքուր են» (Մատթ. 5:8): Երանելի են նրանք, որոնց սրտերը պատված չեն խարամով, և որոնց նվիրումը բաժանված չէ մրցակցող սիրո առարկաների միջև, որովհետև նրանք կտեսնեն Աստծուն:

Որպես օրինակ՝ պատկերացնենք, որ Քրիստոնը թակում է ինչ-որ մեկի սրտի դուռը: Նա առաջարկում է այդ մարդուն հրաշալի խոստումներ՝ բժշկություն, խաղաղություն և հավիտենական կյանք: Եվ, լսելով այդ մեծ փրկության առավելությունների մասին, այդ մարդը պարզում է ձեռքը դեահ դրան բռնակը՝ պատրաստ բացելու այն: Այնուամենայնիվ, մինչ նա քաշում է սողնակը, Քրիստոնը զգուշացնում է նրան. «Եթե բացես դուռը, Ես ներս կմտնեմ և կկատարեմ ամեն մի խոստում, որը տվել եմ քեզ, բայց Ես կգամ որպես Տեր, և Իմ կամքն օրենք կլինի: Քո ամբողջ ունեցվածքով կդառնաս Իմը, և այդ ամենի հետ Ես կվարվեմ՝ ըստ Իմ բարի կամքի և նպատակի: Դու կլինես Իմ ծառան, և Ես կլինեմ քո Տերը: Ես կսվորեցնեմ քեզ, կփորձեմ քեզ, կխրատեմ քեզ և կվերցնեմ քեզնից այն ամենը, ինչը հաճելի չէ Ինձ: Ես կիշխեմ քո կյանքում և կփոխեմ քեզ՝ ըստ Իմ պատկերի: Ուզում եմ նախապես զգուշացնել քեզ. այն պահին, եթե բացես այս դուռն Ինձ համար, դու այն կիսակես մնացած ամեն ինչի համար: Ինձ «այն» ասելը նշանակում է «ոչ» ասել այս աշխարհին, և Ինձ շահելը նշանակում է կորցնել այս աշխարհը»: Այս ավետարանական կանչն ուրանալը նշանակում է ուրանալ այն ամենը, ինչ Հիսուս Քրիստոնը երբևէ սովորեցրել է ճշմարիտ դարձի և աշակերտության արմատական և պարտավորեցնող բնույթի մասին:

ՄԱՍ ԵՐԿՈՒ Նոր սրտեր և ճշմարիտ դարձի բնույթը



«Միա համար ասաւ Իսրայելի տանը՝ այսպես է ասում Տեր Եհնվան. «Ոչ թե ձեզ համար եմ անում ես, ո՞վ Իսրայելի տոնն, այլ Իմ սուրբ անվան համար, որ դուք պղծեցիք այն ազգերի մեջ, որ որ գնացել եք: Եվ ես սրբեցի Իմ սուրբ մեծ անունը, որ պղծված էր այն ազգերի մեջ, որոնց մեջ դուք պղծեցիք: Եվ ազգերը պիտի գիտենան, որ ես եմ Տերը, - ասում է Տեր Եհնվան, - երբ որ ես կարրվեմ ձեր մեջ նրանց աչքերի առջև: Եվ ձեզ պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեզ բոլոր երկրներից և ձեզ բերեմ ձեր հողը: Եվ ձեզ վրա մաքուր ջուր պիտի սրակեմ, և մաքուր պիտի լինեք. ձեր բոլոր պղծություններից ու ձեր բոլոր կուռքերից պիտի մաքրեմ ձեզ: Եվ ես ձեզ նոր սիրու պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրուը և ձեզ մարմնեղեն սիրու պիտի տամ: Եվ Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ և պիտի առնեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և կատարեք: Եվ բնակվեք այն երկրում, որ տվել եմ ձեր հայրերին, և Իմ ժողովուրդը լինեք, և ես ձեր Աստվածը լինեմ»»:

— Եզեկիել 36.22-28

ԳԼՈՒԽ ՎԵՅ



Փրկության գերազանց դրդապատճառը և նպատակը

«Միս համար ասս Իսրայելի տանը՝ այսպես է ասում Տեր Եհովան. «Ոչ թե ձեզ համար եմ անում Ես, ով Իսրայելի տոնն, այլ Իմ սուրբ անվան համար, որ դուք պղծեցիք այն ազգերի մեջ, որ որ գնացել եք: Եվ Ես սրբեցի Իմ սուրբ մեծ անոնը, որ պղծված էր այն ազգերի մեջ, որոնց մեջ դուք պղծեցիք: Եվ ազգերը պիտի գիտենան, որ Ես եմ Տերը, - ասում է Տեր Եհովան, - երբ որ Ես կարվեմ ձեր մեջ նրանց աչքերի առջև»:

— Եզեկիել 36.22,23

Հետևյալ հարցերը քրիստոնեական կրոնի ամենակարևոր հարցերի թվում են. «Ի՞նչը կարող է դրդել արդար և սուրբ Աստծուն բարությամբ վարվել չար մարդկանց հանդեպ և գործել նրանց փրկության համար»: Ինչպես Նա կարող է մեղավորների ընկեր լինել, երբ Նրա աչքերը չափազանց սուրբ են՝ չարին նայելու համար»¹: «Մի՞թե ամբողջ երկրի դատավորը չպետք է արդարությամբ վարվի»²:

Ցանկացած մարդ, ով լրջորեն ուսումնասիրել է վարդապետությնն Աստծոն մասին (այսինքն՝ Աստծոն Ասձը և հատկանիշները) և անկուս ապրած մարդու ծայրահեղ արատավոր վիճակը, պետք է անմիջապես հասկանա, որ գոյություն չունի որևէ ընդհանրություն Աստծոն և մարդու բնավորության և գործերի միջև: Աստված քարի, արդար և սիրող է: Անկուս ապրած մարդկությունը չար, անարդար, եսակենտրոն և անսեր է: Եթե նման ցածր կարծիքը մարդու մասին զարմացնում է մեզ, մենք պետք է գիտակցենք, որ Սուրբ գիրքն ի՛ ավելի խստորեն է պարապիս մարդկությանը:

«(Մարդիկ) լցված են ամեն անիրավությամբ, պոռնկությամբ, անզգամությամբ, ազահությամբ, չարությամբ, լիքը նախանձով, մարդասպանությամբ, կովով, նենգությամբ, չարաբարությամբ. քսուներ, քամ-քատղներ, աստվածատողներ, թշնամացողներ, ամբարտավաններ,

1. Ամբակում 1.13

2. Ծննդոց 18.25

գոռողներ, չար բաներ հնարողներ, ծնողներին անհնազանդներ, անմիտներ, ուստադրուժներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ» (Հոռմ. 1.29-31):

Ինչպես որ գրված է, թե՝
«Արդար չկա, մեկն էլ չկա:
Չկա իմացող, չկա Աստծոն խնդրող,
Ամենը խոտորվեցին, միասին անպիտան եղան:
Չկա բարությոն անող, մինչև մեկն էլ չկա:
Նրանց կոկորդը բաց գերեզման է,
Եվ իրենց լեզուներով նենգությոն են անում.
Իժերի թոյն կա նրանց շրջունքների տակ:
Որոնց բերանը անեծքով և դառնությամբ լիքն է,
Որոնց ոորերը շուտագնաց են արյուն թափելու համար:
Կործանում և թշվառությոն է նրանց ճանապարհներում:
Եվ խաղաղության ճանապարհը չճանաչեցին:
Աստծո երկուողը նրանց աչքերի առջև չէ» (Հոռմ. 3.10-18):

Դիտարկելով Սուրբ գրքի գնահատականն անկում ապրած մարդու մասին՝ Աստվածաշնչին ծանոթ միտքը չի հարցնի, թե ինչպես Աստված կարող է ընդդիմանալ մարդկանց, դատապարտել նրանց և նոյնիսկ հավիտյան հեռացնել Իրենից: Փոխարենը, այն կիարցնի, թե ինչպես Աստված կարող է սիրել մարդկանց, արդարացնել նրանց և հասցնել մտերիմ շփման իր հետ՝ առանց կասկածի ենթարկելու իր առաջինությունը և ազնվությունը: Չէ՞ որ յուրաքանչյուրը հարցականի է ենթարկում իր բարոյական պատկերն այն բանով, թե ում հետ է հաղորդակցվում:

Հետևյալ օրինակը նկարագրում է այս խնդիրը: Մարդը կարող է չար համարվել իր չար արարքների պատճառով: Օրինակ, Հիտլերը մնացել է պատմության մեջ որպես մարդկային չարիքի մարմնավորում՝ մարդկության դեմ գործած սարսափելի հանցանքների պատճառով: Այնուամենայնիվ, ինչ-որ մեկը, ով նման արարքներ չի գործել, նոյնպես կարող է չար համարվել, եթե կապ է ունեցել այդ արարքները գործողի հետ: Օրինակ, նա, ով չի գործել Հիտլերի վայրագությունները, սակայն իմացել է դրանց մասին և, միևնույն է, շարունակել է համարել Հիտլերին իր ընկերը և փորձել է փրկել նրան այդ վայրագությունների հետևանքներից, նոյնպես կարող է չար համարվել: Թեև նա մեղավոր չի եղել անձամբ չարիք գործելու մեջ, նա ցոյց է տվել իր չարությունը՝ լինելով գործողի համախոհը և ընկերը:

Այսպիսով, ինչո՞ւ է սուրբ և արդար Աստված, ով ատում է չարը և խորշում է չարից, հետամուտ լինում չար մարդկանց հետ հաղորդակցվելուն և նրանց իրենց մեղքի հետևանքներից փրկելուն: Մինչև

Աստվածաշնչի պատասխանը դիտարկելը, մենք պետք է մերկացնենք մի տարածված և հայինից ժամանակակից կարծիք՝ այն, որ Աստված հետամուտ է լինում մարդկանց փրկությանը, քանի որ Նա ունի շիման կարիք և ձգտում:

Մոռահոգիչ է, որ շատերն այնքան են հեռացել ճշմարտությունից, որ այլս չեն տեսնում, երբ որևէ կարծիք ուղղակիորեն հակասում է Աստվածաշնչին և պատմական քրիստոնեական մտքին: Աստծո հատկանիշներին վերաբերող ամենակարևոր և ամենախրախուսական վարդապետություններից մեկը Նրա ինքնաբավ լինելն է: Նա ոչչի կարիք չունի, և վերջինը, ինչի կարիքը Նա կարող է ունենալ, մարդու հետ շփումն է: Արևմուտքի քրիստոնեությունն այն աստիճան է բարձրացրել մարդու արժեքը, որ ներկայումս այն գործնականորեն Աստծոց վեր է դասում ‘նրան’ համարելով, որ նա ամեն ինչի նպատակն է, և որ նրա արժեքն անսահման է: Մենք համոզել ենք մեզ, որ երկինքը երկինք չի լինի՝ առանց մեզ, և Աստված լիարժեք չի լինի, եթե մարդկությունը կորսվի: Այսուամենայնիվ, Աստվածաշունչը ներկայացնում է բոլոր ազգերի ընդհանուր արժեքը որպես «դույլին կպած կաթիլ» և «կշեռքի վրայի փոշի» (Եսայի 40.15): Որպես պատասխան այն հասկացությանը, որ Աստված ունի այնահսի կարիք, որը միայն մարդը կարող է լրացնել, Պողոս առաքյալը ներկայացնում է հետևյալ Ժխտումը. «Այն Աստված, որ աշխարհը և ամեն բան, որ նրանում կա, արեց, Նա, երկնքի և երկրի Տերը լինելով, ձեռագործ տաճարներում չի բնակվում» (Գործք 17.24):

Աստված չունի ոչ մի կարիք, և այդ պատճառով Նրան պետք չէ իրենից դուրս գտնվող ոչ ոք և ոչինչ՝ իր գոյությունը պահպանելու կամ բարելավելու համար: Ավելին՝ Աստված չունի հաղորդակցման կարիք, քանի որ Հայրը, Որդին և Հոգին գոյություն են ունեցել միմյանց հետ կատարյալ հաղորդակցման մեջ հավիտենության ամբողջ ընթացքում: Ասսահմանորեն առատաձեռն Աստված ստեղծեց այս աշխարհը՝ ելնելով ոչ թե ինչ-որ աստվածային կարիքից, այլ՝ իր գերառատությունից:

ԱՍՏԾՈ ՍԵՐԸ

Մենք կրիմնք Աստվածաշնչին, որպեսզի ստանանք հետևյալ հարցի պատասխանը. «Ի՞նչը դրդեց Աստծոն փրկել մեզ»: Առաջին պատասխանը, որը կդիտարկենք, Ա Հովհաննես 4.8-ում է: Ինչ-որ իմաստով այս պատասխանը չպետք է զարմացնի քրիստոնային, սակայն, այլ իմաստով, այն պետք է մշտապես զարմացնի և ցնցի նրան. «Աստված սեր է»: Աստված սիրեց անկում ապրած մարդկութ-

յանը, քանի որ Աստված *սերէ*: Այս պարզ պնդումը պարզապես չի սովորեցնում, որ Աստված *սիրում* է, թեև այդ փաստն ինքնին արտասովոր ճշմարտություն է, այլ՝ որ Աստված *սեր* է, և որ Նրա սերը շատ ավելին է, քան որոշում, հակվածություն կամ աշխատանք: Այս Աստծո *հատկանիշներից մեկն* է՝ Նրա էության կամ բնության մասը: Իր էության շնորհիվ, Նա ձրիաբար և անձնուրաց զոհեց Իրեն հանուն մարդկանց՝ նրանց օգտի կամ բարօրության համար: Այսպիսով, Աստծո սերը մարդկանց հանդեա Իր էության արդյունքն է, և որևէ առնչություն չունի Իր սիրո առարկաներին հատուկ որևէ արժեքի կամ արժանիքի հետ: Նա չփրկեց մարդկանց իրենց պատճառով, այլ՝ անկախ այն բանից, թե ինչպիսին են իրենք: Աստծո սերը բխում է Իրենից՝ Իր առաքինությամբ և Իր կամքով: Մարդու բնավորությանը կամ գործերին բնորոշ ոչ մի առաքինություն կամ արժանիք՝ ակնհայտ կամ թաքնված, բնածին կամ ձեռք բերված, չի գրավում Աստծո սերը: Տրամաբանությունը պարզ է. Աստված փրկում է չար մարդկանց, քանի որ սիրում է նրանց, և սիրում է նրանց, քանի որ Նա *սեր* է:

Ճշմարտությունն Աստծո անարժանաբար տրված և անպայմանական սիրո մասին հրաշալի կերպով պատկերված է Երկրորդ Օրինաց գրքում, որում Աստված բացատրում է Խրայելին ընտրելու հիմքը կամ դրդապատճառը: Միվեսը հիշեցնում է ժողովրդին. «Ոչ թե ձեր բոլոր ազգերից շատ լինելու համար Տերը ձեզ սիրեց և ձեզ ընտրեց, որովհետև դուք բոլոր ազգերից քիչ էիք: Այլ՝ Տերը ձեզ սիրելու համար...» (7.7,8):

Խրայելը հարցնում է. «Ինչո՞ւ Դու սիրեցիր ինձ», և Աստված պատասխանում է. «Ես սիրեցի ձեզ, քանի որ Ես սիրեցի ձեզ»: Այսպիսով, Աստծո սերը՝ Խրայելի և անկում ապրած մարդկության հանդեա, որևէ առնչություն չունի նրանց ինքնության և գործերի հետ. ընդհակառակը՝ այն բխում է Աստծո Անձից և որոշումներից: Աստված սիրում է մեղավոր և անկում ապրած մարդկանց, քանի որ Նա սեր է, և Նա որոշել է սիրել նրանց:

Ճշմարտությունն այն մասին, որ Աստված սիրում է՝ չնայած որ անկում ապրած մարդկությունը գորկ է որևէ արժանիքից, ավելի պատկերվում է նաև Եգեկիելի գրքում: Դրանում Աստված նկարագրում է այն ողորմելի, նույնիսկ նողկալի բնությունը, որն ուներ Խրայելը, և որն ունեինք բոլորս, մինչև որ Նրա փրկարար աշխատանքը կատարվեց մեր կյանքում.

«Եվ ասա՝ այսպես է ասում Տեր Եհովան Երուսաղեմին. «Սկիզբդ ու ծնունդդ Քանանացիների երկրից է, հայրդ ամորհացին էր, և մայրդ՝ թետացին: Եվ ծնունդդ՝ դու ծնված օրդ, պորտդ չկտրվեց, և ջրով

չվացվեցիր՝ մաքրվելու համար, և աղով չաղվեցիր և խանձարուրով չփաթաթվեցիր: Մի աչք քեզ չխնայեց, որ սրանցից մեկն աներ քեզ համար՝ քեզ ողորմելով, այլ դաշտի երեսը գցվեցիր՝ քո անձի զգվանքով, քո ծնված օրը:

Եվ ես անցա մոտովի ու տեսա քեզ արյանդ մեջ կոխ տալիս և ասացի քեզ քո արյան մեջ, թե՝ ապրի՞ր: Այն, ասացի քեզ քո արյան մեջ, թե՝ ապրի՞ր» (Եղեկ. 16.3-6):

Այս հատվածում Աստված նկարագրում է Խարայելի ժողովրդին և անկում ապրած մարդկությանը՝ որպես խայտառակ ծագում և մերժված ծնունդ ունեցած մանկան՝ ծնված թշնամի ազգից, կեղտոտ և վիժված, լրված բաց դաշտում և սեփական արյան մեջ գալարվող: Նոյնիսկ ամենազգայուն սիրտ ունեցող մարդու գութը չշարժվեց՝ փրկելու նման անճռոնի արարածին, որն այդքան ողորմելի վիճակում էր:

Այսուամենայնիվ, Աստված, Ով մեծ է ողորմությամբ, Իր մեծ սիրո շնորհիվ, որով սիրեց մեզ, նոյնիսկ երբ մահացած էինք մեր անօրինությունների մեջ, կենդանացրեց մեզ Քրիստոսի հետ³:

Ավետարանի փառքն այն չէ, որ Աստված փրկում է արժանի արարածների, որոնց գեղեցկությունը գրավում է Նրա սերը և անհնարին է դարձնում Նրա կյանքը՝ առանց իրենց: Ավետարանի փառքն այն է, որ Աստված փրկում է չար ու թշվառ մեղավորների, որոնք լիովին պղծել են իրենց, որոնցից խորշում են, և որոնց լրել են բոլոր՝ բացի Աստծուց, Ով սեր է:

ԱՍՏԾՈ ՓԱՌԵԸ

Մենք մի փոքր հեռացանք Եղեկիել 36.22-28-ից՝ ցոյց տալու համար, որ մեղավորների միջև Աստծո փրկարար աշխատանքի գլխավոր դրդապատճառը Նրա անարժանաբար (եթե մարդը արժանի չէր, բայց արժանացավ) տրվող սերն է: Այժմ կվերադառնանք այս հատվածին, որպեսզի բացահայտենք Աստծո բոլոր գործերի մեծագոյն դրդապատճառը՝ Նրա փառքի տարածումը: Որպես ամփոփում՝ Աստված փրկում է մարդկանց Իր համար և ըստ Իր բարեհաճության: Այս պնդումը կարող է տարօրինակ և նոյնիսկ վիրավորական թվականում միայն աշխարհիկ մտքի, այլև ժամանակակից քրիստոնեության համար, որը ողողված է հումանիզմով:

Առաջին ակնառու ճշմարտությունը, որը ներկայացվում է մեր ու շաղրակացիանը, այն է, որ Աստված չունի Խարայելը փրկելու մղում նրանում գտնվող որևէ արժանիքի պատճառով: Երկու անգամ այս

3. Եփեսացիների 2.4,5

կարճ հատվածում Աստված մատնանշում է, որ Իսրայելը միայն պախարակել և պղծել է իր անոնն ազգերի մեջ: Պողոս առաքյալն ավելի հեռու է գնում՝ ասելով, որ Աստծոն անոնը հայիոյվում էր հեթանոսների մեջ Իսրայելի կողապահտության և չար գործերի պատճառով⁴: Աստված չգտավ որևէ պատճառ Իսրայելի մեջ՝ այն փրկելու համար, այլ՝ միայն դատապարտելու:

Եթե նման բան կարելի է ասել Իսրայելի մասին, որքան ավելի են այս խոսքերը վերաբերում ամբողջ աշխարհում ապրող հեթանոս ազգերին: Եթե հրեաները, որոնք ունեին Աստծոն օրենքը և վկայությունները, բացարձակապես գործ էին առաքինությունից և արժանիքներից, որքան ավելի խավարած և խստաշիրտ են հեթանոսները: Հրեաների ձախողումը բացառում է թե՛ իրենց, թե՛ ամբողջ աշխարհի պարծանքը⁵: Այսպիսով, բոլորս պետք է կանգնենք փակված բերանով՝ լսելով մեր դատապիհորը.

«Արդար չկա, մեկն էլ չկա:

Չկա իմացող,

Չկա Աստծոն խնդրող,

Ամենը խոտորվեցին,

Միասին անպիտան եղան.

Չկա բարություն անող, մինչև մեկն էլ չկա» (Հոռմ. 3.10-12):

Եթե Աստված չի գտնում ոչ մի պատճառ մեզանում, որպեսզի փրկի մեզ, ինչո՞ւ է Նա անում դա: Մենք գտնում ենք պատասխանը հետևյալ հատվածում. «Ոչ թե ձեզ համար եմ անում Ես... այլ Իմ սուրբ անվան համար», և կրկին. «Եվ Ես սրբեցի Իմ սուրբ մեծ անունը... Եվ ազգերը պիտի գիտենան, որ Ես եմ Տերը»: Աստված վճռել է փրկել մի ժողովրդի ազգերի միջից՝ իր համար, և Նա վճռել է անել դա իր փառքի համար, հանուն իր մեծ անվան և հանուն իր գովասանքի, որպեսզի բոլորն իմանան, որ միայն Ինքն է Աստված: Աստված հայտնում է Երեմիա մարգարեկի միջոցով.

«Եվ պիտի մաքրեմ նրանց իրենց անօրինություններից, որ մեղանչեցին Ինձ դեմ, և պիտի ներեմ նրանց բոլոր անօրինությունները, որով մեղանչեցին Ինձ դեմ, և որով Ինձ դեմ ապստամբեցին: Եվ նա պիտի լինի Ինձ համար ուրախության անոն, փառք և պարծանք՝ երկրի բոլոր ազգերի համար, որոնք կլսեն այն բոլոր բարիքների մասին, որ Ես կանեմ նրանց համար: Եվ նրանք պիտի վախենան և դրդան այն բոլոր բարիքների և խաղաղության համար, որ Ես կանեմ» (Երեմիա 33.8,9):

4. Հոռմեացիների 2.24

5. Հոռմեացիների 3.19

Այստեղ Աստված հատակ ցոյց է տալիս Իր ժողովրդին փրկելու դրդապատճառը. նրանց հանդեպ ցուցաբերած բարության շնորհիվ Նա կստանա Իր համար փառք, գովասանք և երկյուղածությոն նրանցից, ովքեր կլսեն այդ մասին:

Կարևոր է նշել, որ Աստծո ձգուումն Իր փառքի հանդեպ մի թեմա է, որը ներկայացվում է աստվածային հայտնության ընթացքում: Աստվածաշունչը ստվորեցնում է, որ տիեզերքի արարումը, մարդու անկումը, Խարայելի ժողովուրդը, Քրիստոսի խաչը, Եկեղեցին և ազգերի դատաստանն ունեն մեկ մեծ և վերջնական նպատակ՝ Աստծո փառքը: Այլ կերպ ասած, Աստված անում է այն, ինչ անում է, որպեսզի լիարժեք կերպով Իրեն հայտնի Իր արարչագործությանը, և որպեսզի արարչագործությունն արժեսորի, երկրպագի և վայելի Իրեն՝ որպես Աստծո: Եկեղեցու պատմության ամենից ակնառու աստվածաբաններից մի քանիսը պատրաստակամորեն ընդունում են Եզեկիել 36.22,23-ի նման մեկնությունը: Չարլզ Հոջը գրում է. «Մարդիկ վաղուց են ձգուում գոհացուցիչ պատասխան գտնել հետևյալ հարցին. «Ինչո՞ւ Աստված ստեղծեց այս աշխարհը: Ո՞ր նպատակի համար է այն նախատեսված...»: Այս հարցի պատասխանը գտնելու միակ գոհացուցիչ միջոցը Սուրբ գրքին դիմելն է: Դրանում պարզուց ուսուցանվում է, որ Աստծո փառքը կամ Նրա կատարելությունների դրսորումը Նրա բոլոր գործերի վերջնական նպատակն է»⁶: Զննաթան Էրվարդոսը գրում է. «Այսպիսով, մենք տեսնում ենք Աստծո գործերի մեծագույն նպատակը, որն այնքան բազմապիսի կերպով արտահայտված է Սուրբ գրքում. այս նպատակը ՄԵԿՆ է, և այս մեկ նպատակն ամենից պատշաճ և սպառիչ կերպով կոչվում է «ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԸ»»⁷:

Աստծո ձգուումն Իր փառքի հանդեպ Սուրբ գրքի պարզ և միանշանակ ուսմունք է, սակայն շատերը, իսկ երբեմն՝ նոյնիսկ անկեղծ քրիստոնյաները, հարցնում են, թե արդյոք ճիշտ է, որ Աստված գործի հանուն Իր փառքի: Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է հաշվի առնենք, թե ով է Աստված: Համաձայն Աստվածաշնչի՝ Նա աւսահմանորեն ավելի մեծ է, քան Իր ամբողջ արարչագործությունը՝ միասին: Այդ իսկ պատճառով, ոչ միայն ճիշտ է, այլև անհրաժեշտ է, որ Նա գրադեցնի բարձրագույն դիրքը և դարձնի Իր փառքն Իր բոլոր գործերի մեծագույն պատճառը կամ զիսավոր նպատակը: Նա իրավացիորեն պետք է գրադեցնի կենտրոնա-

6. Չարլզ Հոջ. «Համակարգված աստվածաբանություն», Էրվարդ Ն. Գրոսի խմբ., (Գրենլ. Ռեֆիդիոն, «Baker», 1988թ.), հու.1, էջեն 565, 567:

7. Զննաթան Էրվարդոս. «Դիեկրուսիս այն նպատակի մասին, որի համար Աստված ստեղծել է այս աշխարհը՝ Զննաթան Էրվարդոսի աշխատություններում». (Էղինրուրդ, «Banner of Truth», 1974թ.), հու. 1, էջ 119:

կան դիրքը և ամեն ինչ այնպես անի, որ Իր փառքը (այսինքն՝ Իր ամբողջական էությունը) հայտնի լինի բոլորին, որպեսզի Նա փառավորվի (այսինքն՝ ստանա գնահատանք և երկրպագություն) ամեն ինչից առավել: Աստծոն համար նման գերազանցությունից խուսափելը կնշանակեր ժխտել, որ Ինքն Աստված է: Աստծուց բացի ցանկացած անձնավորության համար նման գերազանցության ձգտելը կլիներ կրապաչտության ծանրագույն տեսակը: Կրկին, այս պնդմանը համաձայն են թե՛ աստվածաբանները, թե՛ քարոզիչները: Ա. Ա. Հոջը գրում է. «Քանի որ Աստված անսահմանորեն ավելի մեծ արժեք ունի, քան բոլոր ստեղծվածների համագումարը, դրանից հետևում է, որ Նրա գերազանցության դրսերում... մեծագույն և ամենից արժանի նպատակն է, որը կարող է լինել»⁸: Չարլզ Սփերչենը գրում է. «Աստված պետք է ունենա բարձրագույն դրդապատճառը, և չի կարող լինել ավելի բարձր դրդապատճառ, քան Նրա փառքը»⁹:

Երկրորդ ճշմարտությունը, որը մենք պետք է հասկանանք, այն է, որ Աստված չի փնտրում Իր փառքը՝ Իր ստեղծածների մեծագույն բարիքից առանձին: Իրականում, մեծագույն բարիքը, որն Աստված կարող է անել Իր ստեղծածներին, և մեծագույն բարությունը, որը Նա երբեւ կարող է ցուցաբերել նրանց, Իրեն փառավորելն է, այսինքն՝ ուղղորդել և կատարել ամեն ինչ այնպես, որ Իր ստեղծածներին հայտնի Իր ամբողջական էությունը: Եթե Աստված ունի անսահման արժեք, շրեղություն և գեղեցկություն, նշանակում է՝ ամենից թանկարժեք, շրեղ և գեղեցիկ պարզելը, որը Նա կարող է տալ Իր ստեղծածներին, Իր մասին հայտնությունն է: Հաշվի առնելով այս թանկ ճշմարտությունը՝ Լուիս Բերկինֆը գրում է. «Ձգտելով ինքնարտահայտման՝ Իր անվան փառքի համար Աստված չանարգեց այլոց բարեկեցությունը և մեծագույն բարիքը, այլ նպաստեց դրան... Այսպիսով, Աստծո գերագույն նպատակն արարչագործության մեջ՝ Իր փառքի դրսերումը, ընդգրկում է որպես ստորադաս նպատակ, Իր ստեղծածների երջանկությունը և փրկությունը, և նրանց շնորհակալությամբ ու պաշտամունքով լի սրտերից փառաբանություն ընդունելը»¹⁰:

Մենք իմացանք, որ Աստված փառավորում է Իրեն՝ ուղղորդելով և կատարելով ամեն ինչ այնպես, որ հայտնի Իր ստեղծածներին Իր ամբողջական էությունը: Սա հատկապես ճշմարիտ է Քրիստոսի

8. Ա. Ա. Հոջ. «Աստվածաբանության ուրվագծերը» (Եղինքուրգ, «Banner of Truth», 1972թ.), էջ 245:

9. Չ. Սփերչեն. ««Մետրոպոլիտեն Թերերներ»-ի ամրինք. ընդգրկում է քառորդական և վերանայված բարողներ», (Փաստենա, Տեխսա, «Pilgrim Publications», 1969-1980թթ.) հու. 10, էջ 304:

10. Լուիս Բերկինֆ, «Համակարգված աստվածաբանություն» (Վերտապ. Եղինքուրգ, «Banner of Truth», 1998թ.), էջեր 136-137:

խաչի և դրա վիշոցով կատարված փրկության վերաբերյալ: Այս մեկ իրողությամբ Աստծո բոլոր հատկանիշները հայտնվում են առավելագույն կերպով, որպեսզի և հրեշտակները, և փրկվածները առավելագույնս արժնորեն, երկրպագեն և վայելեն Աստծուն: Բնչո՞ւ Աստված տվեց իր Որդոն՝ անօրեն մարդկանց փրկելու համար: Մի՞ փնտրեք պատճառն անկում ապրած մարդկության մեջ, որը կորցրել է իր արժեքը և զրկվել իր արժանիքներից: Նայե՛ք Աստծոն: Նա կատարել է փրկության մեծ աշխատանքը՝ հանուն իր անվան և իր փառքի գովասանքի: Եթե սա մտահոգիչ է թվում, մենք պետք է հասկանանք, որ եթե Աստված չգործեր հանուն իրեն, Նա չէր ունենա հանուն մեզ գործելու ոչ մի պատճառ:

Այս ճշմարտությունը չպետք է պարզապես երկյուղածություն սերշնչի մեզանում. այն նաև ունի ակնառու գործնական հետևանքներ, հատկապես՝ մեր փրկության համար: Այն ցոյց է տալիս, թե ինչո՞ւ Աստված երբեք չի ձախողվում փրկության աշխատանքի մեջ, որը Նա սկսել է հավատացյալի կյանքում: Նա, Ով սկսել է մեզանում այս բարի գործը, անպայման ավարտին կհասցնի, քանի որ դրանից է կախված Նրա հեղինակությունը¹¹: Փրկությունն Աստծո գործն է և, հավանաբար, Նրա մեծագույն ծեռքբերումը: Զախողումն այս մեկ բանում կմթագնեցնի Նրա փառքը: Այս ճշմարտությունը հրաշալի կերպով պատկերվում է մի պատմության մեջ, որում Իսրայելն ապստամբեց Աստծո դեմ, իսկ Մովսեսը բարեխոսեց նրանց համար:

Լրտեսների գեկույցից հետո, երբ Իսրայելցիները հրաժարվեցին մուտք գործել Խոստման երկիր, Աստված սպառնաց լիովին բնաջինց անել նրանց: Մովսեսը, բախսվելով Աստծո դատաստանի վտանգին, բարեխոսեց՝ օգտագործելով հետևյալ փաստարկը.

«Եվ եթե այս ժողովրդին մեկ մարդու պես մեռցնելու լինեն, Քո համբավը լսող ազգերը կխոսեն՝ ասելով. «Տերը չկարողացավ տանել նրանց այն երդումն խոստացած երկիրը, դրա համար անսպատի մեջ մեռցեց նրանց»: Եվ հիմա թող իմ Տիրոջ կարողությունը մեծանա... Աղաջնիւմ եմ, ների՞ն այս ժողովրդին՝ Քո մեծ ողորմության համեմատ» (Թվոց 14.15-19):

Մովսեսի փաստարկը բխում է Աստծո փառքի հանդեպ ձգտումից, և նա փայլուն տրամաբանություն ունի: Եթե Աստված լիովին մերժեր Իր ժողովրդին ու չհասցներ Խոստման երկիր, ազգերը կվերագրեին այդ ձախողումը Նրա անկարողությանը: Նոյն կերպով, Աստված չի թողնի Իր փրկության աշխատանքն առանձին հավատացյալի կյանքում, այլ Նա, Ով սկսեց այս բարի գործը, կկատարի մինչև վերջին

11. Փիլիպեցիների 1.6

օրը¹²: Աստծո հարատևությունը և անսասան նվիրումն Իր ժողովրդի փրկությանը ունի մեկ նպատակ՝ Իր փառքը:

«Եվ ազգերը պիտի գիտենան, որ Ես եմ Տերը» (Եղեկ. 36.23):

«Եվ նա պիտի լինի Ինձ համար ուրախության անուն, փառք և պարծանք՝ երկրի բոլոր ազգերի համար, որոնք կլսեն այն բոլոր բարիքների մասին, որ Ես կանեմ նրանց համար: Եվ նրանք պիտի վսինան և դողլան այն բոլոր բարիքների և խաղաղության համար, որ Ես կանեմ» (Երեմիա 33.9):

«Որովհետև արեգակի ելքից մինչև նրա մուտքը մեծ է Իմ անունը ազգերի մեջ» (Մատարիա 1.11):

12. Փիլիպեցիների 1.6

ԳԼՈՒԽ ՅՈԹ



Փրկության Հեղինակը

«Եվ ձեզ պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեզ բոլոր երկրներից և ձեզ բերեմ ձեր հողը: Եվ ձեզ վրա մաքոր չուր պիտի սրսկեմ, և մաքոր պիտի լինեք. ձեր բոլոր աղծավյուններից ու ձեր բոլոր կուրքերից պիտի մաքրեմ ձեզ: Եվ Ես ձեզ նոր սիրու պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմսից քարեղեն սիրուր և ձեզ մարմնեղեն սիրու պիտի տամ: Եվ Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և դրանք կատարեք: Եվ բնակվեք այն երկրում, որ տվել եմ ձեր հայրերին, և Իմ ժողովուրդը լինեք, և Ես ձեր Աստվածը լինեմ:»

— Եզեկիել 36.24-28

Մենք դիտարկեցինք այն աստվածային դրդապատճառը, որով Աստված հետամուտ է լինում անօրեն մարդկանց փրկությանը: Այժմ մենք կդիտարկենք այն աշխատանքը, որը տեղի է ունենում դարձի ժամանակ առանձին հավատացյալի կանքում: Եզեկիել 36.24-28-ն ամենից գեղեցիկ և ազդեցիկ հինկտակարանյան մարգարեռթյուններից մեկն է Նոր ուխտի մասին, որը պետք է իրականացվեր եկող Մեսիայի կողմից՝ Նրա փրկարար աշխատանքի միջոցով: Այն վերածնման և դարձի վարդապետությունների ամենապարզ նկարագրություններից մեկն է Աստվածաշնչում:

Այն հավատացյալների համար, որոնք հասկանում են այս հատվածի բովանդակությունը, այն երկակի նպատակ ունի: Առաջինը՝ այն ներկայացնում է մի չափանիշ, որով մենք կարող ենք գնահատել Քրիստոսի հանդեպ մեր հավատքի դավանանքի վավերական լինելը և աստվածաշնչյան հավաստիացում ստանալ: Այս հատվածը սովորեցնում է մեզ, որ ճշմարիտ դարձն Աստծո գերբնական աշխատանքի արդյունքն է, որի միջոցով մարդու սիրուր կամ էությունը փոխվում է, և Նա սկսում է արձագանքել Աստծո կամքին: Այս պիտով, ճշմարտապես դարձի եկած մարդու նշաններն են Աստծո սրբացման շարունակական աշխատանքը և հարաճուն հնագան-

դուրյունը Նրա կամքին: Երկրորդը՝ այս հատվածն ուրախության, սփոփանքի և միսիթարության անսպառ աղբյուր է: Հավատացյալի ուխտագնացության մեջ առաջընթացը հաճախ դանդաղ է տեղի ունենում և խափանվում է բազմաթիվ ետքնթացներով ու շեղումներով: Նա մտածում է, թե արդյո՞ք ինքը երբեք առաջխաղացում կունենա կամ կիաղթահարի այն մեղքերը, որոնք պաշարում են իրեն և խոչընդոտում են իր ընթացքը¹: Այս հատվածը հավաստիացնում է յուրաքանչյուր հավատացյալին, որ Նա, ով սկսել է այս բարի գործը, ավարտին կիացնի այն: Նա կմաքրի մեզ բոլոր պղծություններից և կուրքերից և այսպես կանի, որ Իր օրենքների մեջ վարվենք²:

Առաջին մեծ ճշմարտությունը, որը կիրարկենք այս հատվածից, այն է, որ Աստված մեր փրկության և՛ Հեղինակն է, և՛ Կատարողը, և որ մարդու փրկությունը՝ անհատապես, և եկեղեցունը՝ հավաքականորեն, Աստծո աշխատանքն է: Նա սկսում է այն, հետևում է, որ շարունակական լինի, և հասցնում է վերջնական ավարտին Հիսոս Քրիստոսի օրը: Աստծո գերիշխանությունը փայլուն կերպով ցուցադրվում է այս հատվածում ոչ թե որպես ծեծված արտահայտություն, այլ՝ որպես հավատացյալի հոյսի հիմքը և նրա գորության աղբյուրը: Աստված խոսում է անսխալական համոզվածությամբ: Սա ալմահայտ է մեր հատվածում գտնվող հետևյալ արտահայտություններից: Մենք պետք է ուշադրություն դարձնենք առաջին դեմքով օգտագործվող «Ես» դերանվանը (գործող անձն Աստված է), որին հետևում է անպայմանական խոսություն (որը Նա չի ձախողի).

«(Ես) ձեզ պիտի առնեմ ազգերի միջից»:

«(Ես պիտի) ժողովեմ ձեզ ամեն երկներից»:

«(Ես պիտի) ձեզ բերեմ ձեր հողը»:

«(Ես) ձեզ վրա մաքուր ջուր պիտի սրսկեմ»:

«(Ես) պիտի մաքրեմ ձեզձեր բոլոր պղծություններից ու բոլոր կուտքերից»:

«Ես ձեզ նոր սիրու պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ»:

«(Ես) վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրուը և ձեզ մարմնեղն սիրու պիտի տամ»:

«(Ես) Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ»:

«(Ես) պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք»:

Այս հայտարարությունների մեջ չկա նոյնիսկ մի փոքր կասկած կամ անորոշություն: Աստված բարձրածայն չի մտորում և ո՛չ էլ թոյլ է տալիս մեզ լսել Իր հոյսերը կամ երազանքները: Նա չի խոսում այն մասին, թե ինչ կաներ, եթե մենք համագործակցեինք Իր հետ: Փոխարենը, Նա խոսում է որպես այնպիսի անձնավորություն, ով «ա-

1. Երայեցիների 12.1

2. Փիլիպեցիների 1.6

մեն ինչ, որ կամենում է, անում է» և «ամեն բան հաջողում է Իր կամքի խորհուրդների պես» (Սաղմ. 115.3, Եփես. 1.11): Նոյնպես, ուշադրություն դարձրեք, որ Աստված ոչ միայն ասում է մեզ, թե ինչ է հնքն անելու յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում, այլև երաշխավորում է Իր աշխատանքի արդյունքը.

«(Դուք) մաքուր պիտի լինեք»:

«(Դուք պիտի) Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և դրանք կատարեք»:

«(Դուք պիտի) բնակվեք այն երկրում, որ տվել եմ ձեր հայրերին»:

«(Դուք պիտի) Իմ ժողովուրդը լինեք, և Ես ձեր Աստվածը լինեմ»:

Ահա և Աստծո գորությունը Իր եկեղեցու փրկության և յուրաքանչյուր անդամի դարձի գալու մեջ: Առանց բացառության՝ Նա վերստեղծում է նրանց, ում կանչում է, մաքրում է նրանց, ում վերստեղծում է, ներբնակվում է նրանցում, ում մաքրում է, և նոյնպես դրդում է նրանց, ում մեջ ներբնակվում է, վարվել իր օրենքների մեջ և ջանահրաբար պահել Իր դատաստանները: Ահա և փրկության ոսկե շղթան՝ նման այն շղթային, որը Պողոս առաքյալը նկարագրեց Հռոմի եկեղեցուն ուղղված իր նամակում³: Ինչպես Պողոսը, մենք կարող ենք բացականել: «Ապա ինչ ասենք այս բաների համար. Եթե Աստված մեր կողմն է, ով է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31):

Նա, Ով սկսեց այս բարի գործը մեզանում, անձամբ կավարտի այն: Այս պնդումը չի հերքում մարդու պատասխանատվությունը փրկության մեջ կամ քրիստոնյայի մեծ պայքարը մեղքի դեմ: Այս պնդումը չի ժխտում, որ Քրիստոսին կերպարանվելու ճանապարհին հաղթանակների հետ մեկտեղ լինելու են նաև մեծ կորուստներ: Այնուամենայնիվ, այն հավաստիացնում է մեզ, որ Աստված վճռել է ժողովուրդ պատրաստել Իր համար, և Նա կիրագործի դա Իր գորությամբ: Նրանց, որոնց Նա կանչում է, կգան Իր մոտ, և Իր մոտ եկողներից ոչ ոք չի կորսվի⁴: Նրանք արդարանում են Քրիստոսի արյամբ և վերածնվում, սրբացվում և առաջնորդվում են Սուրբ Հոգու գորությամբ⁵: Թեեն յուրաքանչյուրը կարող է աճ ունենալ տարբեր արագությամբ կամ չափով, և կարող է թվալ, թե ոմանք թռչում են

3. Հռոմեացիների 8.29,30-ը հաճախ անվանում են «Փրկության ոսկե շղթա», քանի որ այն հստակորեն ներկայացնում է հավատացյալի կյանքում կատարվող Աստծո փրկարար աշխատանքի բոյոր կողմերը՝ ընտրությունը, նախասահմանությունը, արդարացնումը, սրբացնումը (նկատիրվող) և փառավորումը. «Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ: Եվ որոնց առաջուց սահմանեց, նրանց կանչեց էլ, և որոնց կանչեց, նրանց արդարացրեց էլ, և որոնց արդարացրեց, սրբան փառավոր էլ արեց»:

4. Հովհաննես 6.37,39, 18.9

5. Հովհաննես 3.3-8, Հռոմեացիների 5.9, 6.11, 8.14, Ա Կորնթացիների 6.11, Գալատացիների 5.18, Տիթոս 3.5

դեպի հասունությունը, իսկ մյուսները հազիվ սողում են, բոլորը, այնուամենայնիվ, գնում են առաջ, և վեր՝ դեպի Աստծո կոչումը Քրիստոսում, և խոսքով ու գործովցույց են տալիս, որ իրենք Նրա ժողովուրդն են, և Նա դարձել է իրենց Աստված⁶:

Ըսթերցողը պետք է ընկալի այս կարևոր ճշմարտությունները դարձի վերաբերյալ այնպես, ինչպես որ Եօթեկիել 36.24-28-ը հայտնում է դրանք: Ասիրածեշտ է շարունակաբար հայտարարել, որ ճշմարիտ աստվածաշնչյան դարձը իր պտուղըկտաամեն հավատացյալի կյանքում, թեև այդ պտուղը կարող է տարբեր չափերի լինել. ումանք կրերեն հարյուրապատիկ պտուղ, մյուսները՝ վաթսունապատիկ, ուրիշները՝ երեսնապատիկ⁷: Այսուամենայնիվ, բոլորը պտուղ կրերեն և կճանաչվեն իրենց պտղով⁸: Այս իրողությունն առաջին հերթին չի բխում նրանց նվիրուսից, այլ դարձի բնույթի արդյունքն է: Այն մարդիկ, որոնք արդարացվել են միայն հավատքով, դարձել են Աստծո «ստեղծվածը... Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք» (Եփես. 2.10):

6. Փիլիպեցիների 3.14

7. Մատթեոս 13.23

8. Մատթեոս 7.16-20

ԳԼՈՒԽ ՈՒԹ



Առանձնացում և մաքրում

«Եվ ձեզ պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեզ ամեն երկներից և ձեզ բերեմ ձեր հողը: Եվ ձեզ վրա մաքրոր չուր պիտի սրսկեմ, և մաքրոր պիտի լինեք. ձեր բոլոր աղծովյուններից ու ձեր բոլոր կոտրերից պիտի մաքրեմ ձեզ»:

— Եգեկիել 36.24,25

Այսօր, երբ թվում է՝ քրիստոնեության աճն Արևմուտքում ուղիղ համեմատական է մարմնավորության աճին եկեղեցում, կարևոր է հարցնել, թե ինչպիսին են աստվածաշնչյան դարձի իրական բնույթը և էական հատկանիշները: Ինչ է կատարվում, երբ մարդը վերստին ծնվում է, և ինչպես է արտահայտվում վերստին ծնունդը: Մենք կարող ենք շնորհակալ լինել, որ մեզ համար և, ըսդհանուր առմամբ, ամբողջ եկեղեցու համար այս հարցերն ազդեցիկ և պատկերավոր պատասխանվում են Եգեկիել 36.22-28-ում գրված նորկտակարանյան խոստման միջոցով:

Հաջորդ գլուխներում կդիտարկենք ճշմարիտ դարձի էական հատկանիշներից մի քանիսը, պարտադիր չէ՝ ժամանակագրական հաջորդականությամբ, որով դրանք ի հայտ են գալիս դարձի մեջ, բայց այնպես, ինչպես որ դրանք ներկայացված են այս հատվածում: Այս ուսումնասիրության ընթացքում մենք լավ կանենք, եթե հարց տանք, թե որքանո՞վ են այս դարձի նշաններն իրական մեր կյանքում: Պողոս առաքյալի խոսքերով, մենք պետք է քննենք մեզ՝ տեսնելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք!:

ԱՌԱՋՆԱՑՄԱՆ ԱՍՏՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ճշմարիտ դարձի առաջին նկատելի արդյունքներից մենքը սուրբգրային առանձնացումն է այս աշխարհից՝ աստիճանական բաժանությունը կամ հեռացումն այն ամենից, ինչը տհաճ է Աստծոն և հա-

1. Բ Կորնթացիների 13.5

կառակ է Նրա կամքին: Նման առանձնացումն ինքնանպատակ չէ, այլ առաջին էական քայլն է դեպի ավելի մեծ նպատակը՝ Աստծոն մոտենալը և Նրա նպատակներին ու կամքին նվիրվելը: Այս ճշմարտությունը և խոստացված է, և գեղեցիկ կերպով պատկերված է Եզեկիել 36.24-ում: Եզեկիել մարգարեկի միջոցով Աստված հայտնում է Իր ժողովրդին: «Եվ ձեզ պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեզ ամեն երկրներից և ձեզ բերեմ ձեր հողը»:

Այս նորկտակարանյան խոստումը վերջնականորեն չի կատարվում Իսրայելի ժողովրդի վերադարձով Բարելոնի գերությունից, այլ մատնանշում է այն օրը, երբ Աստված կանչելու է Իր ժողովրդին՝ բոլոր ազգերի մեջ ապրող հրեաներին և հեթանոսներին, և հավաքելու է Նրանց Իր սիրելի Որդու դրոշը Ներքո: Ավելին՝ վերածնման և սրբացման աշխատանքի միջոցով Աստված խոստանում է ոչ միայն դուրս բերել Իր ժողովրդին հեթանոս ազգերից, այլև հեռացնել հեթանոս ազգերի ազդեցությունն Իր ժողովրդից: Նա մոտենելու է Նրանց Իրեն: Նա լինելու է Նրանց Աստված, և Նրանք լինելու են Իր ժողովուրդը:

Երբ կարդում ենք Եզեկիել 36.24,25-ը, առաջին ճշմարտությունը, որը գրավում է մեր ուշադրությունը, այն է, որ Աստված է այն շահագրգոված կողմը կամ նախաձեռնողը, Ով առանձնացնում է Իր ժողովրդին իրենց շրջապատող աշխարհիկությունից: Թեև աստվածաշնչյան առանձնացումը ենթադրում է մարդկային պատասխանատվություն, այն առաջին հերթին Աստծո աշխատանքն է, որը Նա նոյնպես երաշխավորում է: Աստված կհեռացնի Իր ժողովրդին այս անկում ապրած աշխարհի բարոյական ապականությունից և կրելի Նրանց Իր մոտ: Քրիստոնյան աստիճանաբար կուսի առանձնանալ այս ներկա աշխարհի գաղափարներից և հաճոյքներից, և կուլորի վարվել Աստծո հետ և կհարի Նրա պատվիրաններին: Այս հատվածը և շատ այլ հատվածներ Սուրբ գրքում երաշխավորում են այս ընթացքը: Աստված մեր հավատքի Հեղինակը և Կատարողն է²: Մենք Աստծո ձեռքի գործն ենք³: Նա, Ով սկսել է այս բարի գործը մեզանում, ավարտին կհասցնի⁴:

Արևմտյան քրիստոնեության վերջին մի քանի տասնամյակի ընթացքում, թվում է, բազմաթիվ մեծ և թանկ ճշմարտություններ անտեսվել կամ, առնվազն, մոռացվել են: Նման ճշմարտություններից մեկն այն է, որ Եկեղեցին և ամեն հավատացյալ Աստծո սեփականությունն է: Նա հավակնում է Նրանց ամբողջովին՝ Նրանց ստեղծե-

2. Երրայեցիների 12.2

3. Եփեսացիների 2.10

4. Փիլիպեցիների 1.6

լու և փրկագնելու պատճառով: Նա և՛ ստեղծել է նրանց, և՛ մեծ գնով գնել է⁵: Այսպես որ, նրանք իրենն են, և Նա կարող է անել նրանց հետ այն, ինչ կամենում է: Հին ուխտում Աստված ասաց Խրայելին: «Դուք Ինձ համար սեփական ժողովուրդ կլինեք բոլոր ազգերից, որովհետև Իմն է ամբողջ երկիրը»⁶: Նոր ուխտում Աստված ասում է նոյնը Եկեղեցուն: Մենք Աստծո սեփականությունն ենք՝ Նրա փառքի գովասանքի համար, որպեսզի ազդարարենք Նրա գերազանցությունները տիեզերքով մեկ⁷: Սա էր պատճառը, որ Քրիստոսը մահացավ, որպեսզի փրկեր մեզ ամեն անօրինությունից և մաքրեր ու Իր համար դարձներ մի ժողովուրդ, որոնք կդառնային Իր սեփականությունը, և նախանձավոր կլինեին բարի գործերի համար⁸:

Միթե Աստված իրավունք չունի, նրանց հետո, ովքեր պատկանում են Իրեն, վարվել Իրեն համեմ կերպով: Եթե մենք պատկանում ենք Նրան և՛ ստեղծվելու, և՛ փրկագնվելու երկակի հավակնությամբ, մի՞թե Նա իրավունք չունի առանձնացնել մեզ մարդկության բազմությունից և դարձնել Իրենը՝ Իր բարեհաճության և Իր հավիտենական նպատակների համար: Աստվածաշնչի պատասխանն այս հարցին հնչել և միանշանակ «այո» է:

Գոյություն ունի ևս մեկ հավասարապես անտեսված ճշմարտություն. Աստված նախանձու Աստված է, Ով չի պատրաստվում կիսել Իր ժողովրդի սերը ոչ ոքի հետ⁹: Այս պատճառով է, որ Նա պատվիրեց Խրայելին չերկրագել և չծառայել օտար աստվածների¹⁰: Նոյն պատճառով, Նա զգուշացնում է Եկեղեցուն և յուրաքանչյուր հավատացյալի, որ ընկերությունն այս աշխարհի հետ թշնամություն է Իր հետ, քանի որ այն Հոգին, Ում Նա բնակեցրել է մեզանում, նախանձով փափագում է մեզ¹¹: Թեև վարդապետությունն աստվածային նախանձի կամ խանդի մասին մեծապես զրպարտվել է, այն Աստվածաշնչի ամենագեղեցիկ ճշմարտություններից մեկն է: Այն ապացուցում է Աստծո անփոփոխ սերն Իր ժողովրդի հանդեպ: Մենք կկասկածեինք այնպիսի ամուսնու սիրո վրա, որը պատրաստ է կիսել իր կնոջը ցանկացած տղամարդու հետ: Միթե մենք պետք է դրանից պակաս համարենք Աստծո սերը: Ավելին՝ Աստծո սիրո մեծագույն դրսնորումն Իր ժողովրդի հանդեպ՝ նրանց հեռու պահելն է այլ սերերից, որոնք չեն կարող ճշմարտապես գոհացնել նրանց, այլ միայն մեծ վլաս կիացնեն:

5. ԱԿորնթացիների 6.20, 7.23, Կողոսացիների 1.16

6. Ելից 19.5

7. Եփեսացիների 1.14, ԱՊետրոս 2.9

8. Տիոնս 2.14

9. Ելից 34.14

10. Ելից 20.4, 5

11. Հակոբոս 4.5

Այս երկու ճշմարտությունների՝ սեփականության իրավունքի և նախանձու սիրո հիման վրա, Աստված գործում է բոլոր հավատացյալների կյանքում, որպեսզի բաժանի նրանց այս անկում ապրած աշխարհի բոլոր կեղծ սերերից և բարոյական ապականությունից, և մոտեցնում է մեզ Իրեն՝ որպես թանկագին և վերափոխված սեփականություն։ Այս ցանկալի նպատակին հասնելու համար Նա չի խնայի ոչինչ, կօգտագործի բոլոր միջոցները և կսպառի բոլոր ոեսուրսները։ Ինչպես Աստված հայտնեց Երեմիա մարգարեի միջոցով, Նա կիացնի Իր ժողովրդին այն նպատակին, որը որոշել է նրանց համար, և Նա կանի դա «(Իր) ամբողջ սրտով և (Իր) ամբողջ Անձով» (Երեմ. 32.41)։ Այլ կերպ ասած, Նա կօգտագործի Իր աստվածության լիությունը՝ այս աշխատանքի ավարտն ապահովելու համար։

Մինչև շարունակելը, մենք պետք է մի հարց տանք. «Արդյո՞ք մեր կյանքում տեղի է ունենում Աստծո առանձնացման աշխատանքը։ Արդյո՞ք մեր դարձի պահից մինչև ներկա պահը մենք տեսնում ենք, թե ինչպես է Աստծոն նախախնամությունը գործում մեր կյանքում՝ հեռացնելով մեզ այս աշխարհի բարոյական ապականությունից և ձգելով դեպի Իրեն։» Սա յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի վկայությունն է և ժառանգությունը։ Եթե այս սրբացման աշխատանքը տեղի չի ունենում կամ տեսանելի չէ մեր կյանքում, նշանակում է՝ մենք պետք է քննենք մեզ, և նոյնիսկ փորձենք՝ տեսնելու համար, թե արդյո՞ք մենք հավատքի մեջ ենք¹²։

ՄԱԶՐՄԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բարոյական անմաքրությունը բոլոր անկում ապրած մարդկանց ընդհանուր հատկանիշն է։ Սաղմոսերգուն հայտարարեց, որ բոլորս խոտորվել ենք, և միասին անպիտան ենք դարձել՝ այն աստիճան, որ չկա նոյնիսկ մեկ բարի գործող մարդ¹³։ Եսայի մարգարեն աղաղակեց, որ բոլորս պիղծ բանի պես ենք դարձել, և մեր բոլոր արդար գործերը նման են կելտոտ հանդերձի¹⁴։ Նահապետ Հոբը եզրակացրեց, որ մարդկային բարոյական կելտն այնքան տարածված է, որ ոչ մի մարդկային միջոց չի կարող մաքրել այն¹⁵։

Աստվածաշնչի վկայությունը մարդկության դեմ չի շողոքորթում, այլ խոսում է ճշմարտությունը։ Մարդկային պատմության յուրաքանչյուր էջ վկայում է այն փաստի մասին, որ անկում ապրած մարդը ծայրահեղ արատավորված է, բարոյապես ապականված է և չի

12. Բ Կորնեացիների 13.5

13. Սաղմոս 14.3

14. Եսայի 64.6

15. Հոբ 9.29-31

կարող ուղղվել որևէ մարդկային մշամտությամբ: Այսպես որ, Աստծո խոստումը Եգեկիել 36.24,25-ում այն մասին, որ Նա կմաքրի մեզ մեր բոլոր պղծություններից և կուրքերից, պետք է մեծ ուրախության պատճառ լինի:

Քրիստոնեական կրոնը տարբերվում է բոլոր կրոններից այն բանով, որ այն պահանջում է մաքրություն, սակայն բացառում է, որ մարդկային ջանքերը կարող են հասնել դրան: Ի տարբերություն այլ կրոնների՝ այն միանշանակ հայտարարում է, որ սեփական անձը բարոյական գերությունից ազատելու կամ բարոյական կեղլից մաքրելու ցանկացած մարդկային փորձ անօգուտ է: Քրիստոնեությունն առաջարկում է անօգնական մարդուն այն Աստծոն, Ով միակն է, որ կարող է և՛ ազատել, և՛ մաքրել: Ինչպես որ Նա ազդարարեց Եսայի մարգարեի միջոցով. «Ես՝ Ես եմ Տերը, և Ինձնից ջոկ Փրկիչ չկա» (Եսայի 43.11):

Եգեկիել 36.24,25-ում Աստված խոստանում է մաքրման աստվածային աշխատանք կատարել նրանց կյանքում, ում առանձնացնում է Իր համար: Սուրբ գրքից պարզ է դառնում, որ այս մաքրումը և՛ դիրքային է, և՛ փորձառական: Այսինքն, այն Վերաբերում է և՛ արդարացմանը, և՛ սրբացմանը: Այս երկուսը գոյց շնորհներ են և այդ պատճառով, անբաժան են իրարից: Նրանց, որոնց Աստված արդարացնում է, նոյնպես և սրբացնում է:

Համաձայն Սուրբ գրքի՝ մարդուն արդարանում է կամ ճիշտ դիրք է ստանում Աստծո առջև այն պահին, երբ դադարում է հուսալ ինքն իրեն և հավատում է Քրիստոսի քավշարար աշխատանքին: Այդ պահին նրա դիրքն Աստծո առջև այնպիսին է, ինչպիսին հայտարարում է սաղմոսերգուն. նրա անօրինությունները ներվել են, նրա մեղքերը ծածկվել են, և նրա անօրինությունն այլևս չի համարվում նրան¹⁶: Օգտագործելով մեկ այլ փոխաբերություն՝ այնպես է, ասես նրա մեղքերը սրբվել են զոպայով, և նա լվացվել է՝ ծյունից էլ սպիտակ դառնալով¹⁷: Նոյնիսկ սուրբ և ամենազետ Աստծո խորաթափանց աչքերը չեն տեսնում ոչ մի արատ և բիծ նրանում¹⁸:

Հավատքով արդարացման վարդապետությունն ամենից վեհ և միխթարական վարդապետություններից է Աստվածաշնչում, բայց այն երբեք միայնակ չի հայտնվում քրիստոնյայի կյանքում: Շարունակական սրբացման աշխատանքը, որը նոյնապիսի գեղեցկություն ունեցող շնորհ է, մշտապես ուղեկցում է այն: Արդարացման միջոցով հավատացյալը մեկընդմիշտ մաքուր է հոչակվում Աստծո գա-

16. Սաղմու 32.1,2, Հռոմեացիների 4.7,8

17. Սաղմու 51.7

18. Երգ Երգոց 4.7

իի առջև՝ ազատվելով կուապաշտության և բարոյական պղծության հանցանքից և դատապարտությունից: Դրա հետ մեկտեղ, նրան է վերագրվում Քրիստոսի արդարությունը, ինչի արդյունքում նա ինքը դառնում է Աստծո արդարությունը¹⁹: Այնուամենայնիվ, սրբացման շարունակական աշխատանքի միջոցով է, որ արդարացված հավատացյալն աստիճանաբար վերափոխվում է՝ նմանվելով Քրիստոսին: Աստվածային նախախնամությամբ, ինչպես նաև Հոգու և Խոսքի ծառայությամբ, Աստված շարունակաբար մաքրում է հավատացյալին այն պղծությունից, որը կառչում է նրանից, և կործանում է նրա կյանքում գոյություն ունեցող կուտքերը, որոնք վիճարկում են Աստծո գերիշխանությունը և մրցակցում են նրա նվիրման համար: Աստծո արդարացման աշխատանքը մեր կյանքում ավարտված է: Այն ոչնչով չի կարելի լրացնել և դրան ոչինչ չի կարելի ավելացնել: Այնուամենայնիվ, Աստծո սրբացման աշխատանքը մեր կյանքում ընթացիկ և շարունակական է, և այն չի ավարտվի, մինչև որ մենք չկանգնենք Նրա առջև՝ փառքի մեջ: Կրկին, արդարացումը և սրբացումը մշտապես միասին են: Արդարացումը հնարավոր է դարձնում սրբացումը, իսկ սրբացումը վկայում է, որ մենք արդարացվել ենք:

Նման Եղեկիել 36.23-28-ի մյուս բոլոր խոստումներին, Աստծո սրբացման աշխատանքը հավատացյալի կյանքում ընդամենը անհաստատ հոյսի վրա հիմնված ցանկություն չէ: Այն լիովին հավատի իրողություն է՝ հիմնված անփոփոխ աստվածային վճռի վրա: Թեև քրիստոնեական կյանքում լինելու են բազմաթիվ պայքարներ, թեև քրիստոնյան վերապրելու է բազմաթիվ կորուստներ և հաղթանակներ, Աստված, Ով բարի գործ է սկսել նրա կյանքում, ավարտին կհասցնի այս²⁰: Այս մեղքերը, որոնք պաշարում են նրան, աստիճանաբար կիեռուացվեն, և այն կուտքերը, որոնք հրապուրում են նրան՝ ճգտելով հեռացնել Աստծուց, կկործանվեն: Թեև հավատացյան այս կյանքում երբեք չի լինի առանց մեղքի այս կյանքում, նա առաջընթաց կունենա աստվածային իրողությունների մեջ և աճ կունենա՝ կերպարանվելով Հիսուս Քրիստոսի պատկերին: Աստված կհաստատի Իր գերիշխանությունը և ամեն ինչ հավատացյալի կյանքում կուղղորդի այս նպատակի համար, և Նա կանի դա հանուն Իր անվան փառքի և Իր ժողովրդի բարօրության: Նա կհետևի, որ դա կատարվի: Այս ճշմարտությունը կարելի է պատկերել հետևյալ օրինակով:

Պատկերացրեք մի գյուղացի տղայի, որը մեծացել է Ամերիկայի Միջին Արևմուտքում: Ամեն օր, առավոտից երեկո, նա աշխատում և խաղում է գոմերում և դաշտերի հերկած ակոսներում: Ամեն երե-

19. Բ Կորնթացիների 5.21

20. Փիլիպեցիների 1.6

կո նա տուն է վերադառնում՝ ոտքից գլուխ կեղտի մեջ: Ամեն անգամ, մինչև տուն մտնելը, նրա մայրը դիմավիրում է նրան տան մուտքի մոտ՝ մի պարզ ցուցումով. «Դի՛ք քո հագուստը լվացքի մեջ և անմիշապես բաղնիք գնա»:

Թեև այդ տղան մշտապես հնագանդվում է, մեկ անգամ նա անմտորեն որոշում է ինքնակամություն դրսեսրել և ասում է իր մորը, որ չի պատրաստվում լրջանալ: Նա շատ հոգնած է և, իրականում, այնքան էլ կեղտոտ չէ: Նրա մայրն արագորեն լուծում է այդ խնդիրը՝ գործադրելով ծնողի օրինական իշխանությունը: Նա մտնում է նրա սենյակ, նայում է նրա աչքերի մեջ և հայտարարում. «Երիտասարդ, դու հենց հիմա կլողանաս»:

Իմանալով, որ չի կարող հակառակվել ճշմարիտ ծնողական իշխանությանը՝ նա փնթիվալով բաղնիք է գնում, բացում է ծորակը և մի քանի կաթիլ ջուր է քսում այն հատվածներին, որտեղ կեղտն ամենից երևացողն է: Նա արագորեն չորացնում է իրեն սրբիչով և ծածկում է մնացած կեղտն իր ննջազգեասոռվ: Նրա ծրագիրը գործում է, քանի դեռ մայրը բաղնիք չի մտնում: Այդ կինը տեսնում է իր մաքուր սպիտակ սրբիչների ողբերգական վիճակը և որդու ոտքերի տակի կեղտոտված սալիկները: Նա բարձրացնում է որդու կզակը՝ ի ցոյց հանելով այն կեղտը, որը դեռ հավաքված է նրա վզի շուրջը: Նա բարձրացնում է նրա ննջազգեասորի թևքերը և ոտքերը՝ բացահայտելով այն կեղտը, որը մնացել է նրա արմունկների և ծնկների վրա: Ի պատասխան, նա կրկին գործադրում է իր ծնողական իշխանությունը և հրամայում է նրան հանվել և մեկ անգամ էլ մտնել լոգարան: Ի սարսափ այդ տղայի՝ նա նոր ջուր է լցնում լոգարանի մեջ և փրփրեցնում է օճառը՝ ասելով. «Դու իմ երեխան եսև պիտի մսպուր լինես»:

Այդ տղայի մայրն անցկացրել էր իր հասուն կյանքի մեծ մասը գյուղական տարածքում: Թեև նա իսկական տիկին էր, նա կարող էր գերազանցել այդտեղի տղամարդկանցից շատերին, և հաճախ այդպես էլ անում էր: Ջի հեծածնա խոշոր եղջերավիր անասուններ էր հովվում, հարդ էր քարշ տալիս, և նրա ձեռքերը, աշխատող տղամարդու ձեռքերի պես, պատված էին կոշտուկներով: Երբ նա լողացնում էր իր երեխաներին, նրանք մաքրվում էին: Թվում էր՝ նա ոչ միայն մաքրում էր նրանց կեղտը, այլև նրանցից հեռացնում էր մաշկի առնվազն մեկ շերտ: Երբ այդ կինը լողացնում էր իր երեխաներին, նրանք մաքուր էին դառնում:

Ուշադրություն դարձեք, որ այն դեպքերում, երբ այդ տղայի մայրը միջամտում էր՝ լողացնելով իր երեխային, ոչ ոք չէր դիտարկի դա գերիշխանության և ազատ կամքի տեսանկյունից: Ոչ ոք չէր մեղադրի այդ մորն իր իշխանությունը չարաշահելու և իր երեխայի ազատ

կամքը ոտնահարելու մեջ: Նա պարզապես գործադրում էր իր ծնողական իրավունքն այդ երեխայի հանդեպ, որը հաճախ անփոյթ և անհոգ էր, երբեմն էլ՝ դժկամ և անհնազանդ:

Մենք պետք է տասք հետևյալ հարցը. արդյո՞ք Արևմուտքի Ավետարանական շարժումը եզրակացրել է, որ Աստվածիրավունք չունի գործադրել Իր իշխանությունը ոչ ոքի, նոյնիսկ՝ Իր օավակների հանդեպ: Մի՞թե երկրային մայրը պետք է ավելի մեծ իշխանություն ունենա իր երեխաների կյանքում, քան Աստված՝ Իր օավակների: Ինչ-որ մեկը դիպուկ նշել է, որ ամերիկյան քրիստոնեության Աստված միակ ամենակարող և գերիշխան Տերն է, ով չունի որևէ բան անելու իշխանություն, քանի դեռ Իրեն թույլ չեն տվել: Նա կարող է փրկել Իր օավակներին դժոխքից, բայց իրավունք չունի որևէ բան պահանջել նրանցից, որպեսզի չխախտի մեր օրերի աղավաղված պատկերացումը մարդկային ինքնավարության մասին:

Պատկերացրեք, թե որքան անհերթեք է և նոյնիսկ անպարկեշտ է հետևյալ օրինակը: Դատարանը քննում է մի քանի փոքր երեխաներ ունեցող հոր գործը, քանի որ երեխաները թերանված են և չխնամված տեսք ունեն: Ի պաշտպանություն, նա հավաստիացնում է դատարանին, որ ամեն օր պատրաստում է իր երեխաների ճաշերը, հետևում է, որ նրանք լոգանք ընդունեն և մաքուր հագուստ է դնում նրանց համար: Սակայն, չնայած իր ջանափրությանը, իր երեխաները պարզապես հրաժարվում են հնազանդվել: Թեև նա ճշմարտապես ցանկանում է լավագույնը իր երեխաների համար, նրա անփոփոխ հարգանքը նրանց ազատության հանդեպ՝ թույլ չի տալիս նրան միջամտել: Դատարանը չի ծափահարի այդ հորը մարդկային ինքնավարությունը պատվելու պատճառով, այլ կիանդիմանի նրան այդ անտրամաբանական վարքի համար, որը հանգեցրել է նման բարձիթողի վիճակի:

Ակողիոյի պատճառով տեղի ունեցող ավտովթարները տագնապալի չափերով ավելացել են և, որպես արձագանք, ստեղծվել է լրատվական քարոզարշավ՝ հետևյալ կարգախոսով. «Ընկերները թույլ չեն տալիս իրենց ընկերներին հարբած վիճակում մեքենա վարել»: Գաղափարն այն է, որ իսկական ընկերը կանի այն ամենը, ինչ իր ուժերի մեջ է, որպեսզի թույլ չտա իր ընկերոջը դեկին նստել ալկոհոլի ազդեցության տակ: Ապշեցուցիչ է, որ ոչ ոք չի վիճարկում նման միջամտությունը՝ փորձելով պաշտպանել մարդկային ինքնավարությունը: Ոչ ոք նոյնիսկ չի մտածում այդ մասին: Այն, որ մարդը կարող է թույլ տալ իր ընկերոջը մեքենա վարել հարբած վիճակում պատվելով նրա ազատ կամքը, չի դիտարկվում որպես առաքինի վարք, այլ՝ անբարո, և նոյնիսկ՝ հանցավոր:

Մերօրյա ընդունված հայացքներն Աստծո գործերի և մարդկային ինքնավարության մասին ոչ միայն հակառակ են առողջ դատողությանը, այլև օտար են Աստվածաշնչին: Առաջինը՝ Աստվածաշնչի Աստված այն Տերն է, Ով «ամեն բան հաջողութ է իր կամքի խորհուրդների պես» (Եփես. 1.11): Անկասկած, Նա, Ով «ոչնչացնում է հեթանոսների խորհուրդները» և «փչացնում է ժողովրդների մտածմունքները», իրավոնք է վերապահել դեկավարել իր ժողովրդին՝ համաձայն Իր նպատակների և նրանց բարօրության (տես Սաղմ. 33.10): Ահա թե ինչո՞ւ է Առակաց գորքի հեղինակը միանշանակ հայտարարում. «Մարդու սիրտը խորհում է իր ճանապարհը, բայց նրա քայլերը Տերն է հաստատում» և «Շատ դիտավորություններ կան մարդու սրտում, բայց Տիրոջ խորհուրդը կմսա հաստատ» (16.9, 19.21): Մենք չպետք է տագնապենք և սկսենք պաշտպանել մեր ենթադրյալ ինքնավարությունն այն պատճառով, որ Աստված ծրագիր ունի ամեն հավատացյալի կյանքում և կվիրարի իր գորությունը՝ այն կատարելու համար: Փոխարենը, այս ճշմարտությունը պետք է մշիթարության և հոյսի մեծ առքյուր լինի, ինչպես որ բացատրում է Երեմիա մարգարեն. «Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը, - խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հոյսը» (Երեմիա 29.11):

Որպես իր ժողովրդի Ստեղծող և Փրկիչ՝ Աստված իրավոնք ունի գործելու նրանց կյանքում համաձայն Իր բարեհաճության: Եսայի մարգարեն ասում է, որ այդ իրավունքին ընդդիմանալը կամ դրա հակառակը պնդելը հավասար է ապստամբության և մեր Ստեղծողի հետ վիճելուն²¹: Դա նշանակում է գլխիվայր շրջել ամեն ինչ, փոխել ստեղծված կարգը և կավը բրուտին հավասար համարել²²: Փոխարենը համառորեն պաշտպանենք մեր՝ ստեղծվածների ենթադրյալ իրավունքները, մենք պետք է շեշտադրենք Աստծո՝ մեր Արարչի և Փրկչի իրավունքը պատվելը: Մենք լավ կանենք, եթե հետևենք Եսայու հնագանդությանը՝ Աստծո ողբրմած նախախնամության առջև, և աղաղակենք.

«Եվ իիմա, ով Տեր,
Դու ես մեր Հայրը.
Մենք կավս ենք, և Դու՝ մեր Բրուտը,
Եվ քո ձեռքի գործն ենք մենք ամենք» (Եսայի 64.8):

Այս քրիստոնյաները, ովքեր երկար ժամանակ Աստծո հետ են, կնկարագրեն քրիստոնեական կյանքը որպես Աստծո հարատևող հավատարմության դրսերություն, որը ոչ միայն փրկում է մեղքի դատապարտությունից, այլև սրբացնում է իրենց: Ետ նայելով իր կյան-

21. Եսայի 45.9

22. Եսայի 29.16

քին՝ քրիստոնյան տեսնում է Աստծոն նախախնամության անթիվ դրսնորություններ, որոնք արդյունավետ կերպով լիովին մաքրել են իրեն պղծությունից և կրապաշտությունից:

Արդյո՞ք այս Աստված, Ով մաքրում և ոչնչացնում է կրապաշտությունը, ներկա է մեր կյանքում: Ետ նայերով մեր ուխտագնացության տարիներին՝ արդյո՞ք մենք տեսնում ենք, թե ինչպես է Աստված վառում մեր միջի խարամը՝ հալեցնողի կրակի պես, և մաքրում մեզ՝ թափիչի օճառի պես²³: Արդյո՞ք մենք տեսնում ենք, թե ինչպես է Նա վայր գցում մեր կուտքերը, ինչպես որ վայր գցեց Դագոնին և կտորկտոր արեց նրա իսկ տաճարում²⁴: Եթե մենք ճշմարիտ քրիստոնյան ենք, Աստծոն հավակնությունը և Նրա սրբացման աշխատանքը մեր կյանքում ակնհայտ կլինեն ոչ միայն մեզ համար, այլև՝ մեզ շրջապատող մարդկանց: Մեր քրիստոնեական կյանքի տարիների ընթացքում մենք կառաջադիմենք Քրիստոսի իրողությունների մեջ և Էլ ավելի կերպարանվենք Նրա պատկերով: Պատճառն այն է, որ մենք Նրա ստեղծածն ենք, և Նա, Ով սկսել է այս բարի գործը մեզանում, ավարտին կհասցնի այն²⁵: Ինչպես որ Նա խոստացավ. «Ձեզ վրա մաքուր ջուր պիտի սրսկեմ, և մաքուր պիտի լինեք. ձեր բոլոր պղծություններից ու ձեր բոլոր կուտքերից պիտի մաքրեմ ձեզ»:

ԱՍՎԱԾԱՅԻՆ ԽՐԱՏԸ

Մենք չենք կարող ավարտել ուսումնասիրությունն առանձնացման և մաքրման աստվածային աշխատանքի մասին՝ առանց դիտարկելու այն գլխավոր միջոցներից մեկը, որն Աստված օգտագործում է, որպեսզի հասնի այս հրաշալի նպատակներին՝ աստվածային խրատը: Հավատացյալի Աստված և սիրող է, և՝ իմաստուն: Նա համարում է հավիտենությունն անսահմանորեն ավելի կարևոր, քան բոլոր ժամանակավոր հաճույքները՝ միասին: Նա հստակ տեսնում է, որ մեծագոյն բարիքն իր զավակների համար Քրիստոսի պատկերին կերպարանվելն է²⁶: Նշանակում է՝ Նա կօգտագործի ցանկացած արդար միջոց, որն անհրաժեշտ է, որպեսզի վերափոխի Իր ժողովրդին՝ վարդապետությունը, հանդիմանությունը, ուղղելը և արդարությամբ խրատելը²⁷: Երբեմն այդ խրատը թեթև է, իսկ երբեմն՝ խիստ այնուամենայնիվ, Աստված խրատում է սիրով և մտապահում է հավատացյալի մեծագոյն բարօրությունը: Նա չափազանց շատ է

23. Սնդարձիա 3.2

24. Ա Թռագավորաց 5.2-7

25. Եփեսացիների 2.10, Փիլիպեցիների 1.6

26. Հռոմեացիների 8.28,29

27. Բ Տիմոթեոս 3.16

սիրում մեզ, որ թույլ տա մնալ այնպիսին, ինչպիսին մենք հիմա ենք: Նրա նախախնամությունը նոյնիսկ թույլ կտա մեզ բախվել ժամանակավոր չարչարանքներից ամենամեծերին, եթե դրանց միջոցով մենք կարող ենք գերազանց հավիտենական փառքի ավելի մնած կշիռ ունենալ²⁸:

Նման աստվածային խրատի մի արտասովոր դեպք տեղի ունեցավ Հակոբ նահապետի կյանքում: Տերը, Մադաքիայի միջոցով ուղղելով Իր խոսքը կամակոր Խրայելին, հայտարարեց հետևյալը. «Ես Հակոբին եմ սիրել, իսկ Եսավին ատել եմ» (Մադաքիա 1.2,3): Այս հատվածի համատեքստում Խրայելի ժողովուրդը քաղաքական և տնտեսական զրկանքներ էր կրում: Աստված ազատել էր նրանց գերությունից և վերադարձրել էր իրենց երկիրը: Այսուամենայնիվ, թվում էր՝ աստվածային խրատը դեռ չէր ավարտվել, և խոստացված բարգավաճումը չէր երևում: Խրայելը հոգնել էր և սկսել էր կասկածել Աստծո ուխտի սիրո մեջ: Նրանց կասկածը փարատելու համար, Մադաքիա մարգարեն հանձնարարեց նրանց համեմատել այն, թե ինչպես Աստված վարվեց Հակոբի (Խրայելի) և նրա եղբայր Եսավի (Եղոմի) հետ: Այն, Խրայելը խստորեն խրատվեց Աստծո ձեռքից, բայց դա ժողովորդի փրկության համար էր: Թեև Եղոմն անվսաս մնաց և, թվում է, նոյնիսկ բարգավաճեց Խրայելի կորստի պատճառով, դա նշան էր, որ Աստված մերժել էր նրանց, և որ նրանք լիովին կործանվելու էին: Այլ կերպ ասած՝ Մադաքիա մարգարեն հիշեցնում էր կասկածամիտ Խրայելին, որ շտկումը և խրատն Աստծո ուխտի սիրո դրսորումներ են, ոչ թե այն մերժելու նշաններ: Առակաց գրքի իմաստությունը վճռականորեն սատարում է նրա տրամաբանությունը.

«Որդյանս, մի՛ անարգիր Տիրոջ խրատը
Եվ Նրա հանդիմանությունից մի՛ ձանձրացիր:
Որովհետև Տերը, որին որ սիրում է, հանդիմանում է,
և ինչպես մեկ հայր, որ իր որդուն սիրում է» (3.11,12):

Մենք տեսնում ենք, թե ինչպես է այս հատվածի ճշմարտությունը վերաբերում քրիստոնյաներին, երբ ուսումնասիրում ենք Հակոբի և Եսավի կյանքերը և այն, թե ինչպես Աստված վարվեց նրանց հետ: Ինչպես Աստված ցոյց տվեց Իր սերը Հակոբի հանդեպ, և Իր ատելությունը կամ բարկությունը Եսավի հանդեպ: Հակոբի դեպքում, Աստված առանձնացրեց նրան, պատասխանատվություն ստանձնեց նրա կյանքի համար և սկսեց աշխատել նրա հետ՝ Իր կամքին համապատասխանեցնելու համար: Եսավի դեպքում, Աստված որևէ

28. Բ Կորնթացիների 4.17

կերպով չզայթեց՝ նրան՝ թողնելով իր հայեցողությանը և տալով գործողությունների ազատություն, ինչպիսին որ ուներ ամբողջ հեթանոսական աշխարհը:

Ուստիմասիրելով Եսավի կյանքը՝ հայտնաբերում ենք, որ Աստված կատարեց ամեն մի խոստում, որը Նա երբէսէ տվել էր Իսահակին նրա վերաբերյալ: Նա կրտրեց իր վրայից իր եղբայր Հակոբի լուծը և այնքան բարգավաճեց, որ չուներ Հակոբի աջակցության կամ օրինության կարիքը²⁹: Այսուամենայիսիվ, մենք տեսնում ենք, որ Աստված մերժեց Եսավին կամ բարկացավ նրա վրա այն առումով, որ չմիջամտեց նրա կյանքում: Նրա կյանքում չկար առանձնացման և սրբացման աշխատանք: Նա չմիջամտեց Եսավի գործերի մեջ՝ թույլ տալով նրան դառնալ անաստված մարդու մարմնավիրում³⁰:

Ի հակադրություն, ուստիմասիրելով Հակոբի կյանքը՝ մենք հայտնաբերում ենք, որ Աստված գործում էր ամեն քայլափոխիսին՝ սովորեցնելով, առաջնորդելով և խրատելով զարմանալի մասրակրկիտությամբ և նոյնիսկ խասությամբ: Իրականում, այդ խրատն այնքան ծանր էր Հակոբի համար, որ երբ վերադարձավ Խոստման երկիր, նա կաղում էր³¹:

Աստվածային նպասախնամությունը թողել էր իր հետքը Հակոբի մարմնի վրա, բայց նաև վերափոխել էր նրան՝ խարեբայից դարձնելով կոտրված, բայց հնազանդ որդի: Աստված այսպես է վարփում իր բոլոր օրինական զավակների հետ. «Որովհետև Տերն իր սիրածին խրատում է. Նա ծեծում է ամեն որդուն, որ ընդունում է» (Եբր. 12.6):

Այս հատվածից մենք սովորում ենք, որ ճշմարիտ դարձի մեծագոյն ապացույցներից մեկն աստվածային խրատն է, որը սրբության է տանում: Աստված սիրով նվիրվել է իր զավակներից յուրաքանչյուրին: Նա կիրախուսի, կսովորեցնի և կիրատի իրենց իսկ օգտի համար, որպեսզի նրանք ընդունեն իր սրբությունը³²: Նա կվերցնի նրանց բոլոր ազգերից, կիավաքի բոլոր երկրներից և կրերի այն երկիրը և այն կյանքի մեջ, որ պատրաստել է նրանց համար:

Հաճախ քրիստոնյաները բեռ են համարում այն, ինչը պետք է արժնորեն որպես օրինություն: Երբեմն ինչ-որ հավատացյալ տրտնջում է, որ այլ մարդիկ ազատորեն խախտում են Աստծո օրենքը՝ առանց նոյնիսկ անշան հետևանքի, իսկ իրենք խրատվում են ամենաաննշան օրինազանցության համար: Դա պետք է առաջացնի ոչ թե տրտունք, այլ՝ ցնծություն և փառարանություն: Դա վերստին ծնունդի մեծ ապացույց է: Դա որդիության ապացույց է. «Եթե

29. Ծննդոց 27.40, 33.9

30. Եբրայեցիների 12.16

31. Ծննդոց 32.31

32. Եբրայեցիների 12.10

խրատին համբերեք, Աստված ձեզ հետկվարվի՝ ինչպես որդիների հետ, որովհետև ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում: Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ եք և ոչ՝ որդիներ» (Եբր. 12.7,8):

Պատկերացրեք մի տղայի, որը դպրոց է գնում առաջին օրը ամառային արձակուրդից հետո: Նրա մայրը հազգնում է նրան իր նոր դպրոցական հագուստը և զգուշացնում է, որ տոն զա անմիջապես դասերի ավարտից հետո: Նա չպետք է մնա իր ընկերների հետ կամ խաղալու գնա առվակի մոտ: Այսուամենայնիվ, տան ճանապարհին գայթակղությունը հաղթահարում է ողջամտությունը, և նա հետևում է իր ընկերներին՝ առվակի մոտ գնալով: Նա չի նկատում, թե ինչպես է մեկ բռնկն մեկ ժամ դառնում, իսկ իր մաքուր հագուստը վերածվում կենցուու ցնցուիների: Հասկանալով իր սխալը և իրեն սպասվող հետևանքները՝ նա տոն է վերադառնում ևս երկու անհնագանդ ընկերների հետ: Եթե նրա մայրը տեսնում է նրան և ասում է, թե ինչպես է խրատելու, նա արագորեն մատնացոյց է անում մյուս տղաներին՝ հարցնելով, թե որքանո՞վ է արդար պատժել իրեն և անպատճ թողնել մյուսներին: Նրա մայրը կարճ և դիպուկ պատասխան է տալիս. «Նրանք իմ երեխաները չեն և չեն գտնվում իմ հսկողության ներք: Իսկ դու իմ երեխան ես, և իմ խրատը վերաբերելու է միայն քեզ»:

Այս պատմության իմաստը հետևյալն է. խրատը վկայում է ծնող-երեխա հարաբերության մասին, ոչ թե ժխտում է այն: Մոր հարաբերությունն իր երեխայի հետ, և նրա սերն ու մտահոգությունն նրա բարեկեցության համար դրդեցինն շտկել, և խրատել նրան: Կրկին, Եբրայեցիների թղթի հեղինակը պարզորեն օգտագործում է այս փաստարկը. «Նաև մենք, մեր մարմնավոր հայրերը խրատող ունենալով, նրանցից ամաչում էինք. չէ՞ որ առավել ևս պիտի հնագանդվենք հոգիների Հորը և ապրենք: Որովհետև սրանք մի քիչ ժամանակ իրենց հաճ երևացածի պես խրատում էին, բայց Նա՝ օգտի համար, որ Նրա սրբությունն ընդունենք» (12.9,10):

Ինչ-որ իմաստով, Աստված տիրում է իր զավակներից յուրաքանչյուրի կյանքում: Նա աշխատում է նրանց հետ և առաջնորդում է այնպես, որ կատարի իր նպատակը՝ սրբացնելով նրանց: Թեև դա միշտ չէ, որ ակնհայտ է, Նա շարունակ աշխատում է, սովորեցնում է, ուղղում է, պատժում է և խրատում է: Նրա սերն Իր ժողովրդի հանդեպ դրդում է Նրան աննահանջ գործել նրանց կյանքում: Նա ցած չի դնի իր մուրճը և բրիչը, քանի դեռ չի ավարտել իր աշխատանքը:

Աստված այնպիսին չէ, ինչպիսին ոմանք համարում են Նրան. Նա անբարեխիղ և անտարբեր հայր չէ: Նա թույլ չի տա իր զավակներին առանց հսկողության վազվել այս աշխարհի փողոցնե-

բով: Նա վարձու հովիվ չէ, ով անտարբերությամբ է վերաբերվում իր հոտի դեգերումներին: Այսուամենայնիվ, ովքեր հավատում են, որ քրիստոնյան կյանքի բոլոր օրերում կարող է ապրել շարունակական և անփոփոխ մարմնավոր վիճակում, ծանր մեղադրանք են ներկայացնում: Աստծո շնորհքը մեծարելու փոխարեն, նրանք մեղանչելու առիթ են դարձնում այն³³: Աստծո համբերությունը մեծարելու փոխարեն, նրանք պատկերում են Նրան՝ որպես անշահագրզիո և անկարող հոր: Ավետարանը մեծարելու փոխարեն, նրանք ասում են, որ այն անզոր է: Այս մեծ սխալի արդյունքն անհավատ աշխարհի հայհոյությունն է: Ինչպես Պողոս առաքյան էգրում. «Աստծո անոնը ձեր պատճառով հայհոյվում է հեթանոսների մեջ» (Հռոմ. 2.24):

Ավարտելով այս գլուխը՝ մսում է մի քանի հարց յուրաքանչյուրիս համար, ով դավանում է Հիսուսի անոնը: Մենք ունենք ապացոյց, որ աստվածային նախախնամությունը գործում է մեր կյանքում՝ և առանձնացնելով մեզ այս աշխարհից, և՝ մոտեցնելով մեզ Աստծուն: Երբ ես ենք նայում մեր կյանքին՝ սկսած մեր դարձի պահից, գտնո՞ւմ ենք ապացոյցներ Աստծո առանձնացնող և սրբացնող աշխատանքի մասին: Արդյո՞ք մենք դառնում ենք հատուկ մարդիկ, ովքեր պատկանում են միայն Նրան: Երբ մենք վարվում ենք Նրա հետ, զգո՞ւմ ենք Նրա հաճությունը: Երբ հեռանում ենք Նրանից, մենք վերապրո՞ւմ ենք Նրա շտկումը: Արդյո՞ք Նրա սիրող հայրական խրատը ներկա է մեր կյանքում: Մենք պետք է տանք այս հարցերը: Աստծո սրբացման աշխատանքի առկայությունը մեր կյանքում պետք է մեծ վստահություն հաղորդի մեզ: Դրա բացակայությունը պետք է մեծ մտահոգության պատճառ դառնա:

33. Հռոմա 4

ԳԼՈՒԽ ԻՆԸ



Նոր սիրտ

«Եվ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ
և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրտը և ձեզ մարմնեղեն սիրտ պիտի տամ»:

— Եզեկիել 36.26

Եզեկիել 36.26-ում մենք գտնում ենք վերածնման վարդապետության ամենից պատկերավոր և խրատական նկարագրություններից մեկը: Ասչափ կարևոր է, որ մենք ոչ միայն հասկանաք այս աստվածաշնչան վարդապետությունը, այլև ընկալենք դրա մեծ կարևորությունը: Չափազանցություն չէ ասելը, որ մեր պատկերացումը վերատին ծնունդի մասին կորոշի թե՛ մեր տեսանկյունը դարձի վերաբերյալ, թե՛ մեր մեթոդաբանությունը ավետարանչության մեջ:

Վերածնման վարդապետությունը վերաբերում է Աստծո Հոգու գերբնական աշխատանքին, որի միջոցով հոգլուրապես մահացած մեղավորը կենդանանում է, նրա ծայրաստիճան արատավորված բնույթունը վերափոխվում է, և նա կարողություն է ստանում արձագանքելու Ավետարանի կանչին՝ ապաշխարությամբ և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: «Վեստմինստերի հավատքի դավանանքը» և «1689 թվականի Լոնդոնի Մկրտական հավատքի դավանանքը» նկարագրում են Հոգու վերածնող աշխատանքը որպես «միտքը հոգլուրապես և փրկարար կերպով լուսավորող՝ հասկանալու համար աստվածային իրողությունները, քարե սիրտը վերցնող և այս մսեղեն սրտով փոխարինող. կամքը նորոգող... և արդյունավետ կերպով գրավող (մարդկանց) Հիսուս Քրիստոսի մոտ, սակայն այնպես, որ նրանք լիովին ազատորեն են գալիս՝ դատնալով հոժարակամ Նրա շնորհը միջոցով»¹:

«Վերածնում» (կամ «Վերածնունդ») բառը մի լատիներեն բայից է, որը նշանակում է «կրկին ստեղծել»²: Նոր կտակարանի հեղինակներն օգտագործում են բազմաթիվ արտահայտություններ և լայն

1. «Վեստմինստերի հավատքի դավանանք», գլ. 10, «1689 թվականի Լոնդոնի Մկրտական դավանանք», գլ. 10:

2. Լատիներեն «ռեգեներարե»:

տերմինաբանություն՝ այս վարդապետությունը նկարագրելու համար: Հովհաննեսի Ավետարանում Հիսուսը խոսում է վերստին կամ ի վերուստ ծնվելու մասին³: Իր առաջին Նամակում Պետրոս առաքյալն օգտագործում է մի հոնարեն բայ՝ եզակի թվով, որը նշանակում է նորից կամ նորովի ծնվել⁴: Պողոս առաքյալը նկարագրում է վերածնման վարդապետությունը որպես կենդանացում, հարություն մեռելներից և նորոգված կյանքի ընթացք⁵: Հոգու այս աշխատանքն այն աստիճան արմատական և սպառիչ է, որ յուրաքանչյուրը, ով Քրիստոսում է, նրանց համարում էնոր արարած կամ ստեղծված⁶:

Բոլոր այս ճշմարտությունները պատկերավոր նկարագրված են Եգեկիել 36.26-ում: Ըստ այս հին մարգարեի՝ վերածնման վարդապետությունը թափանցում է շատ ավելի խորը, քան մակերեսային բարեփոխումը և վարքի փոփոխությունը, որոնք կամքք վարժեցնելու արդյունքն են: Այն ընդգրկում է գոյաբանական փոփոխություն⁷: Մարդու էությունն իսկ կործանվում և վերատեղծվում է: Քարե սիրտը, որն անկարող է արձագանքել աստվածային ազդակներին, վերափոխվում է՝ դառնալով մսեղեն սիրտ, որը պատրաստ է արձագանքել:

Որպես օրինակ՝ պատկերացրեք, որ կանգնած եք քարե արձանի առջև, որը պատրաստված է մարդու կատարյալ նմանությամբ: Այն ճգրտորեն հիշեցնում է մտքով և կամքով օժտված մարդկային էակի: Այնուամենայնիվ այն քարից է և այդ պատճառով անկենդան է: Մենք կարող ենք հրել այն, ծակել ինչ-որ սուր առարկայով և նոյնիսկ այրել, բայց այն չի արձագանքի: Այն անկյանը քար է և այդ պատճառով անկարող է արձագանքել ցանկացած տեսակի ազդակ-ների: Այնուամենայնիվ, եթե մենք ի գորու լինեինք վերածելու այդ քարը կենդանի մարմնի, մեր ծակծկոցները և հրոցները բոլորովին այլ արդյունք կունենային: Առողջ, կենդանի մարմինը խիստ զգայուն է, և այն կարող է ոչ միայն զգալ, այլև արձագանքել: Առողջ մարմինը զգում է նոյնիսկ ամենաթեթև զեփյուն իր մաշկին և նկատում է նոյնիսկ աննշան հպումը մատի ծայրով: Այն ի գորու է արձագանքել համաձայն իր ստացած ազդակների:

Նմանապես, մեղավորը հոգևորապես մահացած է և անկարող է արձագանքել աստվածային ազդակներին: Այս անկարողությունը չի արդարացնում նրա հանցանքը և չի պակասեցնում նրա պատասխանատվությունն Աստծո առջև, քանի որ այդ անկարողությունը նրա իսկ որոշումն է: Մեղավորը չի կարողանում դրականորեն արձագանքել

3. Հովհաննես 3.3, 6,7, հոնարեն «գեննան անոթեն»:

4. Ա Պետրոս 1.3,23, հոնարեն «անապեննան»:

5. Հռոմեացիների 6.4, Եփեսացիների 2.4,5

6. Բ Կորնթացիների 5.17

7. Այն, ինչը վերաբերում է որևէ անձի, առարկայի կամ երևոյթի էությանը, բնությանը կամ գոյությանը:

Աստծուն, քանի որ չի ցանկանում: Թեև նա ունի և՛ Աստծուն ճանաչելու, և՛ Նրա հայտնված կամքը հասկանալու անհրաժեշտ կարողությունը, նա ճաշում է այն, ինչը, ինչպես ինքը գիտի, ճշմարիտ է⁸: Նրա սերն անարդարության հանդեպ և անկախ լինելու ցանկությունն այն աստիճան են թշնամացնումներան Աստծոն դեմ, որ նա պարզապես չի կարողանում ստիպել իրեն ընդունել Աստծուն կամ հնագանդվել Նրա օրենքին:

Այս խիստ ճշմարտությունը մարդու մասին լավագույնս նկարագրվում է հայրապետ Հռվեսիի և նրա եղբայրների հարաբերություններով: Աստվածաշունչը հայտնում է, որ Հռվեսիի եղբայրները «չէին կարողանում» խաղաղությամբ խոսել նրա հետ, քանի որ «ատեցին նրան» (Ծննդ. 37.4): Այս խոսքում պարզորեն նկարագրվում է բարոյական անկարողության վարդապետությունը: Հռվեսիի եղբայրներն ունեին անհրաժեշտ կարողություն՝ նրա հետ հաղորդակցվելու և նոյնիսկ նրա հետ խաղաղությամբ խոսելու համար: Այսուամենայնիվ, նրանք անկարող էին անել դա՝ նրա հանդեպ ունեցած ատելության պատճառով: Նրանք անկարող էին անել դա, քանի որ չէին ցանկանում, և չէին ցանկանում, քանի որ ատում էին նրան:

Այս ճշմարտությունը նոյնպես կարելի է պատկերել մի քաղաքական բանտարկյալի օրինակով, որն ազատազրկվել է գահին հակառակվելու պատճառով: Պատկերացրեք, որ այդ երկրի թագավորն իր մեծ ողորմությամբ պատվիրում է բացել բանտի դռները և առաջարկում է այդ ապստամբին լիակատար ներում, եթե միայն նա ընդունի իր իշխանության իրավունքը: Այսուամենայնիվ, դրդված բացաձակ ատելությունից, այդ ապստամբը շրիսկացնելով փակում է դռները և հայտարարում, որ ավելի լավ է՝ ինքը փոփ բանտում, քան ծնկի գա այդ թագավորի առջև: Նա ուներ ներման առաջարկը լսելու և հասկանալու կարողություն: Դուները բացվել էին, և ճանապարհը պատրաստված էր: Այսուամենայնիվ, բանտարկյալը չէր կարող անել դա, քանի որ չէր ցանկանում, և նա չէր ցանկանում, քանի որ ատում էր թագավորին:

Ահա թե ինչպիսին է չվերածնված մարդն Աստծոն առջև: Նա չի կարողանում գալ Աստծոն մոտ, քանի որ չի ցանկանում, և չի ցանկանում, քանի որ ատում է սուրբ և գերիշխան Աստծուն: Այսպիսով, նրա սիրությունը կարելի է համեմատել քարի հետ: Այն անլինաք է և անընկալիունակ է Ավետարանի կանչի հանդեպ՝ առանց Հռոմու գերբնական աշխատանքի:

Ումանք ասում են, որ այս աշխարհը դարձի կգար, եթե միայն մենք ավելի հստակ հայտնեինք մարդկանց Հիսուսին: Այսուամենայնիվ, նման մտածելակերպը ցուցադրում է մակերեսային պատկերացում մարդկության բարոյական ապականության, հոգևոր կուրության և Աստծո հանդեպ խորը թշնամանքի մասին: Պատկերացրեք,

8. Հռոմեացիների 1.18–32

որ մենք կարողանայինք բացել վարագույրները և ցոյց տալ Նազով-բեցի Հիսուսին դարձի չեկած մարդկանցով լեցուն մի դահլիճի: Ինչպես նրանք կարձագանքեին:

Առաջինը՝ մենք կրախվեինք հոգևոր կուրության խնդրին: Համաձայն Աստվածաշնչի՝ նրանք չեին ճանաչի Քրիստոսի Ասձի եզակի բնույթը և չեին արժևորի Նրա ուսմունքը: Հայտնվելով՝ Նա չէր ունենա վեհապանծ արտաքին, որի վրա մարմնավոր մարդիկ կսայեին, և որը կգրավեր նրանց դեպի Իրեն⁹: Աստվածաշոնչը հայտարարում է, որ Նրա ուսմունքն անընդունելի կլիներ այդ մարդկանց համար, նրանք չեին հասկանա դրա ճշմարտությունը և կպարսավեին այն որպես հիմարություն¹⁰: Այսուամենայնիվ, նրանք ոչ թե իրենց անփրազեկության զոհն են, այլ դրա պատճառը. ասելով, որ իմաստուն են՝ նրանք հիմարացան¹¹:

Երկրորդը՝ եթե այդ դարձի չեկած մարդկանց հոգևոր կուրությունը հեռացվեր, և նրանք կարողանային տեսնել Քրիստոսին ու ավելի հստակ զանազանեին Նրա ուսմունքը, մենք կրախվեինք իւ ավելի բարդ խնդրի՝ նրանց սրտերի բարոյական ապականությանը և արդարության հանդեպ նրանց թշնամանքին: Աստվածաշոնչը սովորեցնում է, որ մարդիկ ծայրաստիճան ապականված են: Նրանք աստուն են Աստծոն և արհամարհում են Նրա արդար գործերը: Այսպես որ, որքան ավելի մարդիկ զանազանեին Քրիստոսի ճշմարիտ բնույթունը և հասկանային Նրա ուսմունքը, այսքան ավելի կատեին Նրան: Կատարելապես արդար Քրիստոսի ավելի մեծ հայտնությունը անարդար մարդկանց չէր մոտեցնի Նրան, այլ, ընդհակառակը, կվաներ նրանց: Հիսուսն ինքն ասաց. «Եվ սա է դատաստանը, որ լոյսն եկավ աշխարհ, և մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան թե լոյսը, որովհետև նրանց գործերը չար էին: Որովհետև ամեն չար գործող աստուն է լոյսը և չի զալիս դեպի լոյսը, որ Նրա գործերը չհանդիմանվեն» (Հովհաննես 3.19,20):

Որպեսզի դարձի չեկած մարդը ընդունի Քրիստոսին, միայն հոգևոր տեսողություն ստանալը բավական չէ. պետք է փոխվի նրա բնույթունը: Նա պետք է վերափոխվի՝ դառնալով նոր ստեղծված, որը նոր զգացմունքներ ունի: Միայն այդ դեպքում նա կտեսնի Քրիստոսին այնպես, ինչպես որ Նա է, և կսիրի այն Քրիստոսին, ում տեսնում է:

Այն անասելիորեն մեծ փոփոխությունը, որը պետք է կատարվի մարդու ներսում, մինչև որ նա կամենա ընդունել Քրիստոսին, չի կարող տեղի ունենալ հարկադրանքով կամ նրա կամքի գործադր-

9. Եսայի 53.2

10. Ա Կորնթացիների 2.14

11. Հոումեացիների 1.22

մամբ: Անհրաժեշտ է Սուրբ Հռովու գերքնական վերստեղծող աշխատանքը, որը տեղի է ունենում վերածնման ժամանակ: Պատկերացրեք, որ մի միայնակ գայլ հարձակվել է ոչխարների հոտի վրա: Հռովհվերը միասին բռնում են այդ կենդանուն: Այժմ գոյություն ունի խնդրի երեք հնարավոր երկարաժամկետ լուծում: Առաջինը՝ հռվիվմերը կարող են սպանել գայլին և վերջ տալ նրա հարձակումներին: Թեև հռվիվմերը և ոչխարները կշահեն այս տարրերակից, այն գրեթե անօգուտ կլինի գայլի համար: Սա խորհրդանշում է Աստծո դատաստանին ենթակա մարդուն: Երկրորդը՝ հռվիվմերը կարող են վանդակի մեջ պահել գայլին և հսկել մինչև կյանքի ավարտը: Այդ կենդանու վարքը կփոխվի, բայց միայն այն պատճառով, որ նա վանդակի մեջ է: Նա դեռ ոճրագործ է, թեև գտնվում է խղճուկ վիճակում և ետուառաջ է քայլում վանդակի մեջ: Նա չի կարող որանալ իր բնությունը և ոչ էլ ազատվել դրանից: Նա կամենում է սպանել և ուտել: Մսալով առանց հսկողության՝ նա կփախչի իր վանդակից և հնարավորինս մեծ կրտորած կանի ոչխարների մեջ: Սա խորհրդանշում է դարձի չեկած մարդուն, որը գտնվում է կրոնի գերության ներքո: Կրկին, քանի դեռ գայլը վանդակի մեջ է, հռվիվմերը և ոչխարներն օգուտ կատանան դրանից, բայց գայլը շարունակ տանջվելու է ոչխարների հանդեպ ցանկությունից: Երրորդ լուծումը վեր է հռվիվմերի կարողությունից և զրությունից: Այն հետևյալն է. վերափոխել այդ կենդանու բնությունը՝ նրան հափշտակող գայլից դարձնելով իր ոչխար: Երբ փոխվի գայլի բնությունը, կփոխվի նրա վերաբերմունքը և հռվիվմերի, և գառների հանդեպ: Նա կհետևի հռվին և ներդաշնակ կապրի գառների հետ: Սա խորհրդանշում է Սուրբ Հռովու գորությամբ վերածնված մարդուն: Այն, ինչ անհնար է մարդկանց համար, հնարավոր է Աստծո համար¹²:

Չարլզ Սփերջենն օգտագործում էր հետևյալ օրինակը՝ նկարագրելու համար դարձի չեկած մարդկանց ճշմարիտ բնությունը և վերստին ծնունդի զրությունը: Պատկերացրեք, որ մենք ճաշելու երկու տարրերակ ենք առաջարկում խոզին: Մենյակի մի կողմում սեղան ենք պատրաստում, որի վրա դրված են մեր ունեցած լավագույն կերակուրները: Մենյակի մյուս կողմի հատակին մենք թափթփուկներով լի կերակրատաշտ ենք դնում: Դրանից հետո խոզին թույլ ենք տալիս ընտրել իր ցանկալի տարրերակը: Ի զարմանս քաղաքացիների, բայց ոչ՝ զյուղացիների, որոնք գիտեն, թե ինչպիսին են խոզերը, այդ կենդանին վազում է ուղիղ դեպի թափթփուկները՝ առանց նոյնիսկ մի փոքր մտածելու մյուս կողմում գտնվող ճոխ սեղանի մասին: Այսուհետև նա մտցնում է իր գլուխը կերակրատաշտի մեջ և ուտում է ան-

խոհեմ հապճեպությամբ՝ մինչև իր ցանկությունները բավարարելը: Նա որևէ վևաս չի կրում իր կողմից կլանված աղքի պատճառով և բոլորովին չի ամաչում մյուսներից իր վարքի համար: Պատճառն այն է, որ նրա գործերը կատարելապես համապատասխանում են իր բնությանը: Նա անում է ճիշտ այն, ինչ խոզը պետք է անի, և միշտ անելու է:

Այսուամենայնիվ, որպես այլ տարբերակ՝ ենթադրենք, որ մենք ի գորու ենք փոխել այդ խոզի բնությունը և տալ նրան մարդկային բնություն: Ինչպիսի՞ն կլիներ այս գերբնական գոյաքանական փոփոխության արդյունքը: Առաջինը՝ այդ մարդուն զզվելի կրվար այն, ինչ ինքը ցանկանում էր միայն վայրկյաններ առաջ: Նա կավար սուր կերպով զգալ այն գարշելի հոտերը, որոնք նախվինում չեր նկատում: Երկրորդը՝ նա կրաքարացներ իր գլուխն այդ կերակրատաշտից և ամբողջությամբ կփախեր այն պրծությունը, որը մինչ այդ ցանկանում էր: Գոյություն ունեն կերակրություններ, որոնք ախտրժելի են խոզի համար, սակայն մարդկային ստամոքսը պարզապես չի կարող դիմանալ դրանց: Երրորդը՝ նա կիասկանար, որ մյուսները նկատել էին իր վարքը: Նա կերեր մեծագոյն ամոթը և ներողություն կհայցեր բոլորից: Չորրորդը՝ նա երբեք չեր մոռանա իր վերափոխման օրը և չեր դադարի խորշել կերակրատաշտի տեսքից ու թափթափուկների հոտից:

Թեև սա հաճելի մտորում չէ, այս օրինակը նկարագրում է յուրաքանչյուրի դարձը, ով ճշմարտապես ընդունել է Քրիստոսին: Աստվածաշունչը վկայում է, որ բոլորս ծնվել ենք մեղքի մեջ, և մինչև դարձի գալը խմում էինք անօրինությունը ջրի պես¹³: Թեև Աստված պատրաստել էր իր սեղանը մեր առջև և հրավիրել էր մեզ ճաշակելու և տեսնելու, որ Տերը քաղցր է, մենք անուշադրության էինք մատնել Նրա հրավերը¹⁴: Ամբողջ օրը Նա պարզում էր իր ձեռքերը դեպի կամակոր մարդիկ, որոնք գերադասում էին այս աշխարհի կերակրատաշտն Աստծո պատրաստած սեղանից¹⁵: Մենք վագում էինք դեպի մեր բարոյական պղծությունը, ինչպես որ խոզն է վազում դեպի թափթափուկները և ցեխը: Եվ անելով դա՝ մենք վարդում էինք՝ կատարելապես համաձայն մեր ինքնությանը, որը ծայրաստիճան ապականված և բարոյապես արատավորված է: Մենք քարե սրտեր ունեինք և մահացած էինք մեր մեղքերի մեջ: Մենք քայլում էինք այս անկում ապրած աշխարհի ճանապարհով՝ Աստծո գլխավոր թշնամու կամքի համաձայն: Մենք տարվում էինք մեր անկում ապրած բնության կրթերով, հանձնվում էինք մեր մարմնի ցանկություններին և բնությամբ բարկության որդիներ էինք¹⁶:

13. Հոր 15.16, Սաղմոս 51.5

14. Սաղմոս 34.8, Եսայի 55.1,2

15. Եսայի 65.2, Հոռմեացիների 10.21

16. Եփեսացիների 2.1-3

Այսուամենայնիվ, երբ այլս չկար ոչ մի հոյս վերականգնման համար, Աստված միջամտեց և հարություն տվեց մեզ Քրիստոսում, որպեսզի մենք նորոգված կյանք ունենայինք¹⁷: Նա վերցրեց մեր անարձագանք քարից պատրաստած սիրտը և փոխարինեց այն կենդանի մսելին սրտով: Նա փոխեց մեր բնությունը, զգացմոնքները և կամքը: Նա վերստեղծեց մեզ Աստծո պատկերով՝ ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ, և մեր թիմքը փոխվեց. մենք սկսեցինք քաղց ու ծարավ զգալ արդարության հանդեպ¹⁸:

Արյունքում, այժմ մենք ատում ենք այն մեղքը, որը մի ժամանակ սիրում էինք, և սիրում ենք այն արդարությունը, որը մի ժամանակ ստում էինք: Այժմ մենք ամաչում ենք այն ապստամբությունից, որով մի ժամանակ պարծենում էինք, և պարծենում ենք այն Աստծով, որից մի ժամանակ ամաչում էինք¹⁹: Թեև մենք անընկարունակ չենք մարմարական ցանկությունների և պիղծ գայթակղությունների հանդեպ, որոնք ետևում ենք թողել, այժմ մենք գիտենք, որ դրանք սիսալ են: Եթե կրկին խարվենք և հրապուրվենք դրանցով, մենք կզգանք դրանց գարշելի հոտն ու փտած համը և չենք կարողանա երկար հանդուրժել: Մեր բնությունը պահանջում է, որ մենք զգվանքով շրջվենք դրանցից և ամաչելով ապաշխարենք: Մենք նոր ստեղծվածներ ենք՝ նոր զգացմոնքներով, որոնք դրդում են մեզ վերադառնալ Աստծոն:

Որպես ամփոփում՝ այս ճշմարտություններն ուղղում են մեզ անձնական բնոյթի որոշ հարցեր, որոնք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը՝ արյոյք մենք այնպիսի մարդիկ ենք, որոնք ընդամենք Քրիստոսին ընդունելու որոշում են կայացրել, թե՛ մենք նոր ստեղծվածներ ենք: Արյոյք մենք այնպիսի մարդիկ ենք, որոնք պարզապես միացել են քրիստոնեության որոշակի ձևի կամ հաստատության, թե՛ մեր սրտերը փոխվել են: Արյոյք կա որևէ վկայություն, որն ապացուցում է մեր պարծանքը փրկության մասին: Արյոյք մեր զգացմոնքները վերափոխվել են: Արյոյք մենք ավելի արձագանքող ենք դարձել Աստծո Անձին և կամքին: Լավ կլինի, որ իշխենք Պողոս առաքյալի հետևյալ երկու զգուշացումները. «Որովհետև Քրիստոս Հիսուսում ո՞չ թլփառությունը մի բան է, և ո՞չ անթլփառությունը, բայց նոր արարածը» (Գաղատ. 6.15): Որովհետև եթե մեկը Քրիստոսում է, նա նոր արարած է²⁰:

Երկրորդը՝ արյոյք մեր քարոզումը դարձի չելքածներին, կամ՝ մեր ավետարանչական մեթոդաբանությունը համապատասխանում է այն բանին, ինչ մենք գիտենք դարձի գերբնական բնոյթի մասին: Եթե մարդու փրկությունը պարզապես կախված է նրա կամքի կամ զգացմոնքների վրա ազդելուց, այդ դեպքում, կան անթիվ միջոցներ՝ նրան

17. Հոռմեացիների 6.4, Եփեսացիների 2.5

18. Մատթեոս 5.6, Եփեսացիների 4.24

19. Հոռմեացիների 6.21

20. Բ Կորնթացիների 5.17

այդ որոշմանը բերելու համար: Բայց եթե մարդու դարձի գալը պահանջում է Հոգու գերքնական աշխատանք, որը հավասար է տիեզերքի արարմանը և Քրիստոսին մեռելսերից հարություն տալուն, մենք հասկանում ենք, որ համոզելու, հարկադրելու և ազդելու ոչ մի կարողություն բավական չէ մեր բաղդալի արդյունքին հանելու համար: Մենք պետք է մի կողմ դնենք մեր մարմավոր գինանցը՝ պերճախտաբայունը, խելացի փաստարկները և հմտորեն կազմված կոչերը²¹: Մենք պետք է տեսնենք մարդկանց որպես խիստ չոր ոսկորներ, որոնք անկարող են լյանք ստանալ՝ առանց Աստծո անմիջական և անձնական աշխատանքի: Այն ամենում, ինչ մենք անում ենք, պետք է ապավինենք միայն Աստծո գորությանը²²: Մենք պետք է կառուցենք մեր ամբողջ ծառայությունն այն աստվածաշնչյան փաստի վրա, որ Ավետարանն Աստծո գորությունն է՝ փրկության համար, և մենք պետք է քարոզենք այն մեծագոյն վստահությամբ, պարզությամբ և համարձակությամբ²³:

Ամեն անգամ, երբ քարոզում ենք այս աշխարհի մարդկանց, մենք պետք է համեմատենք մեզ չոր ոսկորների դաշտով քայլող Եզեկիելի հետ²⁴: Եթե մեզ հարցնեն. «Կենդանանան այս ոսկորները», մենք պետք է հետևենք միայն Աստծո գերիշխանության և գորության վրա: Այն ուժը, որն անհրաժեշտ է հարության համար, վեր է մարդկային կարողությունից և կախված չէ մարդու կամքից: Քամին փշում է՝ որտեղ որ կամենում է, և մենք լսում ենք դրա ձայնը, բայց միայն Աստված գիտի, թե որտեղից է այն գալիս և որ է գնում²⁵: Այսուամենայնիվ, հավատքով մենք պետք է կանգնենք և մարզարեանանք այդ ոսկորների վրա՝ ասելով նրանց. «Ո՛վ չորացած ոսկորներ, լսեք Տիրոց Խոսքը»²⁶: Մենք պետք է աղոյենք՝ աղաղակերով Քամոն, որպեսզի Նա փշի այդ սպանվածների վրա՝ նրանց կենդանացնելու համար: Թեև մենք պետք է օգտվենք այն պարզեներից, որոնք տրվել են մեզ, մենք պետք է զգուշ լինենք, որ գերծ մնանք ցանկացած մարմավոր գենքից: Մենք պետք է սահմանափակենք մեզ Ավետարանի քարոզմամբ, քանի որ Ավետարանն է Աստծո գորությունը՝ փրկության համար, և այն միջոցը, որով Աստծո Հոգին հարություն է տալիս մեռելսերին և դարձի է բերում մեղավորներին²⁷:

21. Ա Կորնաթացիների 2.1,2

22. «Տիրոց ձեռքը ինձ վրա եղավ, և Տերը ինձ դուրս հանեց Հոգով և ինձ դուրս հանեց դաշտի մեջ, և դա լիբու էր ոսկորներով: Եվ ինձ ման ածեց նրանց վրա շուրջանակի, և ահա նրանք խիստ շատ էին դաշտի երեսի վրա, և ահա շատ չորացած էին: Եվ ինձ ասաց. «Սարդոն որդի, մի՞թե կկենդանանան այս ոսկորները». Եվ ես ասացի: «Ո՛վ Տիր Եհովսա, Դու գիտես»» (Եզեկ. 37.1-3):

23. Հռոմեացիների 1.16

24. Եզեկիել 37.1-10

25. Եզեկիել 37.3, Հռվիաննես 3.8

26. Եզեկիել 37.4

27. Հռոմեացիների 1.16

ԳԼՈՒԽ ՏԱՎԸ



Արոյունավետ Հոգին

«Եվ Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ, և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և դրանք կատարեք: Եվ բնակվեք այն երկրում, որ տվել եմ ձեր հայրեղին, և Իմ ժողովորդը լինեք, և Ես ձեր Աստվածը լինեմ»:

— Եգելիկի 36.27,28

Մենք դիտարկեցինք վերածնման աշխատանքը մարդու սրտում, և այժմ կուղենք մեր ուշադրությունը Սուրբ Հոգու բնակությանը հավատացյալի մեջ և այս իրողության արդյունքներին: Կրկին, կարդալով Եգելիկի 36.27,28-ը, տեսնում ենք, թե ինչպիսի վատահություն ունի Խոսողը: Նրա խոսքն արտահայտում է գերազանցություն և իշխանություն: Նա ունի փրկության ծրագիր Իր ժողովրդի լիակատար փրկության համար, և Նա կհետևի, որ այն կատարվի՝ Իր փառքի և նրանց բարօրության համար: Նա կկանչի մի ժողովրդի, կփոխի նրանց բնությունը և կբնակվի նրանց մեջ՝ Իր Հոգով: Ի պատասխան՝ նրանք կինեն Իր ժողովուրդը, և Նա կինքի նրանց Աստված: Նրանք կվարվեն Նրա օրենքների մեջ և զգուշությամբ կպահեն Նրա դատաստանները: Նրանք կտիրանան այն ժառանգությանը, որը Նա պատրաստել է իրենց համար աշխարհը ստեղծելուց առաջ¹: Պողոս առաքյալը գրում է Եփեսոսի Եկեղեցուն. «Որով էլ ստացանք ժառանգությունը մենք առաջուց որոշված լինելով, Նրա առաջադրության պես, որ ամեն բան հաջողում է Իր կամքի խորհուրդների պես» (Եփես. 1.11):

Աստվածային նախախնամության խորհուրդը և վեհությունն անքննելի են: Նոյնիսկ հավիտենական ուսումնասիրությունը չի հայտնի դրա բոլոր ճշմարտությունները: Եթե այս աշխարհը մինչև եզրերը լցված լիներ մեծագույն ճառերով այս թեմայով, դեռ բացահայտելու շատ բան կմնար: Այսուամենայնիվ, մենք հաստատ գիտենք, որ Աստված կառաջնորդի Իր ժողովրդին դեպի որոշված

1. Մատթեոս 25.34, Եփեսացիների 1.4

նպատակավայրը, և Նա չի կորցնի նոյնիսկ մեկին այդ մեծ բազմության մեջ: Նա, Ով սկսել է այս բարի գործը նրանցում, ավարտին կհասցնի այն²:

Այսուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը հոժարաբար է գալո՛ հետևելով իրենց նորոգված սրտերի ցանկություններին, առանց աստվածային հարկադրանքի կամ նոյնիսկ անսշան ազդեցության իրենց կամքի վրա: Նա հնազանդ կդարձնի Իր ժողովրդին՝ նրանց նորոգելու միջոցով: Նա կփոխի նրանց վարքը՝ փոխելով նրանց սրտերը: «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է» (ԲԿորնթ. 5.17): «Ո՛վ Աստծո մեծության և իմաստության և գիտության խորությունը. ինչպես անքննելի են Նրա դատատանները, և անհասկանալի են Նրա ճանապարհները» (Հռոմ. 11.33):

ՆԵՐԲՆԱԿՎՈՂ ՀՈԳԻՆ

Նախորդ գլխում իմացանք, որ Աստված խոստացավ Իր համար ստեղծել նոր ժողովորդ՝ Սուրբ Հոգու գերբնական վերածնող աշխատանքի միջոցով: Նա հեռացնելու էր նրանց հոգևորապես մահացած և ծայրաստիճան արատավորված սիրտը, որը թշնամաբար էր տրամադրված Իր հանդեպ և հակառակ էր Իր կամքին, և փոխարենը տալու էր նոր և կենդանի սիրտ՝ վերատեղծված Աստծո պատկերով³: Այս նոր սիրտն ընկալունակ էր լինելու Աստծո հանդեպ, դրականորեն էր արձագանքելու աստվածային ազդակներին և դրսորելու էր «Նոր հոգի» կամ նոր ներքին դիրքորոշում Աստծո հանդեպ, այսինքն՝ և արժնորելու էր Նրան, և բերկրանք էր զգալու Նրա օրենքի համար:

Այս հատվածում մենք կտեսնենք, որ դարձի ժամանակ Աստված ոչ միայն վերափոխում է մեր բնությունը և մեր հոգին (կամ՝ դիրքորոշումն էր հանդեպ), այլս բնակվում է մեզանում Իր Հոգով: Նա անում է սա, որպեսզի և երաշխավորի այն աշխատանքը, որն հնըը սկսել է, և ավարտին հասցնի այն. «Եվ Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ, և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք»: Հիմնվելով այս ճշմարտության վրա, ինչպես նաև այն ճշմարտությունների, որոնք ըննարկեցինք նախորդ գլխում՝ մենք կարող ենք ամեն հավատացյալի կազմում կազմել հետևյալ համառոտ նկարագիրը դարձի զարմանալի աշխատանքի մասին:

- Ես ձեզ նոր սիրու պիտի տամ. Աստված վերածնում է հավատացյալի սիրտը և փոխում է նրա բնությունը. նա դանում է նոր ստեղծ-

2. Փիլիպեցիների 1.6

3. Եղեկիել 36.26

ված⁴: Այս իրողությունը վերաբերում է ամեն քրիստոնյայի՝ առանց բացառության:

- **Ես նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ.** Սա վերածնման արդյունքն է: Նոր ստեղծվածը, որը վերատեղծվել է Աստծո պատկերով, ոնի նոր հոգի կամ նոր ներքին դիրքորոշում Աստծո հանդեպ: Նա ոնի նոր զգացմոնքներ, որոնք բերկրանք են զգում Աստծո և Նրա օրենքի հանդեպ⁵:
- **Ես Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ.** Աստված ներքնակվում է հավատացյալի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որպեսզի խրատի, գործողության դրդի և զորացնի նրան՝ Իր օրենքների մեջ վարվելու համար⁶:

Այս երեք պարզ պնդումները ցույց են տալիս Աստծո իմաստությունը և զորությունը մեր փրկության մեջ: Նոյնիսկ մի փոքր մտածելով դրանց մասին և հասկանալով դրանք՝ մենք համակվում ենք մեծագոյն վստահությամբ և ուրախությամբ: Մենք մահացած էինք հանցանքների և մեղքի մեջ, մենք ասում էինք Աստծուն, ճնշում էինք ճշմարտությունը և թշնամաբար էինք տրամադրված արդարության հանդեպ⁷: Մենք անզոր էինք, անկարող էինք հաշտվել Աստծո հետ և ազատվել մեղքի իշխանությունից⁸: Մենք անհոյս էինք և առանց Աստծո էինք այս աշխարհում⁹: Այսուամենայնիվ, այն, ինչ անկարելի է մարդկանց համար, հնարավոր է Աստծո համար¹⁰: Հանուն Իր անսվան փառքի և Իր ժողովրդի բարօրության, Նա ծրագրել և վճռել է մեր փրկությունը: Այն կազմված էր Իր մտքում աշխարհի սկզբից առաջ, և այն իրականացավ երկրային ժամանակի ընթացքում՝ Իր Որդու մարմնավորման և Իր Հոգին ուղարկելու միջոցով: Քրիստոսի արյունալի մահկան միջոցով Նա հաշտվեց Իր ժողովրդի հետ: Հոգու վերածնող աշխատանքի միջոցով Նա փոխեց նրանց սրտերը և, հետևաբար, փոխեց նրանց զգացմոնքները: Նա բնակվում է նրանցում Իր Հոգով, դրդում է նրանց հնազանդվել և զորացնում է դրա համար: Նա անում է այս ամենը Իր փառավոր շնորհի գովասանքի համար, որպեսզի ուրախության, գովասանքի և փառքի անուն ստանա երկրի բոլոր ազգերի առջև, որոնք կլսեն այն բարիքի մասին, որը Նա կանի Իր ժողովրդին¹¹:

Աստծո այս ներքին աշխատանքն Իր ժողովրդի համար զարմանալի գուգահեռ ունի Սաղմոնների գրքում գտնվող մի հատվածի հետ, որում Դավիթն աղաղակում է.

4. Եղեկիել 36.26

5. Եղեկիել 36.26

6. Եղեկիել 36.27

7. Հռոմեացիների 1.18, 1.30, 8.7, Եփեսացիների 2.1

8. Հռոմեացիների 5.6, 7.24, 8.7

9. Եփեսացիների 2.12

10. Մատթեոս 19.26, Մարկոս 10.27, Ղուկաս 18.27

11. Երեմիա 33.9, Եփեսացիների 1.6

«Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում, ո՞վ Աստված,
Եվ ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում:
Դես մի՛ զցիր ինձ Քո երեսից,
Եվ Քո Սուրբ Հոգին մի՛ վեր առ ինձնից:
Դարձյալ տուր ինձ Քո փրկության որախությունը
Եվ կամավոր հոգով հաստատիր ինձ» (51.10-12):

Այս հատվածում Դավիթը, Աստծո առաջ մեծ մեղք գործելուց հետո, ապաշխարության էր եկել: Վերականգնում փնտրելով՝ նա ընդունեց իր երկու մեծագույն կարիքները: Առաջինը՝ Դավիթը խսդրեց Աստծոն իր ներսում նորոգելուի հոգի՝ ներքին դիրքորոշում, որը հաստատուն կերպով հավատում է Աստծոն և կարող է հակառակվել գայթակղություններին, որոնք կրկին կհարձակվեին իր վրա: Երկրորդը՝ նա խնդրեց, որ Սուրբ Հոգին շարունակեր բնակվել իր ներսում և հաստատել իր նորոգված հոգին, որպեսզի ինքը կրկին չհայտնվեր միտումնավոր անհնագնանդության մեջ:

Մենք պետք է սովորենք հետևյալ ճշմարտությունը այս հատվածից. որպեսզի փրկության աշխատանքը կատարվի քրիստոնյայի կյանքում, անհրաժեշտ է երկու բան. սրտի սկզբնական վերածնումը և դրա շարունակական պահպանությունը: Դարձի ժամանակ մարդուն նոր սիրտ է տրվում, որի արդյունքը նոր հոգին կամ Աստծոն հանդեպ նոր դիրքորոշումն է: Այնուամենայնիվ, ներբնակվող Սուրբ Հոգու ընթացիկ աշխատանքը պետք է շարունակաբար սատարի, պահպանի և զորացնի նրան: Սա հավատացյալի մեծագույն և մշտական կարիքն է, և այն լրացվել է ամեն առումով Աստծո իմաստությամբ, գորությամբ և ողորմածությամբ: Նա ոչ միայն ճիշտ հոգի է ստեղծում մեզանում՝ վերածնական ժամանակ Սուրբ Հոգու կատարած աշխատանքի միջոցով, այլև բնակվում է մեզանում իր Հոգով՝ երաշխավորելու համար, որ իր աշխատանքը կշարունակվի և զարգացնի կապրի մինչև վերջին օրը:

Աստծո շարունակական աշխատանքն իր արարչագործության և նախախնամության մեջ այս ճշմարտության օգտակար օրինակ է: Աստված ստեղծեց տիեզերքը, բայց Նա նոյնպես պետք է շարունակի պահպանել այն¹²: Նա ամբողջ կյանքի սկզբնադրյուրն է, բայց Նա նոյնպես պետք է շարունակի կյանք տալ ամեն ինչին¹³: Եթե Աստված վերցնի իր Հոգին, ամեն մարմին կկործանվի, և ամեն մարդ կրկին փոշի կդառնա¹⁴: Նմանապես, Աստված պետք է ոչ միայն վերածնի և նոր ստեղծված դարձնի մեզ, այլև պահպանի այն

12. Ծննդոց 1.1,2. Հոր 12.10, 34.14,15. Սաղմոս 104.27-30, Հովհաննես 1.2,3, Կողոսացիների 1.17, Երրայեցիների 1.3

13. Ա Տիմոթեոս 6.13

14. Հոր 34.14,15

նոր մարդուն, որին ստեղծել է: Աստված պետք է ոչ միայն նոր հոգի դնի մեզանում, այլև պահպանի այն Սուրբ Հոգով, Ում Նա բնակեցրել է մեզանում: Պարզ ասած՝ Աստված պետք է ոչ միայն փրկի մարդուն, այլև պահպանի նրան փրկության մեջ:

Այս ճշմարտությունը մատնանշելու նպատակն է մեծարել Աստծո փրկարար գորությունը և ցույց տալ, որ ճշմարիտ քրիստոնյան առաջադիմություն կրունեա սրբացման մեջ և պտղաբեր կլինի: Այսուամենայնիվ, այս ճշմարտությունն ունի նաև հրաշալի և անհրաժեշտ գործնական կիրառություն քրիստոնեական կյանքում. հավատացյալն ամբողջովին կախված է Սուրբ Հոգու կենսապահպան աշխատանքից: Ավետարանական համայնքի ներսում գոյություն ունեն այնքան վտանգավոր հերձվածությունները Սուրբ Հոգու մասին, որ շատ անկեղծ քրիստոնյաներ նոյնիսկ պատշաճ չափով չեն դիտարկում Նրա դերը քրիստոնեական կյանքում: Այսուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ Նրա անձը և ծառայությունն անփոխարինելի են մեզ համար: Անհնար է ապրել քրիստոնեական կյանքը՝ առանց Նրա: Շարունակական աճ և պտղաբերություն ունենալու համար, հավատացյալը պետք է հասկանա այս ճշմարտությունը և կառուցի այնպիսի կյանք, որը լիովին կախված է Նրա Անձից, իմաստությունից և գորությունից: Նման գաղատացիներին, մեզ պետք է հիշեցնել, որ քրիստոնեական կյանքը, որը սկսվել է Հոգով, չի կարող ավարտվել մարմնով¹⁵: Ինչպես որ արդարացումն է հավատքից հավատք, այնպես էլ սրբացումն է սկսվում և ավարտվում Սուրբ Հոգու Անձով և աշխատանքով¹⁶:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐԴՅՈՒՆԵԼԵՐ

Աստծո բոլոր խոստումները և գործերն ունեն համապատասխան արդյունքներ: Աստված խոստանում է Եղեկիել մարգարեի միջոցով դնել Իր Հոգին մեր մեջ: Այսուհետև, Իր գորության հանդեպ մեծագույն վստահությամբ, Նա խոստանում է, որ այդ ներքնակության արդյունքը կլինի նոր կյանքը, որը հնազանդ է Իր կամքին. «Եվ Իմ Հոգին այսուի դնեմ ձեր մեջ և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեր և Իմ դատաստանները պահեր և դրանք կատարեր» (Եղեկ. 36.27):

«Պիտի անեմ» բառակապակցությունը թարգմանված է մի պատճառականություն արտահայտող Եբրայերեն բառից, որը կարելի է թարգմանել «դրեմ» կամ «շարժել» բառերով¹⁷: Եղեկիելը փոխանցում է հետևյալ գաղափարը. Ներքնակող Հոգու միջոցով Աստված

15. Գաղատացիների 3.3

16. Հռոմեացիների 1.17

17. Եբրայերեն «ասահ»:

կդրդի Իր ժողովրդին վարվել Իր օրենքների մեջ և զգուշությամբ կատարել Իր դատաստանները: Թեև, Սաղմոս 119.35-ում օգտագործելով մեկ այլ երրայերեն բայ, Դավիթը փոխանցում է նոյն գաղափարը. «Առաջնորդիր ինձ Քո պատվիրանների շավիդներում, որ նրանց հավանեցիր (կամ՝ որոնք ես հավանում եմ)»:

Այս, որ Աստված կդրդի Իր զավակներին վարվել ըստ Իր օրենքների, անհերքելի աստվածաշնչյան ճշմարտություն է, և այդ պատճառով չունի պաշտպանության կարիք: Այնուամենայնիվ, թե ինչպես է Նա կատարում այս աշխատանքը, իրականում արժանի է լրացուցիչ բացատրության: Նախ մենք պետք է միանշանակ հաստատենք, որ Աստված չի բռնանում Իր ժողովրդի կամքին և չի դրդում նրանց հնազանդության որևէ հարկադրական միջոցով: Նա չի ստանում նրանց պատրաստակամությունը՝ հակառակ նրանց կամքին և զգացմունքներին: Փոխարենը, դարձի ժամանակ Աստված վերածնում է հավատացյալի սիրտը և փոխում է նրա զգացմունքները: Հավատացյալը դառնում է նոր ստեղծված՝ նոր բնությամբ, որն այլս չի ցանկանում այն, ինչ հակառակ է Աստծո կամքին, այլ բերկրանք է զգում Տիրոջ օրենքի հանդեպ¹⁸: Նրա հետ մեկտեղ, Աստված բնակում է հավատացյալի ներսում Սուրբ Հոգով, Ով շարունակում է սովորեցնել, առաջնորդել, նորոգել և զորացնել նրան, որպեսզի նա հնազանդվի Աստծո կամքին իր երկրային ուխտագնացության մեջ: Հավատացյալը դեռ կրախավի անթիվ գայթակղությունների և կտրտմի բազմաթիվ մեղքերի պատճառով. Նա մշտապես կունենա շնորհքի կարիքը: Այսուամենայնիվ, ճշմարիտ հավատացյալի կյանքում կլինեն աստվածային զգացմունքներ և Հոգու զորությունը, որոնք կտան նրան կարողություն՝ կանոնավոր կամ հետևողականորեն հնազանդվելու Աստծուն: Թեև Աստված ապահովում է Իր ժողովրդի հնազանդությունը, Նա չի հպատակեցնում Իր ժողովրդին, մինչ նրանք հակառակում են՝ բղավելով և թափահարելով իրենց ոտքերը. փոխարենը, նրանք հետևում են Նրան՝ ինչպես ոչխարը, որը հետևում է իր հովվին: Ինչպես որ Հիսուսն ասաց անհավատ հրեաներին. «Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, և Ես ճանաչում եմ նրանց, և Իմ ետևից գալիս են» (Հովհաննես 10.27):

ԶՈՐՍ ՏԵՍՎԿԻ ՄԱՐԴԻԿ

Այս ճշմարտությունները պատկերելու և դրանց կիրառությունը ցուց տալու համար, մենք կնկարագրենք չորս տեսակի մարդկանց, որոնց սովորաբար կարելի է տեսնել ժամանակակից ավետարա-

18. Սաղմոս 1.2, ԱՀովհաննես 5.3

Նաևան համայնքներում: Առաջին երեքը քրիստոնյա են անվանում իրենց, սակայն նրանց կյանքը գրեթե կամ ոչ մի առնչություն չունի դարձի հետ՝ համաձայն Աստվածաշնչի: Չորրորդը Վերստին ծնված է և Վերստին ծնունդի պատուիներ է բերում:

Առաջին տեսակի մարդը որոշում է կայացրել ընդունել Քրիստոսին, սակայն գրեթե չի հետաքրքրվում աստվածային իրողություններով և չունի ակնհայտ պտուղ՝ բացի հավատքի դավանությունից: Որպեսզի նա հաղթահարի իր անհետաքրքրությունն իր նորագյուտ հավատքի հանդեպ և իր նվիրման բացակայությունը, եկեղեցին նշանակում է ինչ-որ մեկի, ով կայցելի նրան և կաշխատի նրա հետ: Այն նվիրված քրիստոնյան, որին նշանակում են այդ առաջադրանքի համար, շատ ջանաւեր է, սակայն գրեթե արդյունքներ չի տեսնում: Մի քանի այցելություններից և հետախոսազանգերից հետո նրան հաջողվում է այդ նորադարձին բերել կիրակնօրյա ծառայության: Եվս մի քանի ամիս աննահանջ աշխատանքից հետո նորադարձը մկրտվում է, և բոլոր տոնում են հաղթանակը: Այնուամենայնիվ, առանց մշտական խթանման, նա կրկին անտարբեր է դառնում և, ի վերջո, ընդհանրապես անհայտանում է: Այդ մարդը նման է Հովհան թագավորին, ով ուղղությամբ էր վարվում Տիրոց առջև, քանի դեռ Հովհանա քահանան ողջ էր, բայց թողեց Տիրոջը, հենց որ Հովհան մահացավ¹⁹:

Նրա կյանքում գրեթե չկար ապացույց վերածնման, նոր սրտի և նոր զգացմունքների մասին: Նա քայլեր էր անում միայն այլ մարդու մշտական քաջակերանքի պատճառով, սակայն հոժարակամ հետևորդ չէր՝ նման ոչխարի, որը լսում է Հովհի ձայնը և հնազանդվում:

Երկրորդ տեսակի մարդը հաճախում է ժամանակակից եկեղեցական ծառայությունների, որոնք հայտնի են իրենց տպավորիչ փառաբանությամբ, վերջին սերնդի տեխնիկական միջոցների օգտագործումով և կարճ քարոզներով՝ այս աշխարհում ապրելու սկզբունքների մասին: Այս մարդը հաճույքով է մասնակցում այդաիսի ծառայությունների, հետաքրքիր շիման շրջանակ է ծնավորում և պատկանելիության զգացում է ստանում: Նրա կարիքները երբեք այս կերպով լրացված չեն եղել, և նրա կյանքում նպատակի զգացում է հայտնվում: Այնուամենայնիվ, նման միջավայրում Ավետարանը և Քրիստոսի անձնազն աշակերտության արմատական կանչը հազվադեպ են ընդդիմանում նրան: Իր հերթին, նա գրեթե չի դրսւորում Աստծուն ճանաչելու կամ Աստվածաշունչն իր առօրյա կյանքում կիրառելու որևէ ձգուում: Նրա կյանքի նպատակը, մտքերը և գործերը

19. Բ Մսացորդաց 24.2,17,18

շատ քիչ են տարբերվում իր շուրջը գտնվող աշխարհիկ մշակույթից: Արդյոք այս մարդն ընդունել է Քրիստոնին, թե՞ ընդունվել է ինչ-որ հասարակական ակումբ, որը գնահատում է նրան և լրացնում է նրա կարիքները: Արդյոք նրա զգացմունքները փոխվել են այնպես, որ նա արժնորում է Քրիստոնին ամեն ինչից առավել, թե՞ նա ընդամենը գտել է այնպիսի վայր և այնպիսի մարդկանց, որոնք բարելավում են իր ներկա կյանքը:

Երրորդ տեսակի մարդը մի ժամանակ դավանում էր Քրիստոնին, սակայն տարիներ շարունակ չի հաղորդակցվել եկեղեցու հետ: Եկեղեցու նոր հովիվս այցելում է նրան և հանդիպում է սրտարաց և ներում հայցող մարդու: Իրենց զրոյցի ընթացքում հովիվը հանդիմանում է նրան իր աշխարհիկության, անպտող կյանքի և եկեղեցին անտեսելու մեջ: Ի պատասխան, այդ մարդը համաձայնում է իր դեմ ներկայացված դատավճռին: Նա ընդունում է, որ պետք է թողնի իր բոլոր անսարակությունները՝ անկախ այն բանից, որ դրանք հաճույք են պատճառում իրեն, կարգապահ դառնա, հեռանա իրեն հրապուրող մեղքից և, ընդհանրապես, ճիշտ վարչի: Ինչ-որ առումով, կարող է թվական, թե Աստված աշխատանք է կատարել նրա սրտում, սակայն ավելի մանրակրկիտ քննությունը ցոյց է տալիս, որ նրա սիրտը և զգացմունքները նույն են մնացել: Իրականում, նրա խոսքերն իսկ վկայում են նրա դեմ: Նա պարզապես որոշում է կայացրել շրջվել բոլոր չար գործերից, որոնք նա դեռ սիրում է, և կատարել բոլոր արդար գործերը, որոնք նա դեռ ատում է, որպեսզի փրկվի դատաստանից և ապահովի իր բնակությունը Երկնքում²⁰: Այնուամենայինվ, այդ մարդն իրականում Աստծո զավակ չէ: Թեև քրիստոնյան բախվում է իր դեմ պատերազմող գայթակղությունների և մարմնի ցանկությունների, նրա ցանկությունները նկատելի կերպով փոխվում են, և դա էլ ավելի արտահայտիչ է դառնում նրա կյանքի ընթացքում: Նա չի հեռանում մեղքից, միայն՝ որովհետև դա ճիշտ է, և ոչ էլ գործում է բարին՝ հանուն բարության: Փոխարենը, նա սկսում է իրապես ատել Աստծո համար ատելի մեղքը և սիրել Աստծո համար սիրելի արդարությունը: Նա դրդված է ոչ միայն պարտքի զգացումով, այլև իր աստվածային զգացմունքներով, որոնք բխում են վերածնված սրտից:

Չորրորդ տեսակի մարդը լսում է Ավետարանը և դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ: Նա չգիտի, թե ինչ կատարվեց իր հետ, և ինչպես բացատրել դա: Նա պարզապես գիտի, որ ինչ-որ

20. Առաջին անգամ ես լսեցի այս ճշմարտությունը մի քննարկման ժամանակ, որին մասնակցում էր հովիվ Զարլգ Լեյտերը, ով հովվում է «Լեյք Ռոուդ Զեյփլ» եկեղեցին Միսսուրի նահանգի Կիրկսվիլ քաղաքում:

բան փոխավել է, որ ինքն է փոխավել: Նա սկսում է տեսնել իր նախկին կյանքը նոր լոյսի ներքո: Այն բաները, որոնցով նա մի ժամանակ ուրախանում էր և նոյնիսկ պարծենում էր, սխալ և ամոթալի են թվով իրեն: Նա սկսում է հետաքրքրվել Քրիստոսով և ցանկանում է իմանալ ավելին Նրա և Նրա կամքի մասին: Թվում է՝ նա օտարանում է իր հին ընկերներից և սկսում է ավելի հաճույքով շփվել սուրբերի հետ: Մնալով հավատքի մեջ՝ նա զգում է, որ առաջընթաց է ունենում և աճ է ապրում՝ հասունության հասնելով, սակայն նա նոյնպես բախչում է դժվարությունների և հաճախակի ձախողումների ունենում: Նա բերկրանք է զգում Աստծո կամքի հանդեպ, սակայն հայտնաբերում է, որ ինքն անընկալունակ չէ գայթակղությունների հանդեպ: Նա պայքարում է այս աշխարհի դեմ՝ արտաքուստ, և իր մարդմի դեմ՝ ներքուստ: Նա ցնծում է Աստծո շնորհքով, որը հաղթելու կարողություն է տալիս նրան, և հառաջում է ամեն անգամ, երբ ձախողվում է: Նա մեծ հակասություն է գտնում իրենում: Նա քարոզներ է լսում և գրքեր է կարդում, որոնք դրդում են իրեն ցնծալ Քրիստոսով՝ որպես ամեն ցանկության նպատակ, սակայն մի քանի բոլով անց նա արդեն ստիպված է պայքարել սրտի գաղջության հետ: Կարդալով Խոսքը՝ նա մեծ սփոխանք է զգում, բայց այն նոյնպես խոցում է՝ նրան՝ որպես երկսայր սուր, և բացահայտում այն մեղքը, որը մինչ այդ հայտնի չէր նրան: Շարունակելով իր ընթացքը՝ նա սկսում է պարզորեն գիտակցել Աստծո հայրական վերահսկողությունն իր կյանքում: Երբեմն Նրա խրատը թեթև է, բայց այլ դեպքերում թվում է, թե ինքը առանց ներողամտության պատժվում է: Մի քանի անգամ նա նոյնիսկ մտածում է ամեն ինչ թողնելու մասին, սակայն չի կարողանում: Նա չի կարողանում դիմանալ նոյնիսկ Քրիստոսից բաժանված լինելու մտքին և վերադառնում է «թոյլ ու խոցված, հիվանդ ու տառապած»²¹: Թվում է՝ իր քրիստոնեական ընթացքը երեք քայլ առաջ և երկու քայլ եւս է: Նա մեղանչում է, բայց չի կարողանում մնալ մեղքի մեջ. նա ընկնում է, բայց չի կարողանում ընկած մնալ: Թվում է՝ նա սար է բարձրանում՝ միայն դրա մյուս կողմից ցած իշխելու համար: Այսուամենայնիվ, նա քայլ առ քայլ բարձրանում է, առաջադիմում է և աճ է ապրում: Այս ամենում՝ թե՛ լավ, թե՛ վատ, երևում է դարձի անդառնալի ապացույցը: Բոլոր ճշմարիտ հավատացյաները տեսնում են իրենց այս նկարագրության մեջ:

Այս գլուխն ամփոփելու համար, բոլորս պետք է մտածնք իետևյալ հարցի շուրջ. «Արդյո՞ք մեր կյանքում կա ապացույց, որ Աստված փոխել է մեր բնությունը և վերափոխել է մեր զգացմունքները: Արդյո՞ք մեր կյանքում կա ապացույց ներքանակող Սուրբ Հոգու մասին,

21. Զոգեֆ Հարթ. «Եկե՛ք, մեղավորներ, աղքատ և կարիքավոր», տուն 1:

Ով սովորեցնում է, առաջնորդում է և զորացնում է մեզ, որպես-զի վարվենք Նրա օրենքների մեջ և զգուշությամբ կատարենք Նրա կամքը»: Եթե մենք ցանկանում ենք հասկանալ դարձի բնույթը և զորությունը, պետք է համաձայնենք հետևյալ մեծ ճշմարտությանը. Աստված պարզապես չի փրկում մարդուն մեղքի դատապարտությունից, իսկ հետո թողնում նրան առանց աստվածային օգնության, որն անհրաժեշտ է՝ մեղքի զորությունը հաղթահարելու համար: Նա տրամադրում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է՝ երաշխավորելու համար, որ Իր ժողովուրդը կվարվի Իր օրենքների մեջ և զգուշությամբ կկատարի Իր կամքը:

ՄԱՍ ԵՐԵՔ

Նոր Ժողովուրդ և ճշմարիտ դարձի բնույթը



«Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո,- ասում է Տերը,- Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն, և Ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի Բնձ համար ժողովուրդ լինեն: Եվ այլս մեկ մարդ իր լնկերոջը և մեկ մարդ իր եղբորը չայիտի սովորեցնի՝ ասելով, թե «Ճանաչեք Տիրոջը», որովհետև նրանք ամենք պիտի ճանաչեն Բնձ, նրանց փորբերից մինչև նրանց մեծերը,- ասում է Տերը,- որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերը այլս չպիտի հիշեմ»:

— Երեմիա 31.33,34

«Եվ նրանք Բնձ համար կլինեն ժողովուրդ, և Ես կլինեմ նրանց համար Աստված: Եվ Ես կտամ նրանց մեկ սիրու և մեկ ճանապարհ, որ Բնձնից վախենան ամեն ժամանակ, որ յավ լինի իրենց համար և իրենցից հետո իրենց որդիների համար: Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց, և Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ Բնձնից չհեռանան: Եվ Ես պիտի ուրախանամ՝ նրանց բարություն անելով, և նրանց պիտի տնկեմ այս երկրում հավատարմությամբ՝ Իմ ամրող սրտով և Իմ ամրող Անձով»:

— Երեմիա 32.38-41

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԱՄԵԿ



Նոր ուխտի փառքը

«Ահա օրեր են զալիս,- ասում է Տերք,- որ Իսրայելի տան հետ և Հոգայի տան հետ պիտի նոր ուխտ կապես: Ոչ թե այն ուխտի պես, որ Ես արի նրանց հայրերի հետ այն օրը, որ Ես բռնեցի նրանց ձեռքերը՝ Եղիսոսով երկրից նրանց հանելու համար, որ Իմ այն ուխտը նրանք զանց արին, թեպես Ես նրանց հետ ամուսնականապես կապվել էի (կամ՝ «թեև Ես ամուսին էի նրանց համար»),- ասում է Տերք: Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, ասում է Տերք. Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում, և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն»:

— Երեմիա 31.31-33

Ուսումնասիրելով Եզեկիել 36.22-28-ը՝ մենք դիտարկեցինք վերածնման և դարձի նշաններից մի քանիսը՝ այն հերթականությամբ, որով դրանք ներկայացված են Հին կտակարանի նորկտակարանյան խոստումների մեջ: Այս հատվածից մենք ստվարեցինք երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ իմացանք, որ դարձն Աստծո գերբնական աշխատանքն է, որը կարելի է համեմատել տիեզերքը արարելու և Հիսուս Քրիստոսին մեռելներից հարություն տալու հետ: Աստծո հրաշագործ աշխատանքը վերափոխում է մարդու բնությունը և զգացմունքները, դրդում է նրան կատարել Աստծո պատվիրանները և զգուշությամբ պահել Նրա դատաստանները: Աստված սկսում է և ավարտում է այն՝ Իր Հոգով և Իր փառքի համար: Իր համար է, որ Նա սկսեց այս աշխատանքը, և Իր փառավոր անվան համար է, որ Նա ավարտին կհասցնի այն:

Երկրորդը՝ մենք իմացանք, որ գոյություն ունի մեծ հակադրություն այն բանում, թե ինչպես է դարձը դիտարկվում Սուրբ գրքում և ինչպես՝ ժամանակակից Ավետարանական շարժման կողմից: Մեր օրերում Ավետարանը փոքրացվել է՝ գրեթե վերածվելով մի շարք հոգևոր օրենքների, և նոյնիսկ սուրբգրային ու պատմական ավետարանչությանը վերաբերող կարևորագույն վարդապետություններն անտես-

1. Բ Կորնթացիների 5.21, Եփեսացիների 2.5,6

Վել են: Քարոզիչները կոչ են անում մարդկանց «որոշում կայացնել» կամ աղոթք անել, սակայն գրեթե չեն հիշատակում ապաշխարելու և հավատարու աստվածաշնչյան պահանջները և չեն մտահոգվում, թե արդյո՞ք մարդիկ պատշաճ կերպով հասկացել են դրանք: «Հօգուտ Քրիստոսի որոշում կայացրած» մարդկանց նրանք ընդունում են Աստծո ընտանիք՝ գրեթե առանց քննության և գգուշացնելու: Հետագայում այդ մարդկանցից քերն են իմանում ճշմարիտ դարձի ապացույցների մասին կամ ցուցումներ ստանում, թե ինչպես քննեն իրենց Աստվածաշնչի լոյսի ներքո՝ պարզելու համար, թե արդյո՞ք իրենք իրականում հավատքի մեջ են²: Ի վերջո, օգտագործվում են բազմաթիվ մեթոդաբանություններ և աշակերտության ծրագրեր, որպեսզի, այսպես կոչված, «մարմնավոր քրիստոնյաներն» աճեն իրենց հավատքի մեջ: Նոյնիսկ այն դեպքում, եթե այդ ծրագրերը հիմնականում անկարող են կենսունակ քրիստոնյաներ պատրաստել, քերն են ցանկանում խոստովանել, որ «մարմնավոր քրիստոնյաների» այդ մեծ բազմությունը եկեղեցում պարզապես դարձի եկած չէ:

Ուսումնասիրելով Երեմիա 31.31-33-ը՝ մենք կձգտենք Էլ ավելի հասկանալ դարձի բնույթը և ճշմարիտ քրիստոնյայի հատկանիշները: Մենք կսկսենք՝ համեմատելով և հակադրելով Իսրայելի ժողովրդին (որը գտնվում էր Հին ուխտում) Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետ (որը գտնվում է նորում): Մենք կտեսնենք, որ Իսրայելի ժողովուրդը, որը բաղկացած էր Աքրահամի մարմնավոր ժառանգներից, հիմնականում ոչ վերածնված ազգ էր, որում կար հավատացյալների կամ ճշմարիտ իսրայելցիների ընդամենը մի փոքր մնացորդ: Այդ իսկ պատճառով, Իսրայելի պատմությունը բնութագրվում է կրապաշտությամբ, ապատամբությամբ և նահանջով: Ի հակադրություն, Հիսուս Քրիստոսի եկեղեցին բաղկացած է Աքրահամի հոգևոր ժառանգներից՝ և իրեաներից, և հեթանոսներից: Եկեղեցու ամեն մի ճշմարիտ հավատացյալ վերածնվել է Սուրբ Հոգու կողմից և ստացել է Աստծո օրենքը՝ ոչ թե քարե տախտակների վրա, այլ՝ գրված իրենց սրտերի վրա: Այս պատճառով, ճշմարիտ եկեղեցին բնութագրվում է նվիրմամբ, հնագանդությամբ և հարատևությամբ, նոյնիսկ ամենասարսափելի հանգամանքներում:

ՀԻՆ ՈՒԽՏԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեմիա 31.31-ը սկսվում է «Ահա» ճայնարկությամբ, որը ցույց է տալիս, որ Աստված կոչ է անում Իսրայելին ուշադրություն դարձնել մեծ կարևորություն ունեցող մի բանի վրա՝ այնպիսի բանի, ինչն առանձնանում է նոյնիսկ դրան նախորդող և հաջորդող ոգեշնչված

2. Բ Կորնթացիների 13.5

սուրբգրային հատվածներից: Այնպես որ, բոլոր պակաս կարևոր գործերը պետք է դադարեցվեն, բոլոր խոսակցություններին պետք է վերջ տրվի, և ամեն մի ականջ պետք է լարվի՝ լսելու համար այն, ինչ Աստված խոսելու է:

Գրավելով Խրայելի ուշադրությունը՝ Աստված ուղղեց նրանց հայցը դեպի ապագան, երբ Նա նոր ուխտ էր կնքելու նրանց հետ: Այս նոր ուխտը մեծապես գերազանցելու էր այն ուխտը, որը Նա կնքել էր Խրայելի հետ՝ ազատելով նրանց Եգիպտոսից: Թեև հին ուխտը, որը Նա կնքել էր Խրայելի հետ Սինա սարի մոտ, նույնպես շնորհը էր պարունակում՝ չնայած իր խստությանը, ծանր պահանջներին և էթնիկական սահմանափակումներին, Քրիստոնում բոլոր հին տարրերը հեռացվելու էին: Ժամանակակից ընթերցողի համար Աստծոն հայտարարությունը նոր ուխտի մասին ազրեցիկ չի թվում, սակայն խրայելցիների համար, որոնց այն սկզբնապես ուղղված էր, այն գրեթե նման էր երկրաշարժի: Խրայելը և իր ազգային պատմությունն ամբողջությամբ հիմնված էր Սինայի մոտ կնքված ուխտի վրա: Նոյնիսկ ակնարկելը, որ այն հեռացվելու էր և փոխարինվելու էր նոր ուխտով, նշանակում էր՝ կանխասել համընդհանուր աղետի չափերի հասնող իրադարձություն: Այս նշանակում էր, որ Խրայելի գոյության և Աստծո հետ հարաբերությունների հիմքը փոխարինվելու էր այլ բանով: Դա ավելին էր, քան հիմնավոր փոփոխությունը. դա հավասարագոր էր ասելուն, որ իրականությունը հեռացվելու էր և փոխարինվելու էր այլ բանով:

Կրկին, քանի դեռ մենք չենք ընկալում Երեմիայի հայտարարության արմատական բնույթը, այդպես էլ չենք հասկանա Նոր ուխտի գերազանցությունը հնի հանդեպ, եկեղեցու բնությունը և ճշմարիտ դարձի բնույթը: Երեմիա մարգարեի միջոցով Աստված խոստանում էր կատարել այնպիսի փրկարար աշխատանք Իր ժողովրդի մեջ, որն աչք չէր տեսել, ականջ չէր լսել և նախկինում չէր եղել ոչ ոքի սրտում՝ այնպիսի աշխատանք, որն ամեն բաներից ավելի է, քան մենք կարող ենք խնդրել և մտածել³:

Նման աաշեցուցիչ հայտարարություն անելուց հետո Աստված շարունակում է բացահայտել Հին ուխտի տկարությունները, որոնց պատճառն Իր բնավորության թերացումները և Իր նախախնամության ձախողումները չեն: Հին ուխտի տկարությունը լիովին պայմանավորված էր մարդու անկում ապրած բնությամբ: Ինչպես գրու է Պողոս առաքյալը. «Արդ թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ՝ սուտ, ինչպես գրված է. «Որ արդար լինեն Քո խոսքերում և հաղթես Քո դատվելում»» (Հռոմ. 3.4):

3. Ա Կորսթացիների 2.9, Եփեսացիների 3.20

Աստված սկսում է Հին Ուխտի լուծարումը՝ Ներկայացնելով Իր փրկության աշխատանքը և Իր հավատարմությունն Իսրայելի ժողովրդի հանդեպ: Նա ծեռքից բռնած դուրս էր հանել նրանց Եգիպտոսի երկրից: Նա ուխտի մեջ էր մտել նրանց հետ, ինչպես ամուսնը՝ իր հարսնացուի հետ: Նա օրինակելի կերպով հոգացել էր Իսրայելի կարիքները: Այսուամենայնիվ, Իսրայելի արձագանքը համապատասխան չէր դրան. այն, թե ինչպիսի հարսնացու դարձավ Իր ժողովուրդը, վայ կերպով ցոյց է տրվում Ովսեի և Գոմերի հարաբերություններում: Իսրայելը «պոռնկության կին» էր⁴: Իսրայելը խախտեց Աստծո պատվիրանը, ինչպես որ խոտորված հարսնացուն կարող է արհամարհել հավատարիմ ամուսնու սերը և ամաչեցնել նրան իր հաճախակի ամուսնական անհավատարմություններով: Իսրայելը շարունակ փախչում էր Նրանից ուրիշների գիրկը: Նա շարունակ և հավատարմորեն Իր մոտ էր վերադարձնում Իր ժողովրդին, մինչև որ վերջապես արսորեց նրանց: Թեև Աստված փափագում էր լինել նրանց Աստվածը, որպեսզի նրանք լինեին Իր ժողովուրդը, նրանք հազվադեպ էին ենթարկվում Իրեն:

Իսրայելի մշտական ապստամբությունը ցոյց է տալիս մեզ մի կարևոր ճշմարտություն: Հին ուխտի ներք Աստված դարձեց Իսրայելն Իր ժողովուրդը, սակայն մենք չպետք է կարծենք, թե ճշմարիտ Իսրայելը բաղկացած էր Իսրայելի բոլոր ժառանգներից⁵: Եգիպտոսից դուրս եկած Իսրայելը բաղկացած էր Աքրահամի մարմարվոր ժառանգներից, սակայն դա չի նշանակում, որ բոլոր այդ մարդիկ հավատացյալ էին: Իրականում, աստվածաշնչյան պատումն ապացուցում է ճիշտ հակառակը: Թեև ամբողջ ազգի մեջ կար աստվածապաշտ մասացրող՝ փոքրամասնություն, որը ճշմարտապես վերածնված և հավատքով արդարացված էր, սակայն ճնշող մեծամասնությունը չվերածնված և անհավատ կռապաշտներ էին: Եբրայեցիների թղթի հեղինակը հայտնում է մեզ, որ Եգիպտոսից դուրս եկածների մեծ մասը, որոնց առաջնորդում էր Մովսեսը, մահացավ անապատում՝ անհավատության պատճառով⁶: Նոյնիսկ թագավորների ժամանակաշրջանում ճշմարիտ հավատացյալների մասացրողն Իսրայելում այնքան փոքր էր, որ Եղիան աղաղակեց. «Տե՛ր, քո մարգարեներին կոտորեցին և Քո սեղանները կործանեցին, և միայն ես մնացի, և իմ անձը որոնում են» (Հոռո. 11.3, հմտ. Գ Թագ. 19.10,14): Աստծո պատասխանը հուսալքված մարգարեին ապացուցեց, որ կար մասացրդ, բայց և ցոյց տվեց, որ այն իրականում շատ փոքր էր՝ Իսրայելի որդիների թվի հա-

4. Ովսե 1.2

5. Հռոմեացիների 9.6

6. Եբրայեցիների 3.16-19

մեմատ: Նա հայտարարեց. «Յոթ հազար մարդ թողեցի ինձ համար, որ Բահադին ծունը չդրեցին» (Հռոմ. 11.4, հմտ. Գ Թագ. 19.18): Այս ողբերգական իրականությունը, թվում է, բնութագրում է Խրայելին իր ամբողջ պատմության ընթացքում: Նոյնիսկ Քրիստոսի գալուստը հայտնեց, որ մասցել էին շատ քիչ հավատացող կամ ճշմարիտ խրայելիցներ, որոնք «արդար և աստվածավախ» էին և «Երուսաղեմում փրկության էին սպասում» (Ղուկ. 2.25,38):

Ճշմարտությունն այն մասին, թե ինչ բնույթ ուներ Խրայելը Հին ուխտում, կարևոր է, քանի որ չափազանց հաճախ Խրայելի ապստամբ վարքն օգտագործվել է՝ արդարացնելու համար նոյն վարքն, այսպես կոչված, «դավանող եկեղեցում»⁷: Ումանք պնդում են, որ ճնշող մեծամասնության մարմանավոր վարքը և միայն փոքր աստվածապաշտ մնացորդը եկեղեցում սպասելի երևոյթ է, քանի որ մենք տեսնում ենք ճիշտ նոյն իրավիճակը՝ ուսումնասիրելով Խրայելի պատմությունը: Այսուամենայնիվ, ինչպես մենք կտեսնենք, նման համեմատությունն Խրայելի և եկեղեցու միջև՝ սխալ է:

Նոր ուխտի ամբողջ իմաստն այն է, որ այն նման չէր լինելու հինգ: Հին ուխտում Աստված կանչեց Արքահամից առաջացած մի ամբողջ ազգի՝ Իր ժողովուրդը լինելու համար, բայց այդ ժողովուրդի ստվար բազմության միայն մի փոքր մասն էր ճշմարտապես վերածնված և հավատացող: Մյուսները չվերածնված և մարմնավոր էին, և այժմ նրանք հավիտենական կորուստ են կրում: Նոր ուխտում Աստված կանչում է հոգևոր ազգի՝ կազմված հրեաներից և հեթանոսներից, որոնցից բոլորը վերածնված և հավատացող են: Ճշմարիտ եկեղեցում գոյություն չունի աստվածապաշտ մնացորդ. ճշմարիտ եկեղեցին հենց ինքը աստվածապաշտ մնացորդն է:

Աստվածաշոնչը սովորեցնում է, որ դավանող եկեղեցում մշտապես լինելու են հավատացյալներ և անհավատներ⁸: Մենք նոյնպես հասկանում ենք Աստվածաշնչից և եկեղեցու պատմությունից, որ այս վկասակար Վիճակը շատ ավելի նկատելի է դառնալու, երբ եկեղեցին քարոզում է Ավետարանին շհամապատասխանող ուղերձ և անտեսում է եկեղեցական կարգուկանոնը: Այսուամենայնիվ, ճշմարիտ եկեղեցին կազմված է միայն վերածնված, ապաշխարող և հավատացող մարդկանցից, որոնք կերպարանվում են Քրիստոսի պատկերով: Սա է ամենամեծ տարբերությունը Հին և Նոր ուխտերի միջև, և մենք պետք է պահպանենք ու հոչակենք այն:

7. «Դավանող եկեղեցի» տերմինը վերաբերում է այն մարդկանց, ովքեր դավանում են իրենց հավատորը Հիսոս Քրիստոսի հանդեպ և նոյնացնում են իրենց քրիստոնեության հետ: Դավանող եկեղեցին և Հիսոս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին նոյնը չեն:

8. Մատթեոս 13.24-30,36-43

ՆՈՐ ՈՒԽՏԻ ՓԱՌԵԸ

Սինա սարի վրա Աստված փորագրեց Տասնաբանյա կամ Տասը պատվիրանները քարե տախտակների վրա և տվեց դրանք Իսրայելի ժողովրդին՝ Մովսեսի միջնորդությամբ⁹: Աստվածաշունչն այսպես է նկարագրում այդ իրադարձությունը. «Եվ երբ որ Սինա սարի վրա Մովսեսի հետ խոսելով վերջացրեց, վկայության երկու տախտակները տվեց նրան՝ քարե տախտակներ, Աստծո մատով գրված» (Ելից 31.18):

Օրենքը մեծ պարզն էր Աստծուց Իսրայելին, և այն պետք է ամեն առումով օգուտ բերեր ամբողջ ազգին¹⁰: Այնուամենայնիվ, հենց որ Աստված տվեց օրենքը, ժողովուրդը խախտեց այն: Երբ Մովսեսն ընդունում էր օրենքը Սինայի վրա, իսրայելցիները ձուլածո հորթ պատրաստեցին իրենց համար և երկարագեցին այն՝ որպես աստծո, որը դուրս էր բերել իրենց Եգիպտոսի երկրից¹¹: Խախտելով Տասը պատվիրանների առաջին երկուսը՝ նրանք շարունակեցին ապականել իրենց ամեն տեսակի անքարոյությամբ¹²: Համաձայն Սուրբ գրքի՝ «Եվ ժողովուրդը նստեց ուտելու և խմելու և վեր կացավ խաղալու» (Ելից 32.6):

Ի պատասխան այդ մեծ ապատամբության, Մովսեսը ցած նետեց քարե տախտակները՝ կտոր-կտոր անելով դրանք սարի ստորոտում¹³: Այն, ինչ Աստված տվեց նրանց՝ կյանք ունենալու համար, դարձավ դատապարտության և մահվան նախանշան նրանց համար¹⁴: Ի վերջո, ժողովուրդի անհավատությունը և Աստծո պատվիրանները շարունակ մերժելով հանգեցրեց նրանց բացարձակ բնաշնչմանը անսապատում: Երբայեցիների թոյթի հեղինակը գրում է. «Ուսի՞ց զգմեց (կամ ո՞ւ վրա բարկացավ) այն քառասուն տարին. չէ՞ որ մեղք գործողներից, որոնց ուկորներն ընկան անսապատի մեջ» (3.17):

Իսրայելի ժողովուրդի այս ողբերգական, բայց հաճախ կրկնվող ապատամբության մեջ ի հայտ է գալիս երեք կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ պարզորեն հայտնվում է օրենքի աստվածային ծագումը և բնույթը: Օրենքը մարդկային կամ հրեշտակային գյուտ չէր. այն գրեց Աստված: Մովսեսը վկայում է. «Եվ տախտակներն Աստծո գործը էին, և գրվածն Աստծո գրվածը էր՝ տախտակների վրա փորագրված» (Ելից 32.16): Քանի որ Օրենքը ծագում է Աստծուց, այն Նրա արդարության և իմաստության արժանահավատ արտահայտությունն է:

9. «Տասնաբանյա» բառը հունարեն «ηեկաղողոս» բառից է (ηեկա [տասը] + լոգոս [բառ]): Այդ իսկ պատճառով, Տասը պատվիրանները նաև հաճախ անվանում են «Տասը բառ» կամ «Տասը խոս»:

10. Հռոմեացիների. 3.1,2

11. Ելից 32.1-5

12. Ելից 20.3-6

13. Ելից 32.19

14. Երկրորդ Օրինաց 30.15,19, Հռոմեացիների 7.9,10

Պողոս առաքյալի խոսքերով՝ «Ուրեմն, օրենքը սուրբ է, և պատվիրանքն է՝ սուրբ և արդար և բարի» (Հռոմ. 7.12): Այդ իսկ պատճառով, մենք կարող ենք վստահ լինել, որ Հին ուխտի տկարությունը չէր բխում օրենքում գտնվող որևէ թերացումից: Օրենքն անկարող էր կյանք տալ Խարայելի ժողովրդին՝ մարդու անկում ապրած մարմնական բնության պատճառով¹⁵:

Երկրորդը՝ օրենքը փորագրված էր քարե տախտակների վրա, որոնք վերցված էին Աստծո սարից: Քարը ոչ միայն խորհրդանշուն է օրենքի անփոփոխ բնույթը, այլև այն սրտերի բնույթը, որոնց Աստված տվեց այն: Խարայելցիների ճաշող մեծամասնությունը մահացած էր «հանցանքներում և մեղքերում» (Եփես. 2.1): Թեև Սուրբ Հոգին վերածնել էր փոքրիկ մասցորդի՝ ճշմարիտ հավատացյալների սրտերը, մասած խարայելցիները նման էին իրենց շրջապատող հեթանոսներին: Նրանք «խստապարանցներ՝ սրտով և ականջներով չթլիփատվածներ» էին, և «իրենց սիրտն ադամանդի պես շինեցին, որ չլեն օրենքը» (Գործք 7.51, Զաքարիա 7.12):

Օրենքը գրված էր քարե տախտակների վրա, բայց ոչ՝ խարայելցիների մեծամասնության սրտերի: Թեև այն տրված էր բոլոր խարայելցիներին, այն չէր գտնվում նրանցից շատերի մեջ: Մեծամասնության համար օրենքը միշտ արտաքին և օտար էր. այն հակառակ էր իրենց բնությանը և ըստդիմանում էր իրենց ցանկություններին: Նրանք չէին զգում ոչ մի համակրանք, ոչ էլ ինքնարբուխ կամ բնական ձգտում օրենքի հանդեպ: Փոխարենը, նրանք ասում էին օրենքը և հակառակին էին դրան: Իրենց քարե սրտերի պատճառով, օրենքի Տասը խոսքը վերածվեց տասը մեղադրանքի նրանց դեմ, և այն, ինչը նախատեսված էր կյանքի համար, դարձավ նրանց մահվան պատճառը¹⁶: Ահա թե ինչո՞ւ էր Եզեկիել մարգարեն կանխատեսում այն օրը, երբ Սուրբ Հոգին փոխելու էր այդ անշարժ քարե սրտերն արձագանքող մարմնեղեն սրտերով¹⁷:

Երրորդը՝ օրենքը կամ Հին ուխտը տրվեց Մովսեսի միջնորդությամբ: Թեև նա օրինակելի մարդ էր, միևնույն է, ենթակա էր իր ժողովրդի բոլոր մեղքերին և տկարություններին: Թեև նա հավատարիմ էր Աստծո տան մեջ որպես ծառա, նա անկարող էր քավել մեղքը կամ առաջացնել տևական ներքին վերափոխում այն մարդկանց կյանքերում, որոնք հետևում էին իրեն Եզիպտոսից¹⁸: Անկարելի է, որ ցերի և այծերի արյունը վերցնի մեղքը կամ կատարյալ խիղճ տա

15. Հռոմեացիների 8.3

16. Հռոմեացիների 7.9-10

17. Եզեկիել 36.26

18. Եբրայեցիների 3.5

Երկրպագողներին¹⁹: Մարդու մարմնական բնության տկարության պատճառով, օրենքն անկարող է փոխել մարդու զգացմունքները, միտքը և գործերը²⁰: Սա է պատճառը, որ Երեմիայի միջոցով Աստված հայտնեց ուրախալի լուր և գերազանց ուստի մասին, որը հաստատվեց ավելի ազնվագոյն խոստումներով²¹: Նոր ուստն ունենալու էր և դրսորելու էր այն ամենի լիությունը, ինչի խորհուրդը կամ շուքն էր հանդիսանում Հին ուխտը: Այն ներկայացնելու էր Աստծո ժողովրդին այնպիսի պահանջներ, որոնք մեծապես գերազանցում էին Միվենսի պահանջները, սակայն տալու էր վերափոխում և զորություն, որոնց շնորհիվ մարդիկ կարողանալու էին հնազանդվել: Օրենքն այլևս գրված չէր լինելու քարե տախտակների վրա, չէր պարտադրվելու քարե սրտերին, և դրա արդյունքը չէին լինելու դատապարտությունը և մահը: Նոր ուխտում Աստված հեռացնելու էր անօրինությունն Իր ժողովրդից մի Ասձնավորության միջոցով, որն ավելի մեծ է, քան Միվենսը, վերափոխելու էր նրանց քարե սրտերը կենդանի և արձագանքող մարմնեղեն սրտերի, և գրելու էր Իր օրենքը դրանց վրա²²:

Երբ Աստված Երեմիայի միջոցով հայտարարեց՝ «Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն», Նա նկատի ուներ վերածնաման հրաշալի վարդապետությունը: Նոր ուխտում Աստված չէր հարկադրելու իր օրենքը դժկամ ժողովրդի. Նա վերատեղծելու էր այդ ժողովրդին՝ դարձնելով համապատասխան Իր օրենքին: Լինելու էր այն, ինչ մենք տեսանք Եզեկիելի մարզարեւություններում. Աստված վերցնելու էր մարդկանց քարե սրտերը և փոխարինելու էր դրանք արձագանքող մարմնեղեն սրտերով: Նրանք այլևս չէին լինելու Աստծուն թշնամաբար տրամադրված և Նրա օրենքին հակառակվող մարդիկ, այլ՝ հոժար, հնազանդ և նվիրված: Այլ կերպ ասած, Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով Աստված վերականգնելու էր Իր պատկերն Իր ժողովրդի մեջ: Նա փոխելու էր նրանց բնությունը, և արդյունքում նրանք նոր զգացմունքներ էին ունենալու: Նա նոյնպես գրելու էր Իր օրենքը նրանց սրտերի վրա չջնջվող թանաքով, և Նրա գրիչը լինելու էր Աստծոն մատը: Դրանցից հետո, Իր գործը հաստատելու և Իր ցանկալի ավարտին հասցնելու համար, Նա բնակվելու էր Իր ժողովրդի մեջ Սուրբ Հոգու միջոցով և դրդելու էր նրանց վարվել Իր օրենքների մեջ և զգուշությամբ պահել Իր դատաստանները²³:

19. Երրայեցիների 9.9, 10.4

20. Հռոմեացիների 8.3

21. Երրայեցիների 8.6

22. Երրայեցիների 3.1,3

23. Եզեկիել 36.26,27

Կարևոր է, որ հասկանանք, որ այս խոսքերում օգտագործվող լեզուն չափազանցված բանաստեղծական արձակ չէ, որի նպատակը միայն արտանց ոգլուրություն առաջացնելն է: Այն, ինչ Աստված խոստացավ անել Նոր ուխտում, այժմ կենդանի իրականություն է Հիսոս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցում: Քրիստոսի մարմին յուրաքանչյուր ճշմարիտ անդամ Աստծո Հոգու կողմից գերբնականորեն վերաստեղծված էակ է: Յուրաքանչյուրը ենթարկվել է արմատական վերափոխման իր էության խորքից, և Աստծո օրենքը գրվել է նրա սրտի վրա: Նոր ուխտում ապրող մարդկանց համար օրենքն այլս արտաքին համակարգ չէ, որը հակառակ է իրենց բնությանը, և որին իրենք ընդդիմանում են: Այն դարձել է իրենց մասը: Այն այլս բեռ չէ, այն իրենց բերկրանքն է: Այն այլս իրենց դատապարտության և մահկան նախանշանը չէ. այն արդյունավետ ուղեցոյց է դեպի ավելի խորը աստվածապաշտություն:

Այս բարի լուրը որևէ կերպով չի արժեզրկում այն փաստը, որ առանձին հավատացյալը և եկեղեցին՝ ընդհանուր առմամբ, դեռ սպասում են իրենց լիարժեք և վերջնական փառավորմանը: Նոյնիսկ ամենանվիրված հավատացյալը դեռ ենթակա է բազմաթիվ տկարությունների և ձախողումների, որոնք նա չի կարողանա հաղթահարել մինչև Քրիստոսի վերադարձը և ամեն ինչի ավարտը: Այսուամենայնիվ, ճշմարիտ քրիստոնյան և ճշմարիտ եկեղեցին ոնք նոր հարաբերություն Աստծո և Նրա կամքի հետ: Նոր ուխտում ապստամբությունը և անհնազանդությունն այլս Աստծո ժողովրդի ակնառու հատկանիշները չեն: Փոխարենը, նրանց ակնառու հատկանիշը նոր սերն է Աստծո, Նրա Որդու և Նրա պատվիրանների հանդեմ: Սադմու 119-ը հրաշալի կերպով նկարագրում է այս նոր զգացմունքները.

«Եվ Քո պատվիրաններով կուրախանամ,
Որ նրանց սիրում եմ:
Եվ իմ ձեռքը կրաքացնեմ դեպի Քո պատվիրանները,
Որ սիրում եմ,
Եվ Քո հրամանների վրա կմտածեմ» (իս. 47,48):

«Ես Քո վկայությունները Ժառանգեցի մինչև հավիտյան,
Որովհետև նրանք իմ սրտի ցնծությունն են:
Ես խոնարհեցրի իմ սիրուը, որ Քո հրամաններն անեմ
Հավիտյան, մինչև վերջ» (իս. 111,112):

«Մրա համար ես սիրում եմ Քո պատվիրանները
Ուկուց և ազմիվ ուկուց ավելի:
Մրա համար բոլոր պատվիրանները
Բոլորովին ուղիղ պահում եմ,
Ստության ամեն ճանապարհն ատում եմ» (իս. 127,128):

Մեկսագիտական առումով անտրամաբանական և խիստ վտանգավոր է օգտագործել Իսրայելի գրեթե մշտական ապստամբության օրինակը, այսպես կոչված՝ մարմնական քրիստոնյայի կամ դավանող եկեղեցու գրեթե մշտական ապստամբությունն արդարացնելու համար: Արևոտքի Ավետարանական շարժման մեծ մասի անզուսպ ապստամբության պատճառն այն չէ, որ Նոր ուխտը ոչչով լավ չէ Հին ուխտից, կամ որ այն ընդգրկում է Հին ուխտի տկարություններից վի քանիսը: Ըստիակառակը, անտարբերության, նյութապաշտության և ապստամբության պատճառն այն է, որ ովքեր դավանում են Քրիստոսին, իրականում Քրիստոսինը չեն, և եկեղեցի կոչվող բազմության մեծ մասն ընդհանրապես ճշմարիտ և կենդանի եկեղեցին չէ: Մենք փոքրացրել ենք Ավետարանը և դրա պահանջները. մենք հազցրել ենք եկեղեցուն այս աշխարհի պես. մենք հրաժարվել ենք քարոզել ծանրագին շնորհքը և առանձնացումն այն ամենից, ինչը պղծում է մարդուն, և պարզապես արհամարհել ենք եկեղեցական վերահսկողության և կարգապահության ցանկացած ծեր: Այս և շատ ավելի պատճառներով, անթիվ մարդիկ պնդում են, որ քրիստոնյա են՝ առանց քրիստոնյա լինելու որևէ ապացույցի, և եկեղեցական կազմակերպությունները հապատությամբ նոյնացնում են իրենց եկեղեցու հետ, սակայն գրեթե նման չեն Նոր ուխտում հայտնված Քրիստոսի հարսնացուին:

Այսպես որ, մենք պետք է վերադառնանք վերածնման և դարձի աստվածաշնչյան ընկալմանը: Մենք պետք է մերժենք այն տարածված հոեսորաբանությունը, որը պատկերում է եկեղեցին առաջին հերթին որպես փրկված, բայց մարմնավոր մարդկանց հավաքույթ՝ Քրիստոսի հոգևոր կամ նվիրված հետևորդների խիստ աննշան մնացորդով: Մենք պետք է ևս մեկ անգամ աղաղակենք. «Դուք պետք է վերստին ծնվեք», և բացատրենք, որ վերածնման արդյունքն է վերափոխված սիրտը, որը բերկրանք է զգում Աստծո մատով իր վրա գրված օրենքի հանդեպ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒ



Նոր ժողովրդի պատրաստումը

«Ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի հնձ համար ժողովորդ լինեն»:

— Երեմիա 31.33

Երբ Աստված Երեմիայի միջոցով հոչակում է՝ «Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում, և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն», Նա նկատի ունի վերածնման աշխատանքը: Երբ Նա հոչակում է՝ «Ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի հնձ համար ժողովորդ լինեն», Նա նկատի ունի այդ աշխատանքի արդյունքը՝ եզակի փոխհարաբերությունը Աստծո և հավատացյալների համայնքի միջև, որոնք կհավատան Իր անվանը և կվարվեն ըստ Իր պատվերների: Այս Նոր ուխտի հավատացյաները ոչ միայն հնազանդ կլինեն Աստծո օրենքին, այլև կունենան առանձնահատուկ նվիրում և հավատարմություն անձամբ Աստծո հանդեպ: Նրանք կունենան համակրանք՝ բնական և ինքնարուխ ճգոտում Նրա հանդեպ, և Նա կհավակնի նրանց՝ համարելով Իրենը: Նա կլինի նրանց Աստված՝ ճշմարտությամբ և արդարությամբ, և նրանք կլինեն մի ժողովորդ, որը երկրպագում է Նրան հոգով և ճշմարտությամբ: Աստված փնտրում է այսպիսի մարդկանց՝ որպես Իր երկրպագուների¹:

ԺՈՂՈՎՈՒՐԴ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՍՏԾՈ ՓԱՓԱԳԸ

Մեղանչումից ի վեր և սուրբգրային պատմության ամբողջ ընթացքում Աստծո փրկության նպատակը եղել է պատրաստել ժողովորդ Իր համար անկում ապրած մարդկության հոծ զանգվածից: Նա Աբրահամին ասաց. «Եվ քեզ և քեզնից հետո քո սերնդին տվեցի քո պանդխսության երկիրը, այսինքն՝ Քանանի ամբողջ երկիրը՝ հավիտենական ստացվածքի համար, և նրանց Աստված կլինեմ» (Ծննդ. 17.8): Նա Միկաելին խոստացավ. «Իսրայելի որդիների մեջ

1. Զաքարիա 8.8, Հովհաննես 4.23

կրնակվեմ և նրանց Աստված կլինեմ» և «Ձեր մեջ ման կգամ և ձեզ համար Աստված կլինեմ, և դուք ինձ համար ժողովուրդ կլինեք» (Ելից 29.45, Ղևո. 26.12):

Աստված խոստացավ ամենամտերիմ հարաբերությունը Իսրայելի ժողովրդի հետ. այնուամենայնիվ, նրանք հազվադեպ էին արձագանքում Նրան արժանի և պատշաճ կերպով: Այդ պատճառով է, որ մարգարեները խստորեն հանդիմանում էին նրանց: Եսային հայտարարեց, որ եզր ճանաչում է իր տիրոջը, և էշը՝ իր տիրոջ մսուրը, բայց Իսրայելը չէր հասկանում Աստծոն արժեքը և չէր գնահատում իր հարաբերությունը Նրա հետ²: Մաղաքիա մարգարեն պնդում էր, որ բնական կյանքում որդին պատվում է իր հորը, և ծառան՝ իր տիրոջը, բայց Իսրայելը չէր պատվում Աստծոն և երկյուղածություն չէր ցուցաբերում Նրա հանդեա: Փոխարենը, ամբողջ ազգն անարգում էր Նրա անոնքը և մերժում էր Նրա պատվերները³: Նեեմիայի գրքում գրված է ընդհանուր խստովանություն, որում Իսրայելի ժողովուրդն ընդունում էր իրենց տևական անհնազանդությունը և ապստամբությունն Աստծոն դեմ. նրանք իրենց ետևն էին զցել Աստծոն օրենքը և սպանել էին Նրա մարգարեներին, որոնք հորդորում էին իրենց վերադառնալ Աստծոն⁴: Թեև Աստված ուխտ էր կնքել նրանց հետ և անսախադեպ Իրեն հայտնել էր նրանց, Աստվածաշունչը նկարագրում է նրանց որպես «խատապարանցներ և սրտերով և ականջներով չթիփատվածներ», որոնք «միշտ Սուրբ Հոգուն հակառակվում են» (Գործք 7.51): Նման համար ապստամբությունը տրտմեցնում էր Աստծոն սիրտը՝ դրդելով Նրան հետևյալ բացականչությանը. «Երանի թե նրանց սիրտն էլ այնպէս լիներ, որ ինձնից վախենալով Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ, և իրենց որդիներին էլ՝ հավիտյան» (Երկր. Օր. 5.29):

Սկսած այն ժամանակվանից, երբ Աստված ուխտ կնքեց Իսրայելի հետ, Նա փափագում էր ունենալ այնպիսի ժողովուրդ, որոնք ըստ արժանվույն կգնահատեին Իրեն և կպահեին Իր պատվիրանները, որպեսզի Իսրան օրիներ և հավիտյան հաստատեր նրանց: Շարունակելով թերթել Հին կտակարանի էշերը՝ մենք տեսնում ենք, որ այս աստվածային փափագը վերածվում է հստակորեն սահմանված խոստման: Այն Աստված, ով ամեն ինչ հաջողում է Իր կամքի խորհուրդների պես, կկատարի Իր ցանկությունն այս Երկրի վրա⁵: Նա կստանա Իր համար այնպիսի ժողովուրդ, որոնք կընդունեն Իրեն՝ որպես իրենց Աստված: Նա կթիփատի նրանց քարե սիրտը, կստեղ-

2. Եսայի 1.3

3. Մաղաքիա 1.6

4. Նեեմիա 9.26

5. Եփեսացիների 1.11

ծի նրանցում նոր սիրտ և կդարձնի նրանց արձագանքող Իր կամքին: Մենք իմանում ենք այս մասին Երեմիայի և Եզեկիելի գրքերի հետևյալ մարգարեություններից:

«Եվ նրանց մի սիրտ պիտի տամ՝ Ինձ ճանաչելու, որ Ես եմ Տերը, և նրանք Իմ ժողովուրդը պիտի լինեն, իսկ Ես կլինեմ նրանց Աստված, որովհետև իրենց ամբողջ սրտով դեպի Ինձ պիտի դառնան» (Երեմիա 24:7):

«Այսպես է ասում Տեր Եհովան. «Ահա Ես վեր եմ առնելու Իսրայելի որդիներին այն ազգերի միջից, որ որ իրենք գնացել են, և նրանց ժողովներու եմ շորջանակի և բերելու եմ իրենց երկիրը: Եվ նրանց մեկ ազգ եմ շինելու երկրում՝ Իսրայելի սարերի վրա, և մեկ թագավոր պիտի լինի նրանց ամենի թագավորը, և այլս երկու ազգեր չեն լինի և այլս պիտի չպառակուվեն երկու թագավորությունների: Եվ այլս չպիտի պղծվեն իրենց կոտրերով ու գարշելիքներով և իրենց բոլոր հանցանքներով, և Ես պիտի ազատեմ նրանց իրենց բոլոր բնակություններից, որոնց մեջ իրենք մեղք գործեցին, և նրանց պիտի սրբեմ, և նրանք կլինեն Իմ ժողովուրդը, և Ես կլինեմ նրանց Աստվածը: Եվ Իմ ծառա Դավիթը՝ թագավոր նրանց վրա, և նրանց ամենին մեկ հովիվ կլինի: Եվ Իմ իրավունքների մեջ կգնան և Իմ կանոնները կպահեն և դրանք կլատարեն» (Եզեկ. 37:21-24):

Ամենասկզբից Աստված փափագում էր ժողովուրդ ունենալ, սակայն ոչ ոք հարմար չէր այդ նպատակի համար: Սա ապացոյց է, որ պատասխանը ոչ թե մարդու մեջ է, այլ՝ Աստծո իմաստության, գերիշխանության և գորության: Այս, ինչ անհնար է մարդկանց համար, հնարավոր է Աստծո համար⁶: Որպեսզի Աստված Իր համար ժողովուրդ պատրաստեր անկում ապրած և բարոյապես ապականված մարդկությունից, անհրաժեշտ էր ոչ պակաս, քան տիեզերքի արարմանը համարժեք հրաշը: Աստծո Հոգին, Ով սավառնում էր անձև դատարկության վրայով՝ արարելով աշխարհը, սավաննելու էր Աստծո նոր ժողովուրդի յուրաքանչյուր անդամի վրայով՝ հարություն տալով և վերատեղադրելով նրանց մարդկության արատավորված և գարշելի զանգվածից՝ դարձնելով նրանց կենդանի Աստծո զավակներ⁷:

ԱՍՏԾՈ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՓԱԳԸ

Թեև այս աշխատանքը կարող է չափազանց սրանչելի թվական՝ հավատալու համար, Աստված հենց սա է խստանում Նոր ուխտում, և թե՛ յուրաքանչյուր քրիստոնյա, թե՛ Եկեղեցին՝ ընդհանուր առմամբ, ապրում են սրանով ամեն օր: Քրիստոսի քավշարար աշխատանքի և Սուրբ Հո-

6. Մատթեոս 19:26, Մարկոս 10:27, Ղուկաս 18:27

7. Ծննդոց 1.2

գու վերածնող աշխատանքի միջոցով Աստված նոր ժողովորդ պատրաստեց Իր համար: Նա հեռացրեց նրանց քարե սրտերը և փոխարինեց կենդանի մարմնեղեն սրտերով: Նա վերստեղծեց՝ նրանց՝ դարձնելով ընտիր ազգ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, Իր սեփական ժողովուրդը, որոնք քարոզելու են Նրա առաքինությունները, Ով կանչել է իրենց խավարից Իր զարմանալի լոյսի մեջ⁸:

Ահա այն մեծ տարբերությունը, որը կա Հին ուխտի հսրայելի ժողովորդի և Հիսուս Քրիստոսի Նոր ուխտի ճշմարիտ եկեղեցու միջև: Հսրայելի ժողովուրդը բաղկացած էր նոյն ծագումն ունեցող մարդկանցից՝ Աբրահամի ժառանգներից: Այսուամենայնիվ, նրանց մեծ մասը «շնչավոր» կամ «մարմնավոր» մարդիկ էին՝ առանց Հռոգու⁹: Նրանք մնացին իրենց անկում ապրած հայր Աղամի պատկերով, ստրկացվեցին իրենց սրտերի արատավորությանը և հետևեցին իրենց մարմնավոր կրքերին¹⁰: Նրանց մեծամասնությունը չուներ իրենց հայր Աբրահամի հավատքը, այլ չվերածնված, անհավատ և անհնագույն էր: Պողոս առաքյալի ուսուցման հիմքը Հռոմի եկեղեցուն ուղղված նամակում այն էր, որ հսրայելից ծնվածների մեծ մասն ընդհանրապես հսրայելցի չէր¹¹:

Ի հակադրություն, Նոր ուխտի ճշմարիտ եկեղեցին բաղկացած է ամեն ցեղից, լեզվից, ժողովորդից և ազգից, և այլս չկա ոչ մի տարբերություն հոյսի և հրեայի, թլփատվածի և անթլփատի, բարբարոսի, սկյութացու, ստրուկի և ազատի միջև¹²: Նրանց միաբանությունը ոչ թե Աբրահամի արյան մեջ է, այլ՝ նոյն հավատքի. Նրանք հավատում են Աստծո վկայության Իր Որդու մասին, և դա արդարություն է համարվում նրանց¹³: Նրանք վստահել են Քրիստոսին՝ որպես ամեն խոստման իրականացում, որն Աստված երբևէ տվել է նահապետներին և ամբողջ աշխարհին¹⁴: Բացի այդ՝ Նոր ուխտի ժողովորդին միաբանում է ավելին, քան ընդհանուր կոչումը, կրոնական դավանանքը կամ միասնական բարոյական պահանջները: Կենդանի

8. Ա Պետրոս 2.9

9. Ա Կորնթացիների 2.14, 3.3

10. Ծննդոց 5.3, Հովհաննես 8.33, 34, Եփեսացիների 2.3

11. Ղուկաս 3.7, 8, Հռոմեացիների 9.6-8

12. Կորնթացիների 3.11, Հայտնություն 5.9

13. Ծննդոց 15.6, Հռոմեացիների 4.3, 16, Գաղատացիների 3.6, Հակոբոս 2.23

14. «Որովհետև որքան Աստծո խոստումները, որ կան, Նրանում է «այո»-ն, և Նրանում է «ամեն»-ը՝ Աստծո փառքի համար մեզանով» (Բ Կորնթ. 1.20): «Բայց ասում եմ, թե Հիսուս Քրիստոսը թլփառության սպասավոր եղավ Աստծո ճշմարտության համար, որ հայրերի խոստումները հաստատի: Բայց հեթանոսները ողբրմության համար փառավորում են Աստծոն, ինչպես գրված է, թե «Մրա համար կգոհանամ Թեզնից հեթանոսների մեջ և Չո անվանը սաղմոս կաստմ»: Եվ դարձյալ ասում է. «Ուրախացե՛ք, ովք հեթանոսներ, Նրա ժողովորդի հետո»: Եվ դարձյալ՝ «Օրիսե՛ք Տիրոջը, ամեն հեթանոսներ, և գովե՛ք Նրան, ամեն ժողովուրդներ»: Եվ դարձյալ Եսային ասում է. «Հետսեի արմատը կլինի, և Նա, որ հեթանոսների համար իշխան կկանգնի, Նրան կիուսան հեթանոսները» (Հռոմ. 15.8-12):

Աստծո Հոգին վերածնել է ճշմարիտ եկեղեցու ամեն մի անդամի և հարություն է տվել յուրաքանչյուրին՝ կյանքի նորոգության մեջ վարվելու համար¹⁵: Այն Աստված, Ով ասաց. «Թող խավարից լոյս ծագի», Ինըն է ծագել նրանց արտերում, որպեսզի տա նրանց Աստծոն փառքի գիտության լուսավորությունը՝ Հիսուս Քրիստոսի դեմքում¹⁶: Նա այնպես է արել, որ նրանք տեսնեն Քրիստոսին, և նրանք վերափոխվել են, որպեսզի հավիտյան սիրեն Նրան, Ում իրենք տեսնում են, և անդիմադրելիորեն կապվեն Նրան: Նրանք նոր ժողովուրդ են և փափագում են Աստծոն ու բերկրանք են զգում Նրա օրենքի հանդեպ, ոչ թե որովհետու նրանք ավելի լավ ծագում ունեն, քան Խրայելի ժողովուրդը, այլ որովհետու Սուրբ Հոգին վերատեղձել է նրանց: Նրանք դարձել են նոր ստեղծվածներ Քրիստոս Հիսուսում. հներն անցել են, և ամեն բան նոր է եղել¹⁷:

ՊԱՏՍՍԽԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՁԵՐԻՆ

Թե՛ հավատացյալները, թե՛ անհավատները բողոքում են, որ եկեղեցու կա նոյնքան անօրինություն, որքան անհավատ աշխարհում: Պատմաբանները մատնանշում են եկեղեցու ենթադրյալ վայրագույթյունները դարերի ընթացքում՝ Խաչակրաց արշավանքներից մինչև Հավատաքնությունը (Բնկվիզիցիան): Մեր օրերում սոցիոլոգիական հարցումներ անցկացնող կազմակերպությունները մատնացույց են անում վիճակագրությունը, ըստ որի եկեղեցին լցված է սեռական անբարոյությամբ, մոլեուանդությամբ, ազահությամբ, ատելությամբ, կեղծավորությամբ և ցանկացած այլ չարիքով, որն առկա է մեր հասարակության մեջ: Ինքնահոչակ մարգարենները հանդիմանում են եկեղեցին իր ենթադրյալ պղծությունների մեջ՝ անվանելով այն ինչպես ասե՞ս սկսած Սողոմոնց և Գոմորից մինչև մոլորված մարմնավաճառը: Այսուամենայնիվ, նրանց բոլոր մեղադրանքները պարզապես ճիշտ չեն: Այդ ամենը մեկ աստվածաբանական սխալմոնքի արդյունք է. նրանք չունեն աստվածաշնչյան պատկերացում եկեղեցու մասին: Այդ իսկ պատճառով, մեղադրում են ճշմարիտ եկեղեցին այն վայրագությունների մեջ, որոնք գործել են այլ մարդիկ, ովքեր նոյնացրել են իրենց եկեղեցու հետ, սակայն բաժին չեն ունեցել ոչ նրա, ոչ էլ նրա Փրկչի հետ:

Առաջինը՝ դիտարկենք այն ենթադրյալ վայրագությունները, որոնք եկեղեցին գործել է պատմության ընթացքում: Դրա օրինակ-

15. Հռոմեացիների 6.4

16. Բ Կորնթացիների 4.6

17. Բ Կորնթացիների 5.17

Ներից մեկը Սուրբ Հավատաքննությունն է (Բնկվիզիցիան): Համաձայն պատմաբանների՝ Պապ Գրիգորիոս IX-ը (մոտ. 1227-1241թթ.) հիմնադրեց Հավատաքննությունը՝ Եկեղեցական ատյանը, որը ճնշում էր հերձվածությունները: Այն գործում էր հիմնականում Հյուսիսային Խորհրդական և Հարավային Ֆրանսիայում և տիրահոչակ էր կտտանքների օգտագործմամբ: 1542 թվականին Պապական Հավատաքննությունն ուղղեց իր ուշադրությունը նոր թշնամոն՝ բողոքականների վրա: Կարևոր ճշմարտությունն այն է, որ Հավատաքննությունը Հռոմի Կաթոլիկ Եկեղեցի կոչվող առանձին Եկեղեցական կազմակերպության ատյանն էր: Այդ դեպքում, ինչպես Եկեղեցին կարող է մեղադրվել հենց իրեն հալածող հերձված Եկեղեցական կազմակերպության վայրագությունների մեջ: Մարդու չարագործությունները հերքում են Քրիստոսի հանդեպ նրա հավատքի դավանությունը¹⁸: Նոյնը վերաբերում է ցանկացած Եկեղեցական կազմակերպության պահմանը այն մասին, որ ինքը ճշմարիտ Եկեղեցին է: Ինչպես Հիսուսը հայտնեց. «Որովհետև ծառը պտղից կճանաչվի» (Մատթ. 12.33):

Երկրորդը՝ դիտարկենք սոցիոլոգիական հարցումներ անցկացնող կազմակերպությունների վիճակագրությունը, համաձայն որի Եկեղեցին նոյնքան անբարո է, որքան իրեն շրջապատող մշակույթը: Մենք պետք է գիտակցենք, որ սա խիստ կարևոր հարց է: Եթե Եկեղեցին այնքան ստրկացված և չար է, որքան պայում է վիճակագրությունը, եթե այն ոչչով չի տարբերվում այս անաստված աշխարհից, ուս վիճարկում է Սուրբ գրքի անսխալականությունը և քրիստոնեության անկեղծությունը: Հին կտակարանի հղումները Նոր ուխտին պարզորեն խոստանում են, որ Աստված պատրաստելու է Իր համար նվիրված ժողովուրդ իրեաններից և հեթանոսներից՝ այնպիսի ժողովուրդ, որոնք երկյուղով կվերաբերվեն և կինազանդվեն Իրեն: Եթե Եկեղեցին՝ ընդհանուր առմամբ, այս աշխարհից ավելի նվիրված և հնազանդ չէ, նշանակում է՝ այդ խոստումները չեն կատարվել: Այնուամենայնիվ, մենք պնդում ենք, որ թե՛ Աստված, թե՛ Նրա խոստումները չեն ձախողվել: Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին հավատարիմ է, նվիրված է, պտղաբեր է և ի՞ ավելի է կերպարանվում իր Տիրոջ պատկերով: Թեեն այն դեռ պայքարում է մեղքի դեմ և մշտապես շնորհիք կարիք ունի, այն լիովին հակադրվում է իրեն շրջապատող անաստված և անբարո մշակույթին: Հարցումներ անցկացնող կազմակերպությունների ամենակոպիտ սխալն այն է, որ, իրենց կարծիքով, յուրաքանչյուր մարդ, որը նոյնացնում է իրեն Քրիստոսի հետ, քրիստոնյա է, և յուրաքանչյուր կազմակերպություն, որը Եկեղեցի է անվանում իրեն, իսկապես Եկեղեցի է:

18. Մատթեոս 7.21-23, Հակոբոս 2.18,19

Սոցիոլոգիական հարցումներ անցկացնող կազմակերպությունները սխալ են, քանի որ նրանք եզրահանգումներ են անում աղտոտված հետազոտական դաշտից: Ավետարանական շարժման ամենից լայնորեն տարածված ախտերից մեկն այն է, որ նրանք, ովքեր պարում են, թե քրիստոնյա են, ունեն այնպիսի համոզմնաքններ և վարք, որոնք օտար են աստվածաշնչյան և պատմական քրիստոնեությանը: Թեև նրանք դավանում են, որ հավատարիմ են Քրիստոսին, նրանք քրիստոնյաներ չեն իրենց վարդապետությամբ, բարոյական արժեքներով և կյանքի ոճով: Այդ իսկ պատճառով, ենթադրելը, որ նրանք ներկայացնում են եկեղեցին, անմտություն է, և եկեղեցու մասին եզրակացություններ անելը՝ հիմնվելով այդ մարդկանց կարծիքների և վարքի վրա, նոյնպիս անմտություն է: Հետևյալ օրինակները կօգնեն մեզ բացահայտել այս խնդիրը:

Այս, որ Հիսուս Քրիստոսի հարությունն էապես կարևոր վարդապետություն է, անվիճելի է: Եթե մարդը լիարժեք չի ընդունում այս վարդապետությունը, նա չի կարող քրիստոնյա համարվել ոչ մի աստվածաշնչյան կամ պատմական չափանիշով: Այսպես որ, եթե մենք հարցում անցկացնենք հազար մարդուց, որոնք պարում են, թե քրիստոնյա են, և պարզվի, որ նրանց 75 տոկոսը չի հավատում հարությանը, մենք չենք կարող տրամարանորեն եզրակացնել, որ բոլոր քրիստոնյաների 75 տոկոսը չի հավատում հարությանը: Ավելի տրամարանական է եզրակացնել, որ իրենց քրիստոնյա համարող մարդկանց 75 տոկոսն ընդհանրապես քրիստոնյա չէ: Այս փաստարկն էլ ավելի ծավալելու համար, պատկերացրեք մի տեղական եկեղեցի, որը տիտրահոչակ է իր ատելությամբ, վեճերով և կոհիմներով: Նրանց ամսական անդամական հավաքույթի ժամանակ սարսափելի վեճ է բռնկվում, որի պատճառով եկեղեցու մի կեսը դուրս է գալիս մյուսի դեմ: Այդ հավաքույթը լցված է բարկությամբ, տարածայնություններով, մեղադրանքներով և չարակամ սպառնալիքներով: Ի վերջո, մի աստվածապահություն մարդ այդ համայնքից ոտքի է ելնում և բացականչում. «Մենք քրիստոնյաներ ենք և այդ պատճառով չենք տատենք մեկս մյուսին»: Սակայն նա ավելի ճիշտ կլիներ, եթե ասեր. «Մենք ատում ենք մեկս մյուսին և այդ պատճառով մենք քրիստոնյաներ չենք»¹⁹:

Ճշմարիտ եկեղեցին իրեն շրջապատող մշակույթի պես անբարու և անսատված չէ: Թեև այն դեռ փառավորված չէ, այն առանձնանում է սրբությամբ, նվիրմամբ և հնագանդությամբ: Եթե այն սայթաքում և մեղքի մեջ է ընկնում, այն կոտրվում է, ապաշխարում է և կամենում

19. Այս օրինակը պատկանում է հովիվ Զարլզ Լեյտերին, ով հովվում է «Լեյք Ռոուդ Շեյփլ» եկեղեցին Միստրի նահանգի Կիրկսվիլ քաղաքում:

Է ընդունել իր մեղքն Աստծո և մարդկանց առջև: Այն մարդիկ, ովքեր այլ կերպ են հավատում, գրեթե պատկերացում չունեն եկեղեցու բնության մասին, ինչպես նաև՝ Նոր ուստի խոստումների վեհության մասին, որոնց վրա այն հիմնված է:

Երրորդը՝ խոսենք այն բարի մտադրություններ ունեցող մարգարեների մասին, որոնք հանդիմանում են եկեղեցին իր ենթադրյալ պղծությունների մեջ՝ անվանելով այն ինչպես ասես՝ սկսած Սոդոմից և Գոմորից մինչև մոլորված մարմնավաճառ: Եթե մենք նայում ենք այն հաստատությանը, որը մարդիկ ներկայումս եկեղեցի են անվանում, մենք իսկապես տեսնում ենք բազմաթիվ պղծություններ և պոռնկություններ: Հաճախ, այսպես կոչված քրիստոնյաների մեջ գոյություն ունի այնպիսի անբարոյություն, որը չկա նոյնիսկ անհավատների մեջ. Նրանք այնախի խայտառակ արարքներ են թույլ տալիս, որոնց մասին մենք նոյնիսկ չենք կարող խոսել՝ առանց պղծվելու²⁰: Այսուամենայնիվ, նման վարքը հատուկ չէ Քրիստոսի հարսնացուին. այն հատուկ է ոչխարների հանդերձներ ունեցող գայլերին և հասկերի հետ մեծացող որոշմներին²¹:

Ճշմարիտ եկեղեցին անընկալունակ չէ մեղքի հանդեալ և նոյնիսկ կարող է որոշ ժամանակով խճճվել աշխարհիկ գործերի մեջ: Նմանապես, ճշմարիտ հավատացյալը պայքարում է մեղքի դեմ և նոյնիսկ կարող է ցավալիորեն անկում ապրել: Այնուամենայնիվ, ոչ ճշմարիտ եկեղեցին, ոչ ճշմարիտ հավատացյալը չեն ապրում այս աշխարհի անաստված և անբար գործերով: Վարդը, ինչ անուն էլ ունենա, միևնույն է՝ վարդ է, քանի որ այն կրում է վարդի հատկանիշները՝ անկախ այն անոնից, որը տրված է իրեն: Նմանապես, փուշը, միևնույն է՝ փուշ է, նոյնիսկ եթե այն վարդ կոչվի: Մենք պետք է տարբերենք նրանց, ովքեր հրապարակավ նոյնացնում են իրենց Քրիստոսի և Նրա եկեղեցու հետ, նրանցից, ովքեր իրականում քրիստոնյաններ և Քրիստոսի մարմնի անդամներն են:

Հիմնվելով այս ճշմարտության վրա՝ այն «մարգարեները», որոնք հանդիմանում են եկեղեցին, պետք է զգուշություն ցուցաբերեն այն բանում, թե ինչպես են իրենք գնահատում եկեղեցին և ինչպես են դիմում նրան: Մենք չպետք է մեղադրենք գառներին այծերի գործերի մեջ, ոչ էլ այրենք ցորենի դաշտը որոշմների պատճառով: Ավելին՝ մի՛թե սարսափելի չէ Սոդոմ և Գոմոր անվանել Քրիստոսի հարսնացուին կամ վիրավորել նրան՝ մարմնավաճառ կոչելով: Ճիշտ է, որ նման խոսքեր օգտագործվում են Հին կտակարանում Իսրայելի վերաբերյալ, բայց մենք պետք է հիշենք, որ Աստված առաջին հերթին

20. Ա Կորնթացիների 5.1, Եփեսացիների 5.12

21. Սատթեռս 7.15, 13.24-30,36-43

դիմում էր չվերածնված մարդկանց, որոնց թշնամաքով լի սրտերը քարից էին, և որոնց գործերը հաճախ ավելի վատն էին, քան իրենց շրջապատող հեթանոսներինը: Այնուամենայնիվ, ոչ ոք չպետք է նման խիստ բառեր օգտագործի ճշմարիտ եկեղեցու՝ Քրիստոսի հարսնացուի հասցեին: Ոչ մի պատվավոր անձնավորություն անգործ չի կազմնի, մինչ մեկ ուրիշը մեղադրում է իր կոտըն անհավատարմության, անմաքրության և պոռնկության մեջ: Մի՞թե մենք կարծում ենք, որ Քրիստոսը կիանդուրժի նման վերաբերմունքը Իր սիրելի հարսնացուի հանդեպ: Թեև մենք պետք է ցոյց տանք նրան իր մեղքը, սակայն երբեք չպետք է մոռանանք, թե ում ենք դիմում, և թե ում է նա պատկանում:

Ահա թե ինչու է Նոր կտակարանի մարգարեներին պատվիրված խոսել եկեղեցուն «շինություն, միսիարություն և ափոփանք» (Ա Կորնթ. 14.3): Նրանց պատվիրված չէ հանդիմանել եկեղեցուն այն հանցանքների մեջ, որոնք ինքը չի գործել, և վիրավորել այնպիսի բառերով, որոնք սազական չեն նույնիսկ ամենից խստասիրու և անպիտան մարդկանց: Մենք պետք է նախանձավոր լինենք եկեղեցու համար «աստվածային նախանձով», սակայն մեր հարգանքը նրա դիրքի հանդեպ՝ որպես Քրիստոսի հարսնացու, պետք է զապի մեր լեզուների կրակը (Բ Կորնթ. 11.2): Մենք պետք է անենք այն ամենը, ինչ մեր ուժերի մեջ է, որպեսզի ներկայացնենք եկեղեցին Քրիստոսին՝ որպես սուրբ կույսի²²: Այնուամենայնիվ, մենք պետք է զգոյշ լինենք, որ ոչ մի դեպքում չմնշենք և կոպտորեն չվերաբերվենք նրան:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԿՆՀԱՅՑ

ՄԱՐՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այժմ մենք պետք է մի քանի կարևոր հարց տանք: Ինչո՞ւ է թվում, թե ճշմարիտ եկեղեցին աննկատ է այս աշխարհում, և ինչո՞ւ կան բազմաթիվ մարդիկ, որոնք նույնացնում են իրենց Քրիստոսի հետ, սակայն գրեթե չեն բերում Նրա պատուղը: Ինչո՞ւ է թվում, թե մարմնավոր մարդիկ մեծամանություն են կազմում ժամանակակից ավետարանական եկեղեցում, իսկ հոգևոր և նվիրված մարդիկ աննշան մնացորդ են: Թեև մեր բացատրությունները կարող են մի ամբողջ գիրք զբաղեցնել, մենք պետք է սահմանափակվենք միայն մի քանիտով:

Առաջինը՝ բազմաթիվ մարմնավոր մարդիկ նույնացնում են իրենց եկեղեցու հետ այն պատճառով, որ ավետարանական ամբիոններից մեծ մասամբ քարոզվում է ոչ սուրբգրային Ավետարան: Ինչպես նշել ենք այս գրքի ընթացքում, մենք փոքրացրել ենք Հիսուս Քրիստոսի

22. Բ Կորնթացիների 11.2

Ավետարանը՝ հասցնելով մի քանի դավանանքային կետերի, որոնք մենք կոչ ենք անում մարդկանց ընդունել: Մենք հեռացրել ենք Ավետարանի արմատական պահանջները և դրա վրդովեցուցիչ դրույթների մեծ մասը: Մենք անսահն կերպով ենք ներկայացրել Աստծո գերազանցությունը և արժեքը՝ իր ստեղծագործության հանդեպ, և կանգնեցրել ենք մարդուն աստվածային ներկայացման բեմի վրա: Մենք հազվադեպ ենք հիշատակում և բացատրում մարդու ծայրահեղ արատավորությունը և նրա մեղքի զարհութելի բնույթը՝ այն ուսմունքները, որոնք խոցում են մարդկային խիղճը: Մենք փոխարինել ենք ապաշխարելու և հավատայու կոչն աղոթք կրկնելով: Եկեղեցական առաջնորդները փրկության հավաստիացում են չորհում մարդկանց՝ գրեթե չիետաքրքրվելով դարձի ապացոյցների առկայությամբ: Արմատական աշակերտության ծանրագին կանչը և սրբության պահանջն իսպան բացակայում են: Ահա թե ինչու մարմնավոր և դարձի չեկած մարդիկ կարող են հավակնել Սիոնին և նրա պարիսայների ներսում բնակվելուն՝ չունենալով ոչ մի խոճի խայթ և հակասություն իրենց մտքում:

Երկրորդը՝ բազմաթիվ մարմնավոր մարդիկ նոյնացնում են իրենց եկեղեցու հետ այն պատճառով, որ մենք ցածր կարծիք ունենք դարձի մասին: «Պատկերացումը վերածնման մասին գրեթե կորավել է, և «վերստին ծնվել» արտահայտությունը սկսել է նշանակել «ընդունել Քրիստոսին» կամ «ապաշխարության աղոթք անել»: Ավելին՝ շատերը հավատում են, որ մարդը կարող է ճշմարտապես վերստին ծնված լինել, սակայն լիովին ապրել աշխարհիկ կյանքով: Եկեղեցին ոչ միայն հանդուրժում է տևական մարմնավորությունը, այլև, թվում է՝ ակնկալում է այն: Այնպիսի տպավորություն է, որ վերածնման ծայրահեղ բնույթը՝ որպես Սուրբ Հոգու գերբնական վերստեղծող աշխատանք, անհասանելի է մեզ համար: Թվում է՝ մարդիկ այլս չեն հավատում, որ Ավետարանն ի գորու է ճնշել մեղքը դարձի եկած մարդու կյանքում և դրդել նրան ավելի մեծ քրիստոսանմանության: Քարոզիչները հազվադեպ են հոչակում առաքելական ուղերձը, որը պահանջում է «ապաշխարել և դառնալ Աստծոն՝ ապաշխարության արժանի գործեր գործելով» (Գործ 26.20): Մեր «կոչումը և ընտրությունը հաստատ» անելու հորդորը բացակայում է մեր քարոզներից, ինչպես և զորությունը՝ մեր ամբիոններից (տեսք Բ Պետր. 1.10): Մենք այլև չենք մտածում, որ անհրաժեշտ է ստուգել և քննել մեզ՝ տեսնելու համար, թե արդյոք մենք հավատքի մեջ ենք²³: Այսպիսվ, մարմնավորները երգում են Սիոնի երգերը՝ մտածելով, որ երկինքն իրենց հավիտենական տունն է, թեև նրանց սիրտը պատկանում է այս աշխարհին:

23. Բ Կորնթացիների 13.5

Մեծ արթնությունից առաջ եկեղեցին լի էր նրբանկատ, բայց մարմնավոր մարդկանցով: Նրանք վստահ էին Աստծո առջև իրենց դիրքի մեջ՝ իրենց մկրտության, նախահաղորդության և բարեկրթության պատճառով: Նրանք կարծում էին, որ մինչև ուղև ու ծուծը քրիստոնյա էին և ապրում էին մինչև ուղև ու ծուծը քրիստոնեական երկրում: Այսուամենայնիվ, Աստված բարձրացրեց Զորջ Ուայրֆիլի, Զոն և Չարլզ Վեսլիների, Հոուել Հարիսի և Դանիել Շոռովենդի նման մարդկանց, որոնց ուղերձը հիմնովին ցնցեց Ասգլիան և Ուելսը: Նրանց ուղերձի ուժը հիմնված էր այն համոզմունքի վրա, որ Ավետարանը Աստծո գորությունն է, որն ազատում է մարդուն ոչ միայն մեղքի դատապարտությունից, այլև՝ դրա իշխանությունից: Նրանք քարոզում էին, որ վերածնունդը հրաշագործ իրադարձություն է, որը կարող է փոխել ամենավատ մեղավորին՝ կենդանի Աստծո սուրբ դարձնելով: Եթե այդ մարդկանց քարոզները հանդիմանում էին եկեղեցու մարմնավոր անդամներին, նրանք կորցնում էին իրենց կեղծ հավաստիացումը և՝ կամ վագում էին Գորգոթայի մոտ, կամ բարկանում էին՝ ընդդիմանալով նրանց, ովքեր համարձակվում էին վիճարկել իրենց հավատքի անկեղծությունը և դարձի իսկությունը:

Նոյնը պետք է տեղի ունենա այսօր, եթե ցանկանում ենք արթնություն և բարեկարգում (ոեֆորմացիա) տեսնել: Ուայրֆիլի օրերում մարմնավոր մարդիկ հավաստիացում էին գտնում իրենց մկրտության և նախահաղորդության մեջ: Մեր օրերում նոյն տեսակի մարմնավոր մարդիկ հավաստիացում են գտնում ակնհայտ անկեղծությամբ մեկ անգամ կայացրած որոշման և մեկ անգամ արված աղոթքի մեջ: Բարի մտադրություններ ունեցող հովհանքները, ովքեր ընդունում են նրանց Աստծո ընտանիքի մեջ՝ առանց զանազանության, պատշաճ ուսուցման և անհրաժեշտ ավետարանական զգուշացումների, հաստատում են նրանց կեղծ հավաստիացումը: Եթե մենք բարեկարգման և արթնության ենք փափագում այն կառույցում, որը հայտնի է որպես Ավետարանական եկեղեցի, մենք պետք է աղաղակենք ամբիոնից. «Դուք պետք է վերատի՞ն ծնվեք»: Այսուամենայնիվ, մինչև այդ ճշմարտությունը պատշաճ կերպով ազդարարելը, մենք, նախ, պետք է հասկանանք, թե ինչ է այն նշանակում:

Երրորդը՝ բազմաթիվ մարմնավոր մարդիկ նոյնացնում են իրենց եկեղեցու հետ, քանի որ եկեղեցին սխալ ուղերձ է հղում այն մասին, որ ինքը համապատասխան է այս աշխարհին: Մերօրյա այս սխալական, բայց լայնորեն տարածված տեսությունը պնդում է հետևյալը. եկեղեցին պետք է հնարավորին նման լինի այս աշխարհին, որպես ի համապատասխան լինի և շահի մարդկանց Քրիստոսի համար: Այսպիսով, մենք փոխում ենք մեր արտաքին տեսքը, մեր ծառայութ-

յունները և մեր շեշտադրումը: Մենք սկսում ենք հետաքրքրվել այն բաներով, որոնք հետաքրքրում են մարմնավոր մարդկանց, որպեսզի նրանք հետաքրքրվեն մեզնով: Սա լուրջ սխալ է: Եկեղեցին համապատասխան չէ այս աշխարհին այն պատճառով, որ մեր արտաքին տեսքը նման է այս աշխարհին, մենք վարվում ենք դրա պես կամ կիսում ենք դրա հետաքրքրությունները: Մենք համապատասխան ենք այն պատճառով, որ ծգուում ենք հաղատակեցնել մեզ Քրիստոսին մեր կյանքի ամեն բնագավառում, և Նա վերափոխում է մեր հետաքրքրությունները, վարքը և արտաքին տեսքը: Մենք համապատասխանենք այս աշխարհին այն պատճառով, որ տարբերվում ենք դրանից, և որքան մեծ է մեր տարբերությունը, այնքան ավելին է մեր համապատասխանությունը: Իր առանձնահատուկ հատկանիշների շնորհիվ, արև ագրում է այն ամենի վրա, ինչի հետ օգտագործվում է: Լոյսի եզակի հատկանիշները տարբերում են այն խավարից:

Մարդիկ չեն ընդունի Քրիստոսին այն պատճառով, որ մենք վերածել ենք Եկեղեցին մնահառության տոնավաճառի, սպորտային մարզադաշտի կամ ժամանցային կենտրոնի: Եթե մենք օգտագործենք մարմնավոր միջոցներ, որպեսզի գրավենք մարմնավոր մարդկանց, մենք պետք է շարունակենք օգտագործել մարմնավոր միջոցներ, որպեսզի պահենք նրանց: Մենք չենք կարող, ինչպես ոմանք ենթադրում են, փոխել ճաշացանկն ավելի հոգևոր սննդակարգով ճաշի կեսից: Առանց Սուրբ Հոգու գերբնական աշխատանքի, որը կատարվում է, երբ Ավետարանը քարոզվում է ճիշտ կերպով, մարդիկ երբեք չեն ցանկանա այն հացը, որն իջել է Երկնքից²⁴:

Ավելին՝ մշտապես զոհացնելով մարմնավոր մարդկանց՝ մենք սովորական ենք մատնում իսկական ոչխարներին: Նրանք չեն ցանկանում զվարճություններ: Նրանք ցանկանում են երկրպագություն: Նրանք չեն կարող ապրել տարօրինակ հակաթույներով, խրատական պատմություններով և կյանքի սկզբունքներով: Նրանց անհրաժեշտ է Աստծո Խոսքի ճշմարիտ կաթը²⁵: Նրանք կարող են ավելի պակաս չափով հոգալ իրենց անմիջական կարիքները: Նրանք ցանկանում են սովորել, թե ինչպես հնագանդվել և ծառայել Աստծոն: Նրանք չեն ցանկանում, որ ինչ-որ մեկը շոյի իրենց ականջները կամ ինքնագնահատականը: Նրանք ցանկանում են կերպարանվել Քրիստոսի պատկերով: Նրանք չունեն այն ամենի կարիքը, ինչով իրենց կերակրում են դարձի չեկած մարդկանց վրա կենտրոնացած բազմաթիվ մշակութային միջոցառումների ժամանակ: Նրանք պարզապես ցանկանում են ճանաչել Աստծուն և Հիսուս Քրիստոսին, Ուս

24. Հովհաննես 6.26,35

25. Եքրայեցիների 5.14, ԱՊետրոս 2.2

Նա ուղարկել է²⁶: Ի լրումն այս ամենի, որքան սարսափելի կլինի հովվի, եթեցի կամ ուսուցչի համար, եթե պարզվի, որ իր ամբողջ կյանքի և ծառայության ընթացքում նա սիրաշահել է աշխարհիկներին և գոհացրել է մարմնավոր մարդկանց կրքերը, սակայն թողել է Քրիստոսի ոչխարներին առանց կերակորի և հոգատարության:

Չորրորդը՝ բազմաթիվ մարմնավոր մարդիկ նոյնացնում են իրենց եկեղեցու հետ այն պատճառով, որ մենք չենք հնազանդվել Աստծուն եկեղեցական կարգապահության հարցում: Թեև եկեղեցական կարգապահությունը Նոր կտակարանի եկեղեցու կյանքի անժխտելի մասն է, ավետարանականների շրջանում լայն թյուրքմբոնում կա դրա վերաբերյալ²⁷: Եկեղեցական կարգապահության դեմ օգտագործվող ամենատարածված փաստարկն այն է, որ այն գորկ է սիրուց և դատող է: Հերքերով սա՝ մենք ընդամենը պետք է մասնանշենք մեր Տիրոջ ուսմունքները, Ով պատվիրեց այսպես վարվել: Եթե մենք գորկ ենք սիրուց՝ հնազանդվերով պատվիրանին, մի՛թե Նա գորկ էր սիրուց՝ տալով այն: Թեև մենք չպետք է դատենք քննադատական վերաբերմունքով, մեզ պատվիրված է դատել և, անհրաժեշտության դեպքում, նոյնիսկ հեռացնել²⁸: Եթե ամեն ինչի ավարտին մենք դատելու ենք հրեշտակներին, արյոջն ներկայումս ի վիճակի չենք դատելու եկեղեցուն և նրա բարեկեցությանը վերաբերող հարցերը²⁹:

Մեր պարծանքն այն սիրով, որը հրաժարվում է հանդիմանել չապաշարող մարդկանց մեղքը, լավ չե: Մի՞թե մենք չենք հասկանում, որ մի փոքր թթխամորը խմբում է ամբողջ զանգվածը³⁰: Մի՞թե մենք սեր ենք ցուցաբերում Աստծո հանդեպ, երբ թոյլ ենք տալիս, որ մեղքն անզուսապ կերպով տարածվի եկեղեցում, որպեսզի Աստծո անունը հայոցով անհավատների մեջ³¹: Մի՞թե մենք սեր ենք ցուցաբերում մեր եղբայրների հանդեպ, ովքեր Քրիստոսի մեջ են, երբ թոյլ ենք տալիս նրանց կործանվել շարունակական մեղքով, թե դրանով ի ցոյց ենք հանում մեր եսասիրությունը և այն, որ մենք խուսափում ենք բախումներից՝ հանուն մեր ապահովության:

ԱՍՓՈՓՈՒՄ

Լավ կլինի, եթե հիշենք, որ եկեղեցին պատկանում է Աստծուն, և այն Քրիստոսի հարմացուն է: Մենք չունենք իշխանություն անելու այն, ինչ ճիշտ է թվում: Մենք պետք է հնազանդվել Քրիստոսի իշխանութ-

26. Հովհաննես 17.3

27. Մատթեոս 18.15-20, Ա Կորնթացիների 5.1-5, Բ Թեսարոնիկեցիների 3.6,14

28. Մատթեոս 7.1-5,15-20, Ա Կորնթացիների 5.13

29. Ա Կորնթացիների 6.3

30. Ա Կորնթացիների 5.6

31. Հռոմեացիների 2.24

յանը և հոգ տանենք Եկեղեցու մասին՝ համաձայն Նրա Խոսքի: Մենք պետք է ծառայենք Աստծո ժողովրդին Աստծո ուզած կերպով:

Որքան թիշ է այսօր քարոզվում ճշմարիտ Ավետարանը: Որքան մարդիկ են անվրով նստած Եկեղեցական նստարաններին, թեև նրանք փրկված չեն: Քանի, այսպես կոչված, Եկեղեցիներ են ծառայում մարմնավոր մարդկանց՝ հաճեցնելով նրանց, մինչ Աստծո գառները հյուծվում են Խոսքի, ճշմարիտ երկրպագության և աստվածահան շիման քաղցից: Որքան հաճախ է Աստծո անոնը հայհոյվում անհավատների մեջ, որոնց պատկերացումը Քրիստոսի և Եկեղեցու մասին խեղաթյուրվել է մարմնավոր մարդկանց պատճառով, որոնք պնդում են, թե պատկանում են Քրիստոսին, այնինչ բաժին չունեն Նրա հետ:

Մենք պետք է վերաբառնանք աստվածաշնչան պատկերացմանը դարձի մասին՝ որպես Սուրբ Հոգու գերբնական աշխատանքի, որի արդյունքը շարունակական սրբացումն ու պտղաբերությունն է: Մենք պետք է վերաբառնանք աստվածաշնչան պատկերացմանը ճշմարիտ Եկեղեցու մասին՝ որպես փրկված հոգեսոր տղամարդկանց և կանանց հասարակության, որոնք ճանաչել են Քրիստոսին և չեն ցանկանում ոչինչ՝ դրանից ավելի կամ դրանից պակաս: Մենք պետք է դադարենք Եկեղեցին սնափառության տոնավաճառի վերածելով՝ փորձելով տպավորել և հետաքրքրել մարմնավոր մարդկանց: Աստված վճռել է ստեղծել Իր համար մի ժողովուրդ, որոնք կհայտարարեն, որ Նա իրենց Աստվածն է: Նա վճռել է անել սա Իր փառավոր Ավետարանի ազդարարմամբ և Իր սուրբերի վկայությամբ, որոնք վարկում են պարզությամբ, սրբությամբ և սիրով՝ ապացուցելով, որ իրենք Աստծո անբիծ և անարատ զավակներն են՝ առանց մեղադրանքի այն կամակոր և ծուած ազգի մեջ, որոնց մեջ նրանք երևու են՝ ինչպես լուս տվողներ աշխարհում³²:

32. Փիլիպեցիների 2.15

ԳԼՈՒԽ ՏԱՍԽԵՐԵՔ



Քրիստոնյահի հաստատ գիտելիքն Աստծո մասին

«Եվ այլևս մեկ մարդ իր ընկերոջը և մեկ մարդ իր եղբորը չպիտի սովորեցին՝ ասեղով, թե «Ճանաչե՛ք Տիրոջը», որովհետև նրանք ամենք պիտի ճանաչեն Իսά՝ նրանց փոքրերից մինչև նրանց մեծերը, - ասում է Տերը, - որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերը այլևս չպիտի հիշեմ»:

— Երեմիա 31.34

Ահա ամենազարմանալի մարգարեությունն այս մասին, որ եկեղեցու ամեն անդամ պետք է իրապես և մտերմորեն ճանաչի Աստծոն: Մենք չպետք է հասկանանք սա որպես փոխաբերություն կամ չափազանցույթոն, այլ՝ իինկտակարանյան մարգարեություն, որը կատարվել է նորկտակարանյան քրիստոնյահի կյանքում: Եբրայեցիների թղթի հեղինակը հաստատում է այս ճշմարտությունը՝ հանգամանորեն մեջքերելով այս հատվածը և վերագրելով այն Հիսոս Քրիստոսի եկեղեցուն. «Եվ նրանց ամեն մեկը չի սովորեցնի իր ընկերոջը, և ոչ էլ ամեն մեկը՝ իր եղբորը, և ասի՝ ճանաչի՛ Տիրոջը, որովհետև ամեն էլ կճանաչեն Իսա՝ նրանց փոքրերից մինչև մեծը: Որովհետև նրանց անօրինությունները ներող կլինեմ և նրանց մեղքերը և նրանց անօրինություններն այլևս չեմ հիշի» (8.11,12):

ԱՆՏԵՂՅԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՈՒԽՏԻ ՆԵՐԵՐԸ

Այս խոստման կարևորությունը հասկանալու համար նախ պետք է հասկանանք դրա համատեքստը: Հին ուխտի ներքո գիտելիքն Աստծո մասին կարծես սահմանափակված լիներ մարդկանց հարաբերականորեն փոքր խմբի մեջ: Այն ստացողների թվում էին մարգարեները, քահանաները, դպիրները և երբեմն՝ թագավորները: Իրենց հերթին, նրանք պատասխանատու էին իրենց գիտելիքի համար և պարտավոր էին սովորեցնել Իսրայելի ուխտի ժողովրդին: Այնուա-

մենայնիվ, նման ուսուցանումը վհատեցնող առաջադրանք էր՝ ոչ միայն Իսրայելի մեծաթիվ լինելու, այլև ժողովրդի հոգևոր կուրույժյան և խատության պատճառով։ Իրականում, նրանց ինքնակամ անտեղյակությունը, թվում է, Աստծո ամենամեծ և հաճախակի մեղադրանքն էր՝ ուղղված Իր Հին ուխտի ժողովրդին։

«Լսե՛ք Տիրոջ Խոսքը,
Ո՛վ Իսրայելի որդիներ,
Որ Տերը վեճ ունի Երկրի բնակիչների հետ,
Որովհետև ճշմարտություն չկա, ողորմություն չկա,
Եվ Աստծո գիտություն չկա Երկրի մեջ» (Ուվե 4.1):

«Որովհետև հիմար է Իմ ժողովուրդը.
Ինձ չճանաչեցին.
Նրանք ասմիտ զավակներ են
Եվ բան չհասկացող.
Նրանք իմաստուն են չարություն անելու,
Բայց բարություն անելը չգիտեն» (Երեմիա 4.22):

«Որովհետև դա մի ապստամբ ժողովուրդ է՝
Ստախոս որդիներ,
Որդիներ, որ չեն ուզում լսել Տիրոջ օրենքը:
Որ ասում են տեսնողներին. «Մի՛ տեսե՛ք,
Եվ մարգարեներին, թե. «Մեզ համար ուղիղ բաներ
մի՛ մարգարեացե՛ք.
Մեզ կակուր բաներ ասե՛ք, խարենություններ մարգարեացե՛ք:
Հեռացե՛ք ճանապարհից,
Ծոե՛ք ուղուց,
Վերցրե՛ք մեր առաջից
Իսրայելի Սուրբին» (Եսայի 30.9-11):

Այս խոսքերից հասկանում ենք, թե ինչո՞ւ էր Աստված հաճախ զգուշացնում Իր մարգարեներին, որ նրան ուղարկում էր նրանց մի ժողովրդի մոտ, որոնք չին լսելու։ Նա ասաց Եսայոն, որ նա պետք է գնար մի ժողովրդի մոտ, որոնց սրտերն անզգա էին, ականջները թանձրացած էին և աչքերը ծեփած էին¹։ Նա զգուշացրեց Երեմիային, որ նա պետք է խոսեր իմար ժողովրդի հետ, որոնք չունեին գիտելիք Աստծո մասին, և անմիտ զավակների հետ, որոնք ոչինչ չին հասկանում²։ Եվ վերջապես, ուղարկելով Եզեկիելին՝ որպես մարգարե Իսրայելի համար, Աստված հայտարարեց. «Ոչ թե դժվարիմաց և ծանրալեզու շատ ժողովուրդների մոտ, որոնց խոսքերը դու չես հասկանում։ Հիրավի եթե քեզ նրանց մոտ ուղարկեի, նրանք քեզ մտիկ կտային։ Բայց Իսրայելի տունը չի ուզելու քեզ լսել, որովհետև նրանք չեն

1. Եսայի 6.10

2. Երեմիա 4.22, 10.14

ուզում ինձ լել. որովհետև ամբողջ Իսրայելի տունը ճակատապինդ և խստասիրտ է: Ահա Ես պինդ եմ շինում քո երեսը՝ նրանց երեսի դեմ, և ճակատդ ամուր՝ նրանց ճակատի դեմ» (Եղեկիել 3.6-8):

Արդեն մարգարեների ժամանակ Իսրայելը ցուցադրեց իր հոժարակամ անտեղյակությունն Աստծո մասին: Այնուամենայնիվ, նրանց գիտելիքի պակասի պատճառը թաքնվող Աստված չէր, այլ՝ ժողովրդի խստացած սրտերը, սերը մեղքի հանդեպ և «Իսրայելի Սուրբին իրենց առջևից վերցնելու» ցանկությունը (Եսայի 30.11): Գրեթե ամեն անգամ Իսրայելի անտեղյակությունը ճշմարիտ Աստծո մասին վերագրվում է ժողովրդի սրտերի արատավոր վիճակին: Երեմիա մարգարեն վերագրում է իսրայելցիների գիտելիքի պակասը նրանց հիմարությանը և չարությունը սերտորեն ճանաչելուն³: Եսային կշտամբում է նրանց խստացած սրտերը և ապստամբ վերաբերմունքն Աստծո հանդեպ⁴: Եղեկիելը մատնացույց է անում նրանց համառությունը և կամակորությունը⁵:

Նոր կտակարանում Պողոս առաքյալը հատակ ներկայացնում է Աստծո մասին անտեղյակության և մարդկային սրտի արատավորության անմիջական կապը՝ վերագրելով ամբողջ մարդկության անտեղյակությունը «մարդկանց... ամբարշտության և անիրավության... որ ճշմարտությունն անիրավությամբ բռնում են»⁶: Սա է պատճառը, որ անտեղյակությունը հանցանք է համարվում, իսկ անտեղյակ մարդկանց վերաբերվում են հանցավորի պես: Սա է պատճառը, որ Աստված վերջնականորեն գերության ուղարկեց իսրայելցիներին՝ տգիտության պատճառով, և կործանեց նրանց՝ գիտելիք չունենալու պատճառով⁷:

ԱՍՏԾՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ

Հին կտակարանի նորկտակարանյան մարգարելությունների մեջ Աստված խոստացավ պատրաստել իր համար այնպիսի ժողովուրդ, որոնք ճանաչելու էին Իրեն, վախենալու էին Իրենից և վարվելու էին իր պատվիրանների համեմատ: Ավելին՝ Նա խոստացավ իրականացնել այդ նպատակը Մեսիայի գալուստի միջոցով՝ Նրա մարմնավորման, քափության և հոգևորապես մահացած մարդկանց հարույուն տալու գորությամբ⁸:

3. Երեմիա 4.22

4. Եսայի 6.10, 30.9

5. Եղեկիել 3.7

6. Հռոմեացիների 1.18

7. Եսայի 5.13, Ովսե 4.6

8. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ժամանակ կգա և հիմա է, որ մտուկներն Աստծո Որդու ձայնը կլսն, և լսողները կապրեն» (Հովհ. 5.25):

Համաձայն Հին կտակարանի գրքերի՝ Մեսիայի գալուստի գլխավոր արդյունքներից մեկը լինելու էր այն, որ Նա փրկելու էր Իր ժողովրդին հոգևոր կուրությունից և դրանից բխող բարոյական ստրկությունից: Եսայի 42.6,7-ում գտնվող մեսիական մարգարելությունը պարզորեն հայտնում է այս ճշմարտությունը: Այս հատվածում Աստված առաջադրանք է տալիս Մեսիային և բացատրում է Նրա աշխատանքի նպատակը.

«Ես՝ Տերս, կանչել եմ Քեզ արդարությամբ,
Եվ բռնում եմ Քո ձեռքը և Քեզ պաշտպանում,
Եվ Քեզ պիտի ժողովրդի ուստ շինեմ
Եվ ազգերի լոյս՝
Կոյրերի աչքերը բանալու,
Բանտարկյաներին բանտից հանելու,
Եվ կապանքի տնից՝ խավարի տանը նստողներին»:

Որպես Աստծո մարմնավորված Որդի՝ Մեսիան պարզապես լոյսը կրող չէր լինելու. Նա հնըն էր լինելու լոյսը: Նա չէր լինելու ևս մեկ հայտնություն՝ ի թիվս շատերի. Նա լինելու էր Աստծո մեծագույն հայտնությունը, որն այս աշխարհը երբէս ճանաչելու էր: Այս պատճառով, Եսայի մարգարեն հայտարարեց, որ խավարում գնացող ժողովորդը մեծ լոյս էր տեսնելու, և խավարի մեջ նստած ժողովրդի վրա լոյս էր ծագելու⁹: Ամբակում մարգարեն ավելացրեց Եսայու խոսքերին՝ ազգարարելով, որ Աստծո հայտնությունը Մեսիայի միջոցով չէր սահմանափակվելու միայն մեկ տարածաշրջանով կամ մեկ ժողովրդով, այլ Նրա միջոցով ամբողջ երկիրը լցվելու էր Տիրոջ փառքի գիտությամբ, ինչպես որ ջրերը ծածկում են ծովը¹⁰: Հետևաբար, այս գիտելիքն առաջացնելու էր այնպիսի նվիրում մարդկանց մեջ, որ արեգակի ելքից մինչև նրա մուտքը Աստծո անոնքը մեծ էր լինելու ազգերի մեջ¹¹:

Մարմնավորման միջոցով Աստծո գիտությունը լոյս էր տալու այս անկում ապրած աշխարհի ամենախսավար վայրերում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Աստվածաշնչի ուսմունքները մարդու սրտի արատավորության և Աստծո ճանաչողությանն ուղղված թշնամանքի մասին՝ մենք հասկանում ենք, որ նոյնիսկ մեծագույն հայտնությունները գրեթե չեն ազդելու մարդու սրտի վրա, եթե այն ինչ-որ կերպով չվերափոխվի, որպեսզի կարողանար ընդունել դրանք: Մինչև որ գիտելիքն Աստծո մասին ծաղկունք ապրի որևէ անհատի կամ մի խումբ մարդկանց կյանքում, մարդու սիրտը պետք է նորոգվի կամ

9. Եսայի 9.2, Մատթեոս 4.15,16

10. Եսայի 11.9, Ամբակում 2.14

11. Սաղաթիա 1.11

Վերափոխվի: Սա է պատճառը, որ Հին կտակարանի նորկտակարանյան խոստումները ոչ միայն ակնկալում էին, որ Մեսիան հայտնելու էր Աստծոն, այլև՝ որ Նրա զորությունը հարություն էր տալու մարդկային սիրտը, և այն հոժարությամբ ընդունելու էր Աստծո մասին հայտնությունը: Ինչպես որ Աստված հայտնեց Երեմիա մարգարեի միջոցով. «Եվ նրանց մի սիրտ պիտի տամ՝ ինձ ճանաչելու» (Երեմիա 24:7):

Այս խոստումը գտնվում է Նոր ուստի հիմքում: Աստված վերցնելու էր Իր ժողովրդի քարե սրտերը և փոխարինելու էր մարմնեղեն սրտերով¹²: Նա գրելու էր Իր օրենքը նրանց նոր սրտերի վրա, և բոլորը ճանաչելու էին Նրան՝ փոքրից մինչև մեծը¹³: Այսպիսով, Նա հետացնելու էր այն խավարը, որը շրջապատում էր Իր ժողովրդին, և յուրաքանչյուրը Իր ուստի ժողովրդից ունենալու էր իրական և մտերիմ գիտելիք Նրա Ասձի և կամքի մասին՝ ամենավայրի ցեղին պատկանող ամենից անկիրթ մարդուց մինչև պատմության մեջ մեծագոյն աստվածաբանները և եկեղեցական ծառայողները: Ովսէ մարգարեն հրաշալի կերպով ամփոփում է այս ամենը.

«Եվ քեզ պիտի նշանեմ ինձ համար հավիտյան:
 Եվ քեզ պիտի նշանեմ ինձ համար
 Արդարությամբ և իրավունքով
 Եվ ողորմությամբ ու գթությամբ:
 Եվ քեզ պիտի նշանեմ ինձ համար ճշմարտությամբ,
 Եվ դու կճանաչես Տիրոջը» (2.19,20):

ԿԱՏԱՐՎԱԾ ԽՈՍՏՈՒՄԸ

Այս, ինչ Հին կտակարանում մարդիկ միայն մարգարեանում և փափագում էին, հրաշալի կերպով կատարվեց Նոր կտակարանում՝ Հիսոս Քրիստոսի Ասձի և աշխատանքի միջոցով: Նոր կտակարանի հեղինակները պնդում են, որ Նազովիրեցի Հիսոսը ճշմարիտ լոյսն է, որի մասին խոսում էին մարգարեները: Գալով այս աշխարհ՝ Նա լուսավորում է ամեն մեկին¹⁴: Նա աշխարհի Լոյսն է, և Նրան հետևողը «խավարում չի գնա, այլ՝ կյանքի լոյսը կընդունի» (Հովի. 8.12): Ոչ ոք երբեւ չի տեսել Աստծոն, բայց Նա, Ով միշտ Հոր կողքին էր, բացատրեց, թե ինչպիսին է Նա¹⁵: Նա, ով տեսել է Որդուն, տեսել է Հորը, քանի որ Որդին անտեսանելի Աստծո պատկերն է, Նրա փառքի լոյսը և Նրա հության ճշգրիտ նկարագիրը¹⁶:

12. Եզեկիել 36.26

13. Երեմիա 31.33,34

14. Հովհաննես 1.9

15. Հովհաննես 1.18

16. Հովհաննես 14.9, Կողոսացիների 1.15, Եբրայեցիների 1.1,3

Հին կտակարանի մարգարեություններն ակնկալում էին գերազանց զոհ, որը հետացնելու էր երկրի անօրինությունը մեկ օրում¹⁷: Այդ զոհն աղբյուր էր բացելու Դավթի տան համար, որը մաքրելու էր մեղքը և պղծությունը¹⁸: Այն թույլ էր տալու արդար Աստծուն ներել Իր ժողովրդի անօրինությունը և այլևս չհիշել նրանց մեղքը¹⁹: Այն ի զորու էր լինելու հավիտյան նշանել Աստծոն ժողովրդին Իր համար՝ արդարությամբ և իրավունքով²⁰: Նոր կտակարանի հեղինակները պատում են, որ այս մեկընդմիշտ արված զոհը Նազովրեցի Հիսուսն է²¹: Նա է Աստծոն Գառը, որը Վերցնում է այս աշխարհի մեղքը²²: Նրա արյունը Նոր ուխտի արյունն էր, որը թափվեց շատերի մեղքերի թողության համար²³: Նա դարձավ Իր ժողովրդի համար իմաստություն, արդարություն, սրբություն և փրկություն²⁴: Նրա միջոցով նրանք հաշուություն ստացան²⁵: Նա հնքը նրանց խաղաղությունն է²⁶:

Հին կտակարանի մարգարեություններն ակնկալում էին այն ժամանակվան, երբ Աստծոն ամբողջ ժողովուրդը՝ ամենամեծից մինչև ամենափոքքը, ճանաչելու էին Նրան՝ այն ժամանակվան, երբ երկիրը լցված էր լինելու Աստծոն մասին գիտելիքով, ինչպես որ ջրերը ծածկում են ծովը²⁷: Նոր կտակարանի հեղինակները պատում են, որ Հիսուս Քրիստոսն ազդարարեց այդ ժամանակվա գալուստը՝ Իր մահվան, հարության և Սուրբ Հոգու թափման միջոցով²⁸: Նրա Վերածնման աշխատանքի միջոցով մարդու սիրտը վերափոխվում է՝ ճանապարհի տրորված հողից, որը մերժում է Ավետարանի սերմը, վերածվելով բարի հողի, որը խոնարհությամբ ընդունում է սերմված Խոսքը²⁹: Այս նորոգված և պտղաբեր սիրտն «ուսված է Տիրոջից», որպեսզի արժնորի Քրիստոսին և մոտենա Նրան՝ փրկության համար (Հովի. 6.45): Գիտելիքի նման փոխանցումը բնական չէ. այն Սուրբ Հոգու հրաշագործ աշխատանքն է, որը կարելի է համեմատել արարչագործության առաջին օրվա հետ, երբ Աստված կանչեց լույս սկզբից ի վեր գոյություն ունեցող խավարից: Պողոս առաջան այսպես է նկարագրում սա. «Որովհետև Աստված, որ ասաց, թե «Խավարից լույս ծագի», հնքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծոն փառ-

17. Զաքարիա 3.9

18. Զաքարիա 13.1

19. Երեմիա 31.34

20. Ովուե 2.19-20

21. Երրայեցիների 7.27, 9.12, 10.10

22. Հովհաննես 1.29

23. Մատթեոս 26.28

24. Ա Կորնթացիների 1.30

25. Հռոմեացիների 5.11

26. Եփեսացիների 2.14

27. Եսայի 11.9, Երեմիա 31.34, Ամրակում 2.14

28. Գործը 2.16-21

29. Մատթեոս 13.19, Հակոբոս 1.21

քի գիտության լուսավորությունը տալու համար Հիսուս Քրիստոսի դեմքում» (Բ Կորնթ. 4.6):

Մենք պարզապես չենք կարող չափազանցնել այն աշխատանքի արտասովոր և գերբնական բնույթը, որն Աստված կատարում է յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի մտքում և սրտում: Քրիստոսի լուսավորող աշխատանքը քրիստոնյայի սրտում՝ Սուրբ Հոգու միջոցով, ճշմարիտ դարձի նշան է, և այն խոստացված է բոլորին՝ առանց բացառության: Այս պատճառով, Հովհաննես առաքյալն առանց վարաներու հայտարարեց հետևյալը յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի մասին. «Եվ գիտենք, որ Աստծո Որդին եկավ և մեզ միտք տվեց, որ ճշմարիտը ճանաչենք, և ճշմարիտում ենք, այսինքն՝ Նրա Որդի Հիսուս Քրիստոսում: Նա է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը» (Ա Հովի. 5.20):

Այս հաստատ գիտելիքն Աստծո մասին, որն իրականություն է դառնալու յուրաքանչյուր հավատացյալի կյանքում, Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի արդյունքն է: Ծնորիկ Նրա լուսավորման և սրբացման շարունակական ծառայության, խավարն անցնում է, և ճշմարիտ լոյսն արդեն իսկ շողում է Աստծո յուրաքանչյուր զավակի ներսում³⁰: Նոյն նամակում սիրելի առաքյալը հավաստիացնում է նոյնիսկ նորադարձներին, որ նրանք օծվել են Հոգով և ճանաչում են ճշմարտությունն Աստծո մասին³¹: Նա շարունակում է՝ ասելով, որ այդ օծությունն այնքան զորավոր է, որ իրենք կարիք չունեն, որ որևէ մեկը սովորեցնի իրենց, քանի որ Աստծո Հոգին սովորեցնում է իրենց այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքի և աստվածապաշտության համար³²:

Սա չի նշանակում, որ քրիստոնյաներին պետք չեն աստվածապաշտ ուսուցիչներ: Սուրբ գիրքը պարզորեն ասում է, որ Աստված օժտված ուսուցիչների է պարզել եկեղեցուն, որպեսզի սպառազինի սուրբերին և կառուցի Քրիստոսի մարմինը³³: Սա նշանակում է, որ հավատացյալը (ի հակադրություն Հին ուստի չվերածնված իսրայելցիների) այլևս կախված չէ միայն մարդկային միջնորդից, որը պետք է թելադրի իրեն Աստծո ճշմարտությունը: Բոլոր ճշմարիտ հավատացյաներն «Աստծուց սովորած են»՝ Իր Որդուն ընդունելու և «իրար սիրելու» համար (Հովի. 6.45, Ա Թեսաղ. 4.9): Աստծո ուսուցչական ծառայությունը շարունակվելու է հավատացյալի կյանքի ամբողջ ընթաց-

30. Ա Հովհաննես 2.8

31. «Եվ դոք օծություն ունեք այն Սուրբից և ամեն բան գիտեք» (Ա Հովի. 2.20): Այս օծությունը, որը բոլոր հավատացյաները ստանում են, հավանաբար, հղում է Աստծո Հոգու վերածնման աշխատանքին և ներքնակությանը հավատացյալի սրտում:

32. Ա Հովհաննես 2.27

33. Եփեսացիների 4.11,12

քում, և Աստծոն նախախնամության գործերը, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին, Ով ամեն բան հասկացնում է, կիրագործեն այն: Ի պատասխան, քրիստոնյան պետք է ահով ու դողով գործի իր փրկությունը, ձգտի ճանաչել Տիրոջը և ջանք անի, որ իր անձն ընտիր կանգնեցնի Աստծոն առջև իբրև մի մշակ՝ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարի³⁴: Պետրոս առաքյալի խոսքերով, հավատացյալը պետք է աճի իր «Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքով և գիտությամբ» և պտուղ բերի՝ համաձայն այդ գիտելիքի³⁵:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի քավշարար աշխատանքի և Սուրբ Հոգու վերածնման աշխատանքի միջոցով Աստված նոր ժողովուրդ է պատրաստել Իր համար: Նա հաշտեցրել է նրանց և վերափոխել է՝ դարձնելով անհատների մի հավաքական խումբ, որը և ճանաչում է Իրեն, և փափառում է ավելի շատ ճանաչել: Նրանք սկսել են հասկանալ այն մեծ իրողությունները, որոնք պետք է կառավարեն իրենց կյանքը, օրինակ՝ այն, թե ով է Աստված, ով են իրենք, ինչ է Աստված արել իրենց համար, և ինչպես իրենք պետք է ապրեն Նրա առջև: Աստված տվել է նրանց հավիտենական կյանք, որպեսզի նրանք ճանաչեն միակ ճշմարիտ Աստծուն և Հիսուս Քրիստոսին, Ում Նա ուղարկել է³⁶: Աստված հայտնել է նրանց, թե որն է բարին, և թե ինչ է Նա պահանջում նրանցից՝ արդարություն գործել, ողորմություն սիրել և խննարիությամբ վարպել իրենց Աստծո հետ³⁷: Աստծո և Նրա կամքի այս իրական, անձնական գիտելիքը ճշմարիտ եկեղեցու տարրերակիչ նշանն է, որը մշտապես լինելու է յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի կյանքում: Ինչպես որ Հիսուսն ասաց այն թշնամաբար տրամադրված հրեաներին, որոնք հակառակվում էին Իրեն. «Իմ ոչխարներն Իմ ճայնը լսում են, և Ես ճանաչում եմ նրանց, և Իմ ետևից գալիս են» (<ովհ. 10.27):

Մենք հաճախ ենք լսում, որ Աստված համեմատում է Իր ժողովրդին ոչխարների հետ այն պատճառով, որ ոչխարներն անմիտ արարածներ են, որոնք հեշտորեն մոլորվում են: Այնուամենայնիվ, Քրիստոսի նկարագրության լոյսի ներքո, այս գաղափարը հակադրություն է թվում Աստվածաշնչի ուսմունքին: Քրիստոսը ոչխարներ է անվանում Իր ժողովրդին, քանի որ նրանք, ի տարրերություն քմահաճ և կամակոր այծերի, հստակ զանազանում են Նրա ճայնը և հեզարարո կեր-

34. Ովսե 6.2,3, Փիլիպեցիների 2.12, Բ Տիմոթեոս 2.15

35. Բ Պետրոս 1.8, 3.18

36. Հովհաննես 17.3

37. Միքայ 6.8

պով հետևում են Նրան: Այդ դեպքում, ո՞րն է այս ընդունված և վճառակար կարծիքի հիմքը: Միսալական հակառակ տրամաբանությունը: Շատերը, փոխարենը փնտրեն Աստվածաշնչում սուրբգրային նկարագրություն ոչխարի կամ հոտի մասին, կազմում են իրենց կարծիքն այն մարդկանց հատկանիշների հիման վրա, որոնք նոյնացնում են իրենց ավետարանական քրիստոնեության հետ: Քանի որ շատ դավանող քրիստոնյաներ Արևմուտքում անտեղյակ են Աստծո տարրական ճշմարտություններին և, թվում է, խոլ են Տիրոջ ձայնի հանդեպ, մենք ենթադրում ենք, որ Աստծո ոչխարները պարզապես բթամիտ կենդանիներ են, որոնք մշտապես մոլորվում են և անկարող են զանազանել իրենց Տիրոջ ձայնը: Մենք մոռանում ենք, որ Քրիստոսի խոսքերով՝ Իր ոչխարները լսում են Իր ձայնը և հետևում են Իրեն: Այսպես որ, Աստվածաշնչին ավելի համապատասխան է Ենթադրելը, որ բազմաթիվ դավանող քրիստոնյաներ ավետարանական համայնքից՝ ճշմարիտ ոչխարներ չեն: Նրանք չերածնված այծեր են, որոնք ապրում են համաձայն իրենց ինքնության: Վերջին օրը Քրիստոսը կկանգնեցնի նրանց հոտի ձախ կողմում, և նրանք կլսեն իրենց զարհուրելի դատավճիռն անձամբ Քրիստոսից: «Ինձնից դեմք գնացեք, ով անիջաներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»³⁸:

Ճշմարիտ քրիստոնյաների տարբերակից հատկանիշներից մեկը՝ թե՛ ասհատի, թե՛ անտեսանելի հավաքական եկեղեցու, նրանց գիտելիքն է Աստծո մասին և նրանց արձագանքն այդ գիտելիքին: Թեև բոլոր քրիստոնյաներն աշակերտության կարիք ունեն, և սրբացման աշխատանքը երբեք վերջնականորեն չի կատարվում այս լյանքում, ճշմարիտ քրիստոնյան ուշագրավ կերպով կտարբերվի Աստծո մասին ունեցած իր գիտելիքով և այդ գիտելիքին հնագանդվերով: Այս տարբերությունն ակնհայտ կլինի նոյնիսկ բոլորովին վերջերս դարձի եկած մարդու կյանքում: Շորիհվ վերածնված սրտի և ներքնակվող Հոգո՛ նա կոնենա ճշգրիտ և հաստատ գիտելիք այն մասին, թե ով է Աստված, և ինչ է պահանջում Նրա օրենքը: Նա կգիտակցի, որ մենքը սխալ է, իսկ հնագանդությունը՝ ճիշտ: Ոչ ոք կարիք չի ունենա ասել նրան, որ չաետք է ստել, գողանալ, շնուրթյուն գործել կամ անփութորեն վերաբերվել իր Փոկչի անվանը: Նա կոնենա գիտելիք այս ամենի մասին և աճ կոնենա դրանում, քանի որ Աստված, Ով բարի գործ է սկսել նրանում, կշարունակի ավարտին հասցնել այն³⁹:

Ամփոփելով՝ մենք պետք է տանք մեզ հետևյալ հարցերը: Արդյո՞ք կա որևէ ապացույց այն մասին, որ մենք «Աստծուց սովորած» ենք,

38. Մատթեոս 25.31-33,41

39. Փիլիպեցիների 1.6

թե՛ մենք անտեղյակ ենք մեր հավատքի հիմնարար ճշմարտությունստերին: Արդյո՞ք մենք աճում ենք մեր գիտելիքի մեջ, թե՛ շարունակում ենք անտարբեր մսալ: Արդյո՞ք մենք է՛լ ավելի ենք առաջնորդվում այն բանով, ինչ գիտենք, թե՛ մեր կյանքում գրեթե ապացույց չկա աստվածապահության մեջ ունեցած առաջընթացի մասին: Արդյո՞ք մենք լսում ենք Տիրոջ ձայնը և հետևում ենք Նրան, թե՛ մենք խուլ և կույր անալիտաններ ենք, որոնք որոշում են գնալ իրենց ճանապարհով: Արդյո՞ք մենք ունենք հաստատ գիտելիք այն մասին, որ Աստված ներել է մեր մեղքը և մոռացել է մեր անօրինությունները հանուն Իր Որդու, ուզ մահացել է և հարություն է առել մեր փոխարեն: Դավանող քրիստոնյան պետք է պատասխանի այս հարցերին, իսկ Քրիստոսի հավատարիմ ծառայողի պարտականությունն է՝ դրոշմել այս հարցերն իր հոսի սրտին և խոճին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐԸ



Աստծո ժողովրդի սիրտը և ճանապարհը

«Եվ նրանք Ինձ համար կլինեն ժողովուրդ, և Ես կլինեմ նրանց համար Աստված: Եվ Ես կուամ նրանց մեկ սիրու և մեկ ճանապարհ, որ Ինձնից վախենան առեն ժամանակ, որ լազ լինի իրենց համար և իրենցից հետո իրենց որդիների համար»:

— Երեմիա 32.38,39

Մեր առջև է Նոր ուխտի ամենասրանչելի խոստումներից մեջ Հին կտակարանում: Այն Աստծո գերիշխանության պերճախոս, սակայն ազդեցիկ հոչակում է: Նա վճռել է ժողովուրդ պատրաստել Իր համար, և Նա կանի դա: Թեև այս փրկության աշխատանքը շարունակվում է մարդկության ամբողջ պատմության ընթացքում, մեր վստահությունը չպետք է սասանվի: Աստվածային զորությունն ի զրու է կատարելու այն, ինչ վճռել է աստվածային գերիշխանությունը: Ինչպես որ Աստված ազդարարեց Եսայի մարգարելի միջոցով.

«Որովհետու ինչպես որ իջնում է անձրևը և ձյունը երկնքից
Եվ ետ չի դառնում այնտեղ,
Այլ ոռոգում է երկիրը
Եվ նրան արգասավոր անում և բողբջեցնում նրան,
Եվ տալիս է սերմ սերմնացանին և հաց՝ ուտողին,
Այնպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած խոսքը.
Այն չախտի պարապ ետ դառնա Ինձ մոտ,
Այլ կատարի Իմ ուզածը
Եվ հաշողվի նրանում, ինչի համար որ Ես նրան ուղարկեցի»
(55.10,11)

Համաձայն Աստծոն վճռի, երբ եկավ ժամանակի լրումը, Նա ուղարկեց Իր Որդուն՝ ծնված կնոջից, ծնված օրենքի ներքո, որպեսզի փրկեր մի ժողովրդի Իր համար¹: Վերջին երկու հազար տարվա ընթացքում Նա կատարել է այս փրկության աշխատանքն ան-

1. Գաղատացիների 4.4

թիվ մարդկանց կյանքերում՝ Ավետարանի քարոզման և Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով։ Այս կերպով Նա ստեղծել է Իր համար ճշմարիտ եկեղեցի, որի մասին կարելի է ասել. «Նրանք Իր ժողովուրդն են, և Ինքը նրանց Աստվածն է»։ Իր գերիշխան շնորհքով Նա առանձնացրեց այդ մարդկանց մասաց մարդկությունից և դարձրեց նրանց Իր սեփական ժողովուրդը²։ Նոյն այս շնորհքով Նա ուղղեց նրանց զգացմոննքները դեպի Իրեն՝ ցոյց տալով, որ նրանց ցանկություններից ոչ մեկը չի կարող համեմատվել Իր հետ³։ Նրանք ճաշակեցին և տեսան, որ Տերը քաղցր է⁴։ Նրանք հայտնաբերեցին, որ Նրա ներկայության մեջ ուրախության լիություն կա, և Նրա աջ կողմը՝ քաղցրություններ՝ հավիտյան⁵։ Ուստի, նրանք համարում են, որ մեկ օրը Նրա սրահներում ավելի լավ է, քան հազար օր այլ վայրերում, և նրանք գերադասում են կանգնել իրենց Աստծոն տան շեմին, քան ապրել աշխարհիկ մարդկանց ճնշ վրաններում⁶։ Նա նրանց Աստվածն է, և իրենք Նրա ժողովուրդն են։ Նա տվել է նրանց մեկ սիրու, մեկ ճանապարհ և մեկ երկուող՝ նրանց և նրանցից հետո եկող անթիվ սերունդների բարօրության համար։

ՄԵԿ ՍԻՐԸ

Այն բանից հետո, երբ Աստված ազդարարեց Իր համար ժողովուրդ ստեղծելու Իր անսասան հանձնառությունը, Նա հայտնեց այդ ժողովորդի առաջին հատկանիշը. Նրանք մեկ սիրու էին ունենալու։ Իրենց սիրով նրանք միաբան էին լինելու Աստծոն և միմյանց հանդեպ, ինչպես նաև՝ իրենց կյանքի նպատակով և վարքով։ Այլ կերպ ասած, նրանք մեկ էին լինելու⁷։

Բազմաթիվ անկեղծ հավատացյալների համար այս խոստումը, թվում է, մեծ խնդիր է ներկայացնում։ Հաշվի առնելով քրիստոնեության մեջ գտնվող գրեթե անթիվ հարանվանությունները և վարդապետական շեղումները՝ ինչպես մենք կարող ենք հաստատել, որ Նոր ուստի միաբանության խոստումը կատարվել է եկեղեցում։ Այս ակնհայտ խնդիրի պատասխանը երկալի է։ Առաջին՝ մենք պետք է գիտակցենք, որ երբ Հոգով լցված ճշմարիտ քրիստոնյաները մեկ-

2. Երկրորդ Օդինաց 26.18

3. Առակաց 3.14,15

4. Սաղմոս 34.8

5. Սաղմոս 16.11

6. Սաղմոս 84.10

7. «Եվ որիշ ոչխարներ էլ ունեմ, որ այս գավթից չեն, և նրանց էլ պետք է բերեմ, և իմ ձայնին կը մաս և մի հոտ և մի հովիլ կլինեն» (Հովի. 10.16)։ «Եվ ես այլս աշխարհում չեմ, իսկ նրանք աշխարհում են, և ես թեզ մոտ եմ զայխ։ Ո՛վ Սուրբ Հայր, պատիր նրանց Քո անոնով, որոնց տվեցիր ինձ, որ մեկ լինեն, ինչպես մենք» (Հովի. 17.11)։ «Որ ամենքը մեկ լինեն, ինչպես Դու, Հայր, ինձանում, և ես՝ Քեզանում, որ նրանք էլ Մեզանում մեկ լինեն, որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր ինձ» (Հովի. 17.21)։

տեղ են հավաքվում, նրանց միջև գոյություն ունի միաբանության և սիրո կապ, որը մեծապես գերակշռում է իրենց բոլոր երկրորդական վարդապետական տարբերությունները: Երկրորդը՝ մենք պետք է գիտակցենք, որ Քրիստոնեության մեջ այսպես կրչված բաժնանությունների մեծ մասի պատճառը հաճախ մոռացված ճշմարտությունն է այն մասին, որ Քրիստոսին դավանող ամեն մեկը չէ, որ ճշմարտապես քրիստոնյա է, և իրեն եկեղեցի անվանող ամեն կրոնական կազմակերպություն չէ, որ իրապես եկեղեցի է:

ԻՐԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես քրիստոնյաներ՝ մենք հասկանում ենք ճշմարտության կարևորությունը և դրանից շեղվելու վտանգները: Այս պատճառով, մենք շերմեռանդրեն պահպանում ենք մեր հավատքը, շտապում ենք պաշտպանել այն և պատրաստակամորեն կիսվում ենք մարդկանց հետ մեր համոզմունքներով: Եթե ավելացնենք պրան այն իրական հավանականությունը, որ մենք կարող ենք մեղավոր լինել հպարտության, եսակենարոնության, եսասիրության նաև մեր խոսքն ու գործն արդարացնելու ցանկության մեջ, կարելի է հեշտորեն տեսնել, որ Քրիստոսում մեր եղբայրների և քույրերի հետ հարաբերությունները կարող են բարդ լինել: Ըստ էության, դարձի գերբնական բնույթը միակ ճշմարտությունն է, որի շուրջ նման շերմեռանդ անհատները կարող են լիարժեք կերպով համաձայնության գալ:

Նոր կտակարանը վկայում է, որ եկեղեցին պաշտպանված չէ պառակտումներից⁸: Նոյնիսկ Պողոս առաջյալը և սիրելի Բառնաբասը որոշ ժամանակով բաժանվեցին⁹: Չնայած որպան, անժիստելի է, որ երբ Հոգով լցված ճշմարիտ քրիստոնյաները մեկտեղ են հավաքվում, նրանց միջև կա միաբանության և սիրո կապ, որը գերազանցում է ցանկացած բան, ինչին այս աշխարհը կարող է հրահրել նրանց: Նրանց սերն Աստծոն և Նրա սիրելի Որդու հանդեպ, նրանց գոհությունը Գողգոթայի համար, նրանց ըմբռնումը շնորհի մասին և նրանցում բնակվող Հոգին կմիաբանեն նրանց: Դա կղողի նրանց կրել միմյանց բեռները, ծառայել մեկը մյուսի կարիքներին և նոյնիսկ զրիել իրենց լյանքը միմյանց համար, եթե անհրաժեշտ լինի: Սա դատարկ հոեսորաբանություն չէ: Սա եղել է ճշմարիտ քրիստոնյաների վկայությունը ամենուրեք և եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում: Սերը եղբայրների հանդեպ մշտապես եղել է ճշմարիտ քրիստոնեության տարբերակիչ հատկանիշը¹⁰:

8. Ա Կորնթացիների 1.10-12, 11.18, Փիլիպեցիների 4.2

9. Գործը 15.37-40

10. Հովհաննես 13.35, Ա Հովհաննես 2.9-11, 4.7-12

Պատկերացրեք հետևյալը. մի երիտասարդ ամերիկացի միսիոներ այցելում է Հարավային Ամերիկայի բարձրադիր ջոնգլիներում գտնվող եկեղեցիները: Նրա ճանապարհորդությունը վտանգավոր է, քանի որ ահաբեկիչները հսկում են ամբողջ այդ տարածքը: Մի գիշեր միսիոները մոլորդում է և համսում մի գյուղակ: Նա գիտի, որ գիշերը ջոնգլիներում մնալը խելամիտ չէ, սակայն վարանում է այդ գյուղ գնալ՝ վախենալով, որ գյուղացիները կարող են ահաբեկիչների համախոհները լինել: Ի վերջո, վախը տեղի է տալիս անհրաժեշտությանը, և նա թակում է բլրի լանջին կառուցած մի փոքրիկ կավաշեն հյուղակի դուռը: Մի քանի րոպե անց դուռը բացում է մի փոքրամարմին տարեց կին՝ լապտերը ձեռքին: Ակնհայտ է, որ նա վախեցած է. նա հարցնում է իր այցելուի անունը: Եթե նա պատասխանում է, որ քրիստոնյա միսիոներ է, այդ կինը բռնում է նրա վերարկուից և ներս է քաշում: Նա զգուշացնում է երիտասարդին, որ այդտեղ վտանգավոր է, և թաքցնում է նրան իր տան գետնափոր նկուղում: Մինչ միսիոները հանգստանում է եզիատացորենի ցողունների վրա, այդ տարեց կինը պատվիրում է մի փոքրիկ տղայի հավաքել եկեղեցու եղբայրներին և ասել նրանց, որ կերակուր բերեն իրենց հետ: Մեկ ժամվա մեջ հավատացյաները գալիս են թարմ մորթած հավով և մի քանի կարտոֆիլներով, նրանք արագորեն եփում են և հյուրասիրում քաղցած միսիոներին: Զրուցելով ճաշի ընթացքում՝ նրանք իմանում են, որ իրենց հյուրը Մկրտական է, իսկ նա իմանում է, որ նրանք Նազովրեցիներ են: Կան շատ հարցեր, որոնց վերաբերյալ նրանք տարբեր տեսակետներ ունեն, բայց այդ գիշեր այդ ամենն աննշան է թվում: Նրանք հավատացյաների փոքրիկ մարմին են, որոնք սիրում են իրար այնպես, ասես մեկ մարմին և արյուն լինեին, և հոգում են միմյանց կարիքներն այնպես, ասես դիմացինը հնոր Քրիստոսը լիներ: Այդ միսիոները վտանգել էր կյանքը՝ նրանց Աստծոն խոսքը հասցնելու համար, և նրանք արել են նոյնը՝ պատսպարելով նրան այդ գիշեր: Չսայած իրենց վարդապետական տարածայնություններին, նրանք ցոյց տվեցին, որ մեկ սիրտ ունեն, ինչպես որ Երեմիան մարգարեանում էր¹¹:

Իր խաչելությանը նախորդող գիշերը Տեր Հիսուս Քրիստոսն աղաչեց Հորը Իր քահանայական աղոթքի մեջ, որ Իր ժողովուրդը մեկ լինի¹²: Մենք չպետք է մտածենք, որ Հայրը չպատասխանեց այս աղոթքին, կամ որ այս նորկտակարանյան խոստման թեկուզ մեկ կետ կամ նշանագիր չի կատարվել: Եթե ճշմարիտ հավատացյաները հավաքվում են Քրիստոսի անունով, լինելու են տարբերութ-

11. Երեմիա 32.38,39

12. Հովհաննես 17.11

յուններ, հակասություններ և նոյնիսկ տարածայնություններ, բայց նրանց միջև մշտապես սեր է լինելու: Եթե այն չկա, կարելի է նոյնիսկ կասկածի ենթարկել նրանց հավատքի դավանանքը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բազմաթիվ անհատներ և շարժումներ Արևմուտքի ավետարանական քրիստոնյանների մեջ նոյնացնում են իրենց Քրիստոսի հետ, սակայն նրանք պատմական քրիստոնեության հոսանքից դուրս են գտնվելու: Նրանց վարդապետությունները և սովորութներն այնքան հակառակ են Աստվածաշնչի կանոններին, որ նրանք տրամաբանորեն չեն կարող նոյնանալ քրիստոնեական հավատքի հետ: Կամ նրանք են ճիշտ, և ամբողջ պատմական քրիստոնեությունը սխալ է, կամ նրանք սուս ուսուցիչներ և սուս եղբայրներ են, որոնց մասին Քրիստոսը և առաջախները զգուշացրին մեզ. «Եվ սուս մարգարեններ էլ կային այն ժողովրդի մեջ, ինչպես ձեր մեջ էլ պիտի սուս վարդապետներ լինեն, որ ներս կմոցնեն կորստական հերձվածություններ, և ուրանարով այն Տիրոջը, որ իրենց գնեց՝ իրենց Վրա շուտահաս կորուստ կրերեն: Եվ շատ մարդիկ կհետևեն նրանց կորստյանը, որոնց պատճառով ճշմարտության ճանապարհը կիայինի» (Բ Պետրոս 2.1,2):

Թեև անկերծ քրիստոնյանների մեջ տեղի են ունենում բաժանություններ, կարևոր է հասկանալ, որ ենթադրյալ խոշոր և հաճախակի բաժանություններն ամբողջ քրիստոնեության մեջ տեղի են ունենում ոչ այդքան Քրիստոսի մարմնի անդամների միջև, այլ՝ հասկերի և որոշների, ոչխարների և այծերի, բարի հովհանքների և օայլերի միջև¹³: Այս պատճառով Պողոս առաքյալը գրեց Կորնթոսի եկեղեցուն, որ պետք է լինեն որոշակի տարածայնություններ և բաժանություններ նրանց միջև, ովքեր նոյնացնում են իրենց Քրիստոսի հետ, որպեսզի ալմայտորն երևան նրանք, ովքեր հաստատված են Աստծո կողմից¹⁴: Այլ կերպ ասած, Աստված ունի երկակի նպատակ բաժանության համար: Առաջինը՝ հայտնի դարձնել նրանց, ովքեր ճշմարիտ քրիստոնյաններ են, և բացահայտել նրանց, ովքեր այդպիսին չեն: Եվ երկրորդը՝ հեռացնել սուս ուսուցիչներին և սուս եղբայրներին Իր մարմնից, որպեսզի նրանք այլև չպղեն իր ժողովրդին:

Ավետարանական շարժման մեջ կան շատ հայտնի ուսուցիչներ, որոնք բազմաթիվ հետևորդներ ունեն: Նրանց հավաքույթները մեծ մարգարաշտեր են լցնում, և նրանք հեռարձակում են իրենց ծառայությունները աշխարհով մեկ: Նրանց ուսուցումները հին հերձվա-

13. Մատթեոս 13.24-30,36-43, 25.31-33, 7.15, Գործը 20.29,30

14. Ա Կորնթացիների 11.19

ծությունների, ժամանակակից հոգեբանության, հումանիզմի և ցանկասիրության խառնուրդ են: Նրանք խոսում են անձի կայացման, նյութական բարգավաճման, մարմնի առողջության և ժամանակավոր ուրախությունների մասին: Արդյունքում, շատերը հեռանում են պատմական քրիստոնեությունից և, նման Հիմենոսին և Աղեքսանդրոսին, նավակոծության են ենթարկում իրենց հավատքը¹⁵: Դա սրտաճմլիկ և անտանելի իրողություն է, սակայն մենք պետք է հասկանանք, որ Աստված օգտագործում է այս: Նա օգտագործում է այդ սուտ ուսուցիչներին, որպեսզի առանձնացնի այծերին ոչխարներից և պահի նրանց առանձին փարախում, որպեսզի պաշտպանի Իր հոտը նրանց վարդապետական և բարոյական սխալմունքներից: Ինչպես որ իին ժամանակներում ապրող բժիշկը կարող էր թրցոցալար պատրաստել՝ թույնը վերքից հանելու համար, Աստված օգտագործում է այս սուտ մարգարեներին՝ անհավատներին և չվերածնվածներին Իր ժողովրդի միջից հեռացնելու համար, որպեսզի նրանց թույնն ի հայտ չգա և չաղծի շատերին¹⁶:

Երբ եկեղեցին ընդհանուր առմամբ անտեսում է եկեղեցական կարգապահությանը հետևելու Քրիստոսի պատվիրանը, Նա Ինքն է զբաղվում այդ հարցով¹⁷: Բարի հոգվի պես Նա այնպես է անում, որ ոչ մի անբարո կամ անաստված մարդ՝ Եսավի նման, երկար ժամանակ շմսա Իր ժողովրդի մեջ¹⁸: Եթե եկեղեցին իրականում եկեղեցի է, և Քրիստոն իրականում գտնվում է նրանց միջն, Նա հայեցնողի կրակի և թափիչի օճարի պես է: Նա կնսափի՝ իբրև արծաթ հալեցնող և մաքրող, և կզտի Իր ժողովրդին ուկու պես¹⁹: Իսկ եթե անաստված մարդիկ մնում են որևէ եկեղեցում, և Քրիստոսը որևէ կերպով չի միջամտում դրան, դա վկայում է, որ այդ եկեղեցու ճրագակալը հեռացվել է, և այն այլս եկեղեցի չէ: Նրա դրան վրա գրված է «Իքաբող», քանի որ Տիրոջ փառքը հեռացել է²⁰:

ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ

Հին ուստի ներքո Խարայելի ժողովուրդն առանձնանում էր համառությամբ: Նրանք նման էին անմիտ ծիռու կամ ջորիի, որի բերանը պետք է սանձել՝ նրան զապելու համար²¹: Այս պատճառով Աստված հայտնեց Եսայի մարգարեի միջոցով. «Ես տարածեցի Իմ ծեռքերն

15. Ա Տիմոթեոս 1.19,20

16. Երրայեցիների 12.15

17. Սնաոթես 18.15-18

18. Երրայեցիների 12.15,16

19. Մաղաքիս 3.2,3

20. Ա Թագավորաց 4.21

21. Սաղմոս 32.9

ամեն օր դեպի մի ապստամբ ժողովուրդ, որոնք գնում են մի այնպիսի ճանապարհով, որ լավ չէ, իրենց խորհուրդների ետևից» (65.2): Աստված շարունակաբար կոչ էր անում Խրայելին:

«Այսպես է ասում Տերը. «Կանգնեք ճանապարհներին և տեսեք և հարցրեք վաղեմի ճանապարհներից, թե արդյոք ո՞նք է լավ ուղին, այն ժամանակ գնացեք նրանով, և դուք հանգստություն կգտնեք ձեր հոգիների համար»: Բայց նրանք ասում են. «Չեսք գնում»» (Երեմիա 6.16):

Նման մոլորդած ոչխարների, նրանցից ամեն մեկը գնացել էր իր ճանապարհով²²:

Խրայելի ապստամբության ընթացքում Աստված ուղարկեց Իր մարգարեներին՝ ոչ միայն ազգին հանդիմաններու և զգուշացնելու համար, այլև մարգարեանալու այն օրվա մասին, երբ Նա ստեղծելու էր նոր ժողովուրդ Իր համար, որոնք լսելու և հնազանդվելու էին: Նրանք չին ունենալու սանձի, պախուրցի և սովորեցնողների կարիք, քանի որ Սուրբ Հոգին վերափոխելու էր նրանց, բնակվելու էր նրանցում և առաջնորդելու էր²³: Աստված տալու էր նրանց նոր սիրտ, որը քաղց ու ծարավ էր ունենալու արդարության հանդեպ, և Նրա նախախնամությունն առաջնորդելու էր նրանց արդարության ճանապարհներով՝ հանուն Իր ավան²⁴: Նրանք ունենալու էին ընդհանուր նպատակ և բարոյական արժեքներ: Նրանք գնալու էին այն ճանապարհով, որը Մեսիան նախորոշել էր նրանց համար՝ սրբության, արդարության և սիրո ճանապարհով: Եսայի մարգարեն գեղեցիկ և ազդեցիկ կերպով նկարագրում է այս ճշմարտությունը.

«Եվ այնտեղ պողոտա և ճանապարհ է լինելու,

Եվ նրան սուրբ ճանապարհ է ասվելու.

Նրա վրա պիղծը չպիտի անցնի.

Նա նրանցն է:

Ճանապարհը գնացողը և տկարամիտներն էլ չեն մոլորվի:

Այնտեղ առյուծ չի լինի,

Եվ գիշատիչ գազան չի գա նրա վրա,

Եվ այնտեղ չի գտնվի,

Եվ փրկվածները ման կգան» (35.8,9):

«Բայց քո ուսուցիչները այլս ետ չեն քաշվելու,

Եվ քո աչքերը շարունակ տեսնելու են քո ուսուցիչներին:

Եվ քո ականջները լսելու են մի խոսք քո ետևից, որ ասելու է.

22. Եսայի 53.6

23. «Դեռ որ հավատքը չէր եկած, օրենքի ներքև փակված պահվում էինք այն հավատքի համար, որ պետք է հայտնվեր: Որեմն, օրենքը մեզ համար դաստիարակ եղավ դեպի Հիսուս Քրիստոսը, որ հավատքից արդարանանք: Բայց երբ որ հավատքը եկավ, այլս դաստիարակի տակ չենք: Որովհետև ամենդ Աստծո որդիի եք Քրիստոս Հիսուսի հավատքով» (Գաղատ. 3.23-26):

24. Սաղմոն 23.3, Մատթեոս 5.6

«Սա՞ է ճանապարհը, սրանով գնացեք»:

Երբ որ աջ կողմը պետք է գնար

Եվ երբ որ ձախ կողմը պետք է գնար» (30.20,21):

«Եվ կրոյրերին պիտի ման ածեն իրենց չգիտեցած ճանապարհով,

Նրանց չգիտեցած շավիդներով առաջնորդելու եմ նրանց:

Նրանց առջև խավարը լոյսի եմ դարձնելու,

Դարուփուսերը՝ հավասարի:

Այս քաները պիտի անեմ սրանց

Եվ նրանց պիտի չճգեմ» (42.16):

Հին կտակարանի նորկտակարանյան խոստումներում Աստված ակնկալում էր այնպիսի ժամանակվա, երբ Նա ոչ միայն ստեղծելու էր նոր ժողովուրդ, այլև հաստատելու էր այդ ժողովորդին նոր ընթացքի մեջ և հետևելու էր, որ չհեռանային: Եզեկիելը մարզարեացավ, որ Աստված տալու էր իր ժողովորդին նոր սիրտ, դնելու էր նրանցում Իր Հոգին և այնպես էր անելու, որ նրանք վարվեին Իր օրենքների մեջ²⁵: Երեմիան կանխասեց այս օրվա մասին, երբ Աստված տալու էր Իր ժողովորդին մեկ ճանապարհ և սովորեցնելու էր նրանց քայլել դրանով²⁶: Եսային հայտարարեց, որ Աստված սրբության ճանապարհ էր պատրաստելու Իր ժողովորդի համար և պաշտպանելու էր նրանց ամեն վտանգից, որը փորձելու էր շեղել նրանց այդ ճանապարհից կամ խոչընդոտել նրանց առաջընթացը²⁷: Նա վարվելու էր նրանց հետ ուսուցչի պես՝ ցոյց տալով ճանապարհը և վերադարձնելով նրանց, եթե նրանք շեղվեին դրանից²⁸: Նոյնիսկ ամենից անհետատես մարդիկ Իր ժողովորդից վախենալու պատճառ չին ունենա, քանի որ Նա խավարը լոյս կդարձներ նրանց առջև և կհավասարեցներ անհարթ տեղանքը²⁹: Նոր ուխտում վերջապես իրականություն կդառնային Առակաց գրքի հետևյալ խոսքերը.

«Բայց արդարների ճանապարհը ծագող լոյսի պես է,

Որ գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում:

Ամբարիշների ճանապարհ խավարի նման է,

Նրանք չգիտեն, թե ինչով են զայթակղում

(կամ՝ թե ինչի պատճառով են սայթաքում)» (4.18,19):

Ի ուրախություն քրիստոնյայի, բոլոր այս խոստումներն իրականացել են Քրիստոսում՝ Գողգոթայում Նրա քավշարար աշխատանքի և Սուրբ Հոգուն ուղարկելու միջոցով: Համաձայն Նոր կտակարանի, Աստված ոչ միայն նախասահմանեց մի ժողովուրդ, այլև նա-

25. Եզեկիել 36.26,27

26. Երեմիա 31.34, 32.39

27. Եսայի 35.8,9

28. Եսայի 30.20,21

29. Եսայի 42.16

խապատրաստեց այն բարի գործերը, որոնցում նրանք պետք է վարվեին³⁰: Եթե եկավ ժամանակը, Նա ուղարկեց իր Որդուն՝ նրանց փրկելու համար, և Նա կանչում է նրանց Ավետարանի քարոզման և Հոգու վերածնող աշխատանքի միջոցով³¹: Բոլորը, ովքեր լուս և սովորում են Հորից, գալիս են Որդու մոտ և Աստծո զավակներ լինելու իրավունք են ստանում³²: Քանի որ նրանք որդիներ են, Աստված ուղարկում է նրանց սրտերի մեջ իր Որդու Հոգին, որը կանչում է «Արքա Հայր»³³: Նոյն Հոգին նաև կարում է նրանց, սրբացնում է նրանց, զորացնում է նրանց և առաջնորդում է Քրիստոսի կողմից պատրաստված ներ ճանապարհով³⁴: Վերջապես, թեև նրանք պայքարում են, տատանվում են և երբեմն ձախողվում են, Աստծո նախախնամության անսահանջ ձեռքը պահում է նրանց մինչև վերջին օրը³⁵: Սրանում մենք տեսնում ենք ևս մեկ փրկության ոսկե շղթա՝ առանց կտրված օղակի: Նա, Ով բարի գործ է սկսել ամեն հավատացյալի կյանքում, ավարտին կիասցնի այն³⁶: «Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ով է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31):

Զարմանալի չէ, որ առաջին դարի քրիստոնյաները և նրանց թշնամիները «Ճանապարհ» էին անվանում քրիստոնեությունը³⁷: Ուշագրավ է, որ Գործը առաքելոց գրքում Ղուկասն անվանում է այն Տիրոջ ճանապարհը, Աստծո ճանապարհը, ճշմարտության ճանապարհը և արդարության ճանապարհը³⁸: Սա լավ հիշեցում է մեզ այսօր, քանի որ մենք հակված ենք դիտարկել քրիստոնեությունը միայն որպես իրավաբանական դիրք Աստծո առջև՝ հիմնված հավատքի վրա: Հաճախ, ձգտելով պաշտպանել «սոլա ֆիդե» վարդապետությունը, մենք անտեսում ենք այն ճշմարտությունը, որ քրիստոնեությունը նաև կյանքի ճանապարհ է: Հիսուս Քրիստոսը ոչ միայն մեր Փրկիչն է, այլև՝ մեր օրինակը: Մենք պետք է ոչ միայն հավատանք Նրան, այլև հետևենք Նրան, նմանակենք Նրան և կերպարանվենք Նրա պատկերով՝ մտքով, խոսքով և գործով³⁹: Ահա թե ինչու է Հովհաննես առաքյալը գրում. «Ով որ ասում է, թե Նրանում եւ

30. Հռոմեացիների 8.29,30, Եփեսացիների 1.4,5, 2.10

31. Եզեկիլ 37.1-14, Հովհաննես 3.3-8, Հռոմեացիների 1.16, Գաղատացիների 4.4,5

32. Հովհաննես 1.12, 6.45

33. Գաղատացիների 4.6

34. Մատթեոս 7.13,14, Գործը 1.8, Հռոմեացիների 8.14, 15,13,16, Եփեսացիների 1.13,18,19, 3.16,20, 4.30, 6.10, Կողոսացիների 1.29, Ա Թեսաղոնիկեցիների 1.5, Բ Թեսաղոնիկեցիների 2.13, Ա Պետրոս 1.2

35. Եբրայեցիների 12.5-11

36. Փիլիպեցիների 1.6

37. Գործը 9.2, 19.9,23, 24,14,22

38. Գործը 18.25,26, Բ Պետրոս 2.2,21

39. Մատթեոս 16.24, Հովհաննես 10.27, Ա Կորնթացիների 11.1, Ա Թեսաղոնիկեցիների 1.6, Հռոմեացիների 8.29, Բ Կորնթացիների 10.5, Փիլիպեցիների 3.10

բնակվում, պետք է, ինչպես որ Նա գնաց, ինքն էլ այնպես գնա» (Ա Հովհ. 2.6):

Մենք երբեք չպետք է մոռանանք, որ փրկությունը միայն շնորհքով է՝ միայն հավատքի միջոցով, և այն մեզնից չէ, այլ Աստծո պարզեց է⁴⁰: Այսուամենայնիվ, մենք նոյնպես պետք է հիշենք, որ շնորհքով և հավատքի միջոցով փրկված մարդիկ դարձել են Աստծոն ձեռքի գործը՝ հաստատված Քրիստոս Հիսուսվ բարի գործերի համար, որոնք Աստված նախապես պատրաստել է, որպեսզի իրենք վարվեն դրանցում⁴¹: Նրանք, ովքեր հավատացել են արդարացմանը, նոյնպես վերածնվել են կամ հարություն են առել՝ սորովված կյանքի համար⁴²: Աստված դարձել է նրանց նոր ստեղծվածներ՝ նոր զգացմունքներով: Նա որդեգրել է նրանց, ինչպես երեխաների՝ ընդունելով Իր խնամակալության և խրատի ներքո⁴³: Նա դարձել է նրանց Իր ձեռքի գործը, և Նա, Ով սկսել է այս բարի գործը նրանցում, ավարտին կհասցնի այն⁴⁴: Այսպես որ, արդարության շավիդներով վարվեն ընդամենը այնպիսի բան չէ, ինչ քրիստոնյաները պարտավոր են անել, այլ՝ այնպիսի բան, ինչ նրանք անելու են:

Դիտարկելով Հին կտակարանի մարգարեությունները և դրանց իրականացումը Նոր կտակարանում՝ մենք տեսնում ենք, որ բոլոր քրիստոնյաներն ունեն ընդհանուր նպատակ և բարոյական արժեքներ: Նրանք կքայլեն այն ճանապարհով, որը պատրաստված է իրենց համար Քրիստոսի օրինակով և ուսմունքներով: Թեև քրիստոնյաները կարող են տարբերվել մշակույթով, մտավոր զարգացմամբ, հասունությամբ և շատ այլ բաներով, նրանք ցնող նմանություն կունենան դավանանքի և վարքի մեջ: Իրականում, նրանց նմանություններն այնքան ակնառու կլինեն, որ միայն Աստծո գերբնական աշխատանքը կարող է բացատրել դրանք:

- Բոլոր քրիստոնյաները հավատում են, որ Հիսուս Քրիստոս Աստծո Որդին է, միակ քավշարար զոհը մարդկության մեղքերի համար և միակ անոնք երկնքի տակ, որով մարդիկ կարող են փրկվել⁴⁵:
- Բոլոր քրիստոնյաները դավանում են իրենց բերանով Հիսուսին՝ որպես Տեք, և հավատում են իրենց սրտում, որ Աստված հարություն տվեց Նրան մեռելուց⁴⁶:

40. Եփեսացիների 2.8,9

41. Եփեսացիների 2.10

42. Հռոմեացիների 6.4

43. Եբրայեցիների 12.5-11

44. Փիլիպեցիների 1.6

45. Գործը 4.12

46. Հռոմեացիների 10.9

- Բոլոր քրիստոնյաներն ընդունում են Աստվածաշոնչը՝ որպես անսխալկան չափանիշ իրենց հավատքի և վարքի համար, և զգուում են հնագանդեցնել իրենց կյանքը դրա ուսմունքներին⁴⁷:
- Բոլոր քրիստոնյաներն աշխատում են անսրատ պահել իրենց այս աշխարհից և զգուում են սրբության, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը⁴⁸:
- Բոլորը ջանք են գործադրում ունենալ Հոգու պատուղը և լինել Աստծուն՝ նմանակողներ Քրիստոսում⁴⁹:
- Բոլորը զգուում են սիրել իրենց Տեր Աստծուն՝ ամբողջ սրտով, անձով, մտքով և գորությամբ, և սիրել իրենց ընկերոջն իրենց անձի պես⁵⁰:
- Բոլորը պայքարում են մեղքի դեմ, սգում են բարոյական ծախողումների պատճառով, խոստվանում են դրանք Աստծուն և վստահում են ներման մասին Նրա խոստումներին⁵¹:
- Բոլորը սպասում են Քրիստոսի վերադարձին, քանի որ նրանք սպասում են հիմքով հաստատված մի քաղաքի, որի ճարտարապետը և կառուցողն Աստված է⁵²:

Այս ամփոփի ցուցակը ոչ մի դեպքում սպառիչ չէ, բայց այն բավական է՝ ցույց տալու համար, որ Աստված տվել է Իր ժողովրդին մեկ սիրտ և մեկ ճանապարհ: Թեև աշխարհով մեկ սփոված եկեղեցու կան շատ տարբերություններ, ճշմարիտ քրիստոնյաներն այն աստիճան միաբան են իրենց հավատքի և վարքի հիմքերում, որ այդ տարբերություններն այնքան էլ էական չեն, որքան կարող են թվայ սկզբում:

Հայրը պատասխանել է Քրիստոսի աղոթքին միաբանության մասին, և Նոր ուխտի խոստումները մեկ սրտի և մեկ ճանապարհի մասին իրականություն են ճշմարիտ քրիստոնյաների կյանքում⁵³: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք մենք՝ որպես անհատներ, բաժնեկցում ենք այս միաբանությանը և քայլում ենք այս նեղ ճանապարհով: Եթե մարդու համոզմունքները և կենսանք հակասում են այն բանին, ինչը ճշմարիտ է տարբեր սովորույթներ ունեցող բոլոր քրիստոնյաների համար, նա պետք է մտահոգվի և կասկածի ենթարկի այն փաստը, թե արդյո՞ք ինքը հավատքի մեջ է⁵⁴:

47. Հովհաննես 17.20, Բ Տիմոթեոս 3.15-17

48. Երրայեցիների 12.14, Հակոբոս 1.27

49. Ա Կորնթացիների 11.1, Գաղատացիների 5.22,23, Եփեսացիների 5.1

50. Սնատթեոս 22.37-40, Սնըլոս 12.30, Ղոլզա 10.27

51. Սնատթեոս 5.4, Գաղատացիների 5.17, Ա Հովհաննես 1.8-10

52. Ա Թեսաղոնիկեցիների 1.9,10, Երրայեցիների 11.10

53. Երեմիա 32.38,39

54. Բ Կորնթացիների 13.5

ՄԵԿ ԵՐԿՅՈՒՆ

Մենք դիտարկեցինք եկեղեցու միաբանությունը սիրու և վարքի մեջ: Այժմ կուղղենք մեր ուշադրությունը Աստծոն Նոր ուխտի ժողովրդի երրորդ բնորոշ հատկանիշին՝ գերակշռող երկյուղին կամ երկյուղածությանը Աստծոն հանդեպ, որի արդյունքն առողջությունը և օրինակությունն է: Երեմիայի միջոցով Աստված խոստանում է. «Եվ Ես կտամ նրանց մեկ սիրու և մեկ ճանապարհ, որ հնանից վախենան ամեն ժամանակ, որ լավ լինի իրենց համար և իրենցից հետո իրենց որդիների համար» (Երեմիա 32.39):

Մարդիկ հաճախ են զրպարտում և հազվադեպ են հասկանում Տիրոջ երկյուղը: Այսուամենայնիվ, Հին կտակարանի գրքերը համարում են այն ամեն առաքինության և իմաստության հիմքը⁵⁵: Այն սովորեցնում է Աստծոն ժողովրդին ատել չարը և հեռանալ դրանից⁵⁶: Այն դրդում է նրանց սիրել, երկրպագել և ծառայել Տիրոջը լիակատար նվիրմամբ⁵⁷: Այն կառավարում է մարդկային հարաբերությունները և դրդում է Աստծոն ժողովրդին մեծ զգուշավորությամբ վարվել մեկը վյուսի հետ, քանի որ

գիտեն, որ Աստծոն մոտ անփրավություն չկա: Այս և⁵⁸ շատ այլ պատճառներով, Տիրոջ երկյուղը համարվում է լյանքի աղբյուրը և ճշմարիտ աստվածապաշտության էական կողմերից մեկը⁵⁹: Իրականում, Տիրոջ երկյուղն այնպիսի առանցքային դիրք է զբաղեցնում Հին կտակարանի աստվածապաշտության մեջ, որ հսրայելի աստվածապաշտ մնացորդը հաճախ կոչվում էր «Տիրոջից վախեցողները» (Մաղաքիա 3.16): Նաև ուշագրավ է, որ համաձայն մարգարեների՝ եկող Մեսիայի ակնառու առանձնահատկություններից մեկը լինելու է Տիրոջ երկյուղը.

«Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին,
Իմաստության և հանճարի Հոգին,
Խորիրդի և գորության Հոգին,
Գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին:
Եվ Նրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է» (Եսայի 11.2,3):

«Երկյուղ» բառը թարգմանված է մի եբրայերեն բառից, որը նշանակում է վախ, սուկում, սարսափ, հարգանք և երկյուղածություն⁶⁰: Նման շատ բառերի, հատկապես եբրայերենում, այս բազմապի-

55. Սաղմոս 111.10, Առակաց 1.7, 9.10, 15.33

56. Առակաց 3.7, 8.13, 16.6, 23.17

57. Երկրորդ Օրինաց 6.13, 10.12, Ա Թագավորաց 12.24, Բ Մացորդաց 19.9

58. Ղևացիների 25.17, Բ Մացորդաց 19.7

59. Առակաց 14.27

60. Եբրայերեն «յիրահ»

սի իմաստներ ունի՝ կախված իր համատեքստից: Աստծո թշնամիները վախենում են Աստծոց՝ իր արդարության և դատաստանների պատճառով: Նրանք ճանաչում են Նրան որպես մաշող կրակ⁶¹, և որ «Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը» (Եքր. 10.31): Նրա ներկայությունից սարերը մոմի պես հալվում են, և Նա չորացնում է ծովս իր սաստերով⁶²: Ոչ ոք չի կարող կանգնել Նրա ներկայության մեջ, երբ Նա բարկացած է, և ոչ ոք չի կարող դիմանալ Նրա բորբոքված զայրությն⁶³: Այս պատճառով, մեղավորները վախենում են, և կեղծավորներին դող է բռնել⁶⁴: Նրանք աղաչում են սարերին և բլուրներին ընկնել իրենց վրա և ծածկել իրենց Աստծո երեսից⁶⁵:

Ի հակադրություն մեղավորների, Աստծո ժողովուրդը չի սարսափում Նրանից, այլ ունի խորը և մնայուն երկյուղածություն, որը ծնվում է Նրա Անձի գերազանցությունը, Նրա հատկանիշների մեծությունը և Նրա բոլոր գործերի կատարելությունը հասկանալուց: Փառավորված սուրբերը երկարում պարզուեն հայտնում են այս ճշմարտությունը Գառան Երգում.

«Մեծ և զարմանալի են Քո գործերը,
Տե՛ր Աստված, Ամենակալի:
Արդար և ճշմարիտ են Քո ճանապարհները,
Ո՛վ սուրբերի Թագավոր:
Ո՞վ է, որ Քեզնից չվախենա, ո՞վ Տե՛ր, և Քո անունը չփառավորի,
Որ միայն Դու ես սուրբ:
Որովհետև բոլոր ազգերը կզան և Քո առջև երկրպագություն կանեն,
Որովհետև Քո իրավունքները հայտնվեցին» (Հայտն. 15.3,4):

Սուրբ Հոգով վերածնող աշխատանքի միջոցով քրիստոնյան պատկերացում է կազմում Աստծո անսահման արժեքի, կատարյալ արդարության, անսկարագրելի գեղեցկության, անզուգական զորության և անըմբռնելի սիրո մասին: Թեևս այս տեսիլքն աղոտ է այս երկրի վրա, այն դրոյս է վերածնված սրտին երկյուղ տածել Աստծո հանդեպ և փառավորել Նրա անունը: Որքան ավելանում է այդ տեսիլքը, այնքան ավելանում է հավատացյալի երկյուղածությունը: Նա սկսում է ահով ու դողով գործել իր փրկությունը, քանի որ հասկանում է, որ Աստված ներգործում է իրենում՝ թե՛ կամենալը, թե՛ անելը՝ ըստ Իր բարեհաճության⁶⁶: Նա սովորում է մերժել իրեն շրջապատող անբարոյությունը և պղծությունը՝ հասկանալով, որ այս պատճառով Աստ-

61. Ելից 24.17, Երկրորդ Օրինաց 4.24, 9.3, Եսայի 29.6, 30.27,30, 33.14, Երրայեցիների 12.29

62. Սաղմոն 97.5, Եսայի 50.2, Միքիա 1.4, Կառու 1.4

63. Սաղմոն 76.7

64. Եսայի 33.14

65. Ովսե 10.8, Հայտնություն 6.16

66. Փիլիպեցիների 2.12,13

ծոքարկությունը գալիս է այս աշխարհի վրա⁶⁷: Նրանում ավելանում է Տիրոջն իր բոլոր գործերում հաճեցնելու ձգոտումը, քանի որ նա գիտի, որ պետք է կանգնի Քրիստոսի ասյանի առջև և հատուցում ստանա իր գործերի համար՝ թե՛ բարի, թե՛ չար⁶⁸: Ավելին՝ Տիրոջ ահավորությունը իմանալով, նա ոչ միայն հնազանդեցնում է իր կյանքն Աստծոն, այլև ձգոտում է համոզել այլ մարդկանց անել նույնը⁶⁹:

Նոյնակես կարևոր է նշել, որ Տիրոջ երկյուղը ոչ միայն դեկավարում է քրիստոնյայի գործերը, այլև խորը ազդեցություն է թռնոս Աստծոն հետ նրա հարաբերությունների վրա: Այն խոնարհություն է հազցնում նրան: Թեև քրիստոնյան Աստծոն իր Հայրն անվանելու արտոնություն է ստացել, նա քաջատեղյակ է, որ իր Հայրը Երկնքում է և բնակվում է անմատուց լոյսի մեջ, և որ Նա թագավորների ժագավորը և տերերի Տերն է⁷⁰: Թեև քրիստոնյան մուտք ունի իր Հոր ներկայության մեջ և խրախուսվիս է գալ Նրա առջև մեծ համարձակությամբ, նա գիտակցում է, որ այդ մուտքը Քրիստոսի շնորհիվ է, և նա թոյլ չի տախի իրեն օգտվել որևէ ազատությունից, որը հստակորեն շնորհված չէ իրեն⁷¹: Ի վերջո, թեև քրիստոնյան մեծ սփոփանք է զգում այն ճշմարտության պատճառով, որ Քրիստոսը չի ամաչում իրեն եղբայր անվանել, նա ոչ մի դեպքում չի հավակնում Քրիստոսի հետ հավասարության և խոսում է Նրա մասին միայն մեծագույն հիացմունքով ու հարգանքով⁷²: Եթե նա հասկանում է, որ ինչ-որ կերպով սովորականի պես է վերաբերվել Քրիստոսին կամ աներկյուղ ձևով է խոսել Նրա մասին, նա ի սրտեւ տրտմում է և ամաչում:

Որքան ավելի քրիստոնյան իմանա Աստծո գերազանցության և մեծության մասին, այնքան կավելանա նրա երկյուղածությունը: Կգա այս ժամանակը, երբ այն կվերահսկի իր կյանքի ամեն բնագավառը: Նոյնիսկ բարոյական ձախողման դեպքում քրիստոնյան կբացահայտի, որ ունի խորը և մնայուն երկյուղածություն Աստծո հանդեպ, որից նա չի կարող փախչել: Աստծուց դրված այս երկյուղածությունը կառաջնորդի նրան ապաշխարության և խոստովանության⁷³:

67. Եփեսացիների 5.3-7

68. Բ Կորմացիների 5.9,10

69. Բ Կորմացիների 5.11

70. Մատթեոս 6.9, Ա Տիմոթեոս 6.15,16

71. Եփեսացիների 2.18, 3.12, Եբրայեցիների 4.16: «Սակայն Տերն իր սուրբ տաճարում է, լիիր Նրա առջև, ովք ամբողջ Երկիր» (Անբակում 2.20): «Մի՛ շտապիր լեզվովի, և սիրոտ շտապով բան չարտասանի Աստծո առջև, որովհետև Աստված Երկնքում է, և դու Երկիր վրա: Արա համար թող խոսքերոյ թիչ լինեն» (Ժողով. 5.2):

72. Եբրայեցիների 2.11

73. Եբեժիա 32.40-ում Աստված հայտնում է. «Եվ ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ես չդառնամ նրանցից» նրանց բարություն անելուց, և իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ իսձնից չհեռանան»: Թեև հավատացյալը կարող է և պետք է զարգանի Տիրոջ երկյուղը, այն պարզ է Աստծուց, որը դրվել է նրա սրտում վերածնան պահից:

Ակնհայտ է, որ Տիրոջ երկյուղը հաճախ հանդիպող առաքինություն չէ բազմաթիվ դավանող ավետարանական քրիստոնյաների կյանքում և ավետարանական եկեղեցիներում: Դրա սակավությունը զգուշացնող նշան է այն մասին, որ ամեն ինչ չէ, որ լավ է: Քանի որ Տիրոջ երկյուղը և ճշմարիտ աստվածապաշտությունն անմիջական կապ ունեն, այս երկուսից մեկի պակասությունը խոսում է մյուսի նվազման մասին: Ինչպես արդեն նշեցինք, Տիրոջ երկյուղն այնպիսի առանցքային դիրք ունի սուրբգորային աստվածապաշտության մեջ, որ Աստծո ճշմարիտ ժողովրդին հաճախ կոչում էին «Տիրոջից վախեցողները»⁷⁴: Լավ կինքի, եթե մեզ հարցնեք, թե արդյո՞ք մեզ լավագույնս ճանաչող մարդիկ կարող են այսպես նկարագրել մեզ: Տիրոջ երկյուղի պակասությունն Աստծո ժողովրդի մոտ հաճախ տեղի է ունենում այն պատճառով, որ նրանք անտեղյալ են Աստծո հատկանիշներին և գործերին: Տիրոջ երկյուղի բացակայությունը հաճախ նշան է, որ մարդիկ դեռևս վերածնված և դարձի եկած չեն:

ԲԱՇԱՊԱՏԻԿ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Երեմիա 32.38,39-ն ավարտվում է Նոր ուստի ժողովրդին տրվող ևս մեկ խոստումով. բացի այն, որ նրանք կունենան Տիրոջ երկյուղը, և դրա օրինությունը կլինի թե՛ առանձին քրիստոնյայի կյանքում, թե՛ եկեղեցում՝ ընդհանուր առմամբ, այս առավելությունները կհասնեն նաև նրանց զավակներին և զավակների զավակներին: Ինչպես որ Երեմիան ազգարարում է 39-րդ խոսքում՝ մարդիկ, որոնք վախենում են Տիրոջից, անում են դա, «որ լավ լինի իրենց համար և իրենցից հետո՝ իրենց որդիների համար»:

Տիրոջից երկյուղ ունեցող մարդու ժառանգների օրինությունը սովորական երևոյթ է Հին ուստում: Ըստ Առակաց գրքի, Տիրոջ երկյուղը ոչ միայն մեծ վստահություն է հաղորդում այն ունեցողին, այլև ապաստան է նրա զավակների համար⁷⁵: Ծննդոց 18.19-ը, որում Աստված հայտնում է Իր ծրագիրն Աբրահամի համար, ազեղցիկ կերպով պատկերում է կապն աստվածապաշտ մարդու և նրա ժառանգների միջև. «Որովհետև ես ճանաչեցի նրան, որ իր որդիներին և իրենից հետո իր տանը կպատվիրի, և նրանք Եհովայի ճանապարհը կպահեն՝ արդարություն և իրավունք անելու համար, որպեսզի Եհովան Աբրահամի վրա բերի՝ ինչ որ ասել է նրան»:

Քանի որ այս նահապետը ճշմարտության լավ տնտես էր, Աբրահամի Աստված դառնալու էր նաև Իսահակի, Հակոբի և նրանց

74. Մաղաքիա 3.16

75. Առակաց 14.26

Ժառանգների Աստվածը: Նոյն կերպով, ամեն սերունդ Իսրայելում պարտավոր էր խրատել հաջորդ սերնդին՝ պատմելով Աստծոն մեծ փրկարար գործերը, սովորեցնելով Նրա պատվիրանները և լինելով ճշմարիտ աստվածապաշտության օրինակ՝ իրենց երկյուղածությամբ և հնագանդությամբ: Նպատակն այն էր, որ ամեն սերունդ ապրեր որպես լոյս իր ժառանգների և իրեն շրջապատող հեթանոս ազգերի համար, որպեսզի բոլորը համոզվեին միակ ճշմարիտ Աստծոն հավատարիմ և հնագանդ լինելու առավելությունների մեջ: Ահա թե ինչո՞ւ Մովսեսը հորդորեց Իսրայելի ժողովրդին.

«Հսկի, ով Իսրայել, մեր Եհովա Աստված՝ Եհովան մեկ է: Եվ սիրիիր քը Եհովա Աստծոն ամբողջ սրտովի, ամբողջ հոգովի և ամբողջ զրությունովի: Եվ այս խոսքերը, որ Ես այսօր քեզ պատվիրեցի, քը սրտի մեջ լինեն: Եվ կրկնիր դրանք քը որդիներին, խոսիր դրանց վրա քը տան մեջ նստած ժամանակի և ճանապարհ գնացած ժամանակի, և՛ պառկելիս, և՛ վեր կենալիս: Եվ դրանք կապիր նշանի համար ձեռքիր վրա, դրանք ճակատանց լինեն աչքերի մեջտեղում: Նաև քը տան դրանդիրի վրա և դոների վրա գրիր դրանք» (Երկրորդ Օրինաց 6.4-9):

«Հիմա (Աստծո պատվիրանները) պահեք և արեք, որովհետև Նա է ձեր իմաստությունը և հանճարը ազգերի առջև, որոնք, այս բոլոր կանոնները լսելով, պիտի ասեն. «Իրավ այս մեծ ազգը մի իմաստուն և հանճարեղ ժողովուրդ է» (Երկրորդ Օրինաց 4.6):

Յուրաքանչյուր սերնդի հայրեր պետք է լիովին տրվեին հաջորդ սերնդին ուսուցանելու առաջադրանքին: Աստծո պատվիրանները պետք է լինեին նրանց սրտերում, և նրանք պետք է ջանասիրաբար սովորեցնեին նրանք իրենց որդիներին և դուստերին: Աստված և Նրա Խոսքը պետք է լինեին նրանց կյանքի կարևորագույն մասը՝ թե՛ տանը, թե՛ դրսում⁷⁶: Այսուամենայսիվ, թեև Օրենքը և Սարգարենները մշտապես հիշեցնում էին Իսրայելին, թե որքան կարևոր էր դա, մարդիկ հազվադեպ էին հնագանդվում: Իրականում, Դատավիրաց գրիի հեղինակը հայտնում է, որ նոյնիսկ առաջին սերունդը, որը մուտք գործեց Խոստման երկիր, կոպտորեն անտեսեց այս տնտեսությունը. «Եվ այն (Հետուի) դարի բոլոր մարդիկ իրենց հայրերի մոտ ժողովվեցին, և նրանցից հետո մեկ ուրիշ ազգ վեր կացավ, որ չէր ճանաչում ո՛չ Տիրոջը, և ո՛չ այն գործերը, որ Նա արել էր Իսրայելի համար» (2.10):

Թեև Իսրայելի պատմության մեջ կային արթնության կարճ ժամանակահատվածներ, դրանք շարունակական չէին: Հազվադեպ է եղել, որ ինչ-որ սերունդ կատարեր իր երեխաններին սովորեցնելու իր վեհ կոչումը: Հազվադեպ է եղել, որ հաջորդ սերունդն օգուտ քաղեր

Նախորդի աստվածապաշտությունից և խրատներից: Այսուամենայնիվ, այս համատեքստում Երեմիան մարգարեացավ ապագա ժամանակաշրջանի և ուխտի մասին, որում Աստծո ժողովրդի ամեն անդամ Տիրոջից վախենալու սիրտ կստանա՝ ոչ միայն իր օգտի համար, այլև իրենից հետո իր զավակների օգտի համար⁷⁷:

Մենք պետք է հասկանանք, որ այս խորերում Աստված չի երաշխավորում քրիստոնեական ընտանիքներում ծնված յուրաքանչյուր երեխայի փրկությունը, բայց Նա խոստանում է, որ յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա, եկեղեցու յուրաքանչյուր ճշմարիտ անդամ համակված կլինի Տիրոց խորը և մնայոն երկյուղով, որը մեծ հոգևոր օգուտ կրերի իր զավակներին, և նրանց, որոնց հետ նա կհաղորդակցվի: Իրականում, ճշմարիտ քրիստոնյա լինելու մեծագոյն ապացույցներից մեկն այն հոգևոր բարիքն է, որը հոսում է նրանից և հպվում է իր շորջը գտնվող մարդկանց, հատկապես՝ իր ամենամոտ մարդկանց՝ իր կտորը և երեխաներին: Նոյնը կարելի է ասել եկեղեցու մասին՝ ընդհանուր առմամբ: Մենք կարող ենք համարել, որ որևէ տեղեկան եկեղեցի ճշմարիտ եկեղեցի է՝ տեսնելով, որ մարդիկ հոգևոր բարիք կամ օգուտ են ստանում այդ եկեղեցու ուսմունքների և աստվածապաշտության շնորհիվ:

Որպես ամփոփում, այն մարդիկ, որոնք պնդում են, թե քրիստոնյա են, պետք է պատասխանեն մի քանի կարևոր հարցերի: Արդյո՞ք Տիրոց երկյուղն ուշագրավ հատկանիշ է մեր կյանքում: Արդյո՞ք այն նկատելի է մեր կրոնական համայնքներում կամ եկեղեցիներում: Արդյո՞ք մեր երկյուղածությունը Տիրոջից դրական հոգևոր ազդեցություն է թողնում մեզ շրջապատող մարդկանց վրա, հատկապես՝ ամենամտերիմ մարդկանց: Արդյո՞ք մենք հավատարիմ ենք մեզ հանձնված տնտեսության մեջ, որն Աստծո ճշմարտությունը մեր հաջորդ սերունդներին փոխանցելու է: Արդյո՞ք մենք կատարում ենք մեր երեխաներին սովորեցնելու վեհ կոչումը, և արդյո՞ք նրանք օգուտ են քաղում մեր օրինակից: Մենք պետք է մեծապես մտահոգվենք, եթե այս բաները օտար են մեզ համար կամ հազվադեպ են դրսուրվում մեր միջև: Սրանք ոչ թե քրիստոնեական կյանքի թույլատրելի տարբերակներ են, այլ՝ դրա ապացույցը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք իմացանք Աստծո ուխտի ժողովրդի երեք էապես կարևոր հատկանիշի մասին: Առաջինը՝ ճշմարիտ քրիստոնյաներն ունեն մեկ սիրտ և միաբան են Աստծոն և միմյանց հանդեպ ունեցած զգաց-

77. Երեմիա 32.38,39

մունքներով: Երկրորդը՝ նրանք ունեն մեկ ճանապարհ կամ միևնույն նպատակը և վարքը. նրանք Հիսուս Քրիստոսի հետևորդներն են: Երրորդը՝ նրանց կյանքում կա իրական երկյուղ Տիրոջ հանդեպ, որի արդյունքում օրինվում են թե՛ իրենք, թե՛ իրենց ժառանգները:

Դարձի արմատական բնույթն անկարելի է չափազանցնել: Այնուամենայնիվ, քրիստոնյան կատարյալ չի դառնում իր դարձի օրը: Բոլորս էլ դեռ սպասում ենք մեր վերջնական փրկությանը և փառավորմանը⁷⁸: Չայած բոլոր այն փոփոխություններին, որոնք Սուրբ Հոգին կատարել է մեզանում, մեր անկում ապրած բնությունը դեռևս մեր մասն է: Այն հակառակվում է մեր նոր բնությանը և պայքարում է Քրիստոսին կերպարանվելու և ճշմարիտ աստվածապատությանը ձգուելու յուրաքանչյուր փորձի հետ: Պողոս առաքյան անվանում է այս թշնամուն մարմին կամ մարմնական բնություն և նկարագրում է այն պատերազմը, որը վարում է մեր դեմ. «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ: Եվ սրանը իրար հակառակ են, որ միգուցե այն, որ դուք կամենում եք, այն անեք (կամ՝ որպեսզի դուք չանեք այն բաները, որոնք կամենում եք)» (Գաղատ. 5.17): Քրիստոնեական կյանքը նոր մարդու տիտանական պայքարն է մարմնական բնության, այս աշխարհի և սատանայի դեմ, սակայն մեր պայքարը մեղքի դեմ, մեր կոտրվածությունը ձախողումների ժամանակ և մեր առաջընթացը (չայած երբեմն ճանապարհից շեղվելուն) պապուցում են, որ Աստված գործում է մեզանում:

Այսուամենայնիվ, գոյություն ունի մեծ անհամապատասխանություն այն ամենի միջն, ինչ Աստվածաշունչը սովորեցնում է մեզ Աստծոն Նոր ուխտի ժողովրդի մասին, և այն իրավիճակի, որում գտնվում է Արևմտաքի Ավետարանական շարժման մեծ մասը: Շատ դեպքերում հումանիզմը և նյութապաշտությունն ավելի առաջնահերթ են, քան Աստծուն ուղղված զգացմունքները և անձնազոհ սերը եղբայրների հանդեպ: Այն առանցքային վարդապետությունները, որոնք մեկնադիր հանձնվեցին սուրբերին, վերաբիմաստավորվել են անձնական նախապատվության, արևմտյան մշակույթի հարմարավետության և հոգեբանության միջոցով՝ առանց նոյնիսկ մի փոքր ուշադրություն դարձնելու քերականությանը, համատեքստին և ավելի ազնվագոյն ժամանակաշրջանների հավատքի հանգանակներին ու դավանանքներին: Միակ նպատակը՝ քրիստոսանմանությունը, փոխարինվել է այս ժամանակավոր կյանքում սեփական անձը կա-

78. Հոռմեացիների 8.30, Ա Կորնթացիների 15.51-52, Եփեսացիների 1.14, 4.30, Փիլիպեցիների 3.19,20

յացնելով⁷⁹: Տիրոջ երկյուղը՝ ներկայացվել է շատ ավելի մեղմ կերպով կամ լիովին արգելվել է՝ բոլոր այն աստվածաշնչյան վարդապետությունների հետ, որոնք չափազանց խիստ են համարվում ժամանակակից թուլակամ մարդու համար:

Հաջվի առնելով այս շեղումները Սուրբ գրքից և պատմական քրիստոնեության ամենից ընդունված դավանակներից՝ զարմանալի չէ, որ ավետարանական շարժումը, թվում է, հեղեղված է մարմնավորությամբ և մեղքով: Այսուամենայնիվ, ամենասարսափելի փաստն իրենց Ավետարանական շարժման հետ նույնացնող բազմաթիվ անհատների և եկեղեցիների մասին այն չէ, որ նրանք պայքարում են մեղքի դեմ, այլ՝ որ նրանք թոլորովին չեն պայքարում: Մեծագոյն վտանգն Արևմուտքի Ավետարանական շարժման մեջ այն չէ, որ այս շարժումը որոշ չափով արատավորված է աշխարհիկությամբ, անտարբերությամբ և եսասիրությամբ, այլ՝ որ այդ արատը չի անհանգստացնում այդ մարդկանց: Իրականում, մեծամասնությունը, թվում է, նույնիսկ չի նկատում այն: Կուրությունը նման սարսափելի և ակնհայտ խնդրի հանդեպ կարող է ունենալ միայն երկու հնարավոր պատճառ:

Առաջին հնարավոր պատճառն այն է, որ բազմաթիվ ծառայողներ և եկեղեցիների անդամներ Ավետարանական շարժման մեջ դարձի չեկած և մարմսավոր են: Այս իրողությունը գոյություն ուներ նոյնիսկ Ամերիկայի Մեծ արքնության օրերին: Մեծ ավետարանից Ձորջ Ուայրֆիլդը (1714–1770թ.թ.) գրում է.

«Քանի որ ես լրջորեն համոզված եմ, որ քարոզիչների մեծ մասը խոսում է մի Քրիստոսի մասին, որին նրանք չեն ճանաչել և չեն վերապրել, և եկեղեցիների անդամները մահացած են, քանի որ նրանք թույլ են տվել, որ մահացածները քարոզեն իրենց: Երանի Տերն արթնացներ և հարություն տար նրանց՝ հանոն իր անվան: Որովհետև ինչպես կարող է մահացած մարդը կենդանի զավակներ ծնել: Իհարկե, ճշմարիտ է, որ Աստված կարող է օգտագործել նաև սատանային՝ մարդուն դարձի բերելու համար, եթե Նա կամենա, և կարող է օգտագործել նաև դարձի չեկած ծառայողների, սակայն ես համոզված եմ, որ Նա հազվադեպ է օգտագործում այդ երկուսին էլ այս նպատակով: Ո՛չ, Տերն ընտրելու է օրինայլ Հոգով պատրաստված անորներ՝ Իր գործածության համար»⁸⁰:

Այս մարդիկ, որոնք ակնարկում են, որ Ավետարանական շարժումը հեղեղված է դարձի չեկած մարդկանցով, մեղադրվում են սի-

79. Կարուր է նշել, որ չափից մեծ մտահոգությունը սեփական անձի կայացմամբ պահանջում է, որ Աստված հեռանա ամեն ինչի կեստրոնից և դառնա ծառաստված, որի գոյության նպատակը մարդու առաջնադաշտում է:

80. Ձորջ Ուայրֆիլդ. «Ձորջ Ուայրֆիլդի օրագրերը» (Լոնդոն, «Banner of Truth», 1960թ.), էջ 470:

բո բացակայության, ինքնարդարացի լինելու և անհանդուրժողականության մեջ: Այնուամենայնիվ, մենք պետք է ասենք դա: Նոյնիսկ հավատքի ամենափայլուն դավանանքը չի ապացուցում մարդու դարձը: Հիսուսը զգուշացրեց, որ ոչ ամեն մենք, ով «Տեր, Տեր» է անվանում Իրեն, կմտնի Երկնքի թագավորություն. կմտնի նա, ով կատարում է Հոր կամքը⁸¹: Քրիստոնյան հայտնի է իր պտղով⁸²: Այդ իսկ պատճառով, մենք սեր չենք ցուցաբերում բազմաթիվ դավանող, բայց անպտուղ ավետարանականների հանդեպ, եթե թույլ ենք տալիս նրանց քնել Սիրոսում, մինչ նրանց կործանումը մոտենում է: Աստված ասաց Եղեկիել մարգարեին. «Եվ դու պետք է իմ բերանից խոսք լսես և զգուշացնես նրանց Իմ կողմից: Երբ որ Ես ամբարշտին ասեմ. «Անպատճառ պետք է մեռնես», և դու նրան չզգուշացնես և չխոսնես, որ զգուշացնես ամբարշտին իր չար ճանապարհից, որ ապրի, այն ամբարիշտն իր անօրինությամբ կմեռնի, բայց նրա արյունը քը ձեռքից կպահանջեն» (Եղեկ. 3.17,18, կարդացելք նաև 33.7-9):

Երկրորդ հնարավոր պատճառն այն է, որ բազմաթիվ ճշմարտապես դարձի եկած մարդիկ տկարացած են գիտելիք չունենալու պատճառով, ինչն ամբիոնի ետևում կանգնողներից շատերի մեղավորությունն է: Նրանք հազվադեպ են սովորեցնում Աստծո հատկանիշների մասին: Նրանք կամ մերժում են, կամ անտեսում են մարդու ծայրաստիճան արտավորությունը: Նրանք ներկայացնում են խաչը որպես սիրո նահատակություն, ոչ թե քավություն՝ աստվածային արդարադատությունը բավարարելու և սուրբ Աստծո բարկությունը խաղաղեցնելու համար: Նրանք կրնատել են Ավետարանը՝ հասցնելով այն մի քանի պնդումների Քրիստոսի մասին, որոնք այնքան աղքատիկ են իրենց վարդապետական բովանդակությամբ, որ չեն կարող նոյնիսկ հավատքի հանգանակ համարվել: Նրանք փոխարիխնել են ապաշխարության և հավատքի կանչն Աստծո և մարդկանց միջև արվող սնոտիապաշտ փոխանակմամբ: Ծառայողները փրկության հավաստիացում են տալիս այն մարդկանց, որոնք խոնարհեցնում են իրենց գլուխը, բարձրացնում են իրենց ձեռքը և ապաշխարության աղոթք են կրկնում: Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը դավանող մարդկանց հազվադեպ են կոչ անում քնել իրենց՝ տեսնելու համար, թե արդյո՞ք իրենք հավատքի մեջ են, և արդյո՞ք իրենք հաստատ են անում իրենց կոչումը և ընտրությունը⁸³: Շատ քչերն են լսել, որ առանց սրբության կամ սրբացման՝ ոչ ոք չի տեսնի Տիրոջը⁸⁴: Վերջապես, գործնական սկզբունքները, որոնց նպատակն է թույլ տալ

81. Մատթեոս 7.21

82. Մատթեոս 7.16,20

83. Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10

84. Եթրայեցիների 12.14

մարդկանց վարել հնարավորինս լավագոյն կյանքն այս աշխարհում, փոխարինել են այն վարդապետությունները, որոնք խրատում են մարդուն աստվածապաշտության մեջ և պատրաստում են նրան հավիտնության համար: Վյուամենայիշիվ, չնայած մեր ամբողջ գործունեությանը, մենք չենք պակասեցրել Աստծո Խոսքի սովը մեր երկրում^{85:}

Այդ դեպքում, ինչ պետք է անենք բժշկության համար: Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ անկարող ենք ինքներս բժշկել այս իրավիճակը, և պետք է աղաղակենք Աստծուն՝ խնդրելով Նրա ողորմությունն այն խառնաշփորհի համար, որը մենք ստեղծել ենք: Եզեկիելի օրերում Աստված փնտրում էր այնպիսի մարդու, ով կկանգներ իր առջև՝ խրամատում, որպեսզի ժողովուրդը չկործանվեր, սակայն չգտավ ոչ որի^{86:} Աստծո ջնորհրով, թող Նա տեսնի, որ մենք օր ու գիշեր լուս չենք մնում և հանգիստ չենք տալիս Նրան, մինչև որ Նա դարձնի իր եկեղեցին օրինություն աշխարհով մեկ^{87:}

Երկրորդը՝ մենք պետք է ամաչենք բոլոր մարմնավոր միջոցներից, որոնք օգտագործել ենք՝ եկեղեցու թիվս «ավելացնելու» համար, և պետք է մեծ խորշանքով դեն նետենք դրանք: Մենք պետք է հետացնենք մեզզից Սավուդի սպառագինությունը և ընտրենք միայն լավագոյն քարերը մեր պարսատիկի համար՝ Աստծո Խոսքը, բարեխսական աղոթքը և անձնազնի սերը: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ թեև մարմնի մեջ ենք, մենք մարմնով չենք պատերազմում: Մեր պատերազմի գենքերը մարմնավոր չեն. դրանք աստվածային և զորավոր միջոցներ են՝ կործանելու համար ամեն ամրություն և խոչընդոտ, որ բարձրանում է Ավետարանի և Քրիստոսի թագավորության տարածման դեմ:

Միայն Աստծո զորությամբ մենք կարող ենք կործանել մեր ժամանակաշրջանի շահարկումները և ամեն բարձրություն, որը հակառակում է Աստծո մասին գիտելիքին: Միայն Աստծո գենքերով մենք կարող ենք գերել ամեն վիտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար^{88:} Երրորդը՝ մարդկանցից հավանություն ստանալու կարիքը չպետք է իշխի մեզ: Մենք պետք է անարգենք ցանկացած գովեստ՝ բացի այնպիսիներից, որոնք պատշաճ են Աստծո մարդու համար: Պողոս առաքյալը հատուկ ցուցումներ է տալիս մեզ այս մասին.

«Այլ՝ ամեն բանի մեջ մեր անձերը ընծայում ենք ինչպես Աստծո պաշտոնյաներ՝ շատ համբերությամբ նեղություններում, վշտերում, չարչարանքներում, ծեծերում, բանտերում, խոռվություններում, աշխա-

85. Ամովս 8.11

86. Եզեկիել 22.30

87. Եսայի 62.6,7, կարդացե՛ք նաև Եզեկիել 36.37,38

88. Բ Կորնթացիների 10.3-5

տանքներում, հսկումներում, ծումերում՝ սրբությամբ, գիտությամբ, երկայնամտությամբ, քաղցրությամբ, Սուրբ Հոգով, անկեղծ սիրով, ճշմարտության խոսքով, Աստծո զորությամբ, արդարության գենքերով՝ աշ կողմից և ձախ կողմից, փառքով և անարգանքով, պարսավանքով և գովասանքով՝ ինչպես մոլորեցնողներ, բայց ճշմարիտներ, ինչպես չճանաչվածներ, բայց լավ ճանաչվածներ, ինչպես մեռածներ, բայց ահա կենդանի ենք, ինչպես պատժվածներ, բայց չսպանվածներ, ինչպես տրտմածներ, բայց միշտ ուրախներ, ինչպես աղքատներ, բայց շատերին հարստացնողներ, ինչպես թե ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ» (Բ Կորնթ. 6.4-10):

ԳԼՈՒԽ ՏԱՍԻՀԻՆԳ



Հավիտեսական ուխտը

«Եվ ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ես չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անեղոց, և իմ երկուողը կդնեմ նրանց արտերում, որ Բնձնից չեռանասն»:

— Երեմիա 32.40

Եթե մենք իրականում քրիստոնյա ենք, շատ ժամանակ չի անցնի, մինչև որ խորապես գիտակցենք, որ մեր փրկության ապահովությունը և հավաստիացումը հիմնված են երկու մեծ այոների վրա: Այդ սյուներն են Աստծո հավատարմությունն իր ուխտին և Նրա փրկության կատարյալ աշխատանքը մեր փոխարեն: Շշմարիտ հավատացյալի ամենից ցնող և հիմնարար հատկանիշներից մեկն այն է, որ իր ամբողջ կյանքի ընթացքում նա շարունակ ավելի ու ավելի է գիտակցելու, որ փրկությունը լիովին Աստծոց է, լիովին շնորհքից է և լիովին Քրիստոսից է: Աստված սիրեց մեզ, թեև մենք չէինք սիրում Նրան²: Նա օգնության եկավ և կանգնեց մեր կողքին, երբ մենք չէինք ցանկանում կանգնել Նրա կողքին³: Նա արդարացրեց մեզ Իր առջև, երբ մենք լիովին անզոր էինք⁴: Նա երես չի թեքի մեզնից, թեև մեր ձախողությունն անթիվ են, իսկ խոճի և սատանայի մեղադրանքները հեղեղի պես տեղում են մեզ վրա⁵:

Հասուն հավատացյալը, որը քաջ գիտակցում է, որ փրկությունը միայն շնորհքով է, խորապես կմտահոգվեր նոյնիսկ աննշան ակնարկից այն մասին, որ իր փրկությունը կարող է լինել իր առաքինության կամ արժանիքների արդյունքը: Նա կգերադասեր, որ բացահայտվեին իր մեծագույն բարոյական ձախողությունը, և որ իրեն նայեին մեծագույն արհամարհանքով, քան թե ինչ-որ մեկը չափա-

1. «Որովհետև Ես՝ Տերս, չեմ փոփոխվի, և դուք, ովք Հակոբի որդիներ, չեք սպառվի» (Մաղաքիա 3.6): «Եվ երբ որ Հիսուսը քացախն առավ, ասաց. «Կատարված է»: Եվ գոլովը խանաքիեցրեց, հոգին ավանդեց» (Հովհաննես 19.30):

2. Ա Հովհաննես 4.10

3. Հովհաննես 3.19,20

4. Հոռմեացիների 5.6

5. Ա Հովհաննես 3.20, Հայտնություն 12.10

զանց բարձր մտածեր իր մասին և չափազանց ցածր՝ Քրիստոսի մասին: Ավելին՝ նա կարհամարհեր ցանկացած գովեստ՝ բացի այն գովեստներից, որոնք դրված են Քրիստոսի ուժերի մոտ: Այս պատճառով է, որ հասուն քրիստոնյային չեն վասում այն քարոզները, որոնք բացահայտում են մարդու բացարձակ արատավորությունը: Նա գիտի՝ որքան ավելի խավար է պատերվում մարդը, այսքան ավելի վառ է շողում Առավոտյան Աստղը՝ Քրիստոսը⁶:

Հասուն հավատացյալը բերկրանք է զգում այն աշխատանքի պատճառով, որն Աստված կատարեց իր փոխարեն, և պարձենում է, որ իր արդարացումը, սրբացումը և վերջնական փառավորումը միայն Քրիստոսի մեջ են⁷: Նա սրտանց աղաղակում է. «Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» և «Ոչ թե մեզ, Տեր, ոչ թե մեզ, այլ Քո անվանը փառք տուր՝ Քո ողորմության համար և Քո ճշմարտության համար» (Գաղատ. 6.14, Սաղմ. 115.1): Այս ճշմարտությունը զարմանալի պարզությամբ ներկայացված է Պողոսի նամակում՝ ուղղված Փիլիպեի Եկեղեցուն, որում նա ներկայացնում է մեզ ճշմարիտ քրիստոնյայի ամենահակիրճ, սակայն ամենաազդեցիկ նկարագրություններից մեկը: Նա գրում է. «Որովհետև մենք ենք թվատությունը, որ Հոգով պաշտում ենք Աստծոն, և պարծենում ենք Քրիստոս Հիսուսի, և մարմնի վրա վստահություն չունենք» (Փիլիպ. 3.3):

Եթե գոյություն ունի դարձի եզակի ապացույց, այն հետևյալն է. ճշմարիտ հավատացյալը պարծենում է Քրիստոսի Անձով և աշխատանքով, և նոյնիսկ մի փոքր չի վստահում իրեն և իր գործերին: Նա մերժում և անարգում է ցանկացած հոյս, որ ինքը կարող է ունենալ, սեփական արդարություն՝ օրենքի միջոցով, որպեսզի գտնվի Քրիստոսում և ունենա այն արդարությունը, որը գալիս է Աստծուց՝ հավատքի հիման վրա⁸: Նրա մեծագույն բերկրանքն ու դավանանքն է «սույն ֆիդե», «սույն գրատիս», «սույն Քրիստոս» և «սույն Դեղզորդիս»:

Մենք չենք կարող չափազանցնել այս ճշմարտությունը: Որքան քրիստոնյան հասունանա, այնքան նա կփոքրանա, իսկ Քրիստոսը կմեծանա: Նա այլս չի հուսա իր արժանիքներին և կվստահի մեկ այլ Անձնավորության կատարյալ և ավարտված աշխատանքին: Ներքուստ իրեն քննելով՝ նա չի գտնի ոչ մի վստահություն, և կուղղի իր հայացքն իրենցից դուրս՝ միայն Քրիստոսին: Ապրանքներով բեռնված ուղտը չի կարող անցնել ասեղի ծակով¹⁰: Ո՞չ էլ մարդը կարող է

6. Բ Պետրոս 1.19, Հայտնություն 22.16, կարդացե՛ք նաև Մարտիրա 4.2, Ղուկաս 1.76-79

7. Ա Կորնթացիների 1.30

8. Փիլիպեցիների 3.8,9

9. Հովհաննես 3.30

10. Մատթեոս 19.24, Մարկոս 10.25, Ղուկաս 18.25

մուտք գործել Երկնքի թագավորություն՝ բեռնված սեփական արդարությամբ:

ԱՍՏԾՈ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ԻՐ ՈՒԽՏԻՆ

Երեմիա 32.40-ի սկզբում Աստված խոստանում է հավիտենական ուստ կնքել Իր ժողովրդի հետ՝ անփոփոխ և անդառնալի երդում, որ Նա երբեք չի դադարի բարություն անել նրանց: «Հավիտենական» բառը թարգմանվում է մի երրայերեն բառից, որը նշանակում է այն, ինչ մշտական է, հավերժական է կամ անվերջանալի է¹¹: Այս խոսքում այս բառն օգտագործվում է՝ որպես ապացոյց, որ Աստծոն հավատարմությունն Իր ուստի հանդեպ և դրա հետևանքները հավիտենական են լինելու¹²: Հավատացյալի կյանքի ամբողջ ընթացքում, բազմաթիվ սերունդների կյանքում՝ մինչև օրս, և ապագայում՝ հավիտենության անդիվ օրերում, այս Նոր ուստի օրինությունը երբեք չի սպառվի: Մեսիայի գալուստով սկսվեցին վերջին օրերը. Նրա գալուստն այս ամենի փառահեղ իրականացումն է, ինչը կանխասում էին Օրենքը և Մարգարեները¹³: Ժամանակների լրումը և ամեն բաների իրականացումը Քրիստոսում հասան մեզ¹⁴: Թեև մենք դեռ սպասում ենք մեր մարմինների փրկագնմանը և ամեն ինչի ավարտին, մենք գիտենք, որ մեր ներկա դիրքն Աստծոն առջև նոյնքան կատարյալ է, որքան այն կինչի ապագայում¹⁵: Նա դարձել է մեր Աստվածը, իսկ մենք՝ Նրա ժողովուրդը: Նա «մեզ օրինեց ամեն հոգևոր օրինությամբ երկնավոր բաներում Քրիստոսով» (Եփես. 1.3): Մեր դիրքը վերջնական է, հավիտենական է, անփոփոխ է և անդառնալի է: Աստված ավելի շուտ կխախտի Իր ուստը ցերեկվա և գիշերվա հետ և կիոխի երկնքի ու երկրի համար Իր հաստատած կանոնները, քան կմերժի Իր ժողովրդին¹⁶: Նոյնիսկ եթե կինը մոռանա իր կաթնակեր մանկանը և գութ չունենա իր որովայնի ծնունդի հանդեպ, Աստված չի մոռանա մեզ. Նա դրոշմել է մեզ Իր ձեռքի ափի վրա¹⁷:

Թեև հետևյալը հստակորեն նշված չէ, Երեմիա 32.40-ի շարադրանքից պարզ է դառնում, որ մեր վստահությունը Նոր ուստի անխախտ և անփոփոխ բնույթի հանդեպ պետք է հիմնված լինի Աստ-

11. Երրայերեն «օլամ»

12. Մելյոն Հենրի. «Մելյոն Հենրիի ամրող Աստվածաշնչի մելյոնթյունը» (Լոնդոն, «Fleming H. Revell», անհայտ տարեթիվ), հու. 4, էջ 616:

13. Եսայի 2.2, Ովսե 3.5, Սատթենս 5.17, 11.13, Գործը 24.14, 28.23, Հոռմեացիների 3.21, Երրայեցիների 1.2, ԲՊետրոս 3.3

14. Եփեսացիների 1.10

15. Հոռմեացիների 8.23, Եփեսացիների 1.14, 4.30, Փիլիպեցիների 3.20, 21, Աթեսաղոնիկեցիների 1.10, Հայտնություն 21.1

16. Երեմիա 33.25, 26

17. Եսայի 49.14-16

ծու անսխալական բնավորության վրա: Երեմիա մարգարեի միջոցով Աստված հայտնում է Իրեն որպես մեր փրկության գլխավոր կատարողը, սկզբնական նախաձեռնողը և նա, ումից այս ուխտը լիովին կախված է: Նա հայտարարում է. «Ես հավիտենական ուխտ ես դնում... որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց, և Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ Ինձնից չհեռանան» (Երեմ. 32.40): Այսպիսով, մենք հասկանում ենք անմիջապես Աստծո խոսքերից, որ այս Նոր ուխտը լիովին հիմնված է Նրա հավատարմության և գորության վրա, որոնցով Նա կատարում է այն, ինչ խոստացել է: Այս ճշմարտությունից բխում է երկու հետևողություն: Առաջինը՝ այն փառք է բերում Աստծուն: Այս աշխատանքը Նրանն է՝ սկզբից մինչև վերջ, և այդ պատճառով, դրա իրականացումը փառավորում է միայն Նրան: Երկրորդը՝ այն Աստծո ժողովորի միջամարտությունն է և նրա գորության հիմքը: Մեր սրտերը կհալչեին հուսահատության աստիճան և կտկարանային՝ առանց ապաքինման, եթե մեր փրկության նոյնիսկ ամենափոքր մասը կախված լիներ մեզնից: Այնուամենայնիվ, քանի որ այս ուխտը հիմնված է Աստծո վրա, Ով չի կարող ձախողվել, և այն փրկության աշխատանքի վրա, որն անսահման է թե՛ տևողությամբ, թե՛ արժեքով, այն հավիտենական է:

Թեև մենք կրկնվում ենք, բայց պետք է հարց տանք. ի՞նչ հոյս կունենար նոյնիսկ լավագույն մարդը, եթե այս ուխտն անպայմանական չլիներ: Նոյնիսկ եթե մեր վատագույն արարքները հեռացվեին, և մեզ թույլ տրվեր ներկայացնել միայն մեր լավագույն գործերը Աստծո դատաստանի գահի առջև, մի՛թե այդ միտքը չէր սարսափեցնի մեզ: Մի՛թե Աստվածաշունչն արդեն իսկ չի վկայել մեր դեմ, որ մեր ամենաարդար գործերն ընդամենը կեղտոտ լաթեր են: Աստծո բոցավառվոր ճերմակ արդարության առջև բոլորս կթառամեինք տերևի պես, և մեր անօրինությունները քամու պես կըշեին մեզ¹⁸:

Յուրաքանչյուր քրիստոնյա, ով թեկուի մի փոքր ծանոթ է Աստծո խոսքին, կհասկանա, որ մենք կհայտնվեինք սարսափելի վիճակում, եթե չլիներ Երեմիա մարգարեի այս խոստումը, որը հավատարիմ և անփոփոխ է, քանի որ Աստված է այդպիսին դարձել այն: Այս խոստումը նոյնքան հավիտենական է, որքան այն կազմած աստվածային միտքը: Այն հավաստիացնում է մեզ՝ որպես հավատացյաների, որ չնայած մեր անկարողությանը՝ մենք բերվել ենք հավիտենական և անպայմանական ուխտի մեջ Աստծո հետ: Այս ամենը Նրա գործն է, և այդ պատճառով մենք ունենք հաստատ խոստում, որի վրա կանգնած ենք ոչ միայն այս կյանքում, այլև բոլոր գալիք դարերում: Այս պատճառով է, որ մենք պատրաստակամորեն և միաբան ընդու-

18. Եսայի 64.6

նում ենք, որ շնորհքով ենք փրկված, և դա մեզնից չէ և մեր գործերից չէ, որպեսզի ոչ ոք մեզնից չպարծենա¹⁹:

Հին կտակարանի խոստումները Նոր ուստի հավիտենական և անպայմանական բնոյթի մասին չեն սահմանափակվում Երեմիայի մարգարեռությամբ. մենք տեսնում ենք նման խոստումներ նաև Եսայի մարգարեի գրքում: Նրա միջոցով Աստված հայտնեց Իր ժողովրդին.

«Ձեր ականջը խոնարհեցրեք և ինձ մոտ եկեք,

Լսեք, և ձեր հոգին կապրի:

Եվ ձեզ հետ հավիտենական ուստ պիտի դնես՝

Դավթի հավատարիմ ողորմությունները» (55.3):

Այս հատվածից հասկանում ենք, որ այն հավիտենական ուխտը, որն Աստված կնքելու էր Իր ժողովրդի հետ, հիմնված էր լինելու Դավթին ցուցաբերած ողորմությունների վրա կամ լինելու էր համաձայն այդ ողորմությունների: Թեև ինչ-որ առումով այս հատվածը դժվար է մեկնել, աստվածաբանների մեծ մասը համաձայնում են հետևյալի շուրջ: Առաջին՝ մեծագույնը բոլոր ողորմություններից, որոնք Աստված ցուցաբերեց Դավթին, խոստումն էր Մեսիայի մասին: Թեև Դավթիր միանալու էր իր հայրերին, և նրա ցեղը կործանվելու էր մեղքի և ապստամբության պատճառով²⁰, Աստված խոստացավ, որ Դավթի ցեղի ընկած ծառից մի Շառավիր (կամ ճյուղ) էր բարձրանալու²¹: Նա վերականգնելու էր Իր ժողովրդին, և Նրա միջոցով Դավթի տունը կամ դինաստիան հավիտյան մնալու էր, և նրա գահն անվերջ հաստատ էր լինելու²²:

Համապատասխանաբար, այն հավիտենական ուխտը, որն Աստված կնքեց Իր ժողովրդի հետ, լինելու էր համաձայն այս հավատարիմ ողորմությունների: Եթե եկավ ժամանակի լրումը, եթե այս աշխահում մենք անզոր էինք և առանց Աստծո, Մեսիան ծնվեց Դավթի ցեղից²³: Նա վիրավորվեց մեր մեռքերի համար, հարվածվեց մեր անօրինությունների համար, և Նրա մտրակվելով մենք բշկվեցինք²⁴:

19. Եփեսացիների 2.8,9

20. Գ Թագավորաց 2.10, Գործ 2.29, 13.36. Դավթի դինաստիան այնքան սակավաթիվ էր դարձել Քրիստոսի գայուսադի ժամանակ, որ այն կարելի էր համեմատել «ծարավուտ երկրի» (Եսայի 53.2) և ընկած ծառի կոճի (Եսայի 11.1) հետ:

21. Եսայի 4.2, 11.1, Երեմիա 23.5, 33.15, Զաքարիա 3.8, 6.12

22. «Եվ քո տունը և քո թագավորությունը քո առջև հավիտյան ապահով է, քո աթոռը հաստատ պիտի մնա հավիտյան» (Բ Թագ. 7.16): «Նրա զավակը հավիտյան պիտի լինի, և նրա աթոռը՝ ինչպես արեգակն իմ առջև: Ինչպես լուսինը հավիտյան հաստատ պիտի լինի, և ինչպես վկան ամպերում՝ հավատարիմ» (Սաղմ. 89.36,37): «Եվ Նրան տրվեց իշխանություն և պատիվ ու թագավորություն, որ բոլոր ժողովրդները, ազգերը և լեզուները Նրան ծառայեն: Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և Նրա թագավորությունը չի բանդվի» (Դանիել 7.14):

23. Հոռմեացիների 1.3, 5.6, Գաղատացիների 4.4, Եփեսացիների 2.12

24. Եսայի 53.5

Երրորդ օրը Աստված հարություն տվեց Նրան՝ վերջ դնելով մահվան տառապանքին, քանի որ անկարելի էր, որ մահը պահեր Նրան²⁵: Դրանից հետո Նա համբարձվեց Երկինք, որտեղ նստեց Աստծո աջ կողմը²⁶: Նրա միջոցով Դավթի ընկած խորանը շինվել է, որպեսզի ամրող մարդկությունը փնտրի Տիրոջը, և այս հեթանոսները, որոնց վրա կանչված է Նրա անունը²⁷: Նրանում մենք ունենք փրկություն՝ Նրա արյամբ, մեղքերի թողություն՝ Նրա շորհքի մեծության չափով, որը Նա շոայլորեն տվեց մեզ²⁸:

Մեսիան եկավ և բարձրացրեց Դավթի վայր ընկած բնակարանը, երբ այն նորոգելը վեր էր մահկանացու մարդու ուժից և կարողությունից: Նմանապես, Նա եկավ մեր մեջ՝ մեր կործանված և թշվառ վիճակում, և հավիտենական ուխտ կնքեց մեզ հետ՝ ոչ թե ըստ մեր արժանիքների, այլ՝ ըստ Իր բազմաբովվանդակ և անսպառ ողբրմությունների: Ինչպես և Դավթի դեպքում, մեր փրկությունը և դրա ընթացքը լիովին կախված են Աստծոց և Նրա Քրիստոսից: Այս ճշմարտությունը մեծագոյն հոյս է հաղորդում այն մարդկանց, որոնք հոյս չեն գտնում իրենցում: Թեև մեր ձախողումներն անթիվ են, մենք գիտենք, որ մենք ապահով ենք, քանի որ թե՛ Աստված, թե՛ Նրա Քրիստոսը երբեք չեն դադարի պահպանել այն ուխտը, որը նրանք կնքել են մեզ հետ:

Երկրորդը՝ Դավթին ցուցաբերված Աստծո հավատարիմ ողբրմությունները չեն սահմանափակվում այն բանով, որ նա բարձրացավ՝ գառնարած տղայից Խորայելի թագավորը դառնալով, կամ որ նա ստացավ հավիտենական տան խոստումը՝ Մեսիայի միջոցով. դրանք նոյնպես վերաբերում են Աստծո ողբրմածությանը Դավթի հանդեպ՝ չնայած Նրա անհավատարմությանը և բարոյական ձախողումներին: Թեև Դավթը բազմաթիվ առաքինություններ ուներ, միևնույն է, մարդ էր, որը մեզ նման բնություն ուներ, ենթակա էր իր մարմնին և ապականված էր Աստծո օրենքի դեմ գործած բազմաթիվ օրինազանցություններով²⁹: Թեև նա հավատքով հարեց Աստծոն և երբեք չշեղվեց՝ նման այլ թագավորների, որոնք տրվեցին կրօպաշտությանը, նա մի քանի ծանր մեղքեր գործեց: Աքիմելեքին ստեղու արդյունքում սպանվեց ամբողջ քահանայական Նոր քաղաքը³⁰: Նրա շնությունը Բերսարեի հետ ավարտվեց Նրա ամուսնու՝ Ուրիայի սպանությամբ, նաև Դավթի և Բերսարեի նորածին մանկան մահով³¹: Իր հապարտությամբ նա մարդահամար անցկացրեց, որի պատճա-

25. Մատթեոս 16.21, Հովհաննես 2.19-21, Գործը 2.24, ԱԿորնթացիների 15.4

26. Մարկոս 16.19, Եբրայեցիների 1.3, 10.12, 12.2

27. Գործը 15.16, 17

28. Եփեսացիների 1.7, 8

29. Հակոբոս 5.17

30. ԱԹագավորաց 21.2-10, 22.9-19

31. ԲԹագավորաց 11.2-5, 14-17, 12.15-18

ոռվ առաջացած համաճարակից, Դանից մինչև Քերսարե յոթանասուն հազար մարդ մահացավ³²: Այսուամենայնիվ, չնայած Դավթի մեղքին՝ Աստված կատարեց ամեն մի խոստում, որը տվել էր նրան և նրա տանը, և իր օրերի վերջում Դավիթն ազդարաբեց իր վերջին գրած երգով. «Որովհետև հավիտենական ուստ է արել ինձ հետ՝ հաստատված ամեն բանի մեջ և պահված» (Բ Թագ. 23.5):

Կրկին, այն ողորմությունները, որոնք ցուցաբերվեցին Դավթին, և որոնք ցուցաբերվում են մեզ Նոր ուխտում, չեն տրվում ըստ մեր առաքինությունների և արժանիքների, այլ հիմնված են մեր Աստծո բնավորության վրա: Այս ուխտը «հաստատված է ամեն բանի մեջ և պահված է», բանի որ այն հենքում է Նրա վրա: Նա չի փոխվում, և դրա համար իլ մենք չենք սպառվում³³: Նա խոստացավ բարություն անել մեզ՝ ոչ թե ըստ մեր արժանիքների, այլ՝ ըստ Իր մեծ ողորմության և գթության, որոնք պատկանում են մեզ Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով: Իրականում, միայն Քրիստոսի Ասձի և քավության շնորհիվ է, որ աստվածային ողորմությունները, որոնք Դավիթը մեծարում է իր սաղմուններում, հնարավոր են դարձել:

Աստծո հավիտենական ուխտի և դրա խոստումների շնորհիվ քրիստոնյան մեծ ապահովություն ունի: Քրիստոսում Աստված հավիտենական, անսփոփոխ և անխախտ ուխտ է կնքել յուրաքանչյուրին հետ, որ Նա չի դադարի մեզ բարություն անելուց: Այս ճշմարտությունը՝ մեր հավատքի հետ մեկտեղ, պետք է հաղորդի մեծագոյն հոյսը նոյնիսկ ամենաերկշոտ սուրբին: Այն պետք է դարձնի մեզնից ամենատկարին աղյուծի պես համարձակ, նոյնիսկ երբ բախվում ենք մեր խոնդի աննահանջ մեղադրանքներին և չարի ամենադաժան զրպարտություններին: Երբ չարախոսը թվարկում է մեր ձախողումները և հայտարարում է, որ ուխտը խօզված է, մենք նայում ենք մեր Աստծո հավատարմությանը և մեր փոխարեն կատարված Քրիստոսի աշխատանքին: Երբ նա, լի վրիժառությամբ, հարձակվում է մեզ վրա, մենք հարում ենք Քրիստոսին նոյն համառությամբ: Մենք չենք վախենում և չենք սասանվում, քանի որ հուսացած ենք հավիտենական ուխտին, որը հիմնված է մեր Աստծո հավատարիմ ողորմությունների վրա: Նա չի դադարի մեզ բարություն անելուց:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս խոստումները, որոնք դիտարկեցինք մինչև այս պահը, հավատացյալի հոյսի մեծ հիմքն ու աղբյուրն են: Այսուամենայնիվ, այս խոստումները հաճախ սխալմամբ են մեկնաբանվել: Եթե Աստ-

32. Բ Թագավորաց 24.2-17

33. Մաղարիա 3.6

ված հավիտենական ուխտ է կնքել մեզ հետ, ըստ որի Նա չի թողնի մեզ, մի՞թե դա նշանակում է, որ մեր փրկությունն ապահով է, նույնիսկ եթե մենք ապրում ենք անտարբերությամբ և ապստամբությամբ Նրա Անձի և կամքի դեմ: Միթե մենք պետք է շարունակենք մեղանչել, որպեսզի շնորհքն ավելանա³⁴: Ոչ մի դեպքում: Նոյն Աստված, ով խոստացավ երեք ջրողնել Իր ժողովրդին, նույնպես խոստացավ ստեղծել նրանցում երկյուղածովթյուն, որն այլս թույլ չէր տա նրանց հեռանալ Իրենից: Երեմիա մարգարեի միջոցով Նա հայտնեց. «Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ես չդառնամ նրանցից՝ նրանց բարություն աներուց, և Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ Ինձից չհեռանան» (Երեմիա 32.40):

Այս խոսքը պատշաճ կերպով հասկանալու և կիրառելու համար պետք է գիտակցենք, որ այն պարունակում է երկու փոխկապակցված խոստում: Ինչպես դրամի երկու կողմերը՝ մեկը չի կարող գոյրություն ունենալ առանց մյուսի: Առաջին խոստման մեջ Աստված պարտավորվում է հավիտենական ուխտ կնքել Իր ժողովրդի հետ, ըստ որի Նա չի դադարի բարություն անել նրանց: Այսուամենայնիվ, տալով երկրորդ խոստումը՝ Աստված պարտավորվում է դնել Իր երկյուղը Իր ժողովրդի սրտերում, որպեսզի նրանք չհեռանան Իրենից և չհայտնվեն անհավատության և ապստամբության մշտական կամ անփոփոխ վիճակում: Թեև բոլորն են սայթաքում շատ կերպերով, և ոմանք որոշ ժամանակով կարող են ցավալի մեղքերի մեջ հայտնվել, եթե նրանք ճշմարիտ քրիստոնյաներ են, կվերադառնան՝ կոտրված և հավատքով³⁵: Նրանք չեն կարող վերջնականորեն հեռանալ և կրկին կործանման գնալ³⁶: Եկեղեցու մեծագույն դավանանքներն արտահայտում են այս փառավոր ճշմարտությունը.

«Ու թեև նրանք (սուրբերը) կարող են սատանայի և աշխարհի գայթակրության, նրանցում մնացած ապականության գերակայության և իրենց պահպանման միջոցներն անտեսելու պատճառով ընկնել ծանր մեղքերի մեջ և որոշ ժամանակով մնալ դրանցում, և դրանով առաջացնել Աստծո տիհանությունը և տրտմեցնել Սուրբ Հոգուն, վսաս հասցնել իրենց շնորհներին և միմիթարությանը, խստացնել իրենց սրտերը և խոցել իրենց խիոճը, ցավ և վլրուվմոնք պատճառել մարդկանց և ժամանակավոր դատաստաններ բերել իրենց վրա, այնուամենայնիվ (չնայած այս ամենին), նրանք (որոշ ժամանակ անց) կնորոգեն իրենց ապաշխարությունը և կապահպանվեն Քրիստոս Հիսուսի հանդեպ հավատքով մինչև վերջ»³⁷:

34. Հռոմեացիների 6.1

35. Հակոբոս 3.2

36. Երայեցիների 10.39

37. «Վեստմինստերի հավատքի դավանակը» և «1689 թվականի Լոնդոնի Մկրտական դավանակը», գլ. 17, «Սուրբերի հարատևություննք», նշումները փակագծերի մեջ մասսամբ պատկանում են Լոնդոնի «Մետրոպոլիտեն Թերերները» եկեղեցու հովիվ Պիտեր Մաստերսին:

Մարդու դարձը, հավանաբար, Աստծո զորության ամենավեհ դրսևորումն է տիեզերքում: Թեև դարձի համար անհրաժեշտ է որոշում մարդու կողմից, սակայն այն, նախնառաջ, Աստծո աշխատանքն է՝ սկզբից մինչև վերջ: Դարձի ժամանակ Աստված վերածնում և վերափոխում է մարդու սիրտը, և նա դառնում է նոր ստեղծված³⁸: Սա պարզապես բանաստեղծական խոսք, ուժնացված փոխարերություն կամ չափազանցություն չէ. այս խոսքերը պետք է բառացիորեն ընկալել: Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով մարդը ստանում է նոր բնություն՝ նոր և արդար զգացմունքներով, որոնք այլս չեն կարող հանդուրժել բացարձակ օտարացումն Աստծուց, ընկերությունն այս աշխարհի հետ և մեղքը³⁹: Թեև մարդը կարող է շեղվել, սակայն չի կարող շեղվել շատ երկար ժամանակով. Նա Աստծուն վերաբանալու մրում կզգա թե՛ իր ներսում, թե՛ իրենից դուրս գտնվող բազմաթիվ ուժերի պատճառով: Նրա նոր բնությունը նողկանք կզգա իր մեղքի հանդեպ և կդրդի նրան խորշել դրանից, նոյնիսկ եթե արգելված միաը դեռ նրա ատամների մեջ է⁴⁰: Այս Հոգին, Ով բնակվում է նրանում, կհանդիմանի նրան իր մեղքի մեջ և կրկին հոյս կտա, որ ինքը կարող է ներում և վերականգնում գտնել իր Աստծո ողղորմությամբ⁴¹: Որդին կգտնի նրան և կձգի դեպի Իրեն՝ հիշեցնելով նրան Գողգոթայի սիրո վեհությունը⁴²: Հայրը կգործածի նախախնամության յուրաքանչյուր միջոց և կպարզի Իր ծեռքը՝ սիրով լի խրատով: Նա են կրերի նրան կործանման ուղուց, կսովորեցնի նրան Տիրոց երկյուղը և կդարձնի նրան Աստծո սրբության բաժնեկիցը⁴³: Այս պատճառով, ճշմարիտ քրիստոնյան չի հեռանա և չի գնա կործանման: Նա կհարատևի մինչև վերջ՝ ոչ միայն հավատքով, այլև սրբացմամբ, որի արդյունքն անձնական արդարություն է: Այն Աստված, Ով բարի գործ է սկսել նրանում, կշարունակի մինչև Քրիստոս Հիսուսի օրը⁴⁴:

Կարևոր է հասկանալ, որ Նոր ուսուրի խոստումներում Աստված ոչ միայն ազդարարում է այն, ինչ անելու է Իր ժողովրդի *համար*, այլև այն, ինչ Նա անելու է Իր ժողովրդի *ներսում*: Քրիստոսի քավշարար աշխատանքը մեզ համար Նոր ուսուրի հիմքն է, և այն մշտապես պետք է առաջնահերթ դիրք գրավի մեր մտքում և մեր նվիրման մեջ: Այսուամենայնիվ, Սուրբ Հոգու վերածնման աշխատանքը

38. Բ Կորնթացիների 5.17

39. «Ամեն, ով որ Աստծուց է ծնված, մեղք չի անում, որովհետև Նրա սերմը նրանում մնում է, և չի կարող մեղանչել, որովհետև Աստծուց է ծնված» (Ա Հովհաննես 3.9):

40. Թվոց 11.33

41. Եսայի 55.6-13, 57.16-19, Հովհաննես 16.8, Երրայեցիների 4.15, 16

42. Ղուկաս 19.10, 15.4-7, 8-10, Հոռմեացիների 5.8-10, Ա Հովհաննես 4.9, 10

43. Երրայեցիների 12.10

44. Փիլիպեցիների 1.6

մեր ներսում հավասարապես անհրաժեշտ է: Նոր ուխտի փառքն ընդամենը այն չէ, որ Աստված ազատելու է Իր ժողովրդին մեղքի դատապարտությունից, այլ՝ որ Նա նոյնպես ազատելու է նրանց մեղքի իշխանությունից: Առաջինը կատարվում է խաչի միջոցով: Երկրորդը կատարվում է Սուրբ Հոգով վերածնան աշխատանքով. Նա արմատապես վերափոխում կամ վերատեղում է Աստծո Նոր ուխտի ժողովրդի յուրաքանչյուր անդամին: Արդյոնքում նրանք ոչ միայն *օրինապես* հաշտվում են Աստծո հետ, այլև ջերմեռանդորրեն նվիրվում են Նրան: Այսպիսով, նրանք ճշմարտապես Աստծո ժողովուրդն են, և Նա ճշմարտապես նրանց Աստվածն է⁴⁵:

Կրկին, մենք պետք է շեշտադրենք, որ այս խոստումները չեն Ժխտում մշտական պայքարը մեղքի դեմ նոյնիսկ ամենահասուն հավատացյալի կյանքում: Այնուամենայնիվ, Ավետարանին հավատարիմ լինելու համար մենք պետք է ընդունենք այն ճշմարտությունը, որ «Եթե մենք Քրիստոսում է, նա նոր ստեղծված է»⁴⁶: Նա կունենա համակրանք Աստծոն հանդեպ, ճշմարիտ գիտելիք Աստծոն մասին և այնպիսի երկյուղ Աստծուց, որ չի հեռանա Նրանից: Թեև նոյնիսկ ամենուժեղ հավատացյաները շատ առումներով սայթաքում են և տկարանում են, նոյնիսկ ամենաթույլ հավատացյաները չեն հեռանա Աստծուց՝ տևական կամ մշտական նահանջի տեսքով⁴⁷: Մենք չենք անի դա, քանի որ չենք կարող անել դա, և մենք չենք կարող անել դա, քանի որ նոր ստեղծվածներ ենք, որոնք այլև չեն կարող ապրել առանց Աստծո ներկայության լոյսի և դիմանալ այս աշխարհի խավարին ու պղծությանը:

Այս ճշմարտությունների լոյսի ներքո պետք է ակնհայտ լինի, որ Նոր ուխտի խոստումն այն մասին, որ հավատացյաները նվիրված կլինեն Աստծոն, անսխալական միջոց է՝ ճշմարիտ դարձը ստուգելու համար: Ճշմարտապես վերածնված մարդիկ կհարատևեն կամ հույսով կհարեն Աստծոն մինչև վերջ: Ավելին՝ նրանք աչքի կընկ-նեն ճշմարիտ երկյուղածությամբ Աստծոն հանդեպ, որի արդյունքը կլինի հնազանդությունը: Ի հակադրություն, մարդիկ, որոնք չունեն հարատևող երկյուղածություն, հազիվ թե կարող են վստահ լինել, որ իրենք գտնվում են այս ուխտի մեջ: Այս մարդիկ, որոնք պնդում են, որ ապահով են Քրիստոսում, սակայն չեն հարատևում հավատքի, սրբացման և Տիրոջ երկյուղի մեջ, գրեթե չունեն հիմք իրենցում գտնվող հույսի համար: Բնչպես հայտարարեց Քաղրատ Սոքեցին. «Նրա (կեղծավորի) վստահությունը պիտի կտրվի, և նրա հույսը սարդի ոստայն է» (Հոր 8.14):

45. Երեմիա 31.33, Եզեկիել 36.28

46. Բ Կողմանակաների 5.17

47. Հակոբոս 3.2

Նոր ուսութի ճշմարտությունները մեծ զգուշացում են հանդիսանում եկեղեցու մարմնավոր և անտարբեր անդամների համար, որոնք պարծենում են փրկությամբ և ապահով նստած են Սիոնում⁴⁸: Նրանք արդարացիորեն հավատում են, որ Աստված երբեք չի թողնի Իր ժողովրդին, սակայն սխալմամբ ենթադրում են, որ իրենք Նրա ժողովուրդն են, այսինչ նրանց կյանքը հակասում է իրենց դավանանքին: Նրանց անհրաժեշտ է հանդիսավոր կերպով հորդորել, որ հաստատ անեն իրենց կոչումը և ընտրությունը, քննել և ստուգել իրենց՝ տեսնելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ են⁴⁹: Եթե գրեթե չկա ապացոյց այն մասին, որ նրանցում կա Տիրոջ երկյուղը, նշանակում է՝ չկա ապացոյց, որ նրանք բաժին ունեն Աստծո ժողովրդի մեջ՝ անկախ այն բանից, թե որքան հաճախակի և անսասան է նրանց դավանանքը: Աստվածաշնչյան հավաստիացումն այն մասին, որ Աստված հավիտենական ուսութի վերատին ծնունդի և թե՛ Աստծո, թե՛ փրկության բնույթի մասին: Ահա թե ինչու են Երեմիա 32.40-ում գտնվող ճշմարտություններն այսքան կարևոր: Աստված խոստացել է երբեք չթողնել նրանց, որոնց հնքը փրկել է: Այսուամենայնիվ, Նա նոյնական խոստացել է դնել Իր երկյուղը նրանց սրտերում, որպեսզի նրանք երբեք չհեռանան Իրենից: Մենք գիտենք, որ մուտք ենք գործել Նոր ուսութի մեջ ոչ թե այն պատճառով, որ մեկ անգամ մեր կյանքում աղորք ենք բարձրացրել և հրապարակային դավանություն ենք արել, այլ՝ քանի որ մեր ներսում կա մասայուն և հարածուն երկյուղածություն Աստծո հանդեալ, որն արտահայտվում է մեր սրբացմամբ: Որպես ամփոփում, մեր սրբացումը, որը վերատին ծնունդի արդյունքն է, ապացուցում է, որ մենք հավատքով արդարացել ենք:

Մինչև ավարտելը, կարևոր է նշել, որ Երեմիա 32.40-ի այս վերջին խոստումը ոչ միայն զգուշացում է եկեղեցու մարմնավոր անդամի համար, այլև միսիթարություն և խրախուսանք է ճշմարիտ հավատացյալի համար, երբ նրա հավաստիացումը փրկության մեջ թուլանում է իր սրտի դատապարտության կամ չարի մեղադրանքների

48. «Վայ Սիոնում ապահով նստողներին և Սամարիայի սարի վրա վստահ եղողներին» (Ամովս 6.1):

49. Բ Պետրոս 1.10, Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10

պատճառով⁵⁰: Հետևյալ օրինակը կօգնի մեզ հասկանալ և կիրառել այս ճշմարտությունը:

Պատկերացրեք մի երիտասարդի, որի կյանքում ճշմարիտ դարձի հստակ ապացույց կա, սակայն նրա կանոնական իր փրկության վերաբերյալ հուսահատության են հասցնում նրան: Նոյնիսկ մի քանի հովհանքի հետ հաճախակի և երկարատև խորիրդատվություններից հետո նա չի կարողանում հաստատվել իր հոյսի մեջ: Չարախոսը շփոթեցրել է նրան և այնքան է խոշորացրել նրա մեղքերը, որ նա գրեթե չի հավատում, որ Աստծո չնորհքը ներկա է իր կյանքում: Մեկ անգամ նա բացում է իր սիրուն իրենց եկեղեցի այցելած մի ավետարանչի: Սիտավորապես մեկ ժամ նրան լսելուց հետո այդ ավետարանիչը եզրակացնում է, որ նա ճիշտ խորհուրդներ է ստացել իր դրույան վերաբերյալ, սակայն չունի առաջընթաց: Այդ իսկ պատճառով, նա նայում է նրա աչքերի մեջ և ասում է.

- Թվում է՝ Քրիստոսը և Նրա Ավետարանը գրեթե ոչինչ չեն արել քեզ համար: Դրանք ընդամենք հուսահատության և թշվառության գիրկն են նետել քեզ: Առաջարկում եմ, որ պարզապես մոռանաս այս ամենը և հեռանաս: Թո՞ղ Քրիստոսին և ամբողջովին խորասուզվի՞ր մեղքի մեջ: Եթե ապրես սանձարձակ մարմնավոր կյանքով, դու գոնե որոշ ժամանակ ուրախություն կունենաս, և միգույք այնքան խստանաս, որ նոյնիսկ մոռանաս ապագա դատաստանի մասին:

Երիտասարդը, ավետարանչի պատասխանից ցնցված, ասում է.

- Ես չեմ կարող անել դա:

- Ինչո՞ւ ոչ, - արագորեն պատասխանում է ավետարանիչը: - Դու չունես փրկության հոյս, և մինչև այժմ քո պայքարը մեղքի դեմ ոչ մի թերևնություն չի տվել քեզ: Ինչո՞ւ պարզապես չփախչես Քրիստոսից:

Լսելով դա՝ երիտասարդը բացականչում է.

- Ես չեմ կարող փախչել Քրիստոսից, քանի որ փրկությունը միայն Նրանում է: Թեև իմ մեղքը հազար անգամ էլ հաղթի ինձ, ես չեմ փախչի դրա մոտ, որովհետո ես ասում եմ մեղքը: Ես չեմ հեռանա Աստծուց, որովհետո ես վախենում եմ Նրանից:

Ավետարանիչը նայում է այդ երիտասարդի աչքերի մեջ և պարզապես մեջքերում է Երևմիա 32.40-ը. «Եվ ես հավիտենական ուստ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց, և իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ ինձնից չհեռանան»:

Այդ պահին երիտասարդի դեմքը զարմանքից շառագունում է, և նա հայտարարում է.

- Ինչպես ես կարող էի սիրել Նրան, եթե սկզբում Նա չսիրեր ինձ: Ինչպես ես կարող էի ատել մեղքը, եթե Նա չսորոգեր իմ սիրտը: Եվ

50. Ա Հովհաննես 3.19,20

ինչպես կարող էի վախենալ Նրանից, եթե Նա չդներ Իր երկյուղն իմ մեջ:

Երիտասարդը հեռանում է մեծ հավատիացմամբ և Սուրբ Հոգու ուրախությամբ:

Աստծո զորությունը և հավատարմությունը և՛ փրկում են, և՛ պահպանում են ճշմարիտ հավատացյալին: Այդ պատճառով, նոյնիսկ ամենատևկար հավատացյալները կարող են հենվել այն փաստի վրա, որ Աստված երբեք չի դադարի բարություն անել մեզ: Այնուամենայնիվ, մենք պետք է նոյն կերպով հավատանք և քարոզենք, որ Նոր ուսուում ճշմարիտ դարձի և Աստծո հետ հարաբերության ապացուցն այն է, որ մենք վերջնականորեն չենք հեռանա Նրանից, և ոչ է ամբողջովին կխորասուզվենք մեղքի մեջ՝ դարձնելով այն մեր սովորական վարքը: Նոր ուսուում հայտնված Աստծո շնորհքը չի դրդում անտարբերության կամ ծովության, այլ առաջնորդում է քրիստոնյային ավելի խորը աստվածապաշտության և ջանասիրության: Մենք կարող ենք համոզված լինել, որ կտեսնենք այս արդյունքները, ոչ թե որովհետև վստահում ենք մարդկային ուժերին, այլ որովհետև հասկանում ենք Աստծո նպատակը և զորությունը փրկության մեջ: Նա, Ով սկսեց այս բարի գործն Իր ժողովրդի մեջ, կկատարի այն մինչև Քրիստոս Հիսուսի օրը: Նա տվել է մեզ նոր սրտեր, որպեսզի մենք բերկրանքով արձագանքենք Իր Ասձին և կամքին⁵¹: Նա տվել է մեզ Իր Հոգին՝ մեզ առաջնորդելու և զորացնելու համար⁵²: Նա գրել է Իր օրենքները մեր սրտերի վրա և դրել է Իր երկյուղը մեր մեջ, որպեսզի չհեռանանք Իրենից⁵³: Նա մեր Աստվածն է, և մենք Նրա ժողովուրդն ենք⁵⁴:

51. Եզեկիել 36.26

52. Եզեկիել 36.27

53. Երեսիա 31.33, 32.40

54. Երեսիա 31.33, 32.38, Եզեկիել 36.28

ԳԼՈՒԽ ՏԱՍԽՎԵՑ



Աստծո բարությունն իր ժողովրդի հանդեա

«Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ես չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելոց, և Իմ երկուողը կդնեմ նրանց պրտերում, որ Բնձնից չհեռանան: Եվ Ես պիտի ուրախանամ՝ նրանց բարություն անելով, և նրանց պիտի տնկեմ այս երկրում հավատար-մությամբ՝ Իմ ամբողջ պրոռկ և Իմ ամբողջ Անձով»:

— Երեմիա 32.40,41

Երեմիայի մարգարելության այս հատվածից մենք սովորում ենք երեք կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ ՄԵսիայի քավշարար զո-հի միջոցով Աստված հավիտենական և անփոփոխ ուխտ է կսքել Իր ժողովրդի հետ. Նա չի դադարի նրանց բարություն անելոց: Երկրոր-դը՝ Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով Նա հաստատել է Իր ժողովրդի համակրանքն Իր հանդեա. Նրանք երկյուղածությամբ կվերաբերվեն Իրեն և չեն հեռանա Իրենից: Երրորդը՝ ապահովելով փոխադարձ հարաբերություններ Իր ժողովրդի հետ և նրանց հա-մակրանքն Իր հանդեա՝ Նա ճանապարհ է բացել ամենամտերիմ շիման և երկնային օրինության համար: Այն ամենը, ինչ գտնվում էր Աստծոն և Իր ժողովրդի միջև Ադամի անկումից ի վեր, հեռացվեց ճանապարհից: Քրիստոսի փրկարար աշխատանքի միջոցով մեղքը պատճվեց, արդարադատությունը բավարարվեց, և վերագրվեց կա-տարյալ արդարություն: Հոգու վերածնող աշխատանքը հեռացրեց թշնամաբար տրամադրված սիրտը, կործանեց մեղքի զորությունը և նոր սիրտ տվեց Աստծո ժողովրդին, որպեսզի նրանք նոր կյանք ու-նենան¹: Հետևաբար, այժմ Աստված կարող է ցնծալ Իր ժողովրդով և կատարել այն ծրագրերը, որոնք Նա որոշել էր նրանց համար նոյ-նիսկ մինչև աշխարհի սկիզբը՝ «խաղաղության խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հոյսը» (Երեմիա 29.11):

1. Հոռմեացիների 6.4

ԱՍՎԱԾԱՅԻՆ ՑՆԾՈՒԹՅՈՒՆ

Հին կտակարանում Աստված պարբերաբար խոսում է անտրոպոմորֆիկ կերպով², որպեսզի նկարագրի Իր ճնշվածության և տրտմության զգացումն Իր ժողովրդի մշտական ապստամբության պատճառով: Մարդկային պատմության ամենավաղ փովերում Աստված հայտնեց, որ Ինքը «զօջաց, որ երկրի վրա մարդուն ստեղծեց, և Իր սրտի մեջ տրտվեց» (Ծննդ. 6.6): Սաղմոսերգուն տեղեկացնում է, որ անմիջապես այն բանից հետո, եթե Նա ազատեց Իր ժողովրդին Եգիպտոսի ստրկությունից, նրանք «դառնացրին Աստծուն անապատում և բարեկացրին Նրան անջուր տեղում» (Սաղմ. 78.40): Սա է պատճառը, որ քառասուն տարի շարունակ Նա զգվեց այդ սերնդից և ասաց, որ նրանք այնպիսի ժողովուրդ էին, որոնք մոլորված էին սրտով և չին ճանաչում Աստծոն ճանապարհները³: Մարգարեները շատ ավելի պարզ էին խոսում: Եզեկիելի միջոցով Աստված ասաց Իսրայելին, որ Նա ցավ էր զգում նրանց շնացող սրտերի պատճառով, որոնք հեռացան Իրենից, և նրանց աչքերի պատճառով, որոնք շնանում էին իրենց կուտքերի հետ⁴: Եսայի մարգարեի միջոցով Նա վկայեց, որ Իր ժողովուրդը չէր կանչել Իրեն, այլ նեղացրել էին իրենց մեղքերով և հոգնեցրել էին իրենց անօրինություններով⁵: Ամովսի գրքում տեսնում ենք, որ Իսրայելի ապականությունը և այն, որ ժողովուրդը հրաժարվեց լսել Տիրոջ Խոսքը, դրդեց Աստծոն հայտարարել. «Ահա Ես ճնշված եմ ձեզից, ինչպես որ ճնշվում է հասկերով լի սայլը» (2.13, NKJV): Եվ Վերջինը, Հին կտակարանն ավարտվում է Մաղաքիայի գրքով, որում Աստված մեղադրում է Իսրայելին, որ ժողովուրդը հոգնեցրել կամ ճանձրացրել է Իրեն «իրենց խոսքերով»՝ այն աստիճան, որ Նա ցանկանում էր, որ ինչ-որ մեկը փակեր տաճարի դռները, և երկրպագությունը դադարեր (տե՛ս Մաղաքիա 2.17, 1.10):

Աստված ազատեց Իսրայելը Եգիպտոսից՝ երկաթե հնոցից, և ուխտի մեջ մտավ նրանց հետ Սինա սարի մոտ⁶: Նա ընտրեց նրանց երկրի երեսի վրա ապրող բոլոր ժողովուրդներից՝ որպես Իր սեփական ժողովուրդ, և նրանք պետք է սուրբ ազգ լինեին իրենց Տեր Աստծո համար⁷: Այնուամենայնիվ, հակառակ իրենց մեծ կոչ-

2. Խոսելով անսորպումորֆիկ կերպով՝ Աստված արտահայտվում է մարդու նման: Օրինակ՝ Աստված ամենակարող է և չի հոգնում: Այնուամենայնիվ, Իր ժողովուրդի մեղքերը շեշտադրելու համար, Նա կարող է ասել, որ դրանք հոգնեցրել են Իրեն:

3. Սաղմոս 95.10

4. Եզեկիել 6.9

5. Եսայի 43.22-24

6. Ելից 19.5, Երկրորդ Օրինաց 4.20

7. Երկրորդ Օրինաց 7.6

մանը, նրանց ճաշող մեծամասնությունը մնաց սրտով չվերածնված, թշնամաբար տրամադրված Աստծո պատվիրաններին և հակված ամեն տեսակի կռապաշտության և անբարոյության: Կարճ ասած, Աստծո սեփական ժողովուրդը դարձավ ծանր բեռ, որը կրելուց Նա հոգնել էր⁸:

Միայն մարդկության դեմ ուղղված այս սոսկալի մեղադրանքների համատեքստում կարող ենք տեսնել մեր նորկտակարանյան խոստման զրությունը և վեհությունը: Քրիստոսի քավշարար աշխատանքի և Սուրբ Հոգու վերածնման աշխատանքի միջոցով Աստված Իր համար ստեղծեց մի ժողովուրդ, որոնցով կարող է ցնծալ և որոնց կարող է ամեն կերպ բարություն անել՝ առանց չափի: Ծորհիվ մեզանում կատարված աշխատանքի՝ այժմ Նա կարող է անվերապահորեն գործել *հօգուտ մեզ*⁹:

Թեև Երեմիա 32.41-ը մանրամասնորեն չի խոսում այս ուրախության մասին, «Ես պիտի ուրախանամ» արտահայտությունը ենթադրում է հարսանելիան սենյակի անխոչընդուռ և անգուսապ ուրախությունը: Այս ճշմարտությունը պարզորեն երևում է Եսայու մարգարեւության մեջ գտնվող մի համանման խոսքում. «Եվ փեսան հարսի վրա ուրախանալու պես պետք է քեզ վրա ուրախանա քո Աստվածը» (62.5): Ինչպես որ փեսան հոժարությամբ և ուրախությամբ տրվում է իր հարսին, այնպես էլ Աստված Նվիրում է Իրեն Իր ժողովրդին՝ նրա բարօրության համար: Աստծո հաղորդակցման մեջ չկա ժաւություն կամ ափսոսանք: Այնպես չէ, որ Նա դժկամորեն է տալիս կամ օրինում՝ նախկինում արված ինչ-որ խոստման պատճառով, որի մասին Նա այժմ զղում է: Նա տալիս է ուրախությամբ, նոյնիսկ՝ հիացմունքով, և առանց նախատելու¹⁰:

Հավատացյալը պետք է մեկընդմիշտ համոզվի իր սրտում, որ Աստված իր կրողմից է և բերկրանք է զգում՝ իրեն բարություն անելով: Այնուամենայնիվ, այժմ պետք է որոշենք, թե ինչ բնույթ ունի այն բարիքը, որն Աստված ուրախությամբ տալիս է մեզ: Նոր կտակարանի ուսմունքների լոյսի ներքո սա չի կարող նշանակել, որ Աստված ցնծում է՝ տալով մեզ մշտապես բարգավաճ և հարմարավետ կյանք: Սա նոյնպես չի կարող նշանակել, որ Նա որոշել է պաշտպանել մեզ նեղություններից, հիապահիություններից և նոյնիսկ մեծ տառապանքից: Այն, ինչ սա նշանակում է, հստակ ներկայացված է Հռովի եկեղեցուն ուղղված Պողոսի նամակում. «Բայց զիտենք, որ Աստծուն սիրողներին բոլոր բաները գործակից են լինում դեպի բարին՝

8. Եսայի 1.14

9. Հռովմացիների 8.31

10. Հակոբոս 1.5

նրանց, որ նախասահմանվելով կանչված են: Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ» (Հռոմ. 8.28,29):

Այս հատվածում Աստված տվել է մեզ և խոստումը բարու մասին, և դրա ճշգրիտ սահմանումը: Նա խոստացավ օգտագործել ամեն ինչ մեր կյանքում՝ ամենամեծից ամենափոքր բաները, որպեսզի մենք կերպարանվենք Քրիստոսի պատկերով: Հաշտեցնելով մեզ Իր հետ Իր Որդու մահվան միջոցով՝ այժմ Աստված ցնծում է՝ մեզ Նրա պատկերին կերպարանակից դարձնելով: Սա քրիստոնեական կյանքի «սուսնիս բռնումը» կամ մեծագույն բարիքն է: Սա բարձրագույն նպատակը և ամենաշշոյլ արտոնությունն է, որը կարող էր չնորհվել մեզ: Քրիստոնեական կյանքի նսացած բոլոր բարիքները հիմնված են սրա վրա կամ բխում են սրանից:

Այս ճշմարտությունը հասկանալու համար մենք միայն պետք է հիշենք, որ մարդկության բոլոր խնդիրները բխում են մեր բարոյական ապականությունից: Մեր աստվածապաշտության բացակայությունն այս ներկա անկում ապրած աշխարհի բոլոր ախտերի պատճառն է: Մեր բարօրությունն այս և հաջորդ կյանքերում լիովին անհնարին կլիներ՝ առանց մեր բարոյական վերափոխման դեպի բարձրագույն չափանիշը, որն հնքը Քրիստոսն է: Եթե անբարու արարածներն ուստոպիս ժառանգեին, այն արագորեն կվերածվեր կորսված դրախտի: Երկինքը՝ առանց քրիստոսանմանության, շուտով կվերածվեր դժոխքի: Այս պատճառով, Աստված ցնծում է մեզնով, քանի որ Նա կերպարանակից է դարձնում մեզ Իր Որդու պատկերին և օրինում է բոլոր բարիքներով, որոնք բխում են Նրան նմանվելուց: Մենք Նրա ստեղծածն ենք¹¹, և Նա չի խնայի ոչ մի բարիք, որպեսզի վերափոխի մեզ՝ մեր «կիսահումք» վիճակից Իր Որդի Հիսուս Քրիստոսի փառավոր պատկերին¹²: Համաձայն սաղմոսերգութ՝ «Տերը չնորհի և փառը է տալիս. Նա ոչ մի բարիք չի խնայում անարատությամբ գնացողներից» (84.11):

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՑԱՆՔ

Այլ բան է, երբ մարդը սրտանց ցանկանում է ինչ-որ բան անել, սակայն լիովին այլ բան է, երբ նա ունի կարողություն և միջոցներ դրա համար: Աղքատ մարդը կարող է սրտանց ցանկանալ բարություն անել իր զավակին և կարող է աշխատել դրա համար՝ լա-

11. Եփեսացիների 2.10

12. Կիսահումքը՝ իր քնական վիճակում գտնվող բարն է կամ փայտը, որը դեռ պետք է ձևավորվի վարպետի գործիքով:

բոլոր ուժերը, սակայն բնական խոչընդուները, որոնք նա չի վերահսկում, կարող են սահմանափակել նրան: Ի վերջո, նրա բոլոր ջանքերը կարող են անարդյունք լինել, և հնարավոր է, որ նրա զավակը հուսալրվի և հիասթափվի: Այսպես հաճախ է լինում այն մարդկանց կյանքում, որոնք, լարելով բոլոր ուժերը, աշխատում են ամենից արժանավոր նպատակների համար, սակայն ցավալիորեն ծախողվում են: Այսուամենայնիվ, սա ոչ մի դեպքում չի վերաբերում Աստծոն: Նա է «Տերը՝ ամեն մարմսի Աստվածը» (Երեմիա 32.27): Նա ստեղծել է երկինքը և երկիրը Իր մեծ գորությամբ և մեկնած ձեռքով: Ոչինչ դժվար չէ Նրա համար¹³: Նա հաջողորդյամբ կատարում է ամեն ինչ՝ Իր կամքի խորհուրդների պես¹⁴: Նրա խորհուրդը կհաստատվի, և Նա կանի այն, ինչ կամենում է¹⁵: Համաձայն սաղմոսերգուի՝ «Տիրոջ խորհուրդը հաստատ է հավիտյան. Նրա սրտի մոտածունքները՝ ազգից մինչև ազգ» (33.11):

Այս ճշմարտությունների հաստատ հիմքի վրա է, որ մենք մեկնում ենք Աստծուց մեզ տրված եեւույալ խոստումը. «(Ես) նրանց ախտի տնկեմ այս երկրում հավատարմությամբ»: Աստծո հավատարմությունն Իր աքսորված ժողովուրդ Խրայելի հանդեպ՝ ի հայտ եկավ այն խոստմամբ, որ Նա հավաքելու էր նրանց բոլոր երկրներից, որոնցում նրանք ցրվել էին՝ նրանց վրա եկած դատաստանի պատճառվ, և բերելու էր մի երկիր, որը հասուն առանձնացված էր նրանց համար¹⁶: Նոր ոխտում այս խոստման իրականացումն այն է, որ հավատայյալը կերպարանվում է Քրիստոսի պատկերով և, ի վերջո, փառավորվում է Երկնքում: Աստված հավատարմորեն տեղափոխեց ամբողջ ազգեր՝ Իր աքսորված ժողովրդին տուն վերադարձնելու համար. նոյն կերպով, Նա ոչ միայն հավատարիմ է, այլև կարող է շարժել երկինքն ու երկիրը, որպեսզի դարձնի մեզ կերպարանված Իր Որդու պատկերով, և տանի մեզ տուն՝ փառքի մեջ: Հիմնվելով այս ճշմարտության վրա՝ Պողոսը խրախուսում է Փիլիպպեցիների եկեղեցուն. «Եվ հաստատ համոզված եմ սրան, թե Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6):

Այս Աստված, Ով կառավարում է տիեզերքը, Ով պտտում է էլեկտրոններն ատոմի միջուկի շուրջը, Ով դարձնում է թագավորի սիրտը՝ որ կողմ որ կամենում է, Ով և՛ հաստատում է, և՛ կորցնում է ամբողջ ազգեր, ուղղել է Իր հայացքը մեզ վրա, որպեսզի բարիք անի մեզ և բերի այն վայրը, որը որոշել է մեզ համար աշխարհը ստեղծելուց

13. Ծննդոց 18.14, Երեմիա 32.17

14. Եփեացիների 1.11

15. Եսայի 46.9,10

16. Եզեկիել 36.24

առաջ¹⁷: Ի տարբերություն այն զավակի, ով հիասթափված է իր հոր անկատար խոստումների պատճառով, մենք անսասան հոյս ունենք, որը հիմնված է ավելի լավ խոստումների վրա¹⁸: Մեր Աստված պահեց իր Խոսքը. Նա ոչ միայն ազատեց մեզ մեղքի դատապարտությունից, այլև ներկայումս գործում է մեր մեջ՝ ազատելով մեզ մեղքի իշխանությունից: Նա հաստատ երաշխիք է տվել, որ Ինքը գործում է մեզանում և գործելու է մինչև վերջ, որպեսզի մենք կերպարանվենք իր սիրելի Որդու պատկերով: Նա այնպես կասի, որ իր Առաջնեկն ունենա անթիվ եղբայրներ, որոնցից չի ամաչի¹⁹:

Աստված Քրիստոսում ոչ միայն մեր փրկության Հեղինակն է, այլև՝ Կատարողը²⁰: Այդ իսկ պատճառով, սրբության ընթացքին մասնակից լինելը տարբերակ չէ քրիստոնեական կյանքում, որը հավատացյալը կարող է ընդունել կամ մերժել: Այն փրկության հստակ և անփոխարինելի մաս է, որը վերահսկվում է Աստծո անսխալական նախախնամության կողմից: Այն Աստված, Ով արդարացրել է հավատացյալին և տվել է իր հաստատ խոստումներն ապագա փառավորման մասին, նոյնպես կարացնի նրան մինչև վերջին օրը: Արդյոք Քրիստոսին հավատացնող կարող է վստահ լինել արդարացման մեջ: Անշուշտ: Կարող է հավատացող և արդարացված մարդը վստահ լինել փառավորման մեջ: Անշուշտ: Կարող է նա, ով հավատում է փրկությանը և հոյսով ապատում է ապագա փառավորմանը, համոզված լինել, որ Աստված կշարունակի սրբացնել իրեն իր կյանքի ամբողջ ընթացքում: Անշուշտ: Բնչպես որ հայտնում է Եբրայեցիների թղթի հեղինակը՝

«Եթե խրատին համբերեք, Աստված ձեզ հետ՝ ինչպես որդիների հետ կվարվի, որովհետև ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում: Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորդ եք և ոչ՝ որդիներ: Նաև մենք, մեր մարմնավոր հայրերին խրատող ունենալով, նրանցից ամաչում էինք. չէ՞ որ առավել ևս պիտի հնազանդվենք հոգիների Հորը և ապրենք: Որովհետև սրանք մի քիչ ժամանակ իրենց հաճելի երևացածի պես խրատում էին, բայց Նա՝ օգտի հանար, որ Նրա սրբությունն ընդունենք: Եվ ամեն խրատ հենց նոյն ժամանակ ուրախություն չի երևում, այլ՝ տրտմություն, բայց հետո նրանով վարժվածներին արդար խաղաղության պատուի է վճարում» (Եր. 12.7-11, շեղագիրն ավելացրած է):

Աստված հավատարմորեն կտնկի իր ժողովրդին իրենց երկրում և կավարտի այն աշխատանքը, որը սկսել է նրանցում: Նրա՝ հաճախ

17. Առակաց 21.1, Երեմիա 18.7-10

18. Եբրայեցիների 8.6

19. Հռոմեացիների 8.29, Եբրայեցիների 2.11,12

20. Եբրայեցիների 2.10, 12.2

ծանր, սակայն միշտ նպատակառությամբ խրատը կկատարի այս աշխատանքը: Իրականում, փրկության մեծագույն ապացույցներից մեկը մեր կյանքում Աստծո խրատի առկայությունն է, որի շնորհիվ մենք կրամքեցնք Նրա սրբությանը և խաղաղության արդար պտուղ կրերենք: Նոյնպես, կեղծ հավատքի և դատարկ դավանության մեծագույն ապացույցներից մեկն այն է, որ թեև մարդը պնդում է, թե քրիստոնյա է, Աստծո սրբացման աշխատանքը բացակայում է նրա կյանքում: Նա կարող է ապրել մեղքի մեջ, անտարբեր լինել արդարության հանդեպ, սակայն զերծ մնալ աստվածային խրատից²¹: Աստված անփոյթ հայր չէ, և թույլ չի տա Իր երեխաներին անզուապ և անխոչընդուն մեղանչել: Նա ոչ միայն ծնում է Իր զավակներին, այլև մեծ հոգատարությամբ հսկում է նրանց: Նա եւս չի պահի Իր զավագանն Իր զավակից, այլ կցուցաբերի իր սերը՝ ջանասիրաբար խրատելով նրան²²:

ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՄՊԱՌ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ճշմարիտ հավատացյալի նկատելի առաջընթացը սրբացման մեջ տեղի չի ունենում շնորհիվ իր ուժերի, կամքի կամ նվիրման աստիճանի: Սրբացումն այնպիսի բան չէ, ինչը նա ավելացնում է իր հավատքին՝ փրկվելու համար. այն նրա հավատքի արդյունքն է: Աստված, Ով արդարացրել է նրան, նոյնպես վերածնել է և դարձրել նոր ստեղծված՝ նոր զգացմունքներով և նոր գորությամբ, որոնց շնորհիվ նա աստվածապաշտ կյանք է վարում: Ինչպես գրում է Պետրոս առաքյալը՝ «Նրա աստվածային գորությունը շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է» (Բ Պետրոս 1.3):

Երեմիա 32.40-42-ում գտնում ենք Աստվածաշնչի ամենազարմանալի խոստումներից մեկը, որը չի կրկնվում ոչ մի տեղ Սուրբ գրքում: Երեմիա մարգարեի միջոցով Աստված խոստանում է գործել մեր սրբացման համար Իր ասմողջ սրտով և Իր ասմողջ Ասձով²³: Այս անտրոպոմորֆիկ արտահայտությունը չի ստվրեցնում, որ գոյություն ունեն հոգեբանական նմանություններ Աստծո և մարդու միջև, այլ՝ որ Նա կօգտվի Իր աստվածության անսպառ միջոցներից, որ-

21. «Խրատ» բառը թարգմանված է հոնարեն «պահեռն» բառից, որը նշանակում է վարժանք, ուսուցում և պատիճ: «Ծեծել» բառը թարգմանված է հոնարեն «մասսիգոն» բառից, որը նշանակում է «ծեծել կամ մորակել»: Պատժի այս տեսակի խստությունը նկարագրված է Մատթեոս 10.17, 20.19 և 23.34 խորերում: Դռնալդ Գուրին գրում է. «Պատժի դասնում է որդիության հոմանիշը»: «Երրայեցիների թուղթը Ներածություն և մելքոնյութը», «Tyndale»-ի Նոր կտակարանի մեկնություններ (Գրեն Ռեվիվ, «Eerdmans», 1983թ.), էջ 253:

22. Առակաց 13.24

23. Երեմիա 32.41

պեսզի իրականացնի Իր նպատակներն Իր ժողովրդի մեջ: Այս պնդումը ցոյց է տալիս, որ մեր սրբացումը և վերջնական փառավորումն աննշան հարցեր չեն Աստծո համար, այլ այնքան կարևոր են, որ Նա խոստանում է գործի դնել Իր աստվածության լիությունը, որպեսզի երաշխավորի դրանց իրականացումը: Ապշեցուցիչ է, որ Աստված ստեղծել է և պահում է տիեզերքը Խոսքով, սակայն Նա խոստանում է ի կատար ածել հավատացյալի սրբացումը և վերջնական փառավորումն Իր ամբողջ Անձով և զորությամբ²⁴:

Այս զարմանալի պնդումը երկակի կիրառություն ունի. այն և՛ հուսադրող խոստում է, և՛ զարհութենող զգուշացում: Հավատացյալի համար այն խոստում է: Նոյնիսկ ամենաուժեղ հավատացյալները բախվում են մեղքին և դրան ուղեկցող հուսալքությանը: Մենք մշտապես կարիք ունենք տեսնելու մրցավազքի վերջնակետը և լցվելու վստահությամբ, որ կիաղթենք և կիանենք դրան: Մեզ անհրաժեշտ է ավելին, քան խնդիրները մի կերպ հաղթահարելու մտածելակերպը: Մեզ անհրաժեշտ է վստահություն, որը ավելի շատ է գերազանցում մեր վճռականությունը և դիմացկունությունը: Մեզ անհրաժեշտ է Նրա օգնությունը, ով ավելի զորավոր է մեզնից, ում ուժը և ողորմությունն անսահման են, և ով ազնվագոյն բնափորություն ունի: Մեզ անհրաժեշտ է Աստված, ով «ամեն քան հաջողություն է Իր կամքի խորհուրդների պես» և ավարտում է ամեն գործ, որը սկսել է²⁵: Այսպես որ, մեծագոյն խրախուսանը է իմանալը, որ մեր հավատքի Հեղինակը և Կատարողը լիովին նվիրվել է մեր փրկությունն ավարտին հասցնելուն: Թեև հավատքի մեջ առաջընթացի արագությունը և չափն այլ են տարբեր հավատացյալների կյանքում, թեև ումանք վագում են դեպի սարերի գագաթները, իսկ մյուսները միայն քայլում են ցածրադիր վայրերում, բոլորն աճ կունենան և ուշագրավ առաջընթաց հավատքի մեջ, և բոլորն աստիճանաբար կկերպարանվեն Հիսուս Քրիստոսի պատկերին:

Համապատասխանաբար, այս հատվածը նոյնպես մեծ զգուշացում է այն մարդկանց, ովքեր չունեն առաջընթաց հավատքի մեջ, այլ լճացել են իրենց դավանության մեջ, ովքեր ունեն աստվածապահության կերպարանք, սակայն մերժում են դրա զորությունը, և ովքեր կանչում են Տիրոջ անոնք, սակայն չունեն ներքին նվիրում, ճշմարիտ աստվածապահություն և ձգուում սրբությանը, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը²⁶: Սա զգուշացում է բոլորին, որ ծառը ճանաչվում է իր պտղից, գիրքը ստուգվում է իր բովանդակությամբ,

24. Ծննդոց 1.3-31, Եբրայեցիների 1.3, 11.3

25. Եփեսացիների 1.11, Փիլիպեցիների 1.6

26. Բ Տիմոթեոս 3.5, Եբրայեցիների 12.14

և արդարացման ապացույցը սրբացման շարունակական աշխատանքն է: Աստված լիովին նվիրվել է հավատացյալի սրբացմանը և վերջնական փառավորմանը: Այդ իսկ պատճառով, ովքեր դավանում են Քրիստոսին, սակայն ունեն աննշան ապացույցներ կամ չունեն ոչ մի ապացույց, որ աստվածային նախախնամությունը գործում է իրենց կյանքում՝ վերափոխելով իրենց, կառուցում են իրենց տունն ավագի վրա²⁷:

«Այսպես են բոլոր Աստծոն մոռացողների ճանապարհները.
Եվ կեղծավորի (կամ՝ կեղծավորների) հոյսը պիտի կորչի:
Որովհետև նրա վստահությունը պիտի կտրվի,
Եվ նրա հոյսը սարդի ոստայն է:
Նա կկործնի իր տան վրա, և նա չի դիմանա,
Նա կբռնի նրանից, բայց նա չի կենա» (Հոր 8.13-15):

Թող պայքարող հավատացյալը միսիթարվի, և թող եկեղեցու անտարբեր անդամը զգուշանա: Շշմարիտ դարձի մեծագույն վկայությունը մեր կյանքում Աստծո սրբացման շարունակական աշխատանքն է: Եթե մնաք փրկվել ենք շնորհքով՝ հավատքի միջոցով, այժմ Աստծո «ստեղծածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք» (Եփես. 2.8-10): Ապացույցը, որ Աստված սկսել է այս բարի գործը մեզանում, այն է, որ Նա շարունակում է մինչև վերջին օրը²⁸:

27. Մատթեոս 7.26

28. Փիլիպեցիների 1.6

Պոլոս առաջալլ հատկացրեց Ավետարանին առաջին տերն իր քարոզման մեջ, գումարեց իր բոլոր ուժերը՝ այն պարզորեն հոչակելու համար, և նոյսիսկ այսքան հեռու գնաց, որ անեծք հոչակեց բոլորի վրա, ովքեր կխեղարյուրեն դրա ճշմարտությունը: Այնուամենայնիվ, այսքան ցավալի է, որ շատերը, նոյսիսկ՝ իրենց ավետարանական քրիստոնյա համարող մարդիկ, փոքրացրել են Ավետարանի ուժերձը հասցնելով այն մի քանի հասարակ աշխուների, որոնք մարդիկ պետք է կրկնեն, և դիտարկում են դարձը ընդամենը որպես մարդկային որոշում: «Ավետարանի կանչը և ճշմարիտ դարձը» գրքում Փոլ Վոշերը վիճարկում է նման հեշտացված հավատալիքները՝ ընտելով այսպիսի հասկացությունների իրական իմաստը, ինչպիսիք են հավատը, ապաշխարությունը և Քրիստոսին ընդունելը: Նա նոյնպես հանգամանորեն դիտարկում է Նոր ուստում Աստծո կողմից խոստացված փրկարար շնորհի արդյունքները, այսինքն՝ նոր սրտեր և նոր ժողովուրդ ստեղծելը:

«Այս ժամանակաշրջանում, որը լի է հեշտացված հավատալիքներով, մենք ունենք Փոլ Վոշերի նման մարդկանց կարիք, որոնք ձայն են բարձրացնում՝ հիշեցնելով մեզ Ավետարանի կանչի և ճշմարիտ դարձի մասին: Բոլորս գայթակղված ենք հավատալու, որ մենք «առաջ ենք անցել հիմքերից», և որ մեզ պետք է ավելին՝ ինչ-որ նոր քան: Այսուամենայնիվ, Վոշերը հիշեցնում է մեզ, որ չկա ավելի կարևոր և ավելի նշանակալի քան, քան Ավետարանը ճիշտ կերպով հասկանալը, Ավետարանը պարզորեն փոխանցելը և հավատալը, որ Ավետարանը կկատարի իր աշխատանքը որ այն կանչի մարդկանց Աստծո մոտ, կիրկի նրանց և կկազմի ժողովորդ Աստծո համար: Փառք Աստծոն Ավետարանի համար, ինչպես նաև՝ նման գրքերի, որոնք օգնում են մեզ ավելի խորապես ճանաչել հասկանալ և սիրել այսն»:

— Վոլի Բաչեմ, հովիվ «Գրեյս Ֆեմիլի Բեփիթիսթ Չրչ» եկեղեցում, Սփրինգ, Տեխաս, և
«Հավերժ սիրող ճշմարտությունը» գրքի հեղինակ

«Քրիստոնյա լինելը պարզապես չի նշանակում «որոշում կայացնել հօգուտ Հիսուսի» կամ «կյանքում նոր էջ բացել»: Այս Աստծո շնորհքով կատարվող իրաշը է, որի միջոցով մեղափորը, Աստծո գորությամբ, մահից կյանքի է կոչվում: «Ավետարանի կանչը և ճշմարիտ դարձը» գրքում Փոլ Վոշերը փայլուն և պարզ կերպով օգնում է ընթերցողին հասկանալ այս ճշմարտությունը՝ մանրակրկիտորեն մեկնելով Սուրբ գիրքը և բացատրելով, թե ինչ ազդեցություն պետք է թողնի Ավետարանի գորությունը մեր քրիստոնեական կյանքում: Խիստ անհրաժեշտ, հովական և մարտահրավեր նետող գիրք»:

— Գրեգ Գիլբերտ, հովիվ «Սըրդ Էվենյու Բեփիթիսթ Չրչ» եկեղեցում,
Լուիսվիլ, Կենտոնի, և «Բնչ է Ավետարանը» գրքի հեղինակ

«Աստծո գերազանց շնորհքով Փոլ Վոշերի ծառայությունը հատկապես օրինված է խրատելու այս սերունդը ճշմարիտ դարձի և Ավետարանի կանչի հիմնարար ուսումնարների մեջ: Ես բարձը եմ զնահատում այս կենսականորեն կարևոր հարցերի մանրակրկիտ, բայց պարզ դիտարկումը: Թող Աստված օրինի այս աշխատանքը՝ պատրաստելով իր ժողովորդին քարոզելու խաղաղության Ավետարանը և փրկության առաջնորդելու շատերին»:

— Մեմ Վոլդրոն, դեկան և համակարգված աստվածաբարանության պրոֆեսոր «Միդվեսթ»
Աստվածաբանական հետազոտությունների կենտրոնում, Օուենսբրոք, Կենտոնի:

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ 10 տարի շարունակ ծառայել է որպես միսիոներ Պերովի Հանրապետությունում: Այդ ընթացքում նա իմբարդեր է «HeartCry» Միսիոներական ընկերությունը՝ աշակերտու համար եկեղեցիներ իմբսող պերուացի ծառայողներին: Ներկայում Փոլը «HeartCry» Միսիոներական ընկերության մշակներից մեկն է: Նա և նրա կին Զարոն ունեն երեք երեխա՝ Յանը, Էվանը և Ռոուենը: